

ՎԻԿԵՎ ՄԱԹԵՎՈՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶԱՀԻ
ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՅՔԵՐԸ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСКУССТВ

ВИЛЬГЕЛЬМ МАТЕВОСЯН

ЭСТЕТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ
МАРТИРОСА САРЬЯНА



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

A 160-59



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵՏԻ ԽՆԱՏՏՈՒՏ

ՎԻԼԵԼՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ
ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

500-80



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

7Ար ինդեքս ԳՄԴ 87.82
Մ271 մ

Պատասխանառու խմբագիր
արվեստագիտուրյան թեկնածու
Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիրքը հրատարակուրյան են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտուրյունների դոկտոր Ն. Հ. ՄՈՒՐՍԴՅԱՆԸ,
արվեստագիտուրյան թեկնածուներ Լ. Ռ. ԱԶԱՐՅԱՆԸ և
Վ. Հ. ՊԱՐԱՐՅԱՆԸ

Մարելուսյան, Վ. Հ.

Մ271 Մարտիրոս Սարյանի էսթետիկական հա-
յացքները/Պատ. խմբ. Հ. Վ. Հովհաննիսյան.—
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980.—276 էջ.

Աշխատության մեջ բացահայտվում են Մ. Սարյանի
էսթետիկական հայացքները։ Գիտարկվում են նկարչի
պանթեստական հայեցողությունը, գեղեցիկի, մարդու փոխ-
հարաբերության, արվեստի ազգային ու համամարդկային
բնույթի, կերպարվեստում այուժեի, գույնի և այլ խնդիրների
նրա ըմբանումները։ Մենագրության «Հավելվածը» ընդգրկում է
ընտիր մտքեր՝ քաղված այդ խնդիրների հետ կապված սար-
յանական հոդվածներից, տպագիր ու անտիկ գրառումներից,
գրավոր ու բանալոր այլեալլ ելույթներից, հարցազրուց-
ներից։

4903010000
Մ $\frac{4903010000}{703(02)-80}$ 58—79

7Ար
ԳՄԴ 87.82

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1980

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշխատությունը XX դարի համաշխարհային գեղանկարչության խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Մարտիրոս Սարյանի էսքետիկական հայացքնեների բացահայտման փորձ է: Այդ նշանակում է շոշափել արվեստագետի ընդհանուր աշխարհըմբռնման էական կողմերը, որովհետև նա գրեթե ամեն ինչ դիտում ու բննում է պատկերավոր մտածողության անսանկյունից, և նրա խորհրդածությունները բնույթով էնցիոնալ-իմաստասիրական են: Ինքնին հասկանալի է, որ առաջին փորձով և միանգամից հնարավոր չէ լուսաբանել նկարչի էսքետիկական սկզբունքների ամբողջությունը: Այս գիրքը ընդգրկում է մի շարք հանգուցային խնդիրներ և սրանք էլ, իրենց հերթին, որոշ սահմանափակումով:

Հայտնի է, որ Սարյանը տեսական հատուկ ուսումնասիրություն կամ մանիֆեստ չի գրել՝ հակառակ սերնդակից արվեստագետներից շատ-շատերի: Բայց գիտենք նաև, որ նա իր համփորհական տպավորությունները, կենացրական հիշողությունները, բնության, մարդու և արվեստի տարբեր հարցերի վերա-

բերյալ մտարումները հանախ գրառում ու ժամանակ առ ժամանակ մամուլում հրապարակում էր ստեղծագործական կյանքի վաղ տարիներից ի վեր: (Այդ ամենում առկա փաստերն ու դատողությունները մի զգալի մասով ամփոփում է նկարչի «Գրառումներ իմ կյանքից» մեմորարը): Ի լրումն պիտի նշել Սարյանի անտիպ ձեռագրերը և այն մեծաքանակ ինտերվյունները, որոնք մի ժանի տասնամյակի նրանից վերցրել են քերթերի ու ամսագրերի բղբակիցները՝ զանազան առիթներով, մշակութային-հասարակական այլեայլ խնդիրների արձարծումով:

Շուրջ կեսդարյա ժամանակամիջոցում կրտակված այդ նյութերի հիման վրա էլ, ահա, ուսումնասիրել ենք նկարչի էսքետիկական հայացքները: Զնայած արտաքուստ քառային՝ այդ նյութերում գոյություն ունեցող բազմարիվ ու բազմազան դատողությունների, վերլուծությունների, կարծիքների և գաղափարների համայնապատկերը ներքուստ ներդաշնակ ու միասնական է, բաղադրամասերով փոխպայմանավորված ու կարգավոր: Ինչ էլ որ դրանցում երկիմաստ է բվացել կամ եղել է աղոտ ու ոչ այնքան ակնառու՝ դրա վերաբերյալ հարցերը մանրամասն բննարկելու, նշտելու և լրացնիշ պարզաբանումներ կատարելու խնդրանքով անմիջապես դիմել ենք իրեն՝ նկարչին: Ըստ այդմ էլ՝ երեմն որոշ փոփոխություններով ենք ներկայացնում նրա ինտերվյուններից, ձեռագրերից վերցված մտքերը, մանավանդ որ ինտերվյուններում հանախ սխալներով ու խնդրայուրումներով են հաղորդվում

արվեստագետի տեսակետները, իսկ իր մառումները նկարիչը շատ դեպքերում գրառել է հապնեալ, բռուցիկ ձևով ու մոտավոր ձևակերպումներով՝ շարադրանքը բողնելով ահմշակ: Եվ այն ժաղվածքները, որոնք առանց գրավոր աղբյուր նշելու, բայց որպես Սարյանի խոսք բերված են ներկա աշխատության մեջ՝ մեծ մասամբ գրառել ենք այդ ժննարկումների ընթացքում:

Նոշափել որեւէ նկարչի էսքետիկական հայացքները, նրա լոկ տեսական գրավոր ու բանավոր խորհրդածությունների հիման վրա, առանց նկատի առնելու նրա պրակտիկ ստեղծագործությունը՝ ոչ միայն բերի, այլև սխալ կլիներ: Հետեաբար, Սարյան-տեսաբանի զաղափարները մտովի դիտարկել ենք նրա արվեստի լույսի տակ և նրա կտավների հետ անընդհատ համեմատության մեջ: Հետաքրքիր կլիներ, իհարկե, սույն գրեում արտացոլել դիտարկման այդ ամբողջ պրոցեսը: Բայց դա մեզ շատ հեռուն կտաներ: Ուստի բավարարվել ենք երբեմն-երբեմն, խիստ անհրաժեշտ դեպքերում, ընթերցողի ուշադրությունը նկարչի ստեղծագործության այս կամ այն կողմի վրա ուղղելով միայն:

Սարյանի էսքետիկական հայացքները դարասկզբից մինչև մեր օրերը փոփոխություններ կրել են: Եվ, անտարակույս, լավ կլիներ դրանք ընթերցողին մատուցել իրենց էվոլյուցիայի թեկուզե ոչ էական փոփոխությունների մեջ: Սակայն դա կպահանջեր ներկա տեխնի կրկնակին ու ժառակին՝ իր հետ բերելով նորանոր ո՛չ էսքետիկական բնույթի հարցեր շրջանելու հրամայական անհրաժեշտություն, հարցեր, որոնց պատմա-

Շննական լուսաբանման պրոբլեմը դուրս է այս աշխատության սահմաններից: Եվ ապա՝ սույն գրքում ներառված են Սարյանի տեսական դրույքներից այնպիսիք, որոնք, ի սկզբանե նրա ուշադրության կենտրոնում լինելով հանդերձ, երկար ու ձիգ տարիների հետ սկզբունքային շեղումների և բեկումնային կերպափոխությունների շեն ենքարկվել:

Ինչնին հասկանալի է, որ նկարչի էսքետիկական մտքերն ու դատողությունները կարող են փոխադարձաբար օգնել նրա այնքան բարդ ստեղծագործությունը հասկանալու և մեկնաբանելու գործին: Ինարկե ժամանակի ընթացքում փոփոխություններ կրել է նաև Սարյանի արվեստը: Եվ նկարչի էսքետիկական գաղափարները տարբեր շափով ու տարբեր կերպ են վերաբերում նրա էվոլյուցիայի տարբեր շրջանների ստեղծագործությանը՝ զլխալուրապես կամ մասնակիորեն, միջնորդավորումներով կամ ուղղակիորեն համապատասխանելով նկարչի կտավների այս կամ այն խմբին: Այդ մասին ակնարկներ արվում են աշխատության որոշ էջերում (հարցի փոքրիչատե ամբողջական լուսաբանումը նույնպես առանձին գիրք կպահանջեր):

Սարյանի հայացքները ձգտել ենք քեկուզ խիստ համառոտ ուրվագծերով ներկայացնել XIX դարի վերջի և XX դարի համապատասխան ընդհանուր-խմաստախրական, էսքետիկական խնդիրների ու պատկերացումների հետ ունեցած առնչությունների մեջ: Ելելով այն բանից, որ նկարիչը անխօնի փոխակապահություն է տեսնում արվեստի և գիտության միջև (ոչ

միայն սրանց ստեղծագործական նախահիմքի նույնության ու որոշ կողմերի նմանության առումով, այլև ընդհանուր ժաղաքակրթային ֆունկցիայի ու իդեալների միասնության տեսակետից՝ նշել ենք նրա դրույրների մերձությունը սերնդակից զիտնական-մտածողների իմացաբանական-ստեղծագործական և այլ գաղափարների հետ:

Բնականաբար այս գրքում տեղ են գտել, հասկապես, Սարյանին անմիջապես նախորդող և սերնդակից նորարար նկարչչների գեղարվեստական-տեսական մտքերը:

Բայց, ընդհանրապես, այս գիրքը շարադրելիս նկատի ենք ունեցել, որ նա մշակել է գեղեցիկի և էսքետիկական այլ կատեգորիաների ի՞ր պատկերացումները (հասկանալի է՝ դարաշրջանի կովառուր-պատմական ոռշակի ընդհանուր տեսնեցների օբյեկտիվ ազդեցուրյամբ), որնց հանգել է, հիմնականում, սեփական փորձով ու մտքով: Ու եթե այդ պատկերացումները ինչ-ինչ կետերում նույնը կամ մերձ են որևէ հայտնի ուղղության կամ առանձին անհատի հավատամքի հետ՝ մտածելակերպի համընկնման և ոչ թե ուղղակի սերումի արդյունք է:

Ուսումնասիրությանը կից «Հավելվածը» ներկայացնում է ընախր հատվածներ բնության, մարդու, արվեստի և արվեստագետների մասին Սարյանի մտքերից: Դրանք բաժանված են երկու ընդհանուր մասի՝ զոտ անսական (I) և պատմատեսական (II), որոնք իրենց հերթին տրված են մոտավոր թեմատիկ խմբա-

վորումներով՝ առանց ենթավերնագրերի, բայց աստ-
դանիշով ընդմիջված: Առանձին երկրների արվեստի և
արվեստագետների մասին նկարչի արտահայտած կար-
ծիքները ներկայացված են միտսին, ըստ տվյալ ազ-
գային մշակույրի էվոլյուցիայի՝ շպահպանելով, սա-
կայն, համընդհանուր արվեստի պատմության ժամա-
նակագրությունը: «Հավելվածի» երկու բաժինների
մտքերը տրված են մեկ ընդհանուր համարակալման
մեջ (1—176): Համարները ցույց են տալիս աղբյուրը:
Հավելումները առնված են այս [] փակագծերի մեջ:
Անկախ բնագրում գրաված շարահյուսական դիրքից,
սույն «Հավելվածում» զետեղված բոլոր մտքերը սկըս-
ված են մեծատառով: Կրնառումները ցույց են տրված
նետելյալ նշանով՝ <...>:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա. — Սարյանի պաճրելիզմը Բ. — Գեղեցիկի համընդ-
հանուր-տիեզերաբանական ինտեռպրետացիան Գ. —
Մարդու արժեքավորումը կոսմոսի՝ որպես ունիվերսալ
գեղեցկուրյան, սխալմում Գ. — Զգայելի բնուրյան՝
իրեւ անտեսանելի տիեզերքի նաճաշման-արտացոլ-
ման հիմքի, տեսակետը:

Ա.

Սարյանի աշխարհայացքը հիմքում տիեզերաբանա-
կան-պանթեստական է: «Իմ կյանքի բոլոր ժամերին, —
ասում է արվեստագետը, — ունեցել եմ այն զգացումը,
ինչը կարելի է անվանել տիեզերքի զգացում, ապրել
եմ տիեզերքի մասին մտորումներով»¹: Իր խորհրդա-
ծություններում նա հանդես է դալիս և՝ որպես բնու-
թյան տարակերպ հրաշքներով հմայված հայեցող, և
իրեւ աշխարհի խորհրդավոր անսկիզբ-անվերջությունը
անկաշկանդ երեսակայող, և՝ որպես տիեզերքի մշտա-
շարժ-մշտակայուն էությունը քննող իմաստասեր:

¹ Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, Երևան, 1966, էջ 5
(այսուհետև՝ «Գրառումներ իմ կյանքից»):

Սարյանը ինտուիտիվ ու ռացիոնալիստական ճանապարհով աշխարհը ըմբռնում է իր անվերջ բազմազանության և մեկմիասնականության մեջ՝ ելակետ ունենալով կոսմոսի ոգեֆիզիկական սուբստանցի իր իդեան։ Նկարչի պատկերացումով տիեզերքը անընդհատ շարժվում է որպես համակոսմիկական էներգիայի հավիտենական ինքնազրսեորման արտահայտություն։ «Ամբողջ աշխարհը,—գրում է Սարյանը,—հենված է մի մեծ ուժի վրա։ Այդ ուժը մի ընդհանություն է՝ տիեզերական, ամենուրեք ու ամեն ինչում։ Աստղերը, լուսատուները իրենց բարդ սիստեմներով լոկ կետեր են, որ ընթանում են խստորեն ենթարկվելով տիեզերական ուժի օրենքին։ Այդ ուժը այն ամենի էլությունն է, ինչը մենք գիտենք և ինչը մենք չգիտենք»²։ Ամենուր թագավորող ուժը, որ նկարչի կարծիքով «նյութական ու ոգեկան է միաժամանակ», լիցքավորում և հավերժական պրոցեսի մեջ է պահում համատիեզերական մեխանիզմը՝ անընդհատ կերպափոխելով ու անընդհատ հաստատուն օրինաշափությամբ դրսեորելով նրա ողջ կյանքը։ Այդ ուժը հանդիսանում է նաև «ունիվերսալ գեղեցիկի» (Սարյան) ինքնաբացահայտման հիմքը՝ գեղեցիկի, որը ամեն անգամ կոնկրետանալով երևան է գալիս ձեի ու բովանդակության անսահմանորեն տարբեր կոմբինացիաներով։ Գեղեցիկի՝ որպես համընդհանուր երևույթի ստրուկտուրան հենց կոսմոսի համամիասնական կարգն ու ներդաշնակությունն է, նրանում իշխող դինամիզմի և ռացիոնալ կայունու-

² Նկարչի անտիպ ձեռագրերից։

թյան դիալեկտիկան իր կազմիշ հատկանիշներով։ Սիմեոնիա և ասիմետրիա, հակագրություն և համագրություն, պրոպրցիա և դիսպրոպրցիա,—այս և նման օրինաշափությունները, որոնցով ըստ Սարյանի մարմնավորված է բնություն-տիեզերքը, հանդիսանում են նաև մարդու՝ իբրև խտացած միկրոկոսմիկական գեղեցության կառուցվածքի հատկանիշներ, ավելին՝ նրա ֆիզիկական ու մտավոր գործունեության սիստեմի սկզբունքներ։

Արդեն իր երիտասարդության վաղ տարիներին Հանգելով նյութի, շարժման; բնագդի, մտածողության նախասկզբնական միասնության և ընդհանրապես կոսմոսի ոգենյութեղեն կամ նյութավոգեկան կենդանի էության գաղափարին, Սարյանը այդ ժամանակներից ի վեր անընդհատ մտորում է տիեզերական խորհրդավոր հարցերի շուրջ՝ ամեն դեպքում հաստատ համոզումով ընդգծելով, որ «ամենուր թագավորում է կյանքի ուժը»³, որ աշխարհը «ունի իր ներքին շնչառությունը»⁴, որ «արարիշը հենց ինքը բնությունն է»⁵ և համանման պանթեիստական այլ մտքեր։ Սարյանի պանթեիզմը, իհարկե, չի սահմանավորվում-կաղապարվում մեղ հայտնի տրագիցիոն ուսմունքներից ու հավատամքներից ոչ մեկով,—ո՛չ թեոմոնիստական պանթեիզմով, որը ամեն ինչի գոյությունը բացատրում է միայն աստծու արարշագործ կամեցողությամբ՝ այդ-

³ «Գրառումներ իմ կյանքից», էջ 8:

⁴ Վ. Մարեկոսյան, Մարտիրոս Սարյան, Երևան, 1975, էջ 17:

⁵ «Գրառումներ իմ կյանքից», էջ 8:

պիսով՝ աշխարհը զրկելով՝ ինքնուրուցն կեցությունից
և ըստ էության հանդիսանալով՝ ակոսմիզմ (թեոլոգ
պանթեիստների աշխարհայացքը), ո՞չ ֆիզիոմոնիս-
տական պանթեիզմով, ո՞չ տրանսցենդենտ միստի-
կական պանթեիզմով, ո՞չ էլ իմանենտ-տրանսցեն-
դենտ պանթեիզմով):

Պանթեիզմը այս կամ այն կերպ դրսեորվել է
XX դարի փիլիսոփայական, գեղարվեստական հայտ-
նի ուղղություններում, առանձին գիտնականների և
արվեստագետների աշխարհայացքում՝ կազմելով
տարբեր մարդկանց մտածողությունները մերձեցնող
կետերից մեկը էպոխային հատուկ հոգեկան կյան-
քի բազմազան ծալքերում։ Դարաշրջանի դեմքը բնո-
րոշող անհատներից այստեղ կարելի է հիշել Ալ-
բերտ Էյնշտեյնին։ Սարյանի նման նա տիեզերքում
տեսնում է բանական և ռացիոնալ ուժ, բարձ-
րագույն ինտելեկտ, որը բացահայտվում է ճանաշելի
աշխարհում՝ այս առումով, ինչպես ինքն է գտնում,
հանդես գալով իբրև պանթեիստ։ Բայց համակոսմի-
կական բանական էներգիա, բարձրագույն ինտելեկտ և
նման այլ հասկացողությունները Սարյանի ու Էյն-
շտեյնի համար կրոնական կույր հավատի արտահայ-
տություն չեն և ոչ էլ տրադիցիոն աստծու՝ որպես ինք-
նական սուբստանցի, հիմնավորման փորձ։ Տիեզերքում
տեսնելով բանականության թագավորությունը և բա-
նականության գործը, թե՛ էյնշտեյնը, թե՛ Սարյանը
այդպիսով նշանաբանում են կեցության զարմանալի

⁶Տե՛ս K. Զելից, Ալբերտ Էյնշտեյն, Մ., 1964, стр. 39.

տրամաբանականությունը, տիեզերքի շընդհատվող
ինքնագրսնորման խորախորհուրդ էությունը: Մեկը որ-
պես գիտնական, մյուաը իբրև արվեստագետ բացա-
հայտում-հաստատում են բնության ներքին կազմա-
կերպվածությունը, երևոյթների հիմքում ընկած հա-
մամիասնական կարգն ու ներդաշնակությունը, որը,
նրանց կարծիքով, կոսմոսի գլխավոր հատկանիշ-ար-
տահայտություններից է:

Բնության իսկ ստեղծագործական գորության
հանդեպ ունեցած հավատն է, որ Սարյանին հիմք է
տվել հայտարարելու այն միտքը, թե «արարիչը հենց
ինքը բնությունն է՝ միշտ պարզ, ու խորհրդավոր»⁷:
Հեշտ է նկատել, որ Սարյանի, ինչպես նաև էյնշտեյնի
պանթեիզմը մեր գարաշրջանում արձագանքն ու յուրովի
շարունակումն է նոր ժամանակների՝ Վերածննդի, շըն-
չով արդեն իմաստափոխված ու հակամիջնադարյան-
հակաքրիստոնեական պանթեիստական հայեցողության:
Բնության հավերժական կյանքի՝ որպես աշխարհի համ-
ընդհանուր պրոցեսի գաղափարը նկարչին թույլ է տվել
տեսանելի կոնկրետ էակների ծննդյան ու մահվան փաս-
տը համարելու տիեզերքի շարժման արտահայտություն,
հետեւաբար և՝ մարդ-բնությունը անվախճան: Սարյանը
ահ շունի մարդու մահվան նկատմամբ, որովհետեւ
նրան համարում է կոսմոսի դրսերում թե՛ ծննդի, թե՛
վախճանի պահին և իր անտիպ ձեռագրերից մեկում
մահը համեմատում է առօրյա քնի հետ: Իսկ էյնշտեյ-
նը իրեն անընդհատ զգում է բնության արդյունքն ու

⁷ «Դրասումներ իմ կյանքից», էջ 8:

նրաւ հետ այնքան միասնացած, որ մահվան մեջ տեսնում է այդ միասնության երկակման մի այլ ասպեկտը: Որովհետև ամբողջության մեջ բնությունը անմահ է, իսկ մարդը երկրացին կյանքին հրաժեշտ տալուց հետո մնում է հավերժ կենդանի պրոցես ապրող բնության մեջ, ուստի ծննդյան ու վախճանի մոմենտները կեցության ներքին շնչառության բարախումներ են և նկարիչը գոշում է՝ «Բնությունը հավերժական է՝ մահ չկա՛»⁸: Երկինքը իր աստղերով ու մոլորակներով, զրերը, լեռները, կենդանական աշխարհի արարածները, բույսերը և այլն սպայմանավորված են իրարով, ծնվում են մեկը մյուսից և տիեզերքի համընդհանուր շարժման մշտնչենական կյանքի կոնկրետ ու տեսանելի ձևեր են:

Բ

Ստեղծագործական կյանքի վաղ տարիներից ի վեր Սարյանը խստագույնս դատապարտում է արվեստի երկի զուտ էսթետիկական արժեքը կրոնական, քաղաքական, էթիկական, փիլիսոփայական, ժանրային, թեմատիկ, ոճական և այլ կարգի արժեքների հետ շկանխամտածված ու դիտավորյալ շփոթումը: «Ես,— ասում է նա,— համարում եմ մեր դարաշրջանում բացարձակ տգիտություն և, որ ավելի վատ է; մտավոր սպեկուլյացիա, երբ, օրինակ, հանուն մի որևէ էթիկական կամ քաղաքական գաղափարի լավ է համարվում վատ նկարը, վեպը կամ դրաման»: Նման դիրք-

⁸ Վ. Մարեվոսյան, Մարտիրոս Մարյան, էջ 42:

որոշում ունեցող նրա սերնդակիցներից շատերը, — և
 տեսաբաններ, և գրողներ, և նկարիչներ, և երաժիշտ-
 ներ, — դեռևս երիտասարդական տարիներին ուղղակի
 անտեսեցին գեղեցիկի հնամենի կատեգորիան (նույնիսկ
 տերմինը), որովհետև դրա հետ է կապված շփոթմուն-
 քը՝ անտիկ Հելլադացից սկսած մինչև մեր օրերը: Բայց
 Սարյանը այդպես շվարվեց: Այդ մասին նա որոշակիո-
 րեն ասում է՝ «Իմ կարծիքով հարցը տերմինի մեջ չէ:
 Առհասարակ որևէ երկութի (գեղարվեստական, թե գի-
 տական միևնույն է) անուն տալու համար կարելի է
 հնարել, բնտրել և օգտագործել ուղած տերմինը՝ միայն
 թե այն շփոթ չստեղծի, լինի որոշակի և օծված մարդ-
 կանց փոխադարձ համաձայնությամբ: Իսկ ի՞նչ կարե-
 լի է ասել վաղուց ստեղծված տերմինների մասին:
 Իհարկե դրանց մեջ կան այնպիսիները, որոնք գալիս
 են խոր անցյալից, այժմ էլ կայուն են և շատ լավ ծա-
 ռայում են մարդկությանը: Բայց կան այնպիսիներն
 էլ, որ ժամանակի հետ հնանում, մի տեսակ մաշվում
 են: Ես այն կարծիքին եմ, որ գեղեցիկ էսթետիկական
 տերմինը հենց սրանցից է: Ինձ այնպես է երկում, որ
 այն ծերացել է, շատ է հեղհեղուկ: Ավելին՝ անորոշ է
 դարձել կստեգորիան ինքը: Այդ պատճառով էլ պա-
 տահական չէ, որ դրանից այդպես խուսափում էին ու
 խուսափում են շատ մարդիկ, հատկապես արվեստի
 մարդիկ, որոնց շարքերում եղել են և, հավանաբար,
 այսօր էլ կան այնպիսի ստեղծագործողներ, որոնք ուղ-
 ղակի չեն ուղում ու չեն ուղում լսել գեղեցիկի մասին
 առհասարակ՝ թե՛ բարի, թե՛ բովանդակության, հա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԵՐԻ
 ՁՈՒԹՅԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մարելով այն փիլիսոփաների արհամարհելի Հնարան-քը (ևս նկատի ունեմ հատկապես՝ երիտասարդական տարիներիս շրջապատի մասին, որտեղ քիչ չէին տա-ղանդավոր ու զարգացած արվեստագետները): Բայց նորից եմ կրկնում՝ եթե գիտական կատեգորիան հնա-ցել է, ապա ի՞նչ մեղավոր է այստեղ ինքը գեղեցիկ կոչվող երեսլիթը, որը գոյություն ունի էսթետիկական գիտությունից անկախ և կարող էր հաջողությամբ մեկ այլ անունով կոչվել: Ես կարծում եմ, որ պետք չէ ժխտել ո՞չ կատեգորիան, ո՞չ բառը: Իսկ գոյություն ունեցող երեսլիթը ժխտել հնարավոր չէ: Ուղղակի պի-տի երեսլիթի մասին ունենալ սեփական պատկերացու-մը, անտեսել նրա էսթետիկական բացատրություննե-րը, եթե դրանք քեզ սխալ են թվում»: Եվ Սարյանը իր սերնդի այն արվեստագետներից է, որոնք ո՞չ հարեցին գեղեցիկի ինտերպրետացիայի այս կամ այն կոնկրետ-էսթետիկական տարածված ուղղությանը, ո՞չ էլ ժխտե-ցին կատեգորիան:

Գեղեցիկի ինդիրը արծարծելիս Սարյանը հետևո-ղական է իր պանթեիստական աշխարհայեցողության մեջ: Հարցի ի սկզբանե տիեզերաբանական դրվագը իմաստասիրական մոնումենտալ մասշտաբներ է տա-լիս նրա դատողություններին: Գեղեցիկը ինքը տիե-զերքն է՝ իր ողջ էությամբ, ստրուկտուրայով, կազմիչ տարրերով և մեկմիասնականության մեջ,—ահա սար-յանական տեսակետը: Նկարիչը ուղղակի ասում է՝ «Տիեզերքը ինձ համար միաժամանակ էսթետիկական կատարելություն է, որը ես բնորոշում եմ ունիվերսալ

գեղեցիկ հասկացողությամբ և որի հիմքում հենց
արսոլյուտն է՝ հավերժական գերագույնը»: Ուրեմն, գե-
ղեցիկի՝ որպես կոսմոսի դրսևորման ասպեկտներից
մեկի սուբստանցը ևս մշտակայուն-մշտաշարժ տիե-
զերական ուժն է, ամեն ինչին կյանք ու էություն նե-
րարկող, աշխարհի բազմազանությունը միասնացնող
էներգիան: Այս ծավալով ու հասկացողությամբ Մար-
յանը կատեգորիային տալիս է իրոք համապարփակ
բնույթ՝ ընդգրկելով կոսմիկական ողջ պրոցեսը: Նա
շեշտում է՝ «Ունիվերսալ գեղեցիկ ասելով ես նկատի
ունեմ տիեզերքի՝ որպես կյանքի ամբողջության ար-
տահայտությունը»: Իբրև տիեզերական ստրուկտուրա-
յի դրսենորում՝ գեղեցիկը միաժամանակ համաշափ և
անհամաշափ է, սիմետրիկ և ասիմետրիկ է, ստատիկ
և դինամիկ է: Մրանք և նման այլ մոմենտներ կազ-
մում են հատկանիշների այն սինթեզը, որը համընդ-
հանուր գեղեցիկի կառուցվածքն է: «Ունիվերսալ գեղե-
ցիկը, — ասում է նկարիչը, — իր մաքուր վիճակով ան-
տեսանելի է: Կոնկրետ առարկաներն ու երևույթներն
են, որ մարդկային ուղեղի համար ձանաշելի են դարձ-
նում այն: Մարդու համար շոշափելի և տեսանելի աշ-
խարհում է, որ երևակայությամբ տեսանելի ու շոշա-
փելի է դառնում անզգայելին»: Նա գտնում է, որ ինչ-
պես տիեզերքի հոգեոր յուրացման մյուս ընդհանրա-
կան ասպեկտները, այնպես էլ համապարփակ գեղեց-
կության յուրացման ասպեկտը մարդը կարողանում է
ունենալ, առաջին հերթին, կոսմիկական գոյության
փոքրիկ առարկայացումներից մեկի՝ երկնակամարի ու

երկրագնդի ղգայման-ըմբոնման-երկակայման հիման
վրա: Բոլոր այնպիսի գաղափարները, ինչպիսիք են, օ-
րինակ, ծավալատարածական կապակցությունը, թվա-
ցին կարգը, շափահարաբերությունը և այլն, և այլն, ո-
րոնցով բնորոշվում են գեղեցիկ համատիեզերական
հասկացողության այս կամ այն կողմերը, մարդը նախ
և առաջ դուրս է բերել այդ իմացությունից:

Սարյանը տիեզերքում դիտում է լույսի հավերժա-
կան մի շարժում՝ երևութին տալով ֆունդամենտալ
նշանակություն թե՛ բնության ինքնակա գոյության, թե՛
համաշխարհային գեղեցկության էության, թե՛ դրանց
հոգեֆիզիկական բնույթի ճանաչողության մեջ: Սա,
ինչպես տեսնում ենք, մերձություն չունի, այսպես
կոչված, «լույսի մետաֆիզիկայի» տրադիցիոն կրոնա-
կան-փիլիսոփայական հավատամքներից որևէ մեկի
հետ՝ չնայած իր հերթին հանդիսանում է նույն պրոբ-
լեմի իմաստասիրական յուրահատուկ մի դրվածք:
Սարյանի ըմբոնման հետ չի կարելի նմանության էա-
կան գծեր տեսնել ո՛չ անտիկ Հունաստանում տարած-
ված այն պատկերացման մեջ, ըստ որի մարդուց դուրս
գտնվող իդեաներն են լույս ճառագում և ճանաչողու-
թյունն էլ առաջանում է դրա ազգեցությամբ ծնվող
մտքի պայծառության շնորհիվ, ո՛չ հոռմեացիների ին-
տելեկտուալ աշխարհում սկիզբ առած «մարդկային
բանականության լույսի» գաղափարում, ո՛չ միջնա-
դարյան էպիխայի գերբնական, «աստվածային լույսի»
հասկացողության ոլորտում՝ մի հավատ, որ տարբեր
երանգավորումներով իշխում էր ողջ քրիստոնեական

աշխարհում, ֆեռդալիզմի վերջնական քայլայումից
հետո անգամ՝ որոշ տեղերում և որոշ մտածողների
կողմից ընդունվելով իբրև անվիճելի ձշմարտություն։
Սարյանը լույսը հետևողականորեն ըմբռնում է իր
պանթեիզմի տեսանկյունից՝ դիտելով այն որպես կոս-
միկական ոգեֆիզիկական էության, նույնն է թե ունի-
վերսալ գեղեցիկի արտահայտություն։ «Այն,—ասում
է արվեստագետը,—ինչ ես դիշեր ու ցերեկ աշքով
տեսնում եմ, ինտուիցիայով զգում, երկակայում ու
դատում՝ ինձ ցուց է տալիս, որ տիեզերքում կա լույ-
սի մի հավերժական հոսք։ Եվ գտնում եմ, որ արվես-
տը իրեն հատուկ միջոցներով պետք է արտահայտի
այդ լույսը՝ որպես տիեզերքի կյանքի ու ընդհանուր-
էսթետիկական բովանդակության բնորոշում»։ Լույսը
դիտելով իբրև տիեզերքի անընդհատ լինելության ու
դինամիզմի երկակում, նկարիչը միաժամանակ այն
համարում է համընդհանրական էսթետիկական զոյտւ-
թյան դրսերում, որը, ըստ նրա, հիմքում լինելով
անդգայելի, դառնում է մեզ համար տեսանելի գեղեց-
կություն մեր շրջապատի կոնկրետ առարկաների ու
երևույթների շնորհիվ։

Տգեղը բացակայում է Սարյանի էսթետիկական
հարցադրումների շրջանակից՝ որպես տիեզերաբանա-
կան կատեգորիա։ «Որքան դիտեմ,—ասում է նկարի-
չը,—գեղեցիկի վերլուծության ժամանակ փիլիսոփա-
ները խոսում են տգեղի, այլանդակի մասին, ըստ ո-
քում՝ գեղեցիկի հետ քննարկման նույն հարթության
վրա։ Ես դա չեմ ընդունում։ Երկի այն պատճառով, որ

գեղեցիկի իմ պատկերացումն է ուրիշ: Գեղեցիկը ինքը
տիեզերքն է, ունիվերսալ մի երևությ սա իմ համոզ-
մունքն է: Այս գեպքում՝ կոսմոսը իր ամբողջության
մեջ, իր ընդհանուր հատկանիշներով կարող է տգեղ
կամ այլանդակ որևէ կողմ ունենալ: Կարծում եմ՝ ո՞չ:
Ուրեմն այդ երկու հասկացողությունները՝ գեղեցիկը և
տգեղը չի կարելի նույն հարթության վրա գնել ու վեր-
լուծել: Առօրյայում խնդրեմ՝ ամեն ինչի տգեղն էլ
տեսնում ենք»: Միանգամայն ակներեւ է, որ արվես-
տագետը տգեղին մոտ չի թողնում այն պատվանդա-
նին, որի վրա դրել է գեղեցիկին: Վերջինս դիտելով իբ-
րև համակոսմիկական գոյակերպի արտահայտություն
(դրանով իսկ այն համարելով համընդհանրական),
Սարյանը տգեղի գոյությունը հնարավոր է համարում
սոսկ կոնկրետ զգայական փորձի աշխարհում (նկարի-
չը տգեղ հասկացողության կիրառումից չի խուսափում
նաև այն դեպքում, եթե մարդկանց քաղաքական-է-
թիկական վարքագիծն ու հոգեբանությունը հակահա-
սարակական, հակահումանիստական, հակազդային,
հակամարդկային են): Բայց որովհետև համատիեղերա-
կան գեղեցիկը մեզ համար ճանաչելի է հենց զգայելի
օբյեկտներում, ուստի, գտնում է Սարյանը, տգեղը մեր
շրջապատի առարկաների ու երևույթների մեջ իր տե-
սակի խաթարված ու բացահայտորեն անկատար ար-
տահայտությունն է՝ իրողություն, որը բացառություն է
համատարած գեղեցկության հանդեպ: Եվ նույնիսկ
այս բացառությունը որոշ մաս ունի կոսմիկական գե-
ղեցկությունից: Լինելով բնության արդյունք, տգեղ

առարկաները կրում են տիեզերական հատկանիշներ, բայց այս կամ այն կերպ, այս կամ այն չափով խեղաթյուրված: Եվ հենց սա էլ թույլ չի տալիս, որ տեսանելի աշխարհի այդ խաթարված օբյեկտները լինեն համապարփակ ներդաշնակության անկաշկանդ արտահայտիչներ: Անգամ մարդը (որին Սարյանը ընկալում է իբրև բնության ամենակազմակերպված ու բովանդակալից էակը, մի միկրոկոսմոս, որը զգայելի բոլոր առարկաներից ու երեսությներից ավելի է ընդգրկում տիեզերական համընդհանուր հատկանիշներ), եթե ագեղ է հոգեպես կամ արտաքինով՝ դարձյալ ունիվերսալ գեղեցիկից քիչ բան կարող է կրել: Այս նշանակում է, թե ամեն մի կոնկրետ օբյեկտ տիեզերական գեղեցկությունը ինչպես հարկն է արտացոլում է այն դեպքում, եթե հանդիսանում է իր տեսակի կատարյալ արտահայտությունը:

Այսպիսով, սարյանական ունիվերսալ գեղեցիկը տիեզերքի ոգեֆիզիկական էության մշտական դրսեռում է, հետեաբար համապարփակ ներդաշնակություն, որ հարատես կայունության և հավերժական փոփոխության մեջ է միաժամանակ: Հարցի նման հասկացողությունը որոշ արմատներով հասնում է դարերի խորքը, մինչև անտիկ Հունաստան: Ինքնին հասկանալի է ոչ բոլոր կողմերով՝ նկարչի ըմբռնումը մոտենում է այն պատկերացմանը, որ ունեին հույն մտածողներից ոմանք՝ տիեզերքը համարելով գեղեցիկն ինքնին: Ունիվերսալ գեղեցիկի սուբստանցը Սարյանը համարում է նույն գերագույն ուժը: Սա ցուց է տալիս, թե որքան

ամուր է նկարչի հոգեւոր մերձությունը մեր օրերի այն զիտնականների ու արվեստագիտների հետ, որոնք ձգտում են բնության անվերջ բազմազանության մեջ մտովի տեսնել ընդհանրացնող որոշակի հիմք,—հանուն կոսմոսի սինթետիկ ընդորկման, նիւթ Բորի խոսքերով՝ ասած՝ «տիեզերքի մեր ունեցած ամբողջ պատկերի միասնության ու գեղեցկության»⁹: Իսկ այս ձգտումը (ինչը նրանց մոտ համանման է ընդհանուր տեսդինցի տեսակետից և յուրաքանչյուրի կողմից հարցադրվում համակարգվում է յուրովի) այն հանգույցն է, որը XX դարը կապում է, դարձյալ, հույների հետ, որոնք աշխարհի մեկմիասնականության առաջին կատարյալ փիլիսոփա որոնողներն էին:

¶

Սարյանի պատկերացրած աշխարհի կենտրոնում մարդն է: Նրա կարծիքով, համատիեզերական կենսաւուժն իր համբիտենական շարժման ընթացքում դրսեորդվում է մարդկային բովանդակությամբ, բայց ո՛չ պատահաբար և կույր տարերայնությամբ, այլ միանգամայն մտածված կերպով և օրինաչափորեն: «Մարդը,—գրում է Սարյանը,—պատահական երևույթ չէ այս աշխարհում: Ծնելով մարդուն, բնությունը իրագործում է իր գերագույն նպատակը, այսինքն հանգում է իր բարձրագույն աստիճանին: Մարդու միջոցով տիեզերքը ճանաշում է իրեն ու արդարացնում իր գոյությու-

⁹ Н. Бор, Атомная физика и человеческое познание, М., 1961, стр. 40.

նը»¹⁰: Դժվար չէ նկատել, որ բնություն-մարդ հարաբերությունը նա մտորում է իր պանթեիզմի տեսանկյունից: Բնությունը, որ օժտված է «կենդանի շնչով ու բնակվորությամբ...», մայրական ջերմությամբ ու ժպիտով»¹¹, մարդուն ստեղծագործելով շարունակում է կատարել իր մեծ ֆունկցիան: Դա ինքնաճանաշման ֆունկցիան է, որ տիեզերքը իրականացնում է «միայն մարդու միջոցով»¹²: Մարդու ծնունդը բնության հավերժական շարժման այն պահն է, երբ տեղի է ունենուած երևությներից ամենազարմանալին և ամենակարևորը: Կյանքը, ինչով ներծծված է տիեզերքի համապարփակ գոյությունը՝ իր ամենաբարդ և ամենանուրբ ստրուկտուրաներով, անփոխարինելիորեն մարդու մեջ է, որ արտահայտվում է իր ողջ էությամբ ու արժեքով: «Մարդը,—ասում է Մարյանը,—ամեն ինչ է՝ կյանքի հոգին, նրա իմաստը»¹³:

Այն, հաճախակի կրկնում է արվեստագետը, որ մարդ-սուբյեկտը բնության հրաշքով լույս աշխարհ է գալիս, զգում է կյանքը, տեսնում է արել, գիտակցում է իր եսը՝ մեծագույն պարզեցն է: Հենց միայն գոյություն ունենալը և ապրելը անգնահատելի երանություն է: «Կյանքի զգացումը,—զրում է Մարյանը,—երջանկության զգացումն է»¹⁴: Բայց իր պանթեիզմի, նկարիչը

¹⁰ Վ. Մարեվոսյան, Մարտիրոս Մարյան, էջ 32:

¹¹ «Դրասումներ իմ կյանքից», էջ 8:

¹² Նույն տեղում, էջ 7:

¹³ Վ. Պլուտոնիկի զրառումներից (տե՛ս Մое счастье - жизнь, „Неделя“, 1967, № 48).

¹⁴ «Դրասումներ իմ կյանքից», էջ 13:

բնության մեջ ամեն ինչ համարում է շնչավորված և
 այդ ամենում էլ, իբրև կենսականության արտահայ-
 տություն, տեսնում է բնազդի մշտական ու համատա-
 րած շարժում: Իսկ «կյանքի բնազդը, —նշում է նա, —
 պսակված է զգացմունքով ու բանականությամբ»¹⁵, —
 հատկանիշ, որով բնության ստեղծած անսահմանորեն
 բազմազան ձևերից օժտված է միայն մարդ էակը: Սա
 հարյուրապատկում-հաղարապատկում է ոչ միայն
 տիեզերքի մեջ հայտնի մյուս կոնկրետ դրսեռումների
 հանդեպ մարդու ունեցած բանական առավելությունը,
 այլև նոր որակ է տալիս երջանկության նրա ապրումին,
 որը, ի տարբերություն բոլորի, ոչ թե կյանքի զիտակց-
 ված ու գլխավորապես բնազդական կենսազործումն է,
 այլ զիտակցված վայելումը: Մարդը պետք է ըստ
 արժանվույն դնահատի բնության այդ պարզեց և խե-
 լացիորեն կազմակերպի սեփական գործունեությունը
 իր գրախտային կացարանի՝ երկրագնդի վրա, առանց
 խախտելու նրա ներքին ու արտաքին հարմոնիան: Սա
 նկարիչը համարում է մարդուն ներկայացվող առաջին
 ու գլխավոր պահանջը և հավատում է բնության բարձ-
 րագույն արարածի խելամտությանը:

Քանի որ տիեզերքը անսկիզբ-անվերջ է, գտնվում
 է անընդհատ ինքնադրսեռման մեջ, և մարդ-սուրբյեկ-
 տը գիտակցում է նաև, որ ինքը հանդիսանում է բնու-
 թյան պսակը, ուստի զարմանալի չէ, որ նրա մտքում
 ծագում է անմահանալու և հավերժանալու իդեալը: Իր
 այս ամենամեծ իդեալը, նշում է Մարյանը, քաղաքա-

¹⁵ Նկարչի անտիպ ձեռագրերից:

կրթության էվոլյուցիայի տարբեր աստիճաններում նշանակած արտահայտել է տարբեր կերպ (մեծ մասամբ կրոնական պատկերացումների ձևով) և հաճախ էլ հավատացել է դրան ու ճիշտ է արել: Բայց ճշմարդագույնն այն է, որ կոնկրետ անհատը կարողանա իր մեջ տեսնել մարդուն ընդհանրապես և իրեն էլ տեսնել իբրև առհասարակ մարդու՝ որպես անմեռ տիեզերքի անմեռ արտահայտություն կոնկրետության մեջ, և նրան հասկանալի կլինի, որ ինքը գտնվում է անսահմանության մեջ, գնում է դեպի անսահմանություն և իրոք անմահ է: Ամեն անգամ այս հարցին դառնալիս Սարյանը ասում է՝ «Մարդը արտահայտվում է բնության, բնությունը մարդու մեջ. բնությունը հավերժական է՝ մահ չկա»¹⁶: Մարդու գոյության հավերժությունը, ուրեմն, պայմանավորված է բնության ու մարդու անքակտելի կապով, կյանքի միասնական դինամիկայով, ծննդյան պրոցեսի հավերժական գոյությամբ: «Բնությունը, — մի այլ անգամ նշում է նկարիչը, — անվերջ է, բնությունը մարդու մեջ է, մարդն ինքը բնություն է, իսկ բնությունը՝ տիեզերքը, անսկիզբ է, անվերջ, ես ամեն օր ծընվում եմ...»¹⁷:

Սարյանի կարծիքով, եթե մարդը կարողանա մարդկության համապարփակ ես-ի մեջ տեսնել իր անհատականությունը, ապա նրա համար անմիջապես պարզ կլինի, որ ինքն իրոք անմահ է: Անմահ է ոչ թե

¹⁶ Վ. Մարեկոսյան, Մարտիրոս Սարյան, էջ 42:

¹⁷ Ալ. Գրիգորյան, Մ. Սարյան, «Գրական թերթ», 1973, 5 մայիսի:

սիմվոլիկ, այլ ուղղակի իմաստով, նկարիչը հաստատապես համոզված է, որ տվյալ կոնկրետ անհատը մեռնելով չի դադարում գոյություն ունենալուց, այլ կրկնվում է անվերջորեն՝ ամեն անդամ ծնվելով մի նոր ժամանակաշրջանում, նոր քաղաքակրթության պայմաններում, նոր անուն ստանալով, արտաքինով ու ներքինով հնի հետ ունենալով նույնական հաստատում գծեր։ Նա գտնում է, որ գենը փոփոխություններ կրկնով հանդերձ մնում է նույնը և հանդես է գալիս մյուս գեների հետ ունեցած անքակտելի փոխկապակցությամբ։ Այդ պատճառով էլ տվյալ կոնկրետ գենի կրողը իր մեջ բնազդով զգում է և՛ նախնիների, և՛ ժամանակակիցների, և՛ հաջորդների արյան հոսքն ու կենդանի կանչը։ Նա հաճախ կրկնում է, թե «իմ անձը թվում է ամբողջ աշխարհը, որովհետև ինձ նման փոշիհատիկները շատ են և կազմում են մի միասնական հզոր հս-ամբողջություն»¹⁸, թե «երկիրը՝ դա մե՞նքնք, դա ե՞ս եմ»¹⁹։

Սարյանի կարծիքով, մարդը միկրոկոսմոս է, որը իր մեջ կրում և իրենով դրսեորում է տիեզերքի ստրուկտուրան ու մեխանիզմը, իբրև բարձրագույն ձևով կազմակերպված բնություն ներառում-արտահայտում է համատիեզերական ներդաշնակությունը։ Եթե արվեստագետը մարդու կարևորությունը և երջանկությունը շեշտելու համար գրում է՝ «հսկայական, անվերջ բնու-

¹⁸ Մ. Սարյան, Դեպքեր, գեմքեր, մտորումներ, «Հայրենիքի Հայն», 1966, 24 հովհանուսի։

¹⁹ Նկարչի անտիպ ձեռագրերից։

թյուն և մի փոքրիկ արարած (մարդը—վ. Ա.), որ իր մեջ կրում է այդ անսահման մեծությունը»²⁰, նկատի ունի ոչ միայն այն, որ մարդը բանականորեն ճանաշում-արտացոլում է բնությունը, այլև այն, որ նա հանդիսանում է տիեզերքի միկրո մոդել-այլակեցությունը՝ իր ֆիզիկական ու ինտելեկտուալ ողջ էռթյամբ։ Այն, որ կոսմոսը օրինաշափորեն դրսկորվում է պրոպրցիայի ու դիսպլոպորցիայի, հակադրության ու համագրության, սիմետրիայի ու ասիմետրիայի և այլնի ստեղծած կազմվածքով, բնության բոլոր առարկաներից ու երկույթներից ավելի ցայտուն արտահայտված է մարդու մեջ։

Այնպիս որ, ճանաշելով իրեն՝ մարդը ճանաշում է տիեզերքը և հակառակը։ Տիեզերքը անընդհատ ավելի մեծ սահմաններով ու ավելի խոր ուսումնասիրելու շնորհիվ նա աստիճանաբար ընդլայնում ու խորացնում է իր իմացության շրջանը իր իսկ վերաբերյալ։ «Ես հաստատ համոզված եմ,—ասում է նկարիչը,—որ կգամի օր (և մոտ ապագայում), երբ մարդը տիեզերքի ուսումնասիրության ժամանակ հիմնական ուշադրությունը կդարձնի հարցի այդ կողմի վրա։ Մարդը տիեզերական էակ է շատ ու շատ ավելի, քան ինքն է կարծում։ Նա պետք է ամենայն խորությամբ զգա, գիտակցի այդ և անընդհատ հիշի այդ մասին։ Մանավանդ՝ զիտական հետազոտություններ անելիս, ստեղծագործելիս, իր և աշխարհի գաղտնիքները լուծելու ելքեր գտնելու ճանապարհին մտատանջվելիս։ Մարդը պետք

²⁰ «Գրառումներ իմ կյանքից», էջ 13:

է իր դիալոգը տիեզերքի, բնության հետ տանի ինքն իրեն ճանաշելու տեսակետից, որովհետև ևս կարծում էմ, որ մարդու մեխանիզմը հազարավոր անտեսանելի թելերով կապված է ամբողջ տիեզերքի մեխանիզմի հետ և պայմանավորված է նրա գործողությամբ ու շարժման ոիթմով։ Տիեզերքի մեծ շնչառությունը իր անընդհատ անդրադարձումն է գտնում մարդու մեջ։ Մարդու ճարտարապետությունը տիեզերքի ճարտարապետությունն է իր մեջ, բայց ո՛չ ներքին կամ արտաքին տեսքի նմանողությամբ, այլ հարմոնիայի սկզբունքների ընդհանրությամբ։ Ահա պետք է գտնել այդ ընդհանրության ճշմարտացի մողելը՝ փոխադարձաբար տիեզերքից գալով դեպի մարդը և մարդուց գնալով դեպի տիեզերք։ Մարդու օրգանիզմում, նրա սրտում, ուղեղում պիտի կատարվելիս լինեն այնպիսի երեսութներ, որոնք համանման են տիեզերքում տեղի ունեցող երեսութներին։ Սա շպետք է մոռանա ո՛չ գիտնականը, ո՛չ արվեստագետը»։ Ակնհայտ է, որ Մարյանը մարդուն պատկերացնում է իբրև մի փոքր տիեզերք։ Ու պահանջում է, որ մարդը հիշի այդ, ինքնին հասկանալի է՝ ոչ թե սոսկ հիշելու, այլ ինքնաճանաշմանինքնագնահատման, ստեղծագործական սրոցեսում որպես սկզբունք նկատի առնելու համար։ Նկարիչը հավաստիացնում է, որ տիեզերքի և մարդու փոխհարաբերության այս ըմբռնումը իր մեջ առաջացել է վաղ երիտասարդական տարիներին, գնալով ավելի ու ավելի զբաղեցրել իրեն, անընդհատ ամրապնդվել ու խորացել իր մտքում։

Սարյանի խորհրդածություններում մարդը հանդիս է գալիս որպես ամենագեղեցիկը բոլոր էակների ու առարկաների մեջ: «Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է»²¹, — նշում է նկարիչը: Ճիշտ է, բոլոր էակները, առարկաներն ու երևույթներն էլ կրում են կոսմիկական գեղեցկության հատկանիշների այս կամ այն գումարը: Բայց միայն մարդն է, որ ունիվերսալ գեղեցկությունը ներառում է ամենից ավելի կատարյալ և՝ քանակական, և՝ որակական իմաստով: Հարմոնիան, որ Սարյանի ըմբռնմամբ տիեզերքի մըշտական ինքնազրսեորման կերպ է, միաժամանակ՝ համընդհանուր գեղեցկության կոնկրետ գծերի (պրոպորցիա-դիսպրոպորցիա, սիմետրիա-ասիմետրիա և այլն) հիմքն ու ելակետն է նաև իր մարդակերպ երեվակման մեջ: Այն մարդու թե՛ արխիտեկտոնիկ կայուն-որոշակիության պատճառը, թե՛ նրա գեղեցկության արտահայտությունն է: Մարդու հոգու և մարմնի, սրա ամբողջության ու մասերի կապը, շարժումների զարմանալի փոխադարձ պայմանավորվածությունը, կարծ ասած՝ նրա գոյության մեխանիզմի աշխատանքի, ոիթմն ու ռացիոնալ հաշվեկշիռը, որ նախառանգել է բնությունից, հանդիսանում է նրա՝ իբր տիեզերքի ամենակատարյալ զավակի գեղեցկության արտահայտությունը: Իսկ մարդու՝ միկրոկոսմիկ այդ գեղեցկության մեջ էլ, որպես նրա էսթետիկական բացարձակ կատարելության արտահայտություն, Սարյանը ընդգծում է նրա ներաշխարհը: Մարդու բնահոգե-

²¹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 13:

կան շարժման երջանկությունն ու վեհությունը պայմանավորված են զգալու, ընկալելու, դատելու, ստեղծագործելու նրա ընդունակությամբ, որը, ըստ Սարյանի պանթեիստական աշխարհայցքի, դարձյալ համապարփակ է այնքանով, որքանով հանդիսանում է տիեզերքի ծնունդն ու համակոսմիկական բանականության յուրովի դրսեորումը մարդու մեջ: «Հենց միայն զգալու ակտը հրաշք գեղեցկություն է», — նշում է նկարիչը:

Սարյանի պատկերացումով՝ մարդը վերջնականապես ձևավորված արարած չէ: Եվ այս կետում էլ արվեստագետը խիստ հետևողական է բնության ու մարդու հարաբերության իր ըմբռնման մեջ: Մարդը կրում է ոչ միայն համատիեզերական շարժումը, այլև անվերջ փոփոխությունն ու զարգացումը: Ուստի նրա՝ որպես բիոհոգեկան արարածի, էվոլյուցիոն կատարելագործման պրոցեսը համընթաց է կոսմոսի կենսական էներգիայի անընդհատ բացահայտմանն ու ընդլայնմանը: Այստեղից էլ հետեւում է, որ մարդկության ու իր բնական միջավայրի կապի ներդաշնակությունը չխախտելու, ընդհակառակը ավելի ամրապնդելու և զարգացնելու, երկրագնդի վրա հասարակական կյանքը միասնաբար բարեղործելու, շարիքը վերացնելու և եղբայրական համակեցություն ստեղծելու համար պետք է հիշել կոսմոս-մարդ այդ հարաբերությունը: «Աշխարհի հետագա կատարելագործումը, — գրում է Սարյանը, — պետք է կատարվի մարդ-բնության միասնության խորը գիտակցության միջոցով»²²: Ըստ որում՝ նկարիչը

²² Նկարչի անտիպ ձեռագրերից:

անխուսափելի է Համարում անվերջ կատարելագործման պրոցեսը, որովհետև գտնում է, որ դա բխում է բնության ինքնազրսկորման օրյեկտիվ պահանջից, մարդու մեջ ու մարդու միջոցով «ինքն իրեն գիտակցաբար կատարելագործելու»²³ տինդենցից։ Ուրեմն, եթե մարդը ինտրոսպեկցիայով ունկնդրի ու հետեւի իր ներսում հավերժաբար զրնդացող բնության ձայնին, ավելի ու ավելի արագ կընթանա իր էության ու կյանքի բարելավման ճանապարհով։ Կնշանակի, թե բնությունմարդ կապը ունի ոչ միայն հոգեֆիզիկական, այլև բարոյահասարակական մեծ նշանակություն։ «Այս,—բացատրում է նկարիչը,—մարդու գործունեության ոչ մի ասպարեզ գուրս չէ այդ կապից։ Ինչպես մարդու ֆիզիկական գոյությունը, մտավոր, էսթետիկական գործունեությունը և առհասարակ գործունեության բոլոր դրսերումները, այնպես էլ նրա հասարակական ինքնակատարելագործման ձգտումն ու իրագործման ընթացքը պայմանավորված են նախ և առաջ այդ կապով։ Եվ իս ոչ միայն սիրում եմ մարդուն իր այժմյան վիճակի, այլև այն բանի համար, որ նա գտնվում է անընդհատ զարդացման մեջ, խելամիտ է ու ավելի խելամիտ կգտնվի մայր բնության, հետևաբար և իր նկատմամբ՝ անկախ ընթացքի բոլոր սայթաքումներից ու սխալներից»։

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ մարդու իր կոնցեպցիայի որոշ կետերով Սարյանը զարդացնում է Վերածննդի հումանիզմը մեր էպոփիայում այնպես,

²³ Նույն տեղում։

ինչպես յուրաքանչյուրը յուրովի զարգացնում են այն էնթեստ Հեմինգվուելը, Պաբլո Պիկասոն և ուրիշներ: Վերջիշենք, թե ինչպես է արտահայտվում մարդու մասին Վիլյամ Շեքսպիրը Համլետի բերանով և թե որքան հոգեհարազատ են նրա խոսքերը հայ արվեստագետին՝

Ի՞նչ հրաշակերտ է մարդը:
Որչա՞փ աղնիվ է նրա դատողությունը:
Որչա՞փ անսահման են նրա ընդունակությունները:
Կաղմվածքը և շարժումը որչա՞փ բարեձեւ և հիանալի:

Կաց ու նիստով կարծես մի հրեշտակ:
Խոհականությամբ կարծես մի աստված:
Աշխարհի գեղեցկությունը...

Մտորումների ավելի մերձություն երկու, այն էլ տարբեր դարաշրջանների արվեստագետների միջև դժվար է պատկերացնել:

¶

Սարյանի կարծիքով տիեզերքը, նույնն է թե՝ ունիվերսալ գեղեցիկը, նրա էռությունը, համամիամնական կարգն ու ներդաշնակությունը ճանաշելու և արտացոլու առաջին ու հիմնական օբյեկտ-միջոցը՝ մեզ շրջապատող աշխարհն է, զգայելի առարկաների ու երեսութների աշխարհը։ Տեսանելի և շոշափելի բնությունն է, որ մարդու ինտուիցիան, միտքն ու երկակայությունը տանում է կոսմոսի էռության և համընդ-

Հանուր հատկանիշների ոլորտը: Աղատության, երջանկության, սիրո, անմահության, չարի կործանման, բարու հաղթանակի և այլն հավերժական կոչված իդեալներն ու գաղափարները նույնպես արտահայտվում-մարմնավորվում են գլխավորապես կոնկրետ իրականությունից վերցված նյութի միջոցով:

Զգայելի ռեալությունը և էմպիրիկ փորձը, ինքնին, շի կարող հիմք դառնալ կոսմիկական համընդհանուր հատկանիշների անշոշափելի աշխարհին հասնելու համար, եթե մարդը ընթանում է պասիվ-հայցողական ընկալման ճանապարհով: Նա պետք է իր ինտելեկտի ողջ զորության ակտիվ գործադրումով թափանցի առարկաների ու երևույթների էության խորը ծալքերի մեջ: Դրանց արտաքինի պատճենահանումը, սոսկական իմիտացիան ու նկարագրությունը ոչինչ չեն կարող տալ ո՛չ արվեստին, ո՛չ գիտությանը:

Սարյանի տեսակետով, արվեստ ստեղծելու ընդունակությունը նախ և առաջ բնության ինքնարտահայտությունն է մարդու միջոցով: «Եթե կոպիտ ասենք,— նշում է նկարիչը,—այնպես, ինչպես շնչելու, ուտելու, քնելու և նման այլ ոմակությունը մարդ ժառանգում է ի ծնե, իր կամքից անկախ, և առանց զրա էլ շի կարող ապրել, այդպես էլ բնածին է ինքը իրեն գեղարվեստուրեն դրսևորելու, արտահայտելու պոտենցիալ ընդունակությունը: (Ես այստեղ նկատի ունեմ մարդ հասկացողությունը ընդհանրապես, մարդկության իմաստով. թե չէ իսկապես կան մարդիկ, որ ո՛չ արվեստ են ստեղծում, ո՛չ էլ ընկալում. չնայած, որ ճիշտն ասենք,

նույնիսկ այդպիսի մարդիկ, թեկուզ և շատ պրիմիտիվ ձևով, էսթետիկական որևէ բավարարություն ունեն): Եվ ինքնաբերաբար էլ մարդը ժառանգում է տիեզերքը արտացոլելու, ավելին՝ ստեղծագործելիս տիեզերական հատկանիշներով առաջնորդվելու պոտենցիալ ընդունակությունը, որը հետագայում նա կարողանում է դրսերել արդեն արվեստի երկում: Ինչպես հասկանալ այդ: Օրինակ, նա նկարում է սիմետրիայի և ասիմետրիայի, ընդհանուրի և մասնավորի հարաբերության, հակադրությունների և համադրությունների, բազմաթիվ այլ օրինաչափությունների միջոցով և իր նկարած դույների, ձեերի, գծերի, առարկաների ու երկույթների մեջ մարմնավորում, այսպես ասած ոեալիզացիայի է ենթարկում այդ օրինաչափությունները: Իսկ վերջիններս կա՞ն մեզանից դուրս, տիեզերքինն են, ոչ թե մեր հնարածը, և դրանք մարդը յուրացնում է բնագղով, առաջին հերթին ինքն իր մեջ, ինքնազգացումով և ինքնագիտակցումով, որովհետեւ ինքը միկրոկոսմոսն է, որ դոյցություն ունի նույն օրինքներով, ինչ տիեզերքը (ասենք, օրինակ, մարդը սիմետրիկ-ասիմետրիկ է միաժամանակ և առանց այդ հարաբերության դոյցություն շումի): Այդ օրինաչափությունները նա ճանաչում-յուրացնում է դգայելի բնության ուսումնասիրությամբ և մի աննշան առարկայի ու երկույթի մեջ անգամ կարողանում է տեսնել ու արտահայտել տիեզերքը»: Այսպիսով, նկարչի կարծիքով, արվեստ կերտելու ունակությունը, բարդ միջնորդավորումներով նաև ակտը, կոսմոսի ինքնաբացահայտման բազմաթիվ կողմերից մեկն

է՝ իր իսկ ստեղծած ամենակատարյալ էակի միջոցով։ Գեղարվեստականորեն արտահայտվելու, ինչպես և ընկալելու կարողությամբ՝ իբրև բնության ոգեփիզիկական էներգիայի ինքնաշարժման օբյեկտիվ հատկանիշներից մեկով, մարդը օժտված է բնականից։ Մարդը տիեզերքի միկրոմարմնավորում է ոչ միայն այն բանով, որ հանդիսանում է նրա նյութական ու կենսաֆիզիկական-ստրուկտուրալ յուրովի ժառանգորդը, այլև ստեղծագործելու ունակությամբ, քանի որ, ըստ նկարչի, տիեզերքը մարդու միջոցով անընդհատ ի կատար է ածում իր ինքնաճանաշումը և ինքնարտացոլումը։ Այս նշանակում է, թե արվեստը նույնպես տիեզերքի սպեցիֆիկ ինքնաճանաշումը և ինքնարտացոլումն է։

Սակայն որքան էլ պոտենցիալ ընդունակություններով օժտված՝ մարդը չէր կարող ինքնարտահայտվել որպես տիեզերածին էակ, տեսանելի աշխարհի արտացոլման միջոցով չէր կարող հասնել կոսմոսի անշոշափելի էությունը մտորելու աստիճանին, արվեստում չէր կարող դրսկորել ոմիվերսալ գեղեցիկի ստրուկտուրալ-բովանդակային հատկանիշները, եթե առօրյա փորձի պրոցեսում եռանդ շղներ թափանցելու բնության ներքին էության ոլորտները։ Բոլոր գեպքերում նաև ալուտիյան թվացող քառսի մեջ գտել է օրինաշփական կողմեր և աբստրահման ու ստեղծագործական երեսակայության միջոցով հանգել մեծ ընդհանրացումների։ Սուսկ էմպիրիկ ճանաշողության ճանապարհով նաև չէր կարող բավարարվել, որովհետև «մի սովորական առարկայի կամ երևույթի մեջ մեծ բան տեսնելու,

վեր հանելու կամ ներդնելու համար,—ասում է նկարիչը,—պետք է խորամուխ լինել այդ առարկայի ու երևույթի մեջ, գտնել դրանց ինչպես եղակի, այնպես էլ տիպական գծերը՝ ինչը հնարավորություն է տալիս, արդեն, ուզած տեսակետով կրծատել կամ փոփոխել, մթագնել կամ շեշտել մոտիվի համապատասխան կողմերը,—մի բան, առանց որի գեղարվեստական կերպար չի ստեղծվում»: Այստեղ Սարյանը բացահայտում է իսկական արվեստագետի, իր իսկ ստեղծագործական փորձը: Գտնելով, թե «նկարիչը չպիտի բավականանա առարկաների արտաքին տեսքով, այլ պիտի ջանա թափանցել նրանց էությունը»²⁴, նա բազմաթիվ առիթներով վկայակոչում է նաև իրեն՝ «բնությունը պատկերելիս ես հեռու եմ պատճենահանումից»²⁵, «յուրաքանչյուր պորտրետ նկարելիս ես ցանկանում եմ հաղորդել տվյալ մարդու ոչ թե արտաքին նմանությունը, այլ ամենից առաջ ներքին կերպարը»²⁶, «Ես ձըգտում եմ բնութագրել առարկաները, գտնել նրանց միջև եղած կապը, տալ նրանց կյանք և ապա պատկերել այդ համապատասխան ձևերի ու գույների միջոցով»²⁷:

Սարյանը շատ հաճախ խոսում է ոչ միայն առարկաների ու երևույթների էության մեջ խորամուխ լինելու, նրանց միջև եղած կապը հայտնաբերելու և ար-

²⁴ «Գրառումներ իմ կյանքից», էջ 180:

²⁵ М. Сарյян, Автобиографические сведения („Выставка произведений М. С. Сарյяна“, М., 1936).

²⁶ Նույն տեղում:

²⁷ «Գրառումներ իմ կյանքից», էջ 180:

տացոլելու մասին, այլև շեշտում է ստեղծագործելու, ցանկացած իդեան ու իդեալը կերպավորելու համար այնքան անհրաժեշտ «կամայական» (նկարչի արտահայտությունն է) վերաբերմունքի՝ այն ազատության մասին, որով առաջնորդվել ու առաջնորդվում են իսկական արվեստագետներն իրենց երկերը՝ կերտելիս: Չդրսկորպի այդ ազատությունը, նկարիչը չի կարող բնության տեսանելի կոնկրետության միջոցով արձարծել աներեւլյթ համակոսմիկական և համընդհանուր պատմահասարակական, բարոյահոգեբանական հարցեր: Մարյանը նշում է, որ, օրինակ, «Հեքիաթներ ու երազներ» վաղ շրջանի իր գործերով բնության՝ որպես հավերժական ինքնադրսկորման պրոցես ապրող գոյության միտքը դիտողին հաղորդելու համար ճիշտ է դիմել է երկացող առօրյա առարկաների ու երեսութների պատկերմանը, բայց և ընդգծում է, որ «դրանք կտավի վրա պետք է հանդես բերվեին այլ իմաստավորմամբ, քան իրենք իրենց կան (ասենք՝ սոսկ ծառ, կենդանի, մարդ, սար և այլն)»²⁸: Սովորական օրյեկտները «այլ իմաստավորմամբ»՝ հեքիաթային, ֆանտաստիկ, տեսլական, միրաժային կերպափոխությամբ ներկայացնելու, բնության տեսողական-զգայելի արտաքինից նրա ներթափուն էության մեջ թափանցելու և պայմանականորեն ու արստրահմամբ, երեակայաբար ու ընդհանրացումներով պատկերելու մասին նկարիչը արտահայտվել և արտահայտվում է հաճախ թե՛ գրավոր, թե՛ բանավոր: «Առանց վերացարկման,

²⁸ Վ. Մարեկոսյան, Մարտիրոս Մարյան, էջ 14:

առանց ակտիվ երևակայության,—նշում է Սարյանը,—մարդը շատ թուզլ էակ կլիներ: Նա չէր կարող ո՞չ գիտություն, ո՞չ էլ արվեստ ստեղծել: Աս, կարծում եմ, վիճելի բան չէ: Բայց մի օրինակ բերեմ: Ուզում ես նատյուրմորտ նկարել և աղատության, կամ որ նույնն է՝ բոնության ժխտման, իդեալը արտահայտել: Ի՞նչ անես: Որքան էլ լավ, բնական նկարես, միենույն է տանձը, խնձորը, կճուճը, ծաղիկը կմնան տանձ, իւնձոր, կճուճ, ծաղիկ—ո՞չ ավելին: Ուրեմն այդ առարկաներից դու պետք է վերացարկես, կտավի վրա երեվակայաբար զնես գծեր, գույներ, ձևեր, ոփթմեր, հարաբերություններ, որոնք ներշնչեն դիտողին ուզածդ իդեալը: Այդ գծերը, գույները, ձևերը, ոփթմերը, հարաբերությունները, արդեն, կլինեն քո հոգու, ինտելեկտի պտուղները, կլինեն ինքնարտահայտման սիմվոլներ, երևակայումներ և ոչ թե բնության սուրբոգատ: Դրանք կլինեն քո ես-ով իմաստավորված ձեվերն ու գույները, կլինեն արվեստի իրականությունը և ոչ թե սոսկ բնական իրերի ներկայացումը»²⁹: Այս քաղվածքում, ուղղակիորեն թե ենթատեքստում, նկարիչը զարգացնում է գեղարվեստական արտացոլման մի ամբողջ տեսություն, ուր գլխավոր միտքն այն է, որ մեծ իդեաներ ու իդեալներ արտահայտելու համար բնության իմիտացիայի մեթոդը անզոր է և որ այդ նպատակը իրագործելու ճանապարհին բացարձակ անհրաժեշտություն է արվեստի պայմանականությունը. ինչը ծնունդ է ստեղծագործողի ակտիվ վերաբերմունքի՝ հանդեպ ոհալությունը:

²⁹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 11—12.

Այս ու նախորդ մտորումները բաղդատելու և միասնաբար ի մտի ունենալու գեպքում դժվար չէ կուածել, որ Սարյանը պահանջում է տիեզերքի, հետևաբար և ունիվերսալ գեղեցիկի, ոչ թե այսպես ասած թեմատիկ-սյուժետային արտացոլումը, այլ նրա հոգեֆիզիկական էռվյան և ստրոկտորալ հատկանիշների նկատառումը՝ նկարի իդեաձեաբանական սիստեմը ստեղծելու և համամիասնական կարգ ու ներդաշնակություն հյուսելու պրոցեսում։ Հեշտ է նաև տեսնել, որ Սարյանը այստեղ բացահայտում է իր արվեստի, առաջին հերթին իր ստեղծագործական էվոլյուցիայի երկրորդ շրջանի (1910-ական թվականներ) երկերի կարևորագույն սկզբունքներից մեկը։

Այն, որ նկարիչը բնության մեծ ու փոքր առարկաների և երկույթների գոյության հիմքում տեսնում է մեկմիասնական՝ համատիեզերական գործող օրենք ու իներգիա, և որ ինքը իր երկերում մի աննշան օբյեկտի միջոցով դիտողին մղում է կոսմիկական խորհրդածության ու նույնը ցանկանում է նկատել այլ արվեստագետների գործերում, մեր դարի սկզբից ի վեր համաշխարհային կուտուրական մթնոլորտում արծարծվում է իբրև էսթետիկական դրույթ ու պահանջ։ Պատահական չէ, որ նորագույն արվեստի ծննդյան ականատեսներից և առաջին խոշոր տեսաբաններից մեկը՝ Ալբեր Գլեզը, հատուկ նշանակություն է տալիս դրան։ «Առարկան, ծաղիկը, — գրում է նա, — կազմություններ են, որ ենթարկվում են այն օրենքին, ինչ և տիեզերքը, հետևաբար

դրանք փոքրիկ տիեզերքներ են: Ըստ այդ կաղմությունների օրենքի կառուցված նկարը կլինի Տիեզերքի ոկթմին համապատասխան փոքր տիեզերք»³⁰: XX դարի արվեստի նախակարապետներ Վան Գոգի, Պոլ Գոգենի, Պոլ Սեզանի երկերում հանձարեղորեն ռեալիզացված իդեա էր այդ, որ պահանջում է մեր ժամանակաշրջանի նկարչության առաջադիմության համար մտահոգ քննադատը: Եվ այն, որ Սարյանի նկարի կոմպոզիցիոն-ստրուկտուրալ համակարգում հարթության ու ծավալի, հակադրության ու համադրության, սիմետրիայի ու ասիմետրիայի, ամբողջի ու մասի, մուգի ու բացի և այնի գաղափարները (իրենց միասնական ու միաժամանակյա գոյությամբ, շափաթվային ու որակական փոխարարերությամբ և դիալեկտիկայով) ինտրոսպեկցիայով, ինտուիցիայով, երևակայությամբ ու դատողունակությամբ արտացոլում են իր խոսքերով ասած «տիեզերական արխիտեկտուրան» և ընկալողին լիցքավորում ու տանում են դեպի կոսմիկական մտորումներ՝ արվեստի տիեզերաբանական ինտերպրետացիայի մի ուրույն ասպեկտը լինելու հետ մեկտեղ հայնկարչին ներկայացնում է իրեկ Սեզանի ու նրա սերնդի հետեւրդ և մեր էպոխայի էսթետիկական պահանջներով առաջնորդվող նկարիչ:

Սարյանի պանթեիստական ըմբռնմամբ, քանի որ կոսմոսի էությունը ոգեֆիզիկական է և նա ամբողջու-

³⁰ Д. Дейблер и А. Глез, В борьбе за новое искусство, Пг.—М., 1923, стр. 81.

թյամբ կյանքի անսպառ էներգիայով բաբախուն կենդանի գոյություն է, ուստի նկարը՝ որպես ոեալության յուրատիպ մոդել, պետք է զիտողին ներշնչի տիեզերքի համատարած կենսականության իդեան,—մի բան, որ կատարյալ իրողություն է իր իսկ արվեստում: «Բնության մեջ,—ասում է Սարյանը,—ամենուր թագավորում է կյանքի ուժը: Իմ կարծիքով, ամեն մի արվեստագետ պետք է ապրի այդ ուժի գոյությունը և արտահայտի իր նկարներում: Այն, իհարկե, առօրյա միջավացրում չի երևում. շրջապատում տեսնում ենք միայն սովորական քար, ծառ և այլն: Իսկ այդ ուժը բնության ներքին շարժման, ներքին շնչառության մեջ է, որին կարելի է հասնել կոնկրետ առարկաների արտաքին տարբերություններից մտովի վերանալով ու նրանց հիմքում ընկած ընդհանրություններին շփվելով»³¹: Մի այլ առիթով արտահայտելով նույն այս միտքը, նկարիչը դարձյալ նշում է, որ արվեստագետը պետք է «իր ողջ էությամբ զգա և արտացոլի բնության ներքին շնչառությունը»³²: Գտնելով, որ տիեզերքի ներքին շնչառությունը, նրա հավերժական կյանքն ու ինքնաշարժման անվերջ պրոցեսը, կենսական ուժն ու էներգիան զգալու, ճանաչելու և գեղարվեստորեն մարմնավորելու միջոցները կոնկրետ գոյածերն են (իբրև նյութ, ոգի ու երևույթ), Սարյանը պահանջում է, որ արվեստագետը աբստրահի դրանց զգայական զանազանությունից և մտքով ու երևակայությամբ թափանցի դրանց խորքն

³¹ «Դրառումներ իմ կյանքից», էջ 8:

³² Վ. Մարելոսյան, Մարտիրոս Սարյան, էջ 30,

ու ի հայտ բերի համատիեղերականը: «Պետք է նկարել ոչ թե այս կամ այն առարկան, այս կամ այն երեվույթը,—նշում է Սարյանը,—այլ այդ առարկայի ու երեսույթի մեջ՝ տիեզերական կյանքի ուժն ու հմայքը»: Ի՞նչարկե, շատ լավ իմանալով, որ յուրաքանչյուր ուղղություն և նկարիչ ունեն յուրահատուկ բնույթ ու ծրագիր, նա (իբրև պանթեիստ) մեր դարի էսթետիկական մտածելակերպի գարգացման համար խստագույնս կարեոր է համարում տիեզերքի կենդանի էությունը գեղարվեստորեն արտացոլելու հարցը: Սարյանը գտնում է, որ «բնության մեջ ամեն ինչ ի սկզբանե շնչավորված է»³³, ամեն ինչ «կենդանի է... պրոցեսի մեջ. անգամ քարը, ոչ թե հենց այնպես ընկած է բնության մեջ, այլ ծավալվում է, կյանք է ներկայացնում. ամեն բան ներփան խլրտումով է ապրում»³⁴: Այսպիսով, ոեալությունը նա ընկալում-ըմբռնում է իբրև մշտաշարժ ու կենդանի հատկանիշով օժտված առանձին առարկաների ու երեվույթների փոխկապակցված ամբողջություն, ուր, նկարչի կարծիքով, ոչ միայն յուրաքանչյուր առանձին տեսակ (ասենք ծառ, քար և այլն), այլև տվյալ տեսակի մեջ ամեն մի առանձին միավոր (ասենք տվյալ ծառը, տվյալ քարը) ունի իր կոնկրետ խարակտերը, իր անկրկնելի անհատական գծերը: Եվ բացի այդ, միենույն ծառը կարող է արտահայտել երբեմն տիսրություն, երբեմն հրճվանք և այլն: Եվ Սարյանը գտնում է, որ նկարիչը պետք է կարողանա տարբերել և ար-

³³ Նույն տեղում, էջ 29:

³⁴ Նույն տեղում, էջ 15:

տացոլել այս ամենը: Ինչ վերաբերում է իր գործերին, .
ապա զարմանալ կարելի է, թե ինչպես նրանցում չկա
առարկաների անշունչ-շնչավոր տարբերակում, բացա-
կայում է անմահ-մահկանացու զանազանությունը:
Ամեն ինչ նրա արվեստում շնչավորված է (իհարկե իր
էվոլյուցիայի տարբեր էտապներում տարբեր կերպ),
ամեն ինչ հավերժականի կնիք ունի և սիմվոլացնում
է անմահությունը:

Արդեն ասել ենք, որ Սարյանը լույսը մեզ համար
և անտեսանելի, և զգայելի բնության՝ գեղեցիկի, ամե-
նահրաշալի և ամենազարմանալի դրսեորումներից
մեկն է համարում: Բայտ այդմ էլ զնում է արվեստում
լույսի էսթետիկական ֆունկցիայի կարևորության հար-
ցը: Ավելորդ կլիներ երկար խոսել այն մասին, որ
նկարիչը նկատի չունի դրա արտաքին պատկերումը՝
առարկաների վրայի լուսատվերի իմիտացիայի միջո-
ցով: Մեր օրերում նա անախրոնիզմ է համարում նաև
լույսի արտացոլման սենսուալիստական մեթոդն ու
տեխնիկան, ինչը իր այնքան սիրած իմպրեսիոնիստների
զենքն էր և որը համարում է իր ժամանակին նոր ու հեղա-
փոխական՝ արվեստի հաղարամյակների պատմության
ընթացքում: Սարյանը պահանջում է, որ նկարում լույ-
սը տրվի որպես կոսմոսի հոգեֆիզիկական էությունը և
մարդու լավագույն իդեալները արտահայտելու մի-
ջոց, որպես իմաստասիրական տեսանելի սիմվոլ՝ գույ-
ների ու ձևերի փոխհարաբերության մեջ: Եվ ինքը, իր
ստեղծագործական ինքնուրույն կյանքի ողջ ընթաց-
քում, իր էվոլյուցիայի տարբեր էտապներում տարբեր

նղանակներով ու շափով, ստեղծել է նկարներ՝ օժտված հավերժական ինքնալուսաճառագման զորությամբ, հատկանիշ, որով օժտված է տիեզերքը: Լուսը, այդպիսով, Սարյանի համար հանդիսանում է կոսմոսը նշանաբանելու և իր պանթեիզմը մարմնավորելու հիմնական հնարքներից մեկը:

Արվեստում լուսին այդքան էական ֆունկցիա վերագրելով, նա միաժամանակ խիստ այժմեական տեսակետով շարունակում է հայ մշակույթի ազգային տրադիցիան: Իբրև բարձրագույն գնահատություն, նա հպարտությամբ ասում է՝ «Անկախ ամեն ինչից, և առաջին հերթին, միջնադարի հայկական արվեստը լուսի մի համառ ձգտում է՝ լինի ճարտարապետություն, նկարչություն, թե պոեզիա, միևնույն է»: Իբրոք, հիշենք տեսառղական արվեստի այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են, օրինակ, անիական կառուցցների մեծ ժամը, Նարեկացու տաղերը, կիլիկյան նշանավոր «Ճաշոցի» (1286) բազմաթիվ ծաղկած էջեր, 1287 թ. «Ավետարանի» (Մատենադարան, ձեռ. № 197) նկարազարդումը, Գոշավանքում վարպետ Պողոսի կերտած հոչակավոր խաչքարերը (1291), որոնցում այնքան կարևոր է լուսի ֆունկցիան:

Իսկ այժմ մտաբերենք Սարյանի, օրինակ, «Քալաքի ծաղիկները» (1914) և համեմատենք նշված երկերին:

Մերժելով լուսաստվերի բնական երևույթը պասսիվ նմանակելու սովորույթը, Սարյանը ստեղծել է գույների փոխհարաբերության ու կոնտրաստների երեվակայական մի սիստեմ, ձևախրոմատիկական մտա-

յին մի ատմոսֆերա-ստրուկտուրա, որը գունալույս է հղում ներքուստ և ինքնաճառագայթում այնպես, ինչ-պես միջնադարյան վարպետների գործերը:

Լուսի մարմնավորումը Սարյանը համարում է մի կողմից կոսմոսի լուրակերպ արտացոլումը, մյուս կողմից նրա էսթետիկական մողելավորման հնարավոր միջոցներից մեկը արվեստագետի ձեռքին: Նկարիչը գտնում է, որ լուսի այդ երկմիասնական կիրառումը այն բազմաթիվ հնարքներից մեկն է, որով իսկական արվեստագետները կարող են պրակտիկապես ժխտել ոեալության իմիտացիայի կործանարար սովորութը և բնության տեսանելի սովորական առարկաների ու երևույթների մեջ նկատել ու բացահայտել արտասովորը, թափանցել դրանց կոսմիկական էության խորքերը ու ստեղծել ինքնակա գեղարվեստական արժեք: Կարծում ենք հարկ չկա այստեղ ծավալվելու այն մասին, թե իրոք լուսի այդպիսի երկմիասնական օգտագործումը որքան մեծ դեր է կատարել միջնադարյան հայ և բյուզանդական մի շարք ճարտարապետների, կերպարվեստագետների, գոթական կառուցները բարձրացնող վարպետների, Տինտորետոյի, Ել Գրեկոյի, Փորժ Ռուոյի և Փորժ Բրաքի ստեղծագործության մեջ՝ իրենց իդեաներն ու իդեալները արտահայտելու համար:

Քննվող հարցի տեսակետից արվեստում գիտության ունեցած դերի սարյանական ըմբռնումը հետևյալն է: Տիեզերքի իմացության սահմանները հետըզհետե ընդլայնվել են բնագետների (Հիմնականում՝

աստղագետ-բնագետների) շանքերով։ Գիտելիքների կուտակման երկարատև այդ ընթացքում ամեն մէ նոր հայտնագործություն սկզբում եղել է միայն նեղ պրոֆեսիոնալների սեփականությունը, հասկանալի քչերին, բայց ինչ-որ ժամանակ հետո դարձել է հանրամատչելի և իր ազդեցության ոլորտը տարածել նաև մարդկային հոգևոր-ինտելեկտուալ գործունեության մյուս ասպարեզների վրա (այդպես էլ՝ ընդհանուր քաղաքակրթության մյուս բոլոր բաղկացուցիչները): Սա օրինաշափ երևույթ է, և առայսօր տիեզերքի ճանաշումը շարունակվում է այդպիս։ Հասարակական հոգևոր կյանքի դինամիզմի կողմերից է այդ, որ շարժման յուրաքանչյուր նոր փուլում թարմություն է հաղորդում ու յուրովի ակտիվացնում մարդկության երեակայությունը, որը նրա մտավոր աշխատանքի տարբեր ասպարեզներում դրսկորվում է տարբեր շափերով և տարբեր կերպ։

Մարյանը գտնում է, որ դա ուղղակի կապ ունի տիեզերքի զգացողության հետ արվեստի մէջ,—կապ ոչ թե սյուժեային-թեմատիկ առումով, ինչը իր համար երկրորդական նշանակություն ունի, այլ հենց զգացողության, տիեզերքը նոր ուժգնությամբ մտութելու տեսանկյունով։ Նկարչի կարծիքով, ոչ թե տիեզերքի վերաբերյալ ճշգրիտ գիտելիքները, այլ դրանց հիման վրա կատարված ընդհանուր-իմաստասիրական եղրակացությունները, հատկապես հիպոթեզներ են, որ գրգռում են գեղարվեստական մտածողությունը, մղում նորանոր խորհրդածությունների՝ չնա-

յած չի խանգարի, որ արվեստագետը ունենա կոնկրետ գիտելիքներ: «Տիեզերքի մասին գիտության ու արվեստի կապը,—իր միտքը շարունակում է Սարյանը, —չի կարելի հասկանալ այնպես, թե իբր նկարչությունը իւլյուստրացնում է աստղագիտության՝ թեկուղ և ընդհանուր-իմաստափական եղրակացություններն ու հիպոթեզները, թե իբր կոսմոսի գեղարվեստական կերպավորումը զարգանում է աստղագիտության զարգացման հետ: Տիեզերքի վերաբերյալ գիտելիքները (արդեն հասարակականորեն մարսված, սովորականի վերածված գիտելիքները) արվեստագետների վրա ազդում են ինքնաբերաբար, հաճախ անդիտակցաբար և ազդում են նրանց երևակայությունը գրգռելու, մտորումներ առաջ բերելու իմաստով: Վան Գոգը տիեզերքի հավերժական, ահռելիորեն դինամիկ ինքնաշարժման էությունը մարմնավորել է ծաղկած ծառի մի փոքրիկ ձյուղի, խոտի մի ցողունի, դաշտային մի վայրի ծաղկի միջոցով: Բայց հազիվ թե նա աստղագիտական ճշգրիտ գիտելիքներ ունենար: Համենայնդեպս, այդ են վկայում նրա նամակները: Պարզապես նա ունեցել է կոսմոսի սուր զգացողություն շրջապատի կոնկրետ ընության ընկալման մեջ և տիեզերքի հավերժական ընթացքի, անհանգըստության ու փոփոխության իմացությունը, որը հայտնաբերվել է գիտության կողմից ու ժամանակի ընթացքում բոլոր մարդկանց համար դարձել շատ պարզ, ինքնին հասկանալի այնպես, ինչպես նրանք գիտեն, որ ցերեկվան հաջորդում է գիշերը: Դրանով չեմ ուզում ասել, թե չի կարող լինել արվեստագետ,

որ հետեւի գիտությանը և հենց նոր կատարված հայտ-
նագործության տպավորության տակ ստեղծագործի:
Բայց ամեն մի արվեստագետ ինքն է հայտնագործում
տիեզերքը՝ արևաշող ցերեկվա ու աստղագարդ երկնքի,
սարերի ու դաշտերի, անտառների ու ծովերի, ծառերի
ու պտուղների, ծաղիկների ու թռչունների, ամպերի ու
անձրեսի և տեսանելի բնության այլ առարկաների ու
երեսութների միջոցով, ի՞նչարկե ծնված օրից սովորելով
և ունենալով նախնիների դարավոր փորձն ու գիտելիք-
ները, տվյալ դեպքում տիեզերքի մասին ընդհանուր
պատկերացումները»: Այսպիսով, ըստ Սարյանի, ար-
վեստագետի մոտ ինքնին ենթադրվում է տիեզերագի-
տական իդեաների որոշակի քանակություն, որը նա,
բնականաբար, ստանում է հասարակությունից իբրև
կուլտուրական ժառանգություն, և որն անընդհատ ու-
ղեկցում է նրան կենդանի փորձի պրոցեսում մտորե-
լիս-ստեղծագործելիս:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա.—իմացուրյան-ստեղծագործման տարբեր ուղիների հոգևոր ելակետի նույնուրյան սարյանական ըմբռնումը թ.—Արվեստի զարգացման տեսակետը Գ.—Հասարակուրյան և ստեղծագործող անհատի հարաբերուրյան պատկերացումը Դ.—Արվեստի ազգային և համամարդկային բնույթի մեկնուրյունը:

||

Իր խորհրդաժություններում Սարյանը մարդկային ձանաշողական փորձի և առջասարակ մտավոր գործունեության պրոցեսում հակայական դեր է տալիս զարմանքին՝ համարելով այն «բնության կողմից մարդուն տրված մեծագույն պարզեներից»¹, —ընդհատ-ընդհատ, բայց անվերջ հաճախականությամբ ծնվող պոռթկուն մի երեսութ, որը գրգռում է մարդու հետաքրքրասիրությունը, կենտրոնացնում-բնենուացնում է ուշադրությունը և այսպիսով լիցքավորում-ուժգնացնում է նրա ողջ հոգեսոր աշխարհի ակտիվությունը: Սա էլ արտասովոր ուժով արագացնում է իմացության ընթացքը, հիմք հանդիսանում նորանոր հայտնագործությունների և

¹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 75:

ստեղծագործական որոնումների համար,—պատմականորեն շարունակական մի լինելություն, որը իր հետ բերում է մշակութային քանակական և որակական փոփոխություններ:

Մարդու ծագումից ի վեր զարմանքը իր ճանաչողական ու ստեղծագործական ֆունկցիան կատարել է անընդհատ: Որ նրա ինտելեկտուալ փորձը իր այդ ունակության գործադրումից անկախ չի եղել՝ ճշմարիտ է: Բայց որ ինքը՝ զարմանքը դառնար քննության առարկա և մտավոր խորհրդաժությունների օբյեկտ՝ սա արդեն XX դարի արդյունք է: Իհարկե իմացության մեջ զարմանքի դերի գիտակցման քայլեր եղել են պատմության ընթացքում²:

Բայց խոսքն այստեղ հատուկ հետաքրքրությամբ մտորելու և կարևորելու մասին է, որը միշտ էլ մի որոշակի մակարդակի հասունացման ու մթնոլորտի գոյացման արդյունք է, երբ օրինաշափորեն առաջին պլան են մղվում այս կամ այն խնդիրները՝ մոռացության մատնելով կամ ստվերելով ուրիշները: Մարդկային հոգեւոր նոր հետաքրքրությունների ծննդյան դինամիզմն ու դիալեկտիկան պատահականությունների արդյունք չեն, այլ կոնկրետ մշակութային պայմանների ու մտավոր պահանջի արտահայտություն: Եվ ըստ այդմ էլ, ահա, XX դարում առաջացավ զարմանքը ըստ ամենայնի ուշադրության առնելու անհրաժեշտությունը:

² Այստեղ կարելի է հիշել Արիստոտելին, որը առաջին քայլը կատարողներից էր նաև այդ ասպարեզում (տե՛ս Արև. տուելի, Сочинения, т. 1, М., 1976, стр. 69):

Գիտական և գեղարվեստական շրջադարձային պատկերացումները պարարտ հող հանդիսացան ճանաշողության ու ստեղծագործության պրոցեսում նրա դերը վըձռականորեն շեշտելու, բացատրելու համար։ Սա հանդամանալից պատմափիլիսոփայական պատճառաբանություն պահանջող հարց է, որի դիտարկումը հեռու կտաներ։ Նշենք, որ թեկուզ միկրոաշխարհի հետազոտման ասպարեզում մեկը մյուսին հաջորդող հայտնագործությունները, ֆովիզմն ու էքսպրեսիոնիզմը բավական էին, որպեսզի քաղաքակիրթ մարդկությունը կանգներ բեկումնային այն պահի վրա, երբ հարկ է լինում վերանայելու ոչ միայն իր ունեցած պատկերացումները, այլև նորովի քննելու մարդ էակի կարողությունների բնույթն ու սահմանները, բաղկացուցիչ մասերն ու սրանց ֆունկցիանները։ Եվ մեր ժամանակի խոշոր գիտնականներ ու արվեստագետներ ի մոտո անդրադարձան մարդու ինչպես վաղուց հետեւ ուսումնասիրվող, այնպես էլ շհետազոտված ընդունակությունների։ Վերջիններից էր զարմանքը։ Այն, որ կուի դե Բրույլը գիտությունը համարում է «դուստրը զարմանքի և հետաքրքրասիրության, որոնք միշտ էլ հանդիսանում են նրա ներթաքուն շարժիչ ուժերը՝ ապահովելով նրա անընդհատ զարգացումը»³, — հոգեհարազարտ միտք է իր ժամանակի համաշխարհային մտավորականության ներկայացուցիչներից շատերին և ցույց է տալիս, որ իրոք հարցը առաջ է մղվել էպոխայի ներքին պահանջով, միասնական դրդիչների շնորհիվ՝ իբրև կարևոր ինտե-

³ Луи де Броиль, По тропам науки, М., 1962, стр. 289.

լեկտուալ պրոգրեսի արտահայտություն։ Իրենց ելույթներում, անմիջականորեն թե անուղղակիորեն, զարմանքին հատուկ նշանակություն են տվել էլենցտեյնն ու Չապլինը, Էքզյուպերին ու Շագալը, Ստրավինսկին ու Սարյանը, XX դարի այլ մեծություններ։

Սարյանի պատկերացմամբ զարմանալու ընդունակությունը բնատուր է և սկսում է գործել մարդու վաղմանկության տարիներից՝ հենց այն պահից, երբ երեխան սկսում է ճանաշման պրոցեսը, երբ «շրջապատում» ամեն ինչ հետաքրքրում է, զարմացնում»⁴ նրան։ Իր բազմաթիվ գրավոր, ինչպես նաև բանավոր խորհրդածություններում Սարյանը զարմանքին տալիս է ընդհանուր-գնոսեոլոգիական ֆունկցիա և ընդհանուր-էսթետիկական արժեք՝ իրրե բնությունը ճանաշելու և արվեստի ու գիտության լեզվով մեկնաբանելու անընդհատ կատարվող փորձի կարևոր պայման։ Զարմանալու նույն համընդհանուր ունակության միջամտությամբ է, որ ստեղծվել են թե՛ կրակ ստանալու նախնադարյան միջոցը, թե՛ հարաբերականության տեսությունը, թե՛ բուշմենյան բիզոնի քարանձավային պատկերը, թե՛ Հենրի Մուրի ֆիգուրները,—համոզմունք, որը քաղաքակրթության առաջացման ու էվոլյուցիայի սարյանական սկզբունքի ելակետերից է։

Զարմանք հասկացողությունը գնոսեոլոգիական հարցաշրջանի մեջ դիտելիս նկարիչը հատուկ ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ մարդկային

⁴ «Գրառումներ իմ կյանքից», էջ 14:

⁵ Նույն տեղում, էջ 75:

բնադղի ուժը, շլացուցիչը «Հասարակ» առարկայի մեջ տեսնելու նրա ունակությունը, նորություն հայտնագործելու համառ ձգտումը արթնացող-սրող այդ երեսությը նորից ու նորից առաջանում է բնության հետ մշտապես շփվելով: Եվ դրա շնորհիվ է, որ մարդու գիտելիքների պաշարը և իմաստնությունը գտնվում են անվերջ շրջանառության, թարմացման ու հարստացման պրոցեսում, ապահովվում է նրա՝ որպես հասարակական էակի կատարելագործման նախահիմքը, որովհետեւ Սարյանի աներեր համոզմունքով բնության հետ սերտ կապից դուրս չկա սոցիալական-բարոյական կուլեկտիվ կյանքի նորմերի գոյություն ու բարելավում, քաղաքակրթություն ինքնին, կուլտուրական առաջընթաց: Եվ բնության հետ անընդհատ մերձենալու հազարամյակների տևողության մեջ զարմանքը ապրում է իր էվոլյուցիան՝ հիմքում մնալով, իհարկե, բիոհոգեկան նախնական վիճակում: Իսկ փոփոխություն այն կրում է մարդկության վիթխարի փորձի ընդլայնման, խորացման ու փոփոխության հետ՝ նպաստելով անհատի բնատուր բոլոր ընդունակությունների դրսելուման ու զարգացման հասարակականորեն ավելի խոշոր մասշտաբների ու կուլեկտիվ կապերի առաջացմանը: Սա էլ, իր հերթին, տիեզերքը և իր իսկ կոսմիկական էությունը ճանաչելու մարդկային ձգտումը իրագործելու կարևոր պայմաններից է:

Իր հարատես շարժման ու փոխակերպության մեջ բնությունը հիանալի է: Սարյանի տեսակետի համաձայն նրանով զարմանալու և սքանչանալու հետ սկըս-

վում է ոչ միայն էմպիրիկ ճանաշողությունը, այլև
 հետզհետե ուժգնանալով գործում է մարդու ողջ ին-
 տելեկտը և ժայրահեղորեն լարվում է երևակայությու-
 նը՝ թափանցելու համար առարկաների ու երևույթների
 խորքը: Իմացական այդ պրոցեսում էլ նա տարերայ-
 նորեն, ենթագիտակցորեն, ինչպես և կազմակերպված
 նպատակասլացությամբ ըմբռնում է զրանց ներքին
 ստրուկտուրան և էությունը, օրինաշափական առնչու-
 թյուններն ու փոխապայմանավորվածությունը՝ առաջ է
 գալիս արժեքի դատողությունը: Զարմանքը Սարյանի
 պատկերացմամբ մարդկային փորձի հավերժական ու-
 ղեկիցն է, որովհետև «բնությունը, ինչքան էլ հասկա-
 նալի ու առօրեական, ամեն անգամ զարմացնում է իր
 դրսերումներով, իր հարատէ պրոցեսով, իր դիպված-
 ներով ու ձեերով»⁶: Եվ նորից ու նորից՝ «Զարմանքի
 պրոցեսում լարվում է մարդու ուշադրությունը, գրգռու-
 վում է հետաքրքրությունը, զարմանքը տանում է դե-
 պի զգացմունքների, մտքի ակտիվացում»: Այդ բոլորը
 ազդակներ են, որ մղում են մտածող, կենդանի մար-
 դում դեպի կյանքի խորքերը, գաղտնիքների ճանաշու-
 մը»⁷: Ուրեմն, Սարյանի կարծիքով, կարելի է ասել, որ
 զարմանքը «տանում է դեպի ճշմարտության հայտնա-
 գործումը»⁸:

Դիտարկող հարցի վերաբերյալ Սարյանի ձեռա-
 գրերից մեկում կարդում ենք՝ «Մարդը անընդհատ գործ
 ունի բնության հրաշքների հետ: Աղամից սկսած մարդ-

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

կությունը զբաղված է դրանց ճանաշման, բացատրման
ու յուրացման գործով։ Բնության իսկ տված բանակա-
նությունը համառորեն ձգտում է որքան կարելի է հեշտ
ու օգտակար ձևով հրաշքները վերացնել, այսինքն շո-
շափելի, սովորական իրականություն դարձնել։ Ինչ-
ինչ շափով հաջողվում է այդ, և դրանով էլ ապրելը
դառնում է ավելի հեշտ ու հարմար, իմացության սահ-
մանները ընդլայնվում են։ Բայց հրաշքը մնում է
հրաշք։ Պրոբլեմը պրոբլեմ է ծնում։ Յուրացված հրաշ-
քը նորից առեղծված է դառնում և այդպիս շարունակ։
Իսկ մարդը՝ բնության ամենակատարյալ հրաշքը, կար-
ծես ինքնաբերաբար զարմանում է, հայտնագործում,
պարզում ու դարձյալ զարմանում, որը նորից բորբո-
րում է նրա ողջ ներաշխարհի մեխանիզմը։ Դա ինտե-
լեկտուալ կյանքի գոյության ձևն է, որը ընդհանուր է
թե՛ գիտության, թե՛ արվեստի ասպարեզների հա-
մար»⁹։ Զարմանքը, ուրեմն, հանդես է գալիս իրու
ընդհատ բռնկվող պրոցեսների անվերջ շարք թե՛ մարդ-
կության ողջ պատմության, թե՛ մեկ առանձին անհա-
տի կյանքի տեսողության մեջ։ Անխուսափելիորեն ծըն-
վելով, այն ամեն անգամ ակտիվ շարժման մեջ է դնում
մարդու հոգեկան աշխարհի ամբողջությունը իր կազ-
միչ տարրերով և սինթետիկ միասնականությամբ։
Դյուրին է նկատել նաև, որ արվեստագետը հստակո-
րեն նշում է իմացության արդյունքի ռելյատիվ էու-
թյունը հանդեպ ճանաշման օբյեկտին՝ բնությանը։
Հրաշքը վերանում է այնքանով, որքանով այն մի որո-

⁹ Նկարչի անտիպ ձեռագրերից։

շակի սահմաններում մարդու ինտելեկտուալ գործունեությամբ գիտակցվում և ավարտվում է: Սակայն ավարտը հարաբերական է, որովհետեւ իմացության անընդհատ խորացման հետ մեկտեղ այն նորից ու նորից երեակվում է առեղծվածային գծերով և դարձյալ հրաշքային դառնալով մարդու ներաշխարհում ժնում զարմանքի ապրում՝ ինչը, իր հերթին, մղում է ճանաշողության:

Մշտակայուն այդ դինամիզմի մեջ նկարիչը տեսնում է առհասարակ ինտելեկտուալ կյանքի միասնականությունը մարդու հոգեսոր գործունեության տարբեր ասպարեզներում: Տվյալ դեպքում Սարյանը նշում է զիտության և արվեստի գոյացման շարժիչ ուժի նույնության խնդիրը՝ դեմ ելնելով բոլոր այն տեսություններին, որոնք բնության արտացոլման այդ երկու միջոցների հիմքում տեսնում են մարդու ինտելեկտուալ աշխարհի ակտիվության երկու տարանջատ կողմերի աշխատանքը: Նա առանձին-առանձին և հավասարապես բարձր է գնահատում հոգեկանի դրսեորման բոլոր կողմերը: Նկարչի կարծիքով և՛ բնագդը, և՛ ինտուիցիան, և՛ զգացողությունը, և՛ դատողությունը, և՛ երեակայությունը բնության կողմից մարդուն տրված հավասարժեք պարզեներն են և չի կարելի դրանց միշեւ տարբերություններ դնել ճանաշողության ու ստեղծագործման մեջ իրենց ունեցած անհրաժեշտության տեսակետից: Փոխադարձ կապի մեջ է, որ դրանք հանդես են գալիս կատարյալ նշանակությամբ և հենց դրանց միասնությունն է, որ կազմում է ստեղծագոր-

ծական կարողության առանցքը: «Միտքը և զգացումը,—գրում է Սարյանը,—իրենց ներդաշնակության ամենաբարձր դրսելուման մեջ, անհրաժեշտ են ոչ միայն արվեստի գործ ստեղծելու, այլև այն ընկալելու համար: Ասում են, թե գիտությունը և արվեստը արդյունք են՝ առաջինը մաքի, երկրորդը զգացմունքի: Ճիշտ չէ: Միտքը և սիրալ գործում են միասնաբար ու նույնքան անհրաժեշտորեն ինչպես գիտության, այնպես էլ արվեստի մեջ: Եվ մեկի և մյուսի ակունքները, արմատները գտնվում են անընդհատ կենդանի, անընդհատ շարժվող և անընդհատ ստատիկ մարդ-բնության մեջ»¹⁰: Գեղարվեստական ու գիտական ստեղծագործության հիմքի միասնության այս գաղափարը հոգեհարազատ է Սարյանի սերնդի գիտնականներից ու արվեստագետներից շատերին: Այստեղ դարձյալ կարող ենք հիշել էյնշտեյնին, որը գտնում էր, թե «իսկական գիտությունը և իսկական երաժշտությունը պահանջում են միատեսակ մտածողության պրոցես»¹¹: Իբրև որոշակի տենդենցի արտահայտություն՝ այս տեսակետը, XX դարի ինտելեկտուալ աշխարհում անընդհատ ուժգնացող դիֆերենցիացիայի պայմաններում, բնության ու մարդու հանդեպ հայացքի միասնականությունը պահպանելու, էմպիրիզմի մեջ շընկնելու և տարրեր ասպարեզների էության մեջ գործող ֆունդամենտալ նոր օրինաշափություններ հայտնաբերելու ձգտում է:

¹⁰ «Գրառումներ իմ կյանքից», էջ 150:

¹¹ Ցիտում ենք ըստ Բ. Կուգնեցովի (Թիոնական պատմության առաջնահատ մասը, 1962) դրքի, էջ 89:

Եվ այդպես, Սարյանը դիտում է հոգևոր աշխարհի գրսկորման միասնություն՝ մտքի և զգացմունքի անհրաժեշտ համաձուլվածք թե՛ գիտություն, թե՛ արվեստ կերտելու պրոցեսում։ Ինչը նկարչի պատկերացման համաձայն հանդես է գալիս մարդ-բնություն տիեզերածին էակի բովանդակության գլխավոր գիծը, այն է՝ ստեղծագործելու ունակությունը, մեկմիասնական է իր բազմազանության մեջ և էմոցիոնալ ու դատողական բոլոր բաղադրիչների օրգանական ամբողջականությամբ։

Նկարչի կարծիքով, չի կարելի ստեղծագործող մարդու (և առհասարակ մարդու) ճանաչողության պրոցեսը սխեմատիկ ձևով դասդասել ըստ հաջորդականության և ըստ կազմիչ տարրերի, դնել այն ինչ-որ քարացած կայունության շրջանակներում։ «Ի՞արկե, — նշում է Սարյանը, — եթե ստեղծագործող մարդուն հարցնես, թե նրա ինտելեկտուալ աշխարհի ո՞ր կողմերը և ի՞նչ հաջորդականությամբ էին աշխատում, երբ նկարում էր այս կտավը, կամ ձևակերպում էր գիտական այս օրենքը, նա տվյալ գեպօրում չի կարող ճշգրտութեն վերաբարտադրել իր մտքի ընթացքն ու գործունեությունը։ Այդ պատճառով էլ հաճախ ասում են, թե ստեղծագործությունը առհասարակ մի շգիտակցված, տարերային, հենց այնպես մի պրոցես է։ Ճիշտ չէ։ Ընդհակառակը, ստեղծագործման պրոցեսում է, որ թե՛ արվեստագետի, թե՛ գիտնականի մոտ միասնաբար և ծայրահեղ ուժգնությամբ լարվում են մարդու ինտելեկտուալ աշխարհի բոլոր կողմերը և այստեղ կատար-

վում է բնեռացման մի պահ, որը նրան բացարձակ է ությամբ տանում է դեպի ստեղծագործումը: Այնուհետև, երբ մարդը մտնում է սովորական կյանքի հունի մեջ, այդ կենտրոնացումը նույնիսկ իրեն թվում է հրաշքային և անբացատրելի: Իրո՞ք դա անբացատրելի շատ կողմեր ունի: Սակայն դրանից չի բխում, թե դա զուտ ենթագիտակցական է, զուտ բնազդական է և այլն: Բոլոր այդպիսի տեսությունները, իմ կարծիքով, սխալ են»: Սարյանը իր խորհրդածություններում բազմիցս նշում է, թե առանց բնազդի, ենթագիտակցության, առանց կենդանի և սուր զգացողության, առանց էմոցիոնալ աշխարհի շարժման շեն կարող ճանաշվել ու կերպավորվել բնության երևութներից և ոչ մեկը: Նույնպիսի հետևողականությամբ նա միշտ էլ ասում է, թե առանց կենդանի հայեցողությունից վեր բարձրանալու և արստրահման, առանց ակտիվ երեակայության մարդը կլիներ շատ անզոր մի արարած: Նրա կարծիքով ամեն մի նկար ու բանաստեղծություն ստեղծելու, ամեն մի ֆիզիկական, բիոլոգիական օրինաշափություն ձևակերպելու համար անհրաժեշտ է մարդու հոգեկան աշխարհի միասնական գործունեությունը: Նկարչի տեսակետով այլ բան է, որ մարդկային մտավոր գործունեության տարրեր ասպարեզներ կոչված են ավելի ամբողջականորեն ու ցցուն կերպով վերաբռնայտելու և մարմնավորելու այս կամ այն իդեաներն ու իդեալները, բնության երևութների, հասարակական կյանքի այս կամ այն կողմերը: Օրինակ, Սարյանը գտնում է, որ մարդու գոյության վաղ ժա-

մանակներում ծնված անմահության իդեալը դրսելոր-
վում. է նրա գործունեության տարբեր ոլորտներում,
բայց «ոչ մի ասպարեզ այնպես անմիջական հնարա-
վորություն չի տալիս բնազդի, զգացումի, բանականու-
թյան միասնությամբ կերպավորելու անմահության
իդեալը..., ինչպես արվեստը»¹²: Իր գաղափարը նկա-
րիչը հաստատում է հետևյալ համանման մտքով՝ «Ոչ
մի ասպարեզ այնպես հնարավորություն չի տալիս
բնազդի, զգացումի, բանականության ու երևակայու-
թյան միասնությամբ վերարտահայտելու և կազմա-
կերպված պարզությամբ ու բյուրեղային մաքրությամբ
վերարտացոլելու տիեզերքում իշխող քանակական-
թվային օրինաշափությունը և ներդաշնակությունը,
ինչպես մաթեմատիկան»:

Սակայն բնության կամ մարդկային էության մա-
սին մարդու իսկ ունեցած պատկերացումները ավելի
հստակ, ավելի կտղմակերպված ու ամբողջական ձևով
արտացոլելու հնարավորությունը տեսնելով ինտելեկ-
տուալ գործունեության տարբեր ասպարեզներում,
Մարյանը շեշտը դնում է այդ ասպարեզների մեկմիաս-
նականության և դրանց հիմքի նույնականության վրա:
Եթե մարդու հոգեկոր աշխատանքի տարբեր ասպարեզ-
ների արդյունքները նկարիչը դիտում է իբրև մտավոր
ձևաբանական ստրուկտորաներ, զանազանություն չի
տեսնում դրանց միջև: Օրինակ, նա գտնում է, որ սիմ-
վոլը բնդհանրապես սիմվոլ է՝ լինի թվային, գունային,
ձայնային, թե մի այլ տիպի, միևնույն է: Ինտելեկ-

¹² «Գրառումներ իմ կյանքից», էջ 6:

տուալ կյանքի տարբեր կողմերի ներքին միասնություն գոյությունի ունի բազմազան ասպեկտներով, մինչեւ իսկ այնպիսի համընդհանուր բազմաթիվ օրինաշափություններով, որոնք Սարյանի տեսակետով կոսմոսի ունիվերսալ հատկանիշների գրակորումներն են մարդու որպես միկրոկոսմոսի հոգեֆիզիկական էության միջուցով: Իսկ գիտությունը և արվեստը այդ էության կատարյալ երևակումներն են:

Այստեղ՝ ակամայից հիշում ես Շոթֆրի Հարդիի այն միտքը, թե՝ «Մաթեմատիկոսի ստեղծագործությունը նույնաստիճան գեղեցիկ է, որքան գեղանկարչի կոմ պոետի ստեղծագործությունը: Իգեաների միասնությունը գույների կամ խոսքերի միասնության նման պետք է ունենա ներքին հարմոնիա: Գեղեցկությունը մաթեմատիկական գաղափարի առաջին փորձաքարն է»¹³: Եվ եթե ենում ենք Սարյանի տեսակետից, ապա միանգամայն բնական է, որ Նորբերտ Վիները (և ոչ միայն նա) հաստատ համոզումով և ի լուր աշխարհի հայտարարում է թե «մաթեմատիկան արվեստի ձեերից մեկն է»¹⁴:

Ինչ վերաբերում է քաղաքակրթության ընդհանուր դարգացման մեջ մարդու գործունեության տարբեր ասպարեզների փոխնպաստավոր կապին ու պատմաէթիկական դերին, ապա այդ առթիվ նկարիչը նշում է՝ «Ասում են մեր դարը գիտության դար է: Բայց մի՞թե

¹³ «Математики о математике» (Сборник статей), М., 1967, стр. 4.

¹⁴ Ն. Վիներ, Ես մաթեմատիկոս եմ, Երևան, 1969, էջ 77:

կարելի է մարդկության պատմության մեջ ցուց տալ մի որևէ դար, որ գիտության դար չլիներ: Շոգեքարշը նույնպիսի հրաշք էր իր դարի համար, ինչպես ատոմային էներգիան մեր դարի համար: Ո՛չ, չկա և երբեք չեն եղել գիտության դարեր և արվեստի դարեր առանձին: Եվ նրանց միասնությունը, նրանց փոխհարաբերակցությունն են միշտ գծագրել դարաշրջանի կերպարը: Այժմ արվեստը մի վիթխարի ուժ է և օգնում է գիտությանը կատարելու մեջ հայտնագործություններ: Իսկական գիտությունը ինչ-որ բանով նույնական է արվեստի հետ: Այն պարունակում է պոետական վեհություն և ծառայում է մարդկությանը: Գիտությունը մարդկությանը օգնում է ստեղծելու արվեստի լավագույն երազանքներում ծնունդ առած աշխարհը, և այդ իմաստով այն նույնպես արվեստ է»¹⁵: Դժվար չէ նկատել, որ այստեղ նկարիչը ուղղակի շոշափում է գիտության ու արվեստի կապի մի այլ շրջան, որը դուրս է դրանց գոյացման ինտելեկտուալ-գենետիկ մշտական հիմքի հարաբերության հարցից և վերաբերում է դրանց՝ որպես արդյունքների (ասենք ստեղծված-ավարտված ու թանգարանում ցուցադրվող բնանկար և բիոֆիզիկական հայտնագործված-մեկնաբանված ու դասագիրք մտած օրինաչափություն), պատմամշակութային ամբողջությանը ու հոգեբանական-հասարակական փոխազդեցությանը:

Մարդու գործունեության տարբեր ասպարեգների

¹⁵ M. Сарьян, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.

միջև ընդհանրությունների հարցը Սարյանին հուզել սկսել է իր աշխարհայացքի ձևավորման առաջին տարիներից՝ դարասկզբին։ Եվ հետաքրքիր ու բնական է, որ այդ ժամանակաշրջանում տարբեր ասպեկտներով նույն խնդրով տարված էին նկարչի սերնդի առաջադեմ մտավորականներից շատերը։ Հիշենք, թեկուզ, Սարյանի բարեկամներից մեկին՝ Անդրեյ Բելիին, որը քաղաքակրթության պատմության ընթացքում ոչ միայն կապ էր տեսնում մաթեմատիկայի, բնական գիտությունների, արվեստների միջև, այլև փոխազդեցություն՝ դրանց արդյունքների ոլորտում¹⁶։

Եվ այդպես, Սարյանը հոգեկան գործունեության բոլոր ասպարեզների հիմքում դիտում է մարդու բնագոյական, ինտուիտիվ, էմոցիոնալ, դատողական, երևակայական աշխարհների միասնության ակտիվությունը։ Մարդկային ստեղծագործության արդյունքը բնականորեն տարբեր է արվեստի ու գիտության մեջ,—այս փաստը երբեք չի մոռանում նկարիչը։ Մասնավորապես նա միշտ նկատի ունի այն էական մոմենտը, որ մարդու արտահայտման նշված միջոցները երկու տարբեր կերպ ու որակական տարբեր բնույթով են դրսեորվուավարտվում գիտության և արվեստի ստեղծագործություններում։ Համապատասխանաբար տարբեր են նաև դրանց հոգեբանական-տրամաբանական-հասարակական ազդեցության ուղղությունները և բովանդակությունը։ Բայց Սարյանը գտնում է, որ այդ տարբերու-

¹⁶ Տե՛ս Ա. Белый, Между двух революций, Л., 1934, стр. 111—112.

թյունները ավելի ակնառու են, դրանց մասին խռովել
է ավելի շատ, և այստեղ կարծիքները ավելի՝ մերձ,
հակամետ ու միանշանակ են, քան միասնությունը և
սրա մասին եղած կարծիքները, ուստի, նկարչի կարծի-
քով, պետք է հատկապես վերլուծել Հիմքի նույնակա-
նության խնդիրը, շեշտել ու գնահատել կապը, նմանու-
թյունը, միասնությունը, ամբողջականությունը:

Սարյանի տեսակետով, այնպես, ինչպես միասնա-
կան են տիեզերքը, մարդն իր հոգեոր աշխարհի ողջ
կազմությամբ, այդպես էլ միասնական է նրա ստեղ-
ծագործական աշխատանքի արդյունքը՝ արվեստը,—
պայմանականորեն միայն տարբաժանելի։ Նկարչի
խորհրդածություններում այդ միտքը վերաբերում է և
արվեստի բոլոր ճյուղերին (գրականություն, ճարտա-
րապետություն, թատրոն։ և այլն), և ավյալ ճյուղի
մեկ առանձին երկին։ Առնվազն միամտություն կլիներ
կարծել, թե Սարյանը անտեսում է տարբեր արվեստ-
ների միջև եղած սկզբունքային ու ոչ սկզբունքային
տարբերությունները և յուրաքանչյուրի սպեցիֆիկան։
Բայց այնպես, ինչպես նա շեշտում է կյանքի գիտա-
կան ու գեղարվեստական մարմնավորման համար
մարդու գործադրած ինտելեկտուալ ակտիվության Հիմ-
քի նույնության մոմենտը, արվեստի ու գիտության
ընդհանուր-իմաստասիրական, իմացարանական, կոնկ-
րետ էթիկական և մյուս ֆունկցիաների միջև առկա
մերձ կողմերը, այդպես էլ՝ արվեստի տարբեր ճյուղե-
րի հարաբերության դեպքում։ Ինչ մնում է մեկ առան-
ձին երկին, ապա սա, ըստ նկարչի, միասնական է ոչ

միայն այն պատճառով, որ ցուցաբերում է առջասաւրակ արվեստի բոլոր ճյուղերի էսթետիկական ընդհանուր հատկանիշների միասնությունը, այս այն պատճառով, որ երևան է գալիս իբրև որոշակի բաղադրամասերի ինքն իրմով շափվող (միաժամանակ անկըրկնելիորեն անհատական) ներամփոփ միասնություն-օրդանիզմ։ Դժվար չէ նկատել, որ այստեղ միասնության գաղափարը ըմբռնվում է իր բազմակի ասպեկտներով, որոնք ընդհանուրի և մասնավորի փոխկապակցվածությամբ ու ներդաշնակությամբ մի անքակտելի ամբողջականություն են կազմում։

Վաղ երիտասարդական տարիներից ի վեր դեմ լինելով արվեստում բնության իմիտացիայի կոնցեպցիային, պասսիվ հայեցողությանն ու տարերային էմպիրիզմին, Սարյանը միաժամանակ գտնում է, որ գեղարվեստական ստեղծագործության մեջ միասնության հասնելու համար պետք է քննախույզ կենտրոնացումով դիտարկել բնությունը և նմանվել (ոչ թե ընդօրինակել)՝ բնությանը՝ անկախ էսթետիկական դավանանքից ու ոճական նախասիրությունից։ «Արվեստը, — հաճախ սիրում է կրկնել Սարյանը, — բնության պատճենահանում չէ, բայց պետք է լինի բնության պես համոզիչ։ Բնության մեջ միասնական են՝ արել և լուսը, երկրագունդը և մեր կյանքը, մարդը և բանականությունը... Այդպես էլ պետք է լինի արվեստում»։ Ըստ որում, այս միտքը նկարչի կողմից ասվում է ոչ միայն իբրև արվեստի տվյալ երկում (ասենք՝ կտավի վրա) ներկայացված թիմայի, կենսական սիտուացիայի, ար-

ծարծված գաղափարի, պատկերացված առարկաների ու երևույթների օրդանական կապի ու ներդաշնակության պահանջ, այլև, դրա հետ միաձույլ, որպես գույնի ու ձեի, գծի ու ծավալի, լուսաստվերի ու պլաստիկայի..., կարճ ասած՝ կերպարվեստի հնարավոր բոլոր արտահայտչամիջոցների միասնականություն, ինչը ստեղծում է արվեստային որոշակի մթնոլորտ։ Հենց իր նկարները, որ շրջանինն էլ նկատի առնենք, միևնույն է, այս մտքի փայլուն ապացույցը կարող են լինել։

Նկարիչը ճշմարտացի է համարում նրանց, ովքեր գտնում են, թե արվեստը ունի իր պատմական յուրահատուկ ընթացքը, էվոլյուցիայի ու փոխակերպության լոգիկան և որ, ըստ այդմ էլ, նոր արվեստ ստեղծելիս մարդը անհրաժեշտարար հենվում է նախորդների կուտակած փորձի ուսումնասիրման ու յուրացման վրա։ Բայց, դրա հետ միասին, նա գլխավոր ու հավերժական ուսուցիչը համարում է բնությունը, բոլոր առիթներով այդ խնդրին դառնալիս իբրև իր համար բացաձակ համոզունք սիրում է կրկնել՝ «Մարդու մեծագույն ուսուցիչը բնությունն է»։ Նա հաճախակի ասում է՝ «Բնությունը այնքան հարուստ, խորը և բազմազան է, որ յուրաքանչյուր ստեղծագործող կարող է այնտեղ գտնել իրեն հետաքրքրող խնդրի լուծման բանալին»¹⁷։ Այդպիսով, ստեղծագործական աշխատանքի համար Սարյանը անհրաժեշտ է համարում, և՝ պատմագեղարվեստական տրադիցիայի, և՝ բնության ուսումնասիրումը՝ արվեստային մտածողության մեջ փոխադարձ կա-

¹⁷ «Դրասումներ իմ կյանքից», էջ 10։

պի և ազդեցության դիալեկտիկայով հանդես եկող
 գուգորդության մեջ առաջնայինը, գլխավորը համարե-
 լով բնությունը: Նկարչի ըմբռնումով, խաբուաիկ է
 բնության մեջ արտաքուստ տիրող քառոր: Նույնիսկ
 փոքր-ինչ խորամուխ լինելու դեպքում անմիջապես
 երևում է, որ խառնիխուռն և տարերային, պատահա-
 կան և անկաղմակերպ թվացող անսահմանորեն այլա-
 պան և բազմաբնույթ առարկաների ու երևույթների մեջ
 և դրանց միջև թագավորում է կարգն ու լոգիկան, կա-
 պըն ու հարմոնիան: «Այս, հենց այդ օրինաշափու-
 թյունն է,—նշում է Սարյանը,—որ մեզ թույլ է տալիս
 ճանաշելու մեկ առանձին առարկայի կամ երևույթի
 ներքին էությունը և այդպես՝ բոլոր երևույթների ու
 առարկաների դեպքում: Առանց ընդհանուր կարգի մեջ
 դիտելու, հնարավոր չէ որևէ բանի իմաստավորված
 գոյությունը հասկանալ»:¹⁸ Այս տեսակետը մերձ է
 իշուղվիդ Բոլցմանի այն մտքին, թե՝ «Բնության երե-
 վույթների մեջ եղած օրինաշափությունը հանդիսանում
 է դրանք հասկանալու հիմնական պայմանը», որը,
 իր հերթին, կարող է հանդիսանալ գիտական և գե-
 ղարվեստական մտածողությունների միջև առկա ընդ-
 հանրության վերաբերյալ Սարյանի հավատամքի հաս-
 տատում:

Նկարչի համոզմումքով, ուրեմն, արվեստի երկի
 տարրեր կողմերի մեկմիասնականություն առաջին
 հերթին ստեղծվել և ստեղծվում է բնությունից սովո-

¹⁸ Л. Болцман, Очерки методологии физики (Сборник статей), М., 1929, стр. 125.

բելով՝ ոչ թե ընդօրինակման, այլ առարկաների ու
երեսովթների աշխարհի օրինաշափականությունը, կար-
գավորականությունը, կապն ու ներդաշնակությունը
սկզբունքորեն նկատի առնելու իմաստով։ Ըստ որում
պետք է շեշտել, որ Սարյանը իր այս միտքը արտա-
հայտելիս նկատի ունի թե՛ այն տեսանելի կարգը, որ
բնության միջավայրում սուր աշքի համար երեսմ-
դրսեռորդում է առանձին ձևերի ու գույների, ծավալնե-
րի ու շափերի միջև առկա ընդհանուր ոփթմերի և շար-
ժումների, հակադրությունների ու համադրությունների
տարածածապտիկական կապերի և փոփոխությունների
ամբողջության տեսքով, թե՛ այն անտեսանելի համ-
ընդհանուր-համատիեկերական օրինաշափությունները,
որոնք յուրացվում են հասարակական ու անհատական
փորձով և վերածվում ընդհանուր-իմաստասիրական-
էսթետիկական պատկերացումների։

Արվեստի գործի միասնականությունը, նկարչի
հավաստմամբ, ստեղծվում է աշխատանքի ինքնամո-
ռաց պրոցեսով՝ հեղինակի ինտելեկտուալ աշխարհի
ենթագիտակցական ու ռացիոնալ կողմերի միաձույլ
ակտիվության շնորհիվ, տարերային պոռթկումով և
սթափ գիտակցումով։ Նկարային համակարգի տարբեր
շերտերի փոխներգործության և դրանց անքակտելի
միասնության պրոբլեմը Սարյանը դիտում է բազմա-
թիվ ու բազմակերպ ասպեկտների մեջ՝ միշտ էլ որպես
առանցքային հարց նկատի ունենալով իրկի էմոցիո-
նալ-իդեական ու ռճաձեւաբանական կողմերի իրացման
միաժամանակա-միասնական բնույթը և դիալեկտի-

կան։ Այդ տեսակետից խոսուն է, օրինակ, արվեստի գործում բովանդակության ու ձեփ միասնության հանդելու, դրանց հարաբերության էսթետիկական վաղեմի խնդրի սարյանական բանաձեռնումներից մեկը՝ «Ճշմարթյունը և գեղեցկությունը,—գրում է նա,—իսկական արվեստի մեջ արտահայտվում են ճշմարիտ բովանդակության և գեղեցիկ ձեփ օրգանական համաձուլման միջոցով։ Զգտելով այդ նպատակին, նկարիչը, ինքն էլ այդ շնկատելով, կատարում է իսկական սխրագործություն՝ նվաճում է գեղեցիկ բովանդակությունը և ճշմարիտ ձել...»¹⁹:

Բ

Ինչպես քաղաքակրթության մյուս ասպարեզները, այնպես էլ արվեստը ժամանակի մեջ փոփոխվող երեւլույթ է։ Բայց, Սարյանի կարծիքով, չի նշանակում, թե դա մի պարզ, անընդհատ առաջընթաց է՝ վարից վեր և անկատարությունից դեպի կատարելություն։ «Ես հաճախ մտածում եմ,—գրում է նա,—որ արվեստում ուղղակի վերելք չկա։ Ինձ թվում է, թե արվեստի զարգացումը ինչ-որ բանով նման է լեռնային ճանապարհի՝ մերթ հաղթահարում է դիք բարձունքներ, մերթ թեքվում մի կողմ, մերթ մի փոքր իշնում է, ապա նորից բարձրանում և հաճախ դուրս է նետում իր վրայի անկայուն քարերն ու խիճը։ Սակայն մշտապես ընթանում է առաջ՝ մեկը մյուսի ետևից գագաթներ հաղթա-

¹⁹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 95:

հարելով»²⁰: Ուրեմն, արվեստը կատարում է իր ընթացքը՝ անվերջ արգելքներ հաղթահարելով և վերիվայրումներով: Սարյանի տեսակետով այդ արգելքները բաղմազան ու պատմականորեն շարժուն են այնպես, ինչպես ինքը՝ արվեստը: Լինում են, իհարկե, անսպասելի և անծանոթ պատճեններ, բայց զլխավոր արգելքները վաղուց ի վեր հայտնի են և չնայած կերպարանափոխություններին՝ գործում են գրեթե մշտապես: Դրանք տարբեր բնույթի են՝ կրոնական, քաղաքական, էսթետիկական և այլն: Իսկ ամենացավալին ու նկարչի կարծիքով նույնիսկ տրագիկականը այն իրողությունն է, որ նորությունը շատ դժվարությամբ է ընկալվում հասարակության կողմից: Դա պայմանավորված է արգեն քարացած, հետևաբար նորությունը ժխտող տրագիցիաների (թեկուզն նախկինում առաջադիմական) մշտականորեն աշալուրց առկայությամբ: Դոգմայի վերածված սովորություններով վարակված մարդիկ «չեն քայլում կյանքի հետ ու չեն ընդունում իրենց ժամանակի արվեստը» (խոսքը առաջադեմ արվեստի մասին է)²¹: Ու դեռ դժբախտություն չէ, ասում է նկարիչը, որ տվյալ պահին այդպիսի մարդկանց թիվը փոքր է լինում: Իսկ եթե նրանք զգալիորեն շատ են, հատկապես մտավորականության շրջանում՝ դա համարում է կործանարար, խաթարող մեծ ուժ արվեստի զարգացման ճանապարհին: Այստեղ Սարյանը մի

²⁰ М. Сарьян, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.

²¹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 88:

անգամ ևս հիշեցնում է իմպրեսիոնիստներին և նեռիմպրեսիոնիստներին՝ Մանեին, Մոնեին, Սիսլեին, Ռենուարին, Պիսսարոյին, Գեգային և այլոց, ապա պոստիմպրեսիոնիստներին՝ Գոգենին, Վան Գոգին, Սեղանին և այլոց, որոնք իրենց կենդանության օրոք (ու նույնիսկ հետո էլ երկար ժամանակ) այնքան կարիք, ցավ ու տառապանք կրեցին և... միայն այն պատճառով, որ նոր էպոփա էին բացում արվեստի էվոլյուցիայի ճանապարհին ու առաջադրում էին էսթետիկական և գունապլաստիկական նոր հիանալի սկզբունքներ, որոնք անհասկանալի էին իր դարն ապրած ճաշակի ավանդներով կաշկանդված քննադատներից շատ-շատերին, պաշտոնական հիմնարկներին, ակադեմիային ու հասարակությանը։ Այս հանգամանքը նկարիչը համարում է ավելի վտանգավոր արվեստի պատմական առաջընթացի համար, քան ամեն տեսակ պետական-իդեոլոգիական ռեակցիոն արգելքները, բոնությունը և հալածանքները։

Երբ Սարյանը ասում է, թե արվեստը առաջ է ընթանում «մեկը մյուսի ետեից զագաթներ հաղթահարելով», չի նշանակում, որ նա ուզում է հավաստել արվեստի զարգացումը՝ միշտ ցածրից բարձրը։ Դա չի նշանակում, թե նա գտնում է, որ, օրինակ, մեր օրերի արվեստը ավելի կատարյալ, մշակման որակով ավելի բարձր է, քան անտիկ Հելլադայի, միջնադարի կամ Վերածնության արվեստը, որովհետև ստեղծվել է պատմականորեն ավելի ուշ ժամանակաշրջանում։ Եվ ոչ էլ ճիշտ է համարում, երբ անցյալի որևէ էպոփայի

արվեստ,—որքան էլ կատարյալ ու վսեմ,—ֆետիշաց-
 վում է, թերագնահատվում կամ ցածր է դասվում Հե-
 տագայի ու ժամանակակից արվեստը։ Նա ուշադրու-
 թյուն է հրավիրում առանձնապես հունական կուլտու-
 րայի հանդեպ եղած կուրության վրա՝ կուրություն, որը
 անցյալ դարում (որոշ շրջաններում նույնիսկ այսօր
 էլ) մտավորականությանը, — չնչին բացառություննե-
 րով, — թույլ չի տվել գնահատելու արվեստի շատ էպո-
 խաներ և հենց իր կողքին զարգացող գեղարվեստա-
 կան մեծ ու կարևոր շարժումներ, հանճարեղ արվես-
 տագետների եղկեր։ Իսկապես, հիշենք, որ նույնիսկ
 այնպիսի մի մարդ, ինչպիսին Հեգելն էր, որը հերքեց
 էսթետիկայի ասպարեզում առկա բազմաթիվ նախա-
 պաշարումներ, այնուամենայնիվ «Վինկելմանի աղդե-
 ցությամբ և առհասարակ նեոկլասիկների ճաշակի
 տեսանկյունով, — երկուսն էլ օտար էին Հեգելի մտա-
 ծելակերպին, — կատարելությունը փնտրում էր միայն
 հունական քանդակում՝ դանդաղ վախճան կռահելով
 ժամանակակից արվեստի համար»²²։ Էլ չենք ասում
 քննադատների, արվեստի պատմաբանների, արվես-
 տագետների այն հոծ բանակի մասին, որը ամբողջ
 Եվրոպայում ոչ միայն չէր հասկանում իր ժամանակի
 առաջադեմ արվեստը, այլև իսթարում էր նրա առաջ-
 ընթացը։ Չենք խոսում նաև Վինկելմանի էսթետիկայի
 մի քանի գլխավոր ասպեկտների բացասական աղդե-
 ցության մասին XX դարի սկզբին, նորագույն արվես-
 տի ծննդյան օրերին և նույնիսկ այսօր, կուլտուրայի

²² L. Venturi, Saggi di critica, Roma, 1956, p. 12.

պատմությամբ զբաղվող որոշ մարդկանց վրա: Ուրեմն, նկարչի կարծիքով, ժամանակի ընթացքը՝ ետ թե առաջ, ինքնին արվեստային արժեքի որոշման շափանիշ լինել չի կարող: Հետեաբար, ասում է նա, «նվաճված գագաթները» աստիճանաբար մեկը մյուսից չեն բարձրանում արվեստի պատմության ճանապարհի երկարացմանը համեմատ: Այդ առումով,—«Զարգացումը ոչ թե ուղղաձիգ է գեղի վեր, այլ զիգզագաձև՝ հորիզոնականով: Եվ այստեղ, արդեն, գագաթները անհավասար են, անկանոն դասավորությամբ՝ կարող է անցյալի գագաթը ավելի բարձր լինել, քան դրա նկատմամբ ապագայինը կամ հակառակը»:

Սակայն արվեստի փոփոխությունը, անկախ դրանից, օրինաշափ երեւյթ է և, նկարչի կարծիքով, պայմանավորված է ընդհանուր քաղաքակրթության շարժման պրոցեսում տարբեր էպոխաների առաջադրած խնդիրների, հոգեբանական մթնոլորտի տարբերությամբ: Ըստ այդմ էլ՝ «Ամեն մի դարաշրջան մերժում է ինչ-որ հին դոգմաներ և ստեղծում ինչ-որ նոր կոնցեպցիաներ: Այսօր չի կարելի մարդկանց շողոքորթել երեկվա դոգմաներով»,—գրում է նա²³: Եվ այդպես, արվեստը ընթանում է անընդհատ բացասման և նորի ստեղծման ճանապարհով՝ շժիտելով «Հնի» որակը և նրանում առկա համաժամանակային-համամարդկային իդեալները, իդեաները, զգացմունքները, որոնք բոլորը եկող սերունդը վերամարմնավորում է յուրովի, իր դա-

²³ M. Сарьян, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.

րաշրջանի առաջ քաշած պրոբլեմներին ու ոճին համեմատ։ Ուրեմն ամեն մի կոնկրետ արվեստագետ պետք է հետ շմնա իր ժամանակից։ Եվ եթե նա դիտակցում է այդ ու ցանկանում ազատագրվել այն ամենից, ինչ արդեն ապրել է իր դարը, ապա պետք է ունենա աշխարհը վերզգայելու-վերապրելու, հայտնագործելու առաջին ակնթարթների անմիջականությունը պահելու ընդունակություն և անկեղծություն ամեն ինչ՝ կյանքի, ինքն իր, արվեստի, անցյալի տրագիցիաների և այլնի նկատմամբ։ Կեղծ նորարարությունը ոչինչ է։ Սարյանը գրում է՝ «Անկեղծության միջով է ընթանում նորարարության ուղին»²⁴։

Սարյանի կարծիքով, բնական է, որ արվեստի ասպարեզում մեծ հեղաշրջումները կատարում է երիտասարդությունը՝ միշտ էլ նոր սկզբունքներ ստեղծելով իր էպոխայի հնացած արվեստը բացասելով, բայց նրա ինչ-ինչ հեռանկարային դժերը և առհասարակ անցյալի մշակութի հատկապես իր ժամանակին համանշուն էպոխաների արվեստի ստեղծագործական յուրացման հիմքի վրա։ Այս պրոցեսում է, որ անհրաժեշտաբար դրսելու գործընթացը է մի ամբողջ երիտասարդ սերնդի համարձակությունը, ավյունը, մտքի սրությունն ու թարմությունը։ «Արվեստի մեջ երիտասարդություն,— ասում է նկարիչը, —նշանակում է հայտնագործության անհագ պահանջ, նորը տեսնելու և պատկերելու կարողություն։ Ես ողջունում եմ այն երիտասարդ նկարիչներին ու քանդակագործներին, որոնք, առանց ժըմ-

²⁴ Նույն տեղում։

տելու նախորդների փորձը, նոր ու շտրորված ուղիներ են փնտրում, նետվում են դեպի անհայտն ու անծանոթը՝²⁵: Ուրեմն, նորը կերտելու համար հնի ստեղծագործական բացասում ու դոզմաների մերժում և ոչ թե նախորդների փորձի ժխտում,—ահա նկարչի հավատամքը:

¶

«Բարձր արվեստը, վերջիվերջո, ժողովուրդն է ստեղծում իր զավակներից սմանց, կոնկրետ արվեստագետների ձեռքով»,—ասում է Սարյանը²⁶: Հասարակության և անհատի, ժողովրդի և ստեղծագործողի կապը օրգանական ու անքակտելի է նկարչի խորհրդածություններում: Եվ ժողովրդի հավաքական իդեալը առանձին անհատների միջոցով արտահայտելու այս պատկերացումը նկարչի մոտ ընդհանուրի և եղակիի պարզ-մեխանիկական կամ զուտ թվային-քանակական առնչություն չէ, այլ հոգևոր-որակական փոխներգործություն, ուր երկմիասնության բերվեռները ընկալված են իրենց ճշմարիտ ֆունկցիայով՝ առանց որևէ կողմի նշանակությունը նվազեցնելու կամ գերազնահատելու,—բոլոր պարագաներում, սակայն, ի մտի ունենալով անհատ հանճարի կոլեկտիվ անստեղծելիության և նրա ինքնազատ դրսնորման անհրաժեշտության գաղափարը:

²⁵ Յրանսիացի լրագրող Ռաուլ-Ժան Մուլենի գրառումից (ահեն «Գրական թերթ», 1973, 6 մայիսի):

²⁶ «Գրառումներ իմ կյանքից», էջ 6:

Արվեստը նկարչի դատողություններում հասարա-
 կական երևույթ է թեկուզ այն պատճառով, որ կոլիկ-
 տիվը պայմանավորող կոմունիկացիայի կարևոր ձև է:
 «Արվեստի միջոցով,—գրում է նա,—ստեղծվում է
 բազմահազար մարդկանց հոգեսր շփումը»: Արվեստի
 միջոցով մարդիկ հասկանում են իրենք իրենց ու միմ-
 յանց: Մեծ արվեստագետը իր մեջ ներառում է մաս-
 սաների բազմազանությունը և հարստությունը: Ահա
 թե ինչու մարդիկ մեծարում ու սիրում են անհատների,
 որոնք կարողանում են բացահայտել այն անսահմանը,
 որը միլիոնավոր մարդկանց մեջ է ամփոփված»²⁷: Ար-
 վեստը արտացոլում է ժողովրդի կյանքը, նրա հոգե-
 բանությունը, իդեաներն ու իդեալները, վիթխարի դեր
 է կատարում նրա ինքնաճանաշման անընդհատ պրո-
 ցեսում: Հասարակությունն է պահում արվեստագետին,
 տալիս նրան ստեղծագործելու թե՛ նյութական, թե՛
 հոգեսր սնունդ: Հանճարը բնածին և նկարչի կարծիքով
 անբացատրելի ընդունակություն է, ճիշտ է, բայց ժո-
 ղովուրդն է ուղղություն տալիս նրա զարգացմանը՝
 ֆամանակն ու հասարակությունն են նրա մեջ առա-
 ջացնում այս կամ այն խնդիրը արծարծելու պահանջն
 ու անհրաժեշտությունը,—լինի բովանդակության, թե
 ձեր ասպարեզում՝ միենույն է: Արվեստագետի հոգու
 հարստությունը համաժողովրդական ոգու հարստու-
 թյան մի մասն է: Ժողովուրդը նկարչին, գրողին, երա-
 ժըշտին և մյուս ստեղծագործողներին ծնում, դաս-
 տիարակում և մղում է դեպի կյանքի մեծ հորձանու-

²⁷ Նույն տեղում, էջ 149:

տը,—կոսմոսի և մարդու էության հափշտակող գեղեց-
 կությունների ու զարմանալի առեղծվածների, իր ան-
 սահման երկակայության ու անվերջ երազանքների
 զմայլելի աշխարհը: Կարճ ասած, ժողովուրդը կյանք
 է տալիս և վստահում, հավատում արվեստագետին:
 Վերջինս էլ պետք է արդարացնի իր հանդեպ եղած այդ
 վստահությունն ու հավատը: Արվեստագետը «պետք
 է նվիրվի ժողովրդին ծառայելու մեծ իդեալին և
 դառնա նրա սիրտն ու հոգին»,—գրում է Սարյանը²⁸:
 Նա պետք է լինի մարդկության հոգեոր կյանքի ավան-
 դարդում, լինի հասարակական բարոյականության ա-
 ռողջ և ապագա ունեցող հատկանիշների հետեւորդն ու
 տարածողը: «Իսկական նկարիչ լինելու համար անհրա-
 ժեշտ է,—գրում է նկարիչը,—ամենից առաջ լինել իր
 հայրենիքի աղնիվ քաղաքացին, լինել իր ժամանակի
 առաջավոր գաղափարների կրողը: Պետք է արտահայ-
 տել հասարակական այն ուժերի իդեալները, որոնք ա-
 ռաջ են մզում մարդկությունը, բարձրացնում նրա լա-
 վագույն գծերը և ուժ հաղորդում մարդկանց՝ պայքա-
 րելու հետադիմականի դեմ»²⁹: Մշակույթի ասպարե-
 զում հետադիմությունը այնքան մեծ հասարակական
 շարիք է համարում նկարիչը, որ գտնում է, թե էսթե-
 տիկական զարգացումից մարդկանց ետ պահող արվես-
 տագետները և արվեստաբանները «ավելի վատ գեր են
 խաղում կյանքում, քան վատ քաղաքական գործիչնե-
 րը»³⁰: Իսկական արվեստագետը, ուրեմն, կոչված է

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 83:

³⁰ Նույն տեղում, էջ 151:

նաև պայքարելու այդպիսի հետադեմ ուժերի դեմ և առհասարակ պահպանելու «Հպարտությունը և արժանապատվության զգացումը, որը թույլ չի տալիս դլուխ խոնարհել այն ամենի առաջ, ինչը դեպի կործանում է տանում»³¹:

Որպեսզի կարողանա լիսպես ծավալվել և կատարել իր պարտքը, անհատ արվեստագետը պետք է ունենա առողջ ու իր գործունեությանը նպաստող միջավայր, այլապես, որքան էլ բնականից օժտված, կարող է մեռնել³²: Նշանակում է, թե անհրաժեշտ է հասարակական առաջադեմ խավերի ամուր նեցուկ, որպեսզի հնարավոր լինի դիմակայել հետադեմ, ոեակցիոնապաշտոնական տրադիցիաներին՝ առհասարակ արվեստի զարգացման համար ճանապարհ բացելու համար: Եվ առաջին հերթին՝ «Արվեստը պետք է լինի ազատ: Որքան շատ է սեղմվում այն խնամակալությամբ և խցկվում շրջանակների մեջ,—գրում է նկարիչը,—այնքան անկենդան ու անգույն է դրսեորվում նրանում կյանքը: Արվեստին ազատություն է հարկավոր, որպեսզի մարդու ստեղծադորժական պոտենցիալ ուժերը, առանց արհեստական միջամտության, խփեն շատըրվանի նման, ինչպես այդ կատարվեց Ռենեսանսի ժամանակ: Ինչո՞վ է բացատրվում բնության գրկում թոշուների նման աղատ ապրող «վայրենիների» հրաշալի քանդակործությունը»³³: Այս նշանակում է, թե

³¹ Նույն տեղում, էջ 149:

³² Նույն տեղում, էջ 149—150:

³³ М. Сарյան, Задачи современного строительства (*ահե՛մ ժամանակի արխիվների*, 1968, № 2).

առանց նպաստավոր պայմանների չի կարող ի հայտ
 գալ ու բացահայտվել անհատ-ստեղծագործողը, որի
 «դերը մեծ է ու անվիճելի»³⁴ ինչպես հասարակական
 կյանքի մյուս ասպարեզներում, այնպես էլ արվես-
 տում: Երբ նա ապրում է այդպիսի պայմաններում,
 հանդես է գալիս ոչ միայն իբրև իր ժողովրդի և իր
 ժամանակի լավագույն իդեալների ու իդեաների ար-
 տահայտիչը, այլև մտքի ու երեակայության թոփշի
 նոր հորիզոններ է բացում մարդկության համար, ակ-
 տիվացնում-արթնացնում է ստեղծագործական հնա-
 րավորությունները, բացում իմացական-էսթետիկական
 նորանոր աշխարհներ: Պատահական չէ, որ ըստ ան-
 հատ արվեստագետների որակի էլ արժեքավորվում է
 նրա ժամանակը, և «երբ մենք դիմում ենք անցյալի
 կուլտուրայի պատմությանը, ապա միայն այդ ան-
 հատների միջոցով ենք զգում տվյալ էպոխայի մեծու-
 թյունը կամ ոչնչությունը»³⁵: Իսկ նկարչի արվեստի
 արժեքը, ըստ Սարյանի, պայմանավորված է նրա
 ստեղծագործական անհատականությամբ ու հոգու խո-
 րությամբ, ինչն էլ հավերժական կյանքով ապրելու որակ
 է ապահովում իր գործերին, ապագա սերունդներին
 հուզում և նրանց մեջ մտորելու ցանկություն է առա-
 ջացնում իր ընդգրկած թեմաների ու մոտիվների, իր
 արտահայտած ապրումների ու գաղափարների, իր էս-
 թետիկական ու տեխնիկական սկզբունքների մասին:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

Վաղուց հետեւ Սարյանը հանդես է գալիս տարբեր քաղաքակրթությունները մերձեցնելու, Արևելքի և Եվրոպայի գեղարվեստի մտածելակերպերը սինթեզելու ջատագով։ Աշխարհայացքային, ոճական և ձևաբանական զանազան սկզբունքներ կարող են այս կամ այն երկրում, այս կամ այն դպրոցի, նկարչի երկերում գտնել իրենց օրգանական միաձուլումը և ստեղծել բոլորովին նոր որակ՝ համաշխարհային արվեստի պատմությանը բերելով նշանակալից արժեքներ և առաջարկելով ակտուալ պրոբլեմներ։ Առհասարակ նկարչի խորհրդաժություններում աղքերը հանդես են գալիս իրենց առանձնակի ես-ը ունեցող կոլեկտիվ ինդիվիդուալներ՝ երկրագնդի համայն մարդկություն ամբողջ ժամանակի մեջ և մարդ ընդհանուր հասկացողության տակ։ Այս պատճառով էլ նրա համար մի առանձին նշանակություն է ստանում համընդհանուր արվեստի պատմության և տարբեր աղքերի արվեստների ու առանձին նկարիչ անհատների միջև եղած հարաբերությունների ու առնչությունների ուսումնասիրումը։ «Առանց շփումների ոչ մի ժողովուրդ, ոչ մի արվեստագետ, մշակույթ չի կարող ստեղծել։ Կղզիացումը աղքատացում է բերում և հետո մահ»³⁶։ Սա բազմիցս հաստատվել է համաշխարհային քաղաքակրթության ողջ պատմությամբ, հաստատվել է այն ճշմարտությամբ,

³⁶ Մ. Սարյան, Դեպքեր, դեմքեր, մտորումներ, «Սովետական արվեստ», 1967, № 3:

որ տարբեր ժողովուրդներ իրենց լուման մտցնելով այդ համընդհանուր քաղաքակրթության մեջ, միաժամանակ անընդհատ սնունդ են առել դրանից, ստեղծագործաբար յուրացրել անհրաժեշտ սկզբունքներ և հարստացրել իրենց ազգային մշակույթը: Իսկ այն դեպքում, երբ այս կամ այն ժողովուրդը աշխարհագրական ու պատմական ինչ-ինչ պայմաններում ստիպված կղզիացում է ապրել՝ դատապարտվել է մահվան: Նույնն է կատարվել և կատարվում է անհատ արվեստագետի ակամակամ գիտակցված կղզիացման պարագայում:

Այս համոզմունքին նկարիչը եկել է շատ վաղուց, 1902—1903 թվականներին, իր ժողովրդի մշակույթը և համաշխարհային քաղաքակրթությունը ուսումնասիրելով: Նշված հարցերի մասին նա սկսել է մտորել այն ժամանակ, երբ դեռ չեր ավարտել ուսումը, բայց արդեն գիտակցաբար նայում էր նոր նախիջևանում, Մոսկվայում, էջմիածնում պահվող հայկական ծաղկագարդ ձեռագրերը, խորազնին հայացքով դիտում էր Հայաստանի տարրեր մասերում գտնվող մյուս, հատկապես Բագրատունյաց հարստության շրջանի արվեստի հուշարձանները: Անիսական մշակույթում նա տեսավ բյուզանդական, պարսկական, արաբական և այլ աղղերի արվեստների արձագանքը, դրանց որոշ կողմերի օրգանական միաձուլումը: Միշաղային առևտրական խոշոր կենտրոն հանդիսացող այդ քաղաքը մտածելակերպերի, աշխարհայացքների ու տրադիցիաների խաչմերուկ էր: Եվ մերձեցման ու շփումների միջոցով էր նաև, որ անիսական արվեստը սնվում ու ստեղծում

էր նորանոր որակներ: Ստեղծագործական առաջին ինքնուրուցն քայլերը կատարելիս Սարյանը հետեւց իր մեծ նախորդների՝ Անիի արվեստագետների փորձին: Այդ ժամանակ, արդեն, նրան հոգեհարազատ էին՝ եպիպտական արվեստի ոճական պարզությամբ արտահայտված մոնումենտալիզմը և ձեւերի ընդհանրացված ըմբռնումը, իտալական ունեսանսի նկարչությանը հատուկ կենսական ճշմարտացիությունը և մարդու աստվածացման իդեալը, պոստիմպրեսիոնիստների գոնային ըմբռնումները և աշխարհը ընկալելու-մեկնելու ազատությունը: Ըստ որում, «օտար» տրադիցիաները նա յուրացնում է Հայրենի մշակույթի՝ գլխավորապես մանրանկարչության, ճարտարապետության, գեկորատիվ-կիրառական արվեստի ազգային մտածելակերպի տեսանկյունից:

Սարյանի պատկերացմամբ, համաշխարհային կուլտուրայի պատմությունը՝ իր ժաղկման նշանավոր էպոխաներով, հայտնի ազգային դպրոցներով, առաջադեմ ուղղություններով, մեծ անհատականություններով,—փաստորեն կազմում է համաձուլումների և միասնացումների երկարատև ընթացք, որը առաջ է մղվել բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների շանքերով: Բայց այդ համաձուլումները նպատակ չեն ունեցել և չեն վերացրել ազգային կուլտուրաները: Միասնացումների տեսնդենցը չի հղել ու չի լինելու կոսմոպլիտիսմը: Ընդհակառակը, միաձուլման ու միասնացման ամեն մի դեպք ստեղծել և այսուհետև ստեղծելու է կամ մի նոր, վառ ու ինքնատիպ արվեստ, կամ վազուց ծնված ազ-

գային արվեստի տրադիցիայի ոլորտում մի նոր ուղղություն՝ միշտ էլ մնալով համաշխարհային քաղաքակրթության անքակտելի մաս։ Սարյանը նշում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ արվեստի որևէ նշանավոր ուղղություն սկզբնավորվում է մի կոնկրետ ժողովրդի մշակույթում և ազդելով-ընդլայնվելով տարածվում այլ ժողովուրդների մոտ՝ դարձյալ ունենում է ո՞չ միատեսակ դրսեորման կերպ ու բովանդակություն։ Միենուն ընդհանուր ուղղությունը յուրաքանչյուր ժողովրդի արվեստում ստանում է յուրահատուկ ընթացք։ «Որքան տարբեր է, օրինակ, նույն Ռենեսանսի ռեալիզմը իտալիայում, իսպանիայում, Հոլանդիայում, Ֆլանդրիայում կամ իմպրեսիոնիզմը ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Հայաստանում»,—ասում է Սարյանը։ Նա ամբողջը դիտում է կոնկրետի մեջ՝ օրգանական կապ և միաժամանակ էական տարբերություն տեսնելով համամարդկային-համընդհանուր արվեստ և մասնավոր-աղգային արվեստ հասկացությունների միջև։ Այս դիալեկտիկական փոխհարաբերության արտացոլումը նկարիչը դիտում է անցյալի ու ներկայի մեծ արվեստագետ-անհատների ամբողջ ստեղծագործության և մեկ առանձին երկում՝ ասելով, որ դա պատմական օրյեկտիվ օրինաշափություն է, ճիշտ է, բայց ո՞չ արվեստագետ-սուբյեկտից անկախ, կույր տարբերայնությամբ գործող երկույթ, այլ նրա դիտակցական աշխատանքի, ըստ որում՝ ծանր ու բարդ աշխատանքի արդյունքը։ Իր երիտասարդական տարիների ստեղծագործական որոնումների մասին խոսելիս գրում է՝ «Ծատ

դժվար էր գտնել այն լեզուն, որը իմ հին ժողովրդի
 հոգուն նույնքան հարազատ լիներ, ինչքան իր խսկ լե-
 զուն, արվեստի այն լեզուն, որը մյուս քաղաքակիրթ
 ժողովուրդների սրտին նույնքան մոտ լիներ, ինչքան
 իմ ժողովրդի հոգուն...»³⁷: Ուրեմն, ազգայինի և համա-
 մարդկայինի միասնություն, ավելի ճշգրիտ՝ ազգայինի
 մեջ համամարդկային և հակառակը: Երկու հավասա-
 րագոր, փոխներթափանցված ուժերի ամրապինդ ձուլ-
 վածք, որում ըստ նկարչի չեզոքացված չէ ո՛չ մեկը,
 ո՛չ մյուսը: Այս ձուլվածքը պատմականորեն շարժվող
 երեսութ է և յուրաքանչյուր դեպքում ստեղծվում է սե-
 փական ազգային գեղարվեստական փորձի խորը իմա-
 ցության ասպեկտով այլ արվեստների (նույնքան կոնկ-
 րետ-ազգային) յուրացումով: Այս առումով փայլուն
 օրինակ կարող է լինել Հենց իր՝ Սարյանի, ստեղծա-
 գործական փորձը: Նա հայ մշակութին մեծ ծառայու-
 թյուններ է մատուցել մի քանի տեսակետներից, որոնք
 ունեն պատմական անգնահատելի նշանակություն: Տվյալ
 դեպքում հիշենք դրանցից մեկը: Դժնդակ հան-
 գամանքների բերումով հայկական պրոֆեսիոնալ
 կերպարվեստի ընթացքը կանգ առավ XIV դարում: Եվ
 առաջին հերթին Սարյանն էր, որ դեռ երիտասարդ տա-
 րիքում կամուրջ ձգեց դեպի միջնադար՝ հայկական
 գունագրության վաղեմի տրադիցիաները վերականգ-
 նելով և XX դարի էսթետիկական պահանջների տեսա-
 կետից ազգային մտածողությունը զարգացնելով: Սա
 մեծագույն սխրանք է մեր ժողովրդի հոգեւոր կուտու-

³⁷ «Գրառումներ իմ կյանքից», էջ 94—95:

բայի, մասնավորապես կերպարվեստի հարատևման ու առաջընթացի ասպարեզում՝ գործ, որում խոշոր լումա ունի նաև Հակոբ Կոչոյանը։ Ըստ որում, քանի որ առհասարակ մեկ առանձին ժողովրդի (այդ թվում և հայ ժողովրդի) արվեստը միատարր չէ ու կազմված է իրարից որոշակի կողմերով զգալիորեն տարրեր ոճաձևաբանական տրադիցիաներից և ուղղություններից, ուստի ազգայինի գոյությունը անհատի (տվյալ դեպքում Սարյանի) ստեղծագործության մեջ պայմանավորված է այն նախասիրություններով, որոնք նրան դրդել են վերցնել անցյալի հարազատ ազգային մտածելակերպի այս կամ այն ավանդն ու սկզբունքը։ Եվ եթե նկատի ենք ունենում, օրինակ, միջնադարի հայկական ազգային կերպարվեստի ճյուղերից մանրանկարչությունը, ապա պարզ տեսնում ենք, որ Սարյանը գլխավորապես յուրացրել ու առաջ է մղել որոշակի ուղղություն։ «Հայկական մանրանկարչությանը,—գրում է նկարիչը,—ես հիմնովին ծանոթացել եմ շատ վաղուց, Հայաստանում ճամփորդելու առաջին տարիներին, 1900-ական թվականների սկզբներին՝ էլ ավելի առաջ տեսած լինելով բազմաթիվ ծաղկազարդ ձեռագրեր նոր նախիջեանում ու Մոսկվայում։ Այդ հոյակապ արվեստը, որը ընդհանուր գծեր ունի քրիստոնյա մյուս ժողովուրդների արվեստի հետ, ունի նաև իր առանձնահատկությունները, իր ազգային բնույթը։ Ինքն իր մեջ նույնապես տարբերություններ ունի՝ նայած թե Հայաստանի ո՞ր շրջանում է ստեղծվել ու զարգացել։ Մի կողմից դամաքուր գրքային, մանրանկարին ավելի համապատաս-

խանող, նրբությամբ ու դետալների մշակվածությամբ
աշըի ընկնող արվեստ է: Եվ սա ավելի պարզ երևում է
կիլիկյան մանրանկարչության մեջ: Մյուս ուղղությանը
պատկանող պատկերները կարծես թե պատահականու-
րեն են մտցված գրքի մեջ: Ես դա համարում եմ գըր-
քային որմնանկարչություն, որը ավելի հատուկ է Մեծ
Հայաստանի գեղանկարչությանը: Այդ աշխատանքները
պատ են պահանջում..., դուքս են զարդանկարի շրջա-
նակից և մոնումենտալ են: Այդ աշխատանքներին բնո-
րոշ են պատկերման ազատությունը, գծերի ու վրձնա-
հարվածների մեծ թափը և արտացոլվող թեմայի խորը
մեկնաբանությունը»³⁸: Ընդհանուր առմամբ այստեղ
արվեստի պատմաբանի հմտությամբ և ճիշտ որոշա-
դրված է ոճական երկու մեծ տեսնդենցների գոյությունը
հայկական մանրանկարչության մեջ: Բայց նկարչի նա-
խասիրությունը ևս ակներև է: Հստակորեն ընթերցվում
է, որ նրան ավելի հոգեհարազատ է Կենտրոնական
Հայաստանի մանրանկարչությունը: Եվ իրոք, Սարյանը
գլխավորապես ազդվել ու իր արվեստում զարդացրել է
«որմնանկարչական» ուղղությունը, ի տարբերություն
Կոչոյանի, որը գերազանցորեն կիլիկյան ուղղությունն
է ելակետ ունեցել և յուրովի առաջ մղել: Իհարկե եր-
կուսի ստեղծագործության մեջ էլ առկա են ոճաձեա-
բանական սկզբունքներ և մեկ, և մյուս տրադիցիա-
լից: Որ Սարյանը իր արվեստի մի քանի կողմերով
մոտ է Թորոս Ռոսլինին՝ հասկանալի է: Վերջինս պատ-
կանում է կիլիկյան դպրոցին, ճիշտ է, բայց ստեղծա-

³⁸ Նկարչի անտիպ ձեռագրերից:

գործական մեթոդի ու ձևամտածողության որոշ հիմունքային կողմերով հեռու է իր կողքին, հենց «մանրանկարային» ոճով աշխատող ծաղկողներից և ավելի մերձ է Մեծ Հայաստանի մոնումենտալիստներին։ Սակայն Սարյանի նկարչությունը որոշ կարեոր ընդհանրություններ ունի նաև մաքուր իմաստով «գրքային» ուղղությունը ներկայացնող մանրանկարիչների գործերի հետ։ Այս նույն կերպ՝ Կոչոյանին էլ խորթ չեն կենտրոնական Հայաստանի «որմնանկարային» ոճին պատկանող ձեռագրերը։ Բայց այստեղ խոսքը այն մասին չէ, որ Կոչոյանը գրքի ձևավորմամբ ու իլլուստրացիայով զբաղվել է ավելի, քան Սարյանը, այլ վերաբերում է նրանց զուտ ոճական մտածելակերպին։

«Առանց ազգային ավանդների, բարձր արվեստ երբեք չի ստեղծվել և չի էլ կարող ստեղծվել..., ազգային արվեստի հողից կտրված կարելի է հասնել ինտելիգենտիկական պրոֆեսիոնալիզմի, բայց սա արվեստ չէ», — գրում է Սարյանը³⁹։ Ուրեմն բավարար չեն այսպես կոչված պրոֆեսիոնալիզմը և զուտ նկարման հըմտությունը։ Որքան էլ առկա լինեն արվեստին խիստ անհրաժեշտ այդ հատկանիշները, միևնույն է դեռ արվեստ չեն։ Միայն կատարման հմտությամբ կարելի է իլլուզիայի հասնող ճշգրտությամբ իմիտացնել այս կամ այն «օտար» արվեստի հնարքներն ու տեխնիկան։ Բայց այդ ճանապարհով հնարավոր չէ դուրս գալ արհեստի, մեխանիկական ընդօրինակման սահմաններից, կարելի է անկյանք նկարչական արտադրանք ստեղծել սոսկ։ Օրինակ, իմպրեսիոնիզմը դիտելով որպես տի-

³⁹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 10։

պիկ ֆրանսիական արվեստի տրադիցիաների զարգացման արդյունք, Սարյանը զբա կրկնությունը այլ աղպային միջավայրում համարում է ուղղության արժեգրկում: «Իմպրեսիոնիզմը,—գրում է նա,—տիպիկ ֆրանսիական արվեստ է, որ աճել է ազգային հողի վրա: Այդ պատճառով էլ երբ իմպրեսիոնիզմը բազմաթիվ նկարիչների կողմից մեխանիկորեն փոխադրվեց այլ երկրներ, վերածվեց մեռյալ փաստի»⁴⁰: Բայց եթե մեխանիկորեն ուրիշ երկրներ փոխադրվելու դեպքում մեռցվեց Կլոդ Մոնեի, Օգյուստ Ռենուարի, Կամիլ Պիսարոյի ու նրանց ընկերների ստեղծած գեղարվեստական ուղղությունը, ապա նույն այդ ուղղությունը նույն երկրներում նոր, հիանալի դրսեորումներ ունեցավ, երբ դրա յուրացումը ամեն անգամ կատարվեց տեղական կուտուրայի տրադիցիաների հիման վրա: ազգային էսթետիկական-հոգեբանական զգացողության ու մտածելակերպի տեսանկյունից: Եվ ըստ Սարյանի հենց այս երկրորդ ուղիղով էր, որ «իմպրեսիոնիզմը նպաստեց համաշխարհային արվեստի զարգացմանը, խելամիտ նկարիչներին օգնեց տեսնելու իրենց բնությունը, իրենց երկրի կուտուրայի և ազգային տրադիցիայի արդիական գծերը, օգնեց ստեղծելու իրենց իմպրեսիոնիզմը»⁴¹: Այստեղ նա խորհուրդ է տալիս հիշել քաղաքակիրթ աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ իմպրեսիոնիզմի ընդօրինակման, բազմաթիվ փորձերը և համեմատել նույն ուղղության սկզբունքների ստեղծագործական փոխառման փաստերի հետ:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

Սարյանի կարծիքով, Համաշխարհային քաղաքակրթությանը և ինտերնացիոնալիզմը սղայմանավորված է այն կարևոր հանգամանքով, որ երկրագնդի տարբեր մասերում ապրող ու ստեղծող մարդը իր ֆիզիկական ու բնազդական հատկանիշներով, իր զգացմունքներով և ինտելեկտուալ ընդունակություններով միասնական ու մի է։ Զնայած ռասսայական ու լեզվական տարբերություններին՝ ազգերը քաղաքակրթությունը կերտում են նույն սրտով և դատողականությամբ։ Այդ պատճառով ինտերնացիոնալիզմը օբյեկտիվ, օբյնաչափ երևույթ է։ Սակայն քանի որ տարբեր ժողովուրդներ ապրում են աշխարհագրական, սոցիալական որոշակի պայմաններում և ստեղծագործում իրենց ազգային սուբյեկտին ու ձակատագրին համապատասխան, ուստի, իրար հետ ազդեցությունների և փոխազդեցությունների ամուր շղթայով կապված լինելով հանդերձ, մնում են ինքնուրույն։ Եվ այն, ինչ կոչվում է հասարակական մտածելակերպ՝ ծնունդ է առնում կոլեկտիվ կյանքի մեջ, որն անպայման կոնկրետ բնավորությամբ է զրսերվում։ Ու նկարիչը չի էլ ուզում մի պահ պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե երկրագնդի վրա ստեղծվեր միայն ու միայն մի տիպի մշակույթ։ «Մարդկության պատմության դինամիկան իր բազմազանության մեջ, ահա համաշխարհային արվեստի բովանդակությունն ու դեմքը»⁴², — ազդարարում է Սարյանը, ավելացնելով՝ «Ի՞սարկե կղզիացումը մահ է, բայց յուրացումը, շփումը պետք է

⁴² Նույն տեղում, էջ 83։

լինի ազգային հողի վրա, չկա՛ կոսմոպոլիտ արվեստ,
կա՛ ազգային ու համամարդկային արվեստ»⁴³: Նա
գտնում է, որ չէր ծնվի ինտերնացիոնալիզմ պատմա-
հասարակական երևույթն ու հասկացողությունը, տեր-
մինն ու իդեալը, եթե լիներ համաշխարհային քաղա-
քակրթության բազմազանությունը, որը ժողովուրդնե-
րից յուրաքանչյուրի սպեցիֆիկայի արդյունքն է: «Ան-
կրկնելի է յուրաքանչյուր ժողովուրդ, նրա՝ հոգեկան
կառուցվածքը,—գրում է նկարիչը,—իսկ դա ստեղծում
է նաև ազգային անկրկնելի արվեստ՝ ոռւսական ար-
վեստ, հայկական արվեստ, ֆրանսիական արվեստ,
վրացական արվեստ, գերմանական արվեստ, անգլիա-
կան արվեստ, իտալական արվեստ, ճապոնական ար-
վեստ և այլն: Այդ արվեստները հարստացնում են աշ-
խարհը: Ազգային արվեստները հանուր մարդկության
մարդկային արվեստի աղամանդի հանքերն են: Եվ որ-
քան բազմազան լինեն հանքերը, այնքան արժեքավոր
կլինեն մարդկության արվեստի աղամանդները: Բաղ-
մազանությունը նրա հարստությունն է: Այդ հարստու-
թյունը ծնում է նաև մարդկանց, արվեստների, երկր-
ների, ժողովուրդների մերձությունը: Մերձությունը
նմանեցում չէ: Նմանեցումը մերձության կորուստն է,
նրա ոչնչացումը: Ահա թե ինչու մեզ պետք է ոչ թե
նմանեցում, այլ միասնացում և փոխհարստացում:
Թող լինեն լավ ու բազմապիսի արվեստներ: Արվեստի
միօրինակությունը հոգնեցնում է, անտարբերություն է
ծնում, իսկ անտարբերությունը նպաստում է այն սկ

⁴³ Նույն տեղում:

ուժերի ծննդին, որոնք կործանում են... մարդկությունը և մարդուն»⁴⁴: Սարյանի հարցադրմամբ այստեղ բարձրացվում է նաև մարդու էթիկական հավերժական իդեալներից մեկը՝ մարդկայնության բարձրագույն կոչումը պահպանելու իդեալը:

Տրադիցիան Սարյանի պատկերացմամբ քարացած սկզբունք չէ: Առջասարակ համաշխարհային արվեստի պատմական ընթացքը ներկայացնում է մեկ միասնական պրոցես, որ ունի իր վերելքները և վայրէջքները, իր հիմնական օղակները և զարգացման տարրեր նախադրյալները, իր մեծ էպոխաները և ծաղկման շրջանները: Այս ամենը ներկայացնում են այն կենդանի հոսքը, որը ներառում է ժամանակի քաղաքակրթային ամրող բազմազանությունը, ճաշակի ամբողջ համակարգը: Ազգային առանձին տրադիցիաների պահպանումը այդ հոծ ամբողջության մեջ եղել է ու կա ոչ թե այս կամ այն՝ երբեք ստեղծված մակարդակի կույր ընդօրինակությունը և մեխանիկական շարունակումը (ինչը Սարյանի պատկերացմամբ վերջիվերջո վերածվում է մեռյալ ակադեմիզմի և դուրս է գալիս գեղարվեստական կենդանի ասպարեզից), այլ դրանց յուրացումը իրենց էվոլյուցիայի, իրենց հարափոփոխ իրադրության մեջ: «Ազգային ասելով շպետք է հասկանալ անցյալի տրադիցիաների կույր՝ պահպանումը կամ նոր բովանդակությունը հին ձեերի կաղապարների մեջ վերցնելը»⁴⁵, —ասում է նա, այդ տրադիցիաների

⁴⁴ M. Сарьян, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.

⁴⁵ «Գրառումներ իմ կյանքից», էջ 83:

օգտագործումը ժամանակի պահանջներին համապատասխան և դրանց անընդհատ առաջ մղումը: Սարյանը գտնում է, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանի մշակույթի ունի իր սկիզբը, զարգացումը և ավարտը: Հստորում, ավարտվելով, այն հող է նախապատրաստում մի այլ էպոխայի զարգացման համար: Այնպես որ, մեկ ազգի և համաշխարհային արվեստի ամբողջական, միասնական ընթացքը ներառում է պատճառահետեւանքային անվերջ պրոցեսների օղակներ:

Ազգային ասելով պետք է նկատի ունենալ մշակույթի թե՛ բովանդակության, թե՛ ձևի ու ոճի խնդիրը, արվեստի ամբողջ ոգին: «Ազգայինը, — զրում է Սարյանը, — պետք է դառնա ստեղծագործողի ներքին սեփականությունը, նրա ներքին մտածելաձևը իր զարգացման մեջ և ոչ թե մնա որպես նրանից դուրս գրանցվող օրինակելի օբյեկտ»⁴⁶: Ուրեմն, ազգայինը պետք է յուրաքանչյուր անհատի համար լինի մտածելաձև իր զարգացման մեջ՝ այսինքն այն, ինչը ենթադրում է կոնցեպցիաների զարգացում և նոր արժեքների ստեղծում: Այստեղ էլ Սարյանը շատ մեծ նշանակություն է տալիս արվեստագիտի ազգային սուրբ բնագդի հարցին: Նրա պատկերացմամբ ներքին մտածելաձևը ինչ-որ կետում արյան ձայնն է, նախնիների ոգու ներզգայումը, որ անընդհատ պատմական հոլովման մեջ է: Այն հանգամանքը, որ ներզգայման պրոցեսում բնագդը և ինտուիցիան կատարում են որոշակի դեր, թույլ են տալիս արվեստագետներին ներքնապես ունենալ այն

⁴⁶ Եռւմ տեղում:

նախադրյալները, որոնց շարժման շնորհիվ նրանք դառնում են ազգային ստեղծագործողներ և ոչ թե պարզ ընդօրինակողներ: Արտաքին իմիտացիայի դեպքում ազգային ոճ և ազգային կոլորիտ հասկացողությունները դառնում են անիմաստ երևույթ, առանց օրդանական ներքին կյանքի:

Ուրեմն, ազգային՝ ներքին էությամբ, զգացմունքների աշխարհով և մտածելակերպով: Այդ է պատճառը, որ մեծ արվեստագետները իրենց մեջ կրում են իրենց իսկ ժողովրդի կերտած կուլտուրական հուշարձանների սպին: Սա ցեղային այն հատկանիշն է, որը կենդանի է պահում տվյալ ժողովրդի մշակույթի բնույթն ու ձևամտածողության հիմնական տենդենցները, սերնդեսերունդ ուղենիշ լինելով ազգային արվեստի ներկայացուցիչների համար: Վահրամ Փափազյանի արվեստում նկարիշը հայկականն ընդգծում է այս կերպ՝ «Վահրամ Փափազյանը իսկական մոնումենտալիստ է, վիթխարիտաշտաբների մի դերասան-ստեղծագործող»: Նա տվեց Շերսպիրի միանգամայն նոր, միանգամայն հայկական և միանգամայն փափազյանական մարմնավորումը: Նրա մարմնավորած կերպարները ընդհանրացված են իրենց ամենափոքր շտրիխների մեջ անգամ: Դրանք օժտված են փիլիսոփայական խորությամբ, զգացմունքի և կրքի անշափելի ընդգրկումով, միաժամանակ վեհ են ու հերոսական: Հերոսական են ողբերգականության մեջ: Տիտանական մի զորություն կա նրա մեջ, որ հիշեցնում է մեր էպոսի և հեքիաթների հերոսներին՝ որքան դիցաբանական, ֆանտաստիկ, ամենի ու վերա-

ցական, նույնքան էլ ոհալ, մարդկային ու նուրբ»:
Դիալեկտիկական միասնություն են կազմում ազգային
վաղեմի տրադիցիաները և ստեղծագործողի անհատա-
կանությունը։ Դրանք բխում են մեկը մյուսից և հան-
դիսանում են մեծ արվեստի իսկական հիմքը։

Յուրաքանչյուր իսկական արվեստագետ, գտնում
է Սարյանը, պետք է բնազդական մղումներից և ին-
տուիտիվ զգացողությունից զատ խորապես գիտակցա-
կան վերաբերմունք ունենա ազգային մշակույթի
նկատմամբ։ Նա պետք է այնպես ամբողջական ու խոր
ուսումնասիրի իր ժողովրդի կուլտուրան, որ «շնչի այդ
կուլտուրայի պատմական զարգացման օդը»⁴⁷։ Ազգա-
յին մշակույթի յուրացման պրոցեսում մեկը մյուսին
լրացնում են բնազդականը, ինտուիտիվը և ռացիոնա-
լիստականը։ Չեր կարող ու չի կարող ստեղծվել մեծ
արվեստ, եթե այն կերտողները իրենց ոգու, ցեղային
հատկանիշների ուժեղ ու սուր դրսեորման հետ մեկ-
տեղ շունենային ու շունենան նաև խելամիտ կոնցեպ-
տուալ վերաբերմունք և սեփական ազգային մշակույ-
թի նկատմամբ, և այլ ժողովուրդների գեղարվեստա-
կան տրադիցիաների հանդեպ։ Ինքնին հասկանալի է,
նշում է Սարյանը, որ յուրաքանչյուր արվեստագետի
ստեղծագործության մեջ պետք է սինթեզված լինեն
սկզբունքներ թե՛ իր ժողովրդի կուլտուրայից, թե՛ անց-
յալի ու ներկայի համաշխարհային կուլտուրայից։ Միե-
նույն է, դա նորից տալիս է ազգային-համամարդկա-
յին արվեստ, եթե, իհարկե, ստեղծվել է ճիշտ ճանա-

⁴⁷ Նույն տեղում։

պարհով։ Այնպես որ, երբ Սարյանը դնում է, օրինակ,
Արևելքի և Արևմուտքի գեղարվեստական տրադիցիա-
ների մերձեցման, կապի ու սինթեզի խնդիրը, մեկի
կամ մյուսի վերացման պահանջ կամ մի ինչ-որ խառ-
նածին արվեստի պահանջ չի դնում։ Նրա կարծիքով,
Եվրոպայի արվեստը պետք է մնա Եվրոպական, Արև-
վելքինը՝ արևելյան,—իրարով փոխարստացած ու յու-
րովի գեղեցիկ։

Սարյանի տեսակետով, եթե նկարիչը իսկապես
տաղանդավոր է՝ չի կարող չուսումնասիրել տարբեր
երկրների, ազգերի, էպոխաների, ոճերի, ուղղություն-
ների գեղարվեստական ավանդները։ Ընդհանուր-էսթե-
տիկական առումով դա համարում է բազմաթիվ երե-
վույթների մեջ հավերժականը, համամարդկայինը
մարմնավորելու եղանակները ճանաչելու նրա ձգտման
և պահանջի արդյունք։ Սակայն հարցի այսպիսի ընդ-
հանրական ընկալումը ինքն իր մեջ դիտարկելիս էլ
շպետք է մոռանալ, նշում է նկարիչը, որ ամեն մի
կոնկրետ գեպքում մենք գործ ունենք կոնկրետ ժամա-
նակաշրջանում ապրող և կոնկրետ ժողովրդի պատ-
կանող արվեստագետի հետ։ Վերջինիս ստեղծագործա-
կան կյանքը և նույնիսկ ընդհանուր փիլիսոփայական
մտորումները ուղղակի թե միջնորդավորված ձևով
պատճառական կապի մեջ են իր ազգային որոշակի
ապրումների ու իդեալների հետ։ Եվ այս հանգամանքը
նկատի առնելու դեպքում է, որ պարզ է դառնում, թե
ինչու, համենայնդեպս, նա ընդգծված համակրանք և
ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում որոշ ո-

ճերի ու ուղղությունների նկատմամբ։ Զուտ սուբյեկտիվ-մարդկային նախասիրությունը այստեղ իհարկե որոշիլ գերէ կատարում և ունի իր խորախորհուրդ, ներթաքուն գրդիչները։ Բայց չի լինում այնպես, որ այս սուբյեկտիվ ֆակտորը լիցք շտանա կոնկրետ ցեղային, ազգային-պատմական զգացումներից և էսթետիկական, ոճածեաբանական ըմբռնումներից։

Սարյանի այդ միտքը կարելի է հաստատել հենց իր օրինակով։ Գիտենք, որ նա հատուկ սեր ունի եգիպտական մշակույթի նկատմամբ։ Դա պայմանավորված է եգիպտական ճարտարապետության, քանդակագործության, նկարչության ոճի մոնումենտալությամբ, ինչը այս կամ այն կերպ համահնչուն է թե՛ իր հայրենի մշակույթին, թե՛ իր ստեղծագործական նախասիրություններին։ Այս, որ Սարյանի արվեստի ոճը մոնումենտալ-էքսպրեսիվ է, բացատրվում է նաև նրա ազգային պատկանելությամբ։ Հազարամյակներից եկող հայ հոգևոր մշակույթի հատկանշական գծերից մեկը մոնումենտալությունն է, ըստ որում՝ էքսպրեսիվ-էպոսային մոնումենտալությունը։ Սա օրինաշափ է և ունի իր պատմական հիմքը։ Աներևակայելի կենսունակությամբ օժտված, թվով քիչ մի ազգ, որ իր գոյության ողջ ընթացքում պայքարել է ազատության և անկախության համար, պետք է որ ստեղծեր մոնումենտալ-էքսպրեսիվ արվեստ։ Աշխարհակալ տերություններին և ամենակուլ հրոսակներին դիմադրելու անհրաժեշտությունը անընդհատ վիթխարի ուժեր է ծնել հայ ժողովրդի մեջ և մղել տիտանական ակտիվության։ Այս

վեհությունն ու գերլարումը ինքնաբերաբար ու բնականորեն մոնումենտալություն և էքսպրեսիա են հաղորդել Հայկական արվեստին։ Իսկ Սարյանը բնազդով, ինտուիցիայով ու գիտակցաբար յուրացրեց այդ և զարգացրեց իր ժամանակի պահանջներին համեմատ։ Այստեղից էլ միանգամայն Հասկանալի է դառնում, թե ինչու նա հատուկ սեր ունի ոճի մոնումենտալության հանդեպ առհասարակ,—լինի եգիպտական, ասորաբարելական, սասանյան, թե այլ արվեստի, միևնույն է։

Սարյանը այն համոզմունքին է, որ չկան բարձր ու ցածր ոճեր, այնպես, ինչպես չկան բարձր ու ցածր ժանրեր։ Ամեն մի ոճով էլ ստեղծվել են արվեստի զլուխգործոցներ և արհեստավորական արտադրանք։ Նա շի զարմանում, և ընդհակառակը բնական է համարում, որ կան արվեստագետներ ու քննադատներ, որոնք ավելի նախապատվություն են տալիս այս կամ այն քաղաքակրթությանը, տրադիցիային կամ նկարիչներին։ Բայց այն, որ, օրինակ, նրանք իրենց նախասիրած ուղղությունը համարում են միակ կատարելությունը և դարձնում չափանիշ մի այլ ուղղություն զնաշատելու համար, Սարյանը համարում է «առնվազն ծիծաղելի»։ և գտնում, որ այդպիսի վարմունքն էլ հենց հանդիսանում է ակադեմիստական ճաշակի դաստիարակման հիմք։ «Իսկապես, ակադեմիզմը ուրիշ բան չէ, եթե ոչ որևէ ոճի բացարձակացում, սիեմաների անդհատ կրկնություն»,—ասում է նկարիչը⁴⁸։

⁴⁸ Նույն տեղում, էջ 9:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Բ Ո Ր Դ

Ա. — «Մանկական հայացքի»՝ որպես այժմեական սկզբունքի, սարյանական տեսակետը թ. — Արևելքի և Արևմուտքի ավանդների միաձուլման անհրաժեշտուրյան պահանջը Գ. — Սյուստեի բացասումը արդի կերպարվեստում Դ. — Պորտռետի ժանրի պահպանման դիրքորոշումը Ե. — Գույնի արտահայտչական ֆունկցիայի կարեռումը ժամանակակից արվեստում:

||

Սարյանը միադիմիագովազան է արդի արվեստի հոգեբանական ֆունկցիայի իր հասկացողությամբ: Նա այնքան աներեր է իր դիրքորոշման մեջ, որ հնարավոր հոգեբանական ասպեկտներից մեկը բարձրացնում է զրեթե պարտադիր պահանջի աստիճանին՝ ձրգուելով ներկայացնել այն որպես մեր օրերում միակ ձիշտ տեսակետը: Մյունխենում դիտելով մի ցուցահանդեսի նկարները, Սարյանը գրում է՝ «Դրանք կապ չունեին արվեստի հետ՝ պաթոլոգիան արվեստում: Արվեստը պետք է հրճվանք պատճառի մարդուն, երջանկացնի նրան և ոչ թե հիվանդագին մտքեր, վանող

զգացումներ ներարկի»¹: Ուրեմն, եթե ստեղծագործության հոգեբանական մոտիվը պաթոլոգիական է (որը ըստ նկարչի զուտ սուբյեկտիվ-բիոլոգիական լինելուց բացի նաև սոցիալ-պատմական երեսւթ է),՝ արվեստ կոչել չի կարելի: Սարյանը չի ընդունում կամ պակասավոր է համարում ժամանակակից գրական, թատերական, երաժշտական, կինոյի, կերպարվեստի բոլոր այն երկերը, որոնք չեն համապատասխանում հրճվանք ու երջանկության զգացում առաջացնելու արվեստի հոգեբանական ֆունկցիայի իր պատկերացմանը:

Նկարչի այս դիրքորոշումը կապվում է մարդու և բնության հարաբերության նրա ըմբռնմանը, որ ինքնին խիստ լավատեսական է և անմահանալու մարդկային իդեալին համապատասխան՝ «Մարդը բնությունն է, բնությունը՝ մարդը: Մարդը արտահայտվում է բնության, բնությունը՝ մարդու մեջ. բնությունը հավերժական է՝ մահ չկա»²: Դա առնչվում է նաև նրա էսթետիկական-հիմունքային գաղափարներից հետեւալին՝ «Մտեղծագործելու ունակությունը և ստեղծագործական պրոցեսը հենց երջանկությունն է, ուրեմն արվեստը պետք է երջանկացնի դիտողին: Տիրեցնող, աենտիմենտալ արվեստ չեմ սիրում»³: Ուրեմն, քանի որ արվեստը իր նախնական պոտենցիալում և արարվելու բնույթով հրճվալից ու երջանկաբեր է, ապա մարդու վրա ունենալիք հոգեբանական ներգործության նրա

¹ «Դրասումներ իմ կյանքից», էջ 9:

² Վ. Մարեկոսյան, Մարտիրոս Սարյան, էջ 42:

³ Նույն տեղում:

նպատակն էլ այդպիսին պետք է լինի: ինչպես տեսնում ենք, իր նախասիրություն-դրութը Սարյանը դիտում՝ է ունիվերսալ էսթետիկական պատճառահետևանքային կապի մեջ՝ համարելով այն արվեստի բուն էությանը համապատասխանող օրինաշափություն: Նրա կարծիքով՝ օպտիմիստական հոգեբանությունը, ինքնին, շարիքին դիմադրելու ուժու կորով է հազորդում, մարդու մեջ դաստիարակում անհանդուրժողականություն ամեն մի հակաբնական, հակահումանիստական երեսվթի նկատմամբ: Իսկ արվեստի նման հոգեբանական բովանդակությունը նկարիչը շափազանց անհրաժեշտ է համարում հատկապես այժմ, ինչպես ինքնը՝ ⁴ «արտահայտվում»՝ «արյունահեղություններով լի ու տեսնդադին պսիխոզով հագեցած մեր դարում»: Եվ մարդու հոգում ի բնե գոյություն ունեցող երջանկության, ազատության հավերժական իդեալի բացահայտման ու ներշնչման տեսակետի բարձունքից էլ նա դիտում ու գնահատում է մեր օրերի կովտուրական այս կամ այն փաստը:

Սարյանի կարծիքով, ոչ միայն տրամադրությամբ, այլև մոտիվների ընտրության մեջ արդեն արվեստը պիտի լինի օպտիմիստական: Եվ այս բնույթի գեղարվեստական գործեր ստեղծելու, ինչպես նաև մեր էպոխայում ակտուալ այլ խնդիրներ վճռելու ճանապարհին նա խիստ էական է համարում այսպիս կոչված «մանկական հայացքի» դերը: Դա պատահա-

⁴ «Գրառումներ իմ կյանքից», էջ 7:

⁵ Նույն տեղում:

կանություն չէ և հանդիսանում է ժամանակի ինտելեկտուալ որդնումների արձագանքը:

XX դարի եվրոպական մշակույթի զրեթե բոլոր կենտրոններում ընդդժված հետաքրքրություն ցուցաբերվեց մանկական հոգեկան աշխարհի նկատմամբ: Երեխայի զգայելու, երեակայելու, դատելու և ստեղծագործելու կերպը դարձավ ոչ միայն հոգեբանական լարորատորիաներում կատարվող էքսպերիմենտի ու գիտական անալիզի նյութ, այլև բազմաթիվ խոշոր արվեստագետների սեհոռուն: Ուսումնասիրության առարկա: Նա, որ մինչ այդ արվեստում հանդես էր գալիս սոսկ իրրե արտացոլման օբյեկտ՝ մերթ մանուկ Հիսուսի ու հրեշտակների, մերթ ուղղակի պորտրետային առումով, այժմ ներկայացնում էր նաև կյանքը տեսնելու և կերպավորելու բոլորովին այլ ֆունկցիայով: «Աշխարհին պետք է նայել երեխայի աչքերով», — ասում է Հանրի Մատիսը⁶: Ամեն մեկը յուրովի՝ նույն հավատամքն ունեն նաև Պոլ Կլեն, Մարկ Շագալը, Զարլը Սպենսեր Գապլինը, Վիլյամ Սարոյանը, Անտուան դը Սենթ Էկզյուպերին և բազմաթիվ այլ արվեստագետներ:

Մանկական հայացքի նկատմամբ բուռն հետաքրքրության պրոցեսում նկատելի են մոտեցման տարրեր ուղղություններ:

Այդ ուղղություններից մեկը առաջարկում է մանկական գեղարվեստական ստեղծագործության (տվյալ դեպքում նկարչության) յուրացում՝ փորձելով աշխար-

⁶ «Матисс» (Сборник статей о творчестве), М., 1958, стр. 89.

նպատակն էլ այդպիսին պետք է լինի: ինչպես տեսնում ենք, իր նախասիրությունն-դրույթը Սարյանը դիտում է ունիվերսալ էսթետիկական պատճառահետևանքային կապի մեջ՝ համարելով այն արվեստի բուն էությանը համապատասխանող օրինաշափություն: Նրա կարծիքով օպտիմիստական հոգեբանությունը, ինքնին, շարիքին դիմագրելու ուժ ու կորով է հազորդում, մարդու մեջ դաստիարակում անհանդուրժողականություն ամեն մի հակաբնական, հակահումանիստական երեսւթի նկատմամբ: Իսկ արվեստի նման հոգեբանական բովանդակությունը նկարիչը շափազանց անհրաժեշտ է համարում հատկապես այժմ, ինչպես ինքն է արտահայտվում՝ «արյունահեղություններով լի ու տենդագին պսիխոլով հագեցած մեր դարում»: Եվ մարդու հոգում ի բնե գոյություն ունեցող երջանկության, ազատության հավերժական իդեալի բացահայտման ու ներշնչման տեսակետի բարձունքից էլ նա դիտում ու դնահատում է մեր օրերի կուլտուրական այս կամ այն փաստը:

Սարյանի կարծիքով, ոչ միայն տրամադրությամբ, այլև մոտենական ընտրության մեջ արդեն արվեստը պիտի լինի օպտիմիստական: Եվ այս բնույթի գեղարվեստական գործեր ստեղծելու, ինչպես նաև մեր էպոխայում ակտուալ այլ խնդիրներ վճռելու ճանապարհին նա խիստ էական է համարում այսպիս կոչված «մանկական հայացքի» դերը: Դա պատահա-

⁴ «Գրառումներ իմ կյանքից», էջ 7:

⁵ Նույն տեղում:

կանություն չէ և հանդիսանում է ժամանակի ինտելեկտուալ որդնումների արձագանքը:

XX դարի եվրոպական մշակույթի գրեթե բոլոր կենտրոններում ընդդժված հետաքրքրություն ցուցաբերվեց մանկական հոգեկան աշխարհի նկատմամբ: Երեխայի զգայելու, երևակայելու, դատելու և ստեղծագործելու կերպը դարձավ ոչ միայն հոգեբանական լաբորատորիաներում կատարվող էքսպերիմենտի ու գիտական անալիզի նյութ, այլև բազմաթիվ խոշոր արվեստագետների սկեռում՝ ուսումնասիրության առարկա: Նա, որ մինչ այդ արվեստում հանդես էր գալիս սոսկ իբրև արտացոլման օբյեկտ՝ մերթ մանուկ Հիսուսի ու Հքեշտակների, մերթ ուղղակի պորտրետային առումով, այժմ ներկայացնում էր նաև կյանքը տեսնելու և կերպավորելու բոլորովին այլ ֆունկցիայով: «Աշխարհին պետք է նայել երեխայի աշքերով», — ասում է Հանրի Մատիսը⁶: Ամեն մեկը յուրովի՝ նույն հավատամքն ունեն նաև Պոլ Կլեեն, Մարկ Շագալը, Չարլզ Սպենսեր Չապլինը, Վիլյամ Սարոյանը, Անտուան դը Սենթ էկզյուպերին և բազմաթիվ այլ արվեստագետներ:

Մանկական հայացքի նկատմամբ բուռն հետաքրքրության պրոցեսում նկատելի են մոտեցման տարրեր ուղղություններ:

Այդ ուղղություններից մեկը առաջարկում է մանկական գեղարվեստական ստեղծագործության (տվյալ դեպքում նկարչության) յուրացում՝ փորձելով աշխար-

⁶ «Матисс» (Сборник статей о творчестве), М., 1958, стр. 89.

Հը վերարտացոլել մանկական պատկերացման ինչ-ինչ
կողմերին համապատասխան, իր դրսեորման գունա-
յին, գծային, տարածական որոշ հատկանիշների պահ-
պանումով հանդերձ: Շատ արվեստագետներ մակե-
րեսորեն մոտեցան ինդրին և ընթացան ընդօրինակե-
լու ճանապարհով: Նրանք աշխատեցին կատարել ան-
հնարինը, այսինքն՝ տարիքն առած մարդը փորձում է
մտնել ստեղծագործող երեխայի վիճակի մեջ, արհես-
տականորեն դառնալ երեխա և իրերը տեսնել ու բա-
ցահայտել ճիշտ նրա հայացքով, մտովի դեգերել
միայն այն իրականության մեջ, որին հասու է մանկան
մտածողությունը և որը էական է նրա համար: Գերա-
զանցապես պրիմիտիվիստների շրջանում կատարված
այս միտումը բերեց, իհարկե, չնչին արդյունքներ և
արվեստ ստեղծել չկարողացավ, որովհետև հիմն ի վեր
գուրկ էր որևէ ճշմարիտ-ինտուիտիվ և տրամաբանա-
կան հիմքից:

Սակայն գտնվեցին մարդիկ, որոնք սկզբից ի վեր
գիտեին, թե որքան վտանգավոր է տառացի իմիտա-
ցիան արվեստում և ո՞չ պիտանի որևէ նշանակալից
բայլ անելու համար: Ստեղծագործաբար յուրացնելով
երեխաների նկարչության որոշ հատկանիշներ, նրանք
պահպանեցին իրենց՝ տարիքն առած մարդկանց, աշ-
խարհայացքը, առարկաների ու երևույթների հանդեպ
իրենց վերաբերմունքը և ասելիքը, իրենց բարոյահա-
սարակական իդեալները:

Այս առումով առաջիններից մեկը Կլեեն էր: Խո-
շոր անհատականության տեր այս նկարիչը քննախուզ

Հայացքով՝ դիտեց երեխայի ստեղծագործությունը և
հոռի նմանակման փոխարեն «իմիտացրեց» նրա մի
շարք կողմերը։ Տարածության ազատ կազմակերպում,
մարդկանց և առարկաների պրոպրցիոնալ ձգբության
անտեսում, գույնի ո՞չ նատուրալիստական օգ-
տագործում, երբեմն այս կամ այն փոքր դետալը
նշանակալից դարձնելու, իրերը հավաքական «սխե-
մաներով» ներկայացնելու ձգտում,—ահա այն հիմ-
նական հատկանիշները, որոնք Կլեեն վերցրել ու յու-
րովի մեկնաբանել է երեխաների ստեղծագործություն-
ներից։ Այս ճանապարհով նա ստեղծել է խորապես
հուզիչ ու նուրբ լիրիկական, անկեղծությամբ ու ան-
միջականությամբ ներծծված, աղատության վեհ իդեա-
լով շնչավորված մի արվեստ, որը XX դարի գեղա-
նկարչության ամենահետաքրքիր երեսւթներից է։

Այս ուղղությանը պատկանող փառահեղ արվես-
տագետ է Շագալը։ Եթե Կլեեն մանկական ստեղծա-
գործությունից հիմնականում յուրացնում է հենց
նկարման եղանակի (գունային, գծային, պրոպրցիո-
նալ և այլն), տեսնելու կոնկրետ ձևի որոշակի հատ-
կանիշներ, ապա Շագալը գլխավորապես գործ ունի
երեխայի ֆանտազիայի հետ (սյուժենային-պատմո-
ղական, ընթացող գործողության տարածաժամանա-
կային և այլ առումներով)։ Ստեղծագործական էվոլյու-
ցիայի տարբեր էտապներում նա անկաշկանդ երազու-
մով «ֆիբոնաչի» է մանկական տարիներին իր ստա-
ցած տպավորությունները՝ նախվ ու միաժամանակ ան-
սահմանորեն գեղեցիկ, կյանքի պարզ երևութների

սուր ընկալումով ու երևակայական։ Այստեղ խառնը-վում են կարծես բոլորովին անկապակից տարբեր պահերի, օրերի ու տարիների գեպքերն ու մտորումները, որոնք դիտվում են տարածաժամանակային մի ֆոկուսի մեջ, մեկմիասնական-հավաքական իմաստով՝ երեխայի մտածողության հիմնական գծերից մեկը։ Նկարիչը ձգտում է կյանքի ընթացքը վերաբռտահայտել այուժեներով, որոնցում միահյուսված են իրականն ու մտացածինը, առօրյան ու հորինովին, հիպերբռլան ու պրողայիկը։ Միևնույն կտավի վրա՝ արտասովոր ու տարօրինակ այս աշխարհում, հաճախ միաձուլվում են գիշերն ու ցերեկը, ամառն ու ձմեռը, մշուշապատ հիշողություններն ու երազանքը, բազմազան երևակայիլի ու աներևակայիլի մարդակերպ, կենդանակերպ, թոշնակերպ խառնածին արարածներ ու ռեալ ֆիգուրներ, կյանքի ամենօրյա գործողություններ ու տոնական, արտակարգ դիպլածներ,—որքան նախիլ ու զավեշտական, նույնքան լուրջ ու տրամաբանական, որքան ասոցիատիվ, սիմվոլիկ ու ալեգորիկ, այնքան էլ ռեալ ու միանգամայն բնական երբեմն տոնական ու խրախճալից, երբեմն տխուր ու թախծալից, սակայն միշտ էլ գեղեցիկ ու գունագեղ-իր պատկերներում Շագալը ներկայացնում է, կարծես, մանկության օրերին լսած, բազմիցս վերապրած ու իրականության հետ շփոթած լուսեղեն հեքիաթներ։ Թեմատիկայով, սյուժեներով և իր ստեղծած ողջ մթնոլորտով Շագալը երևակայում է հենց «մեծ երեխայի» նման՝ արտահայտելով փիլիսոփայական, աղքային ու սոցիալ-հասա-

բակական իր առաջադեմ հավատամքը, երջանկության իդեալը:

Այս շարժման մյուս ուղղությունը ներկայացնում էն այն ստեղծագործողները, որոնք ի տարբերություն կլենի ու Շագալի, մանկական նկարչությունը շեն «իմիտացրել» ո՞շ կատարման ձևի, ո՞շ սյուժեային-երեվակայական տեսակետից: Նրանց երկերը «մանկական» են աշխարհը երազային, պայծառ ու հերիաթային տեսնելու ընդհանուր տրամադրությամբ միայն: Այս ուղղությանն են պատկանում, ահա, Սարյանը և Մատիսը (հասկանալի է յուրաքանչյուրը ըստ իր անհատականության): Եվ հենց այս արվեստագետներն են, որ մանկական հայացքի վերաբերյալ իրենց պատկերացումները հատուկ ուշադրությամբ ու հետեղականորեն արծարծել են նաև տեսականորեն:

Սարյանը անհատի կյանքի ողջ տեղության և էվոլյուցիայի մեջ խիստ էական է համարում նրա մանկության տարիները: «Երեխայի կյանքը,—գրում է նկարիչը,—հերիաթ է: Շրջապատում ամեն ինչ հետաքրքրում է, զարմացնում: Թվում է, թե ընկալվելուց և քոնը լինելուց հետո այդ ամենը դառնում է առօրյա, սովորական՝ կորցնելով իր նախնական հմայքը: Բայց մանկական երջանկությունը ամենաիսկականն էլ և մանկական ապրումները խոր, անջնջելի հետք են թողնում մարդու ողջ կյանքում»⁷: Իր՝ որպես մարդ և արվեստագետ ձեավորվելու պրոցեսում, օրինակ, նա ընդգծում է մանկության օրերի կատարած որոշիչ դերը:

⁷ «Գրառումներ իմ կյանքից», էջ 14:

Բազմիցս և տարբեր առիթներով նա ասում է՝ «Իմ
 արվեստագետ դառնալու պատճառը փնտրում եմ վաղ
 մանկությանս աշխարհում։ Երկու երեք տարեկան՝
 դուրս եկա մեր տնից ու ընկա տափաստան։ Տեսա
 բնությունը՝ անսովոր զարմանալի։ Ոնց որ երա-
 զում... Եվ ինչքա՞ն հեքիաթային է երեխայի համար
 աշխարհը...»⁸։ Ուրեմն, Սարյան արվեստագետը ըստ
 էության սկսվում է այն օրերից, երբ նոր էր կանգնել
 աշխարհին գեմ հանդիման և մանկան հազվագյուտ
 հրճվանքով զգում էր բնությունը իր հեքիաթային գե-
 ղեցկության մեջ։ Տարիների հետ, հակատագրի երջանիկ
 բերումով, այդ զգացողությունը չմարեց, մանկական
 տպավորությունները, ինչպես և ծնողներից լսած հե-
 քիաթները հուշ շղարձան, ապրեցին ու հետզետե
 սինթեզվեցին անկրկնելի հրաշք-ընդհանրացման, ակ-
 տիվ ու անկաշկանդ երեակայության մեջ։ Սարյանը
 նշում է, որ աշխարհի այդպիսի զգացողությունը և
 ներապրումը անընդհատ ուժգնացան իր հոգում և ար-
 դեն ուսումնառության վերջին տարիներին դարձել էին
 «մի հափշտակող սեր, կյանքի մի փիլիսոփայու-
 թյուն»⁹։ Եվ երբ համոզվեց, որ ուսումնարանում սովո-
 րած գիտելիքները թույլ շեն տալիս կտավի վրա իրաց-
 նելու իր այդ սերն ու փիլիսոփայությունը, 1903—1904
 թվականներին խզեց կապերը անցած դպրոցի հետ և
 սկսեց որոնել իր ներաշխարհը գրսնորելու միջոցներ։

⁸ Մ. Սարյան, Դեպքեր, դեմքեր, մտորումներ, «Հայրենիքի
 ձայն», 1966, 3 հուլիսի։

⁹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 4։

Ալյոտեղ նրա ներքին մղումները ներդաշնակվեցին ժամանակի պահանջին, և նա հանդես եկավ իբրև XX դարի սկզբի համաշխարհային գեղանկարչության արդեն ավանդարդային տենդենցներից մեկի՝ ֆանտաստիկ արվեստի փայլուն ներկայացուցիչ, — սեփական արտահայտչամիջոցներով և «ամելիքով», էմոցիոնալիմաստասիրական միտումների ինքնատիպությամբ: Իր ֆանտաստիկ գործերը, որոնք նա «Երազներ ու հերիաթներ» ընդհանուր խորագրի տակ է առել, մարդկային ֆիգուրներ, ընտանի ու վայրի բազմազան կենդանիներ և թոշուններ ընդգրկող բնապատկերային-կենցաղային նկարներ են: Դրանք տեսիլքներ են, ճիշտ է, բայց չունեն այն տարածաժամանակային խառն գումարումները, անձանաշելիորեն կերպարանափոխված մարդիկ ու կենդանիները, իրական առարկաների սխեմատիկ» վերաբերացոլումն ու «շարաճճի» դեփորմացիաները, խաղային մաներներն ու ձևերի տարօրինակ ընկալումները, որոնք հատուկ են բուն իմաստով մանկական երևակայությանն ու ստեղծագործությանը: Դրանք արտասովոր, «երեխայական», երազային ու հերիաթային են նկարային մոտիվների ընդհանուր տրամադրությամբ ու մթնոլորտով, վառ արտահայտչականությամբ, զարմանքի ու հրճվանքի զգացումներով: 1910-ական թվականներին Սարյանը այլևս հերիաթներ ու երազներ չնկարեց: Սակայն աշխարհի հանդեպ մանկական հայացքի անմիջականությունը, թարմությունն ու անարատությունը մնացին նրա հետագա երկերում: Եվ նկարչի ստեղծագործական էլլո-

Հյուցիալի ողջ ընթացքում ու բոլոր կտավներում փորձառու և իմաստնացած վարպետի հետ միասին երեվում է փոքրիկ Մարտիրոսը՝ մի ժպտադեմ ու կայտառերեխա, որ նայում է Արևին, նրա ճառագայթների ներքո բորբոքվող աշխարհին։ Կոստանդնուպոլսի, Թեհրանի, Եգիպտոսի տարբեր անկյունները, փողոցներն ու մարդկանց, խայտարղետ շուկաները, մրգերն ու պելզաժային այլեալ տեսարաններ պատկերող նրա սինթետիկ կտավները շողջողում են թանկագին քարհրի նման և աշքի են ընկնում մանկական անկեղծությամբ, ընկալման անսեթեթ պարզությամբ ու գեղեցկությամբ։ Միրաժային են դրանք գունալուսային ողջ համակարգով և այդքանով էլ արտասովոր։ Երեխային հատուկ նույն անկեղծությունը, բյուրեղյա մաքրությունը, բնության առարկաների ու երեսութների հանդեպ ունեցած անհուն սերը, մարդու իբրև բարձրագույն էակի, մեծարումը տեսնում ենք 1910-ական թվականներից հետո նկարված նրա բազմաթիվ գործերում, որոնք պատկերում են Հայաստանի լեռներն ու կիրճերը, ջրերն ու հովիտները, մարդուն ու նրա աշխատանքի պտուղները։

«Մարդը,—հաճախակի նշում է Սարյանը,—պետք է իր մեջ անընդհատ պահի իր մանկությունը (համեմայնդեպս այդպիսի մարդիկ կան, և նրանք երջանիկ են)։ Այսպես ասելով, շպետք է հասկանալ, թե իբր մարդ կարող է կամ որևէ մեկը պահանջում է, որ նա տառացիորեն պահի իր մանկության հոգեկան աշխարհը ամբողջությամբ (այդպիսի տարեց մարդը, եթե

կա, աննորմալ ու տհաս է): Խոսքը միանգամայն հնարավոր երևույթի մասին է, այն մասին, որ իր բնական զարգացման ու տարիքային առաջացման պրոցեսում մարդը չկորցնի մանկական տեսողության, աշխարհի հանդեպ նրա ունեցած վերաբերմունքի որոշ գծեր, որոնց պահպանումը շատ կարևոր է ապրելու և աշխատելու համար»: Այնուհետև իր միտքը շարունակելիս նա հատուկ, ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ «Հենց երեխան է, և ոչ թե տարեցը, որ հոգեպես գտնվում է անընդհատ զարմանքի ու անընդհատ հայտնագործության վիճակում»: Իսկ այս մոմենտին նկարիչը տալիս է մեծ նշանակություն ստեղծագործական առումով՝ «Իմ կարծիքով,—գրում է նա,— արվեստի ամեն մի գործ պետք է ունենա զարմանք-հրձվանքը»¹⁰: Զարմանքի՝ որպես ինքնին տեսական պրոբլեմի մասին Սարյանը արտահայտվում է տարբեր առիթներով, տարբեր հարցերի կապակցությամբ: Եվ նույնպիսի հաճախականությամբ էլ այս կամ այն ըստեղծագործողի մասին խոսելիս նշում է, թե ինչ շափով է նրա արվեստում արտահայտված զարմանքը: Այս առումով նկարիչը հատուկ հիացումով է խոսում, օրինակ, Վիլյամ Սարոյանի մասին: «Երբեմն մի փոքրիկ դետալ, երևույթ, առարկա,—գրում է Սարյանը,—զարմանք է պատճառում և երեակայությանդ մեջ ծնում հրձվանքի հեքիաթ-իրականության մի ամբողջ աշխարհ: Դա երջանիկ ապրում է: Օրինակ, ես այդ առումով լիապես երջանիկ եմ համարում Վիլյամ Սարոյա-

¹⁰ Նույն տեղում, էջ 75:

նին։ Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը։ Զարմանքը ամենից ավելի ուժեղ և հատկանշական է երեխաների մոտ՝ մաքուր, աղնիվ, անսահմանորեն գեղեցիկ։ Երջանիկ են այն մարդիկ, որոնք տարիքը առնելու հետ չեն կորցնում զարմանալու քննդունակությունը։ Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա և այն էլ հանձարեղ։ Զարմանքով գրում է բաների մասին, որոնք, թվում է, այնքան հասարակ են, պարզ, սովորական, որ հետաքըրքություն չեն ներկայացնում։ Բայց դրանց խորքում այնքան պայծառ իմաստություն, փիլիսոփայական վեհություն, զգացմունքների, տպավորությունների այնքան բազմազանություն և մեծ արվեստ, հրճվանք կա»¹¹։ Այս ամենը բացառիկ որոշակիությամբ և Ճիշտ բնորոշում է ստեղծագործությունը մի մարդու, որը աննշան երևույթի մեջ բացում է մի հրաշք-աշխարհ՝ ի տես դնելով մարդկային հոգու նրբին շարժումների պրոցեսը, իր զգացումներով, մտքով, իդեալներով արժեք տալով այն երևույթներին, որոնք հանկարծ ընթերցողի համար բացահայտվում են մինչև այդ շնկատված ու խորիմաստ մի տեսանկյունով։

Դարասկզբի Եվրոպայի գեղարվեստական համարյա բոլոր կենտրոններում դեռևս ուժի մեջ էր (եթե գերազանցապես ո՛չ ստեղծագործական պրակտիկայում, ապա որպես էսթետիկական դոգմա) արվեստը գնահատելու շափանիշ-ակադեմիզմը։ Չենք ասում դեռ, որ կյանքի առաջադրած նոր խնդիրների լուծման պա-

¹¹ Նույն տեղում։

Հանջի տեսանկյունով արդեն դոգմատիկ էին իմպրեսիոնիզմն ու ինչ-ինչ առումներով նաև պոստիմպրեսիոնիզմը: Այդ պարագայում, ի թիվս այլ միջոցների, ստեղծագործական պրակտիկայում և ընդհանուր-պոետիկական առումով, որպես ակադեմիզմի դեմ պայքարելու միջոց, համաշխարհային արվեստի առաջադեմ ներկայացուցիչներից շատերը զենք դարձրին մանկական հայացքը: Դա, արդեն, նոր էպոխայի պրոդրեսի աշխարհայացքային դրսեորում էր՝ նոր պրոբլեմներ առաջադրելու և լուծելու օբյեկտիվ պահանջով: Այստեղ գործ ունենք քարացած դոգմաներից ու նախապաշարումներից ազատագրվելու, բնությունը, կյանքը, իրականությունը անկեղծ հայացքով դիտելու և այս ճանապարհով հինը չկրկնելու ձգտման հետ՝ երեակելով համաշխարհային արվեստի զարգացման հիմնական տենդենցիներից մեկը: Ե՛վ Կլեեն, և՛ Շագալը, և՛ Սարյանը, և՛ Մատիսը այդ տենդենցը իրացնելու ուղին սկսեցին իրենց ուսման ընթացքում դասավանդված, դարերով սրբագործված ու անփոփոխ կերպով հաղորդվող դոգմաների համակարգը բացասելով: Այնուհետեւ նրանք պայքարի ելան ոչ միայն հնացած դպրոցի, այլև մասսայական դիտողի քարացած ճաշակի, ժամանակի բազմաթիվ արվեստաբանների ու նկարիչների հոծ բանակի դեմ:

«Մանկությունը գրում է Սարյանը,—մարդու ամենաբնական ու պարզ վիճակն է: Նստվածքներ չկան նրա հոգում, աշխարհին նայում է անարատ հայացքով: Ու եթե այդ հայացքը մարդու մոտ մնացել է, չի կարող

պատահել, որ արվեստի նրա տեսակետները ներդաշնակ ու անկեղծ գրւեռում չունենան»¹²: Աշխարհին բաց աշքերով նայելու, նախապաշարմունքներից ազատ այս մտածողության անհրաժեշտության մասին գրելիս Մատիսը նույնպես ընդհանուր-էսթետիկական հարցադրման մեջ շեշտում է ստեղծագործողի անհատականության պահպանման գործում մտնկական հայացքի դերը: Նշելով, թե նկարիչը ամեն անգամ պետք է ամեն ինչը տեսնի այնպես, ինչպես որ նա կտեսներ առաջին անգամ, շարունակում է՝ «Նաև պետք է կարողանա ամբողջ կյանքում աշխարհին նայել երեխայի աշքերով», քանի որ այդ տեսողության կորուսը միաժամանակ նկարչի համար նշանակում է կորուստ ամբողջ օրիգինալի, այսինքն՝ արտահայտման մեջ անհատականի»¹³: Հեշտ է նկատել, որ այստեղ ինդիրը կապվում է ստեղծագործական պրոցեսի այն էական մոմենտի հետ, ինչը արտիստական անհատականությունն է, այսինքն այն գլխավորը, որը տվյալ ստեղծագործողի երկերի գեղարվեստական ամբողջ հետարըրքության հիմքը և այն գնահատելու չափանիշն է հանդիսանում՝ լինի հոգեբանական-փիլիսոփայական, թե ոճա-ձեւաբանական տեսակետներից, միևնույն է:

Այն, որ Մարյանը շեշտում է հենց XX դարում մանկական հայացքի պահպանման անհրաժեշտու-

¹² Վ. Սարյան, Գեղեր, գեմքեր, մտորումներ, «Հայրենիքի հայն», 1966, 3 հուլիսի:

¹³ «Матисс» (Сборник статей о творчестве) М., 1957, с. 90.

թյունը, գտնելով, թե «Հատկապես մեր ժամանակներում խիստ կարենոր է այն, թե մարդ որքանով է իր մեջ կրում իր մանկությունը»¹⁴, թե «բնությունը մանկական հայացքով նայելը այսօր ինքնին սկզբունք է»¹⁵, ունի ոչ միայն իր պատմաէսթետիկական, այլև պատմահոգեբանական պատճառները (այստեղ շպետք է մոռանալ նաև հարցի էթիկական կողմը): Երկու համաշխարհային պատերազմ և արյան հեղեղ, ավերածություն և կոտորածներ, աշխարհում տիրող լարվածություն ու նոր բախումների վտանգ, քաղաքակրթության զարգացման հետ միասին մարդու հետզհետե ավելի անջատում բնությունից ու բնական վիճակից,— ահա ոչ լրիվ թվարկումը այն ամենի, որը Սարյանին ու իր բազմաթիվ սերնդակիցների դրդեց բարձրացնելու մանկական հայացքի հարցը և մարդկանց ներշնչելու, որպեսզի նրանք վառ պահեն իրենց մանկության զարմանքով ու հրճվանքով լիցուն, պարզ ու անարատ, գեղեցիկ ու ներդաշնակ աշխարհը: Այսօր ինքնին սկզբունք համարելով մանկական հայացքի պահպանումը, Սարյանը դրանով իսկ պահանջում է բնության ու մարդու նկատմամբ սերը չկորցնելու, բնության հարազատ զավակի իր մաքուր հատկանիշները վերջնականորեն շարատավորելու և չկործանվելու, շարուժերին դիմակայելու ձգտում, կամք ու զգոնություն, արվեստի մեջ դոգմաները մերժելու և միշտ որոնելու,

¹⁴ Մ. Սարյան, Գեղքեր, գեմքեր, մտորումներ, «Հայրենիքի ձայն», 1966, 3 հովհան:

¹⁵ Նույն տեղում:

Նորը հաստատելու համարձակություն։ Նա ցանկանում է մարդ էակի մեջ անմար պահել նախնիների ձայնը, բնության մեջ իրեն տեսնելու և իր մեջ բնությունը տեսնելու երբեմնի զգացողությունը՝ համարելով այդ քաղաքակրթության առաջադիմության, ստեղծագործելու, խաղաղ ապրելու հիմնական պայմաններից մեկը։

Բ

Հին, մինչև իսկ նախապատմական շրջանների մշակութային ավանդների հանդեպ ցուցաբերվող ակտիվ վերաբերմունքը XX դարի արվեստի բնորոշ հատկանիշներից է։ «Մենք,—1909 թվականին գրում է Անդրեյ Բելին,—այժմ կարծես թե ապրում ենք ամբողջ անցյալը։ Հնդկաստանը, Պարսկաստանը, Եգիպտոսը, ինչպես և Հունաստանը, նույնպես և միջնադարը վերակենդանանում, տարածվում են մեր շուրջը։ Բազմապիսի մշակութիների գեղարվեստական արտահայտչածների լծորդման այդ շթուկացող ձգտման, մոռացված քաղաքակրթությունների վերանայման ճանապարհով իրականության նկատմամբ նոր վերաբերմունք ստեղծելու այդ եռանդի մեջ է այսպես կոչված նոր արվեստի ողջ ուժը, ողջ ապագան»¹⁶։ Գրող փիլիսոփայի այս խոսքերը, որ ասված են և վերաբերում են Սարյանի աշխարհայացքի ձևավորման և ամրողացման տարիներին, ասված են ոչ միայն Ռուսաստանի, այլև ողջ Եվրոպայի մշակութային կյանքի մասին։

¹⁶ А. Белый, Символизм, М., 1910, стр. 50.

Սարյանը և իր սերնդակից արվեստագետներից շատ շատերը վաղուց են ընտրել անցյալի ու ներկայի գեղագիտական մտածելակերպերի, երկու մեծ՝ Հունահոռմեական-եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների միաձուման ուղին: 1900—1910 թվականներին, արդեն, միաձուման այդ ձգտումը արծարծվում էր իբրև տեսական ու փորձնական ստեղծագործական կարեռը պրոբլեմ և անընդհատ ընդլայնում էր ազդեցության ոլորտը: Հատկապես երիտասարդությունը բուռն կերպով ուսումնասիրում էր արևելյան մշակութի կոթողները՝ հափշտակությամբ ընթերցելով, քննելով ու գնահատելով ուսւ և այլազգի արևելագետների աշխատությունները, — աշխատություններ, որոնք նախքան այդ տարիները հայտնի էին գիտական շատ նեղ շրջաններում միայն: «Ով ծանոթ է 1900—1910-ական թվականների կուլտուրային, — գրում է Սարյանը, — կարող է վկայել, որ Ռուսաստանում մեծ էր հետաքրքրությունը հանդեպ Արևելքի մեծ արվեստը: Արևելքի տարբեր ժողովուրդների ստեղծած ոճական հատկանիշները այս կամ այն կերպ սկզբունքների ուժ էին ստացել հատկապես երիտասարդ արվեստագետների, քննադատների, բանաստեղծների, երաժիշտների համար: Էլ շեմ ասում արևելյան թեմաների, սյուժեների, բանահյուսության առաջ օգտագործման մասին: Այդ օրինատալիստական, եթե կարելի է ասել, շարժմանը հող էր հանդիսանում ոչ միայն Արևելքի, այլև ժամանակի եվրոպայի կուլտուրայի հետ եղած շփումը: Իսկ եվրոպան (խոսքը Արևմտյան եվրոպայի մասին է — Վ. Վ.)

Արևելքի արվեստին սկսել էր ծանոթանալ դեռ 19-րդ դարի կեսերից»¹⁷:

Այս շարժման անմիջական նախորդները եվրոպական կերպարվեստում իմպրեսիոնիստները և պոստիմպրեսիոնիստներն էին: Արևելքի հին ու նոր մշակույթի հանդեպ անցյալ դարի 70—80-ական թվականներից սկիզբ առած հետաքրքրությունը անմիջապես իր ոլորտի մեջ առավ ոչ միայն նկարչությունը, այլև փիլիսոփայությունը, գրականությունը, երաժշտությունը: Իմպրեսիոնիստներին գրավում էր ճապոնական նկարչությունը իր փառավոր տրադիցիաներով: Նրանց ստեղծագործական որոնումներին լիցք էին տալիս ճապոնական նկարչության ոճական միասնությունը, նուրբ ու կատարյալ տեխնիկան, տարածության կազմակերպման սկզբունքները, գույնի մաքրությունը և այլն: Պոստիմպրեսիոնիստները ուսանում էին ոչ միայն ճապոնական նկարչությունից, այլև ուրիշ ոչ եվրոպական ժողովուրդների քաղաքակրթություններից: Գոգենը, մասնավորաբար, մեծ համբաւակությամբ ուսումնասիրում էր խաղաղ օվկիանոսյան կղզիաբնակների հնամենի տրադիցիաներ ունեցող արվեստը: Նրա «սինթետիզմի» մշակման ու դարձացման գործում այդ տրադիցիաները վճռորոշ նշանակություն են ունեցել թե՛ էսթետիկական, թե՛ տեխնիկական առումով:

Սարյանի սերնդի արվեստագետները այս շարժման անմիջական հետեւորդներն էին և սովորում էին

¹⁷ «Գրառումներ իմ կյանքից», էջ 122:

ոչ միայն իմպրեսիոնիստներից ու պոստիմպրեսիոնիստներից, այլև իրենց հերթին ու յուրովի հայացքը դարձնում էին Արևելք ու Հին քաղաքակրթություններ և յուրովի ուսումնասիրում-կիրառում էին նորանոր ավանդներ:

Պետք է նշել, որ այդ տեսնդենցը առաջ բերեց, այսպիս կոչված, «օրիենտալիստների» մեծ հոսանք, որը անընդհատ ընդլայնում էր իր սահմանները։ Սակայն օրիենտալիստներից շատերի գործերում հարցերի դըրվածքը դուրս չէր գալիս ինտելիգենտիկական տնաբույս էսթետիզմի շրջանակից։ Նրանք հաճախ Արևելքի մշակույթին նայում էին սոսկ էկզոտիկ հետաքրքրության տեսակետից և հանդես էին գալիս իբրև հոռի իմիտատորներ։ Եվրոպայում քշերն էին, որ կարողացան օրգանապիս և խսկական արվեստի դիրքերից սինթեզել տարրեր տրադիցիաները։ Նրանցից հատկապես պետք է նշել Պիկասոյին, որը անցյալի քաղաքակրթության և Հին արևելյան մշակույթների հանդեպ ցուցաբերում էր շատ ակտիվ վերաբերմունք՝ թափանցելով դրանց թե՛ գաղափարական-փիլիսոփայական, թե՛ ոճական առանձնահատկությունների մեջ և յուրովի սինթեզելով դրանք եվրոպական նկարչի հայացքով։ Մինչև իսկ աֆրիկյան սևամորթ ժողովուրդների շափականց օրիգինալ արվեստը Պիկասոն օգտագործեց խորիմացությամբ և XX դարի էսթետիկական-ձևաբանական պահանջների ասպեկտով դրսելորեց այն։ Փարիզի մեծ նկարիչներից մյուսը, որը օրգանապես միաձուկեց տրադիցիաները, Մատիսն էր։ Իր երկերը ստեղծելիս ու

սեփական էսթետիկան մշակելիս նա ստեղծագործական մոտեցում ունեցավ՝ պարսկական, արաբական, Հնդկական կերպարվեստի նկատմամբ։ Պարսկական մանրանկարչությունից նա շատ բան վերցրեց թե՛ գծի, թե՛ գույնի, թե՛ տարածության կազմակերպման խընդիրները լուծելիս, թե՛ նախշահյուս արաբեսկային սկզբունքներով կտավի ողջ կոմպոզիցիան կառուցելու ժամանակ։

Ինչ վերաբերում է Սարյանին, ապա դեռևս մեր դարի առաջին տասնամյակում Մաքսիմիլիան Վոլոշինն է նկատել, որ նա, ի հակադրություն կեղծ օրիենտալիստների, Արևելքի հանդեպ ցուցաբերում է որդիական սեր, հասկանում է այնտեղի ժողովուրդների կյանքը, բուն ոգին և արվեստի առանձնահատկությունները՝ իր գործերում երևան բերելով արևելյան գեղարվեստական մտածողության որոշակի գծեր¹⁸։ Ի՞արկե պատահական չէ, որ ստեղծագործական վաղ տարիներին նկարիչը հայացքն առաջին հերթին ուղղեց ու ճամփորդեց ոչ թե գեղի իտալիա, ֆրանսիա, Գերմանիա, այլ Արևելք։ Եվ լինելով Պոլսում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Սարյանը մեծ էնտուրիազմով պատրաստվում էր մեկնել Արևելքի այլ երկրներ։ Նա գրում է՝ «Ծրագրում էի (խոսքը 1913 թվականի մասին է—Վ. Ա.) գալիք ճամփորդություններիս պլանը՝ Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա։ Այդ ժողովուրդների արվեստը մոգական ուժով ձգում էր ինձ։ Ամեն ինչ ուզում էի

¹⁸ ՏԵ՛ս Մ. Յոլոշին, Մ. Սարյան, «Ապոլլոն», 1913, № 9. стр. 551.

տեսնել սեփական աշքերով»¹⁹: Դժբախտաբար առաջին համաշխարհային պատերազմը և հետագա խառն տարիները թույլ շտվեցին նկարչին իրականացնելու այդ երազանքը: Բայց անկախ դրանից նա իր երիտասարդության օրերին ուսումնասիրում էր Արևելքի նկարչությունը և ստեղծագործաբար կիրառում արևելյան միշտաք կարեոր սկզբունքներ, որոնք խոշոր գեր կատարեցին «սարյանական» գեղարվեստական մտածողության ու ոճի զարգացման գործում:

Այն բանում, որ Սարյանը XX դարի մշակույթի հիմնական տեսդենցներից մեկի՝ երկու մեծ քաղաքակրթությունների միաձուլման խոշորագույն ներկայացուցիչ դարձավ, այդ բանում, բացի սուբյեկտիվ մոմենտից, հսկայական գեր կատարեցին նրա ազգային պատկանելությունը և սեփական ժողովրդի մշակույթի խոր ուսումնասիրությունը: Սխալ չի լինի մի որոշակի առումով ասել, որ հայկական մշակույթը ձեավորվել է որպես Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների օրգանական խաշածեման արդյունք: Գրաված աշխարհագրական դիրքի և պատմական ճակատագրի բերումով, հայ ժողովուրդը իր էթնիկական ձևավորման վաղ ժամանակաշրջանից սկսած ունեցավ այդ տրադիցիաները միաձուլելու ավելի մեծ հնարավորություններ, քան եվրոպական որևէ ժողովուրդ: Ուստի բնական է, որ յուրաքանչյուր հայ արվեստագետ օժտված է արևելյան ու արևմտյան մտածելակերպերը սինթեզելու «բնազդական» ունակությամբ, ինչը դրսկոր-

¹⁹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 139:

վել է Հայկական մշակույթի պատմության ողջ լնաթցը ում։ Հեթանոսական շրջանի Հայկական անկրկնելի ինքնատիպությամբ օժտված արվեստում նկատելի են մի կողմից հին փոքրասիական, հունական ու հոռածնական, մյուս կողմից՝ հին պարսկական տրադիցիաներ։ Միջնադարյան արվեստից բավական է հիշել Նարեկացու «Ապագանը», որը սուֆիզմ-նեոպլատոնականություն-քրիստոնեականություն ավանդների մի հայցի եռմիանություն է։ Հայկական մանրանկարչության, բանդակագործության, ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններում ցոլանում են ոչ միայն անտիկ, արևմտյան քրիստոնեական արվեստները, այլև արևելյան քրիստոնեական և ոչ քրիստոնեական ժողովուրդների մշակույթները։ Նոր ժամանակներից կարելի է նշել Սայաթ-Նովային, որը սինթեզեց Հայտնի գուսանական-պոետական բոլոր ավանդները։ XX դարում Սարյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Հակոբ Կոջոյանը, Արամ Խաչատրյանը ներկայացնում են Հայ արվեստագետների այն խումբը, որը «օրիենտալիզմի» խնդիրները լուծեց համաշխարհային շափանիշներով։

Ճապոնական արվեստի մեծ ներկայացուցիչների մասին խոսելիս Սարյանը նշում է՝ «Ուտամարոն, Տոյուկունին, Հիրոսիգեն, Հոկոսային նույնքան հանճարեղ են, որքան Ֆիդիասը, Ռոսլինը, Մազաշիոն, Ռեմբրանդտը»։ Ուրեմն, արվեստի արժեքը մնում է արժեք՝ լինի արևելյան, թե արևմտյան, միևնույն է։ Եվրոպական նկարչի մեծապետական վերաբերմունքի ոչ մի

նշուց,—որակը որակ է անկախ մտածողության տարբերությունից: Եվրոպական նկարչի ստեղծագործության գեղարվեստական մակարդակը ցուց տալու համար կարող է օրինակ լինել արևելյան նկարչի երկը և Հակառակը: Գոգենի մեծությունը միանգամից նշելու համար Սարյանը ասում է, որ նրա լավագույն կտավները համարժեք են եգիպտական որմնանկարիչների, ուստի ակական մանրանկարիչների, Զիոնույի և նոր ժամանակների մյուս մեծ նկարիչների թողած լավագույն զործերին՝ նույն բարձրության վրա դնելով Արենելքի և Արևմուտքի տարբեր էսթետիկական մտածելակերպերի և ոճական ըմբռնումների տեր արվեստագետների ստեղծագործությունը:

Ակադեմիզմի, նատուրալիզմի դեմ ընդվզումը ուժգին էր անցյալ դարի վերջերին և ավելի մարտականութեն՝ XX դարում: Դարասկզբի ակտիվ նորարարները որոնում էին բոլոր այն ուղիները, որոնցով կարելի էր ընթանալ հասարակության ճաշակի ոլորտում դեռևս մեծ ուժ ներկայացնող քարացած դոգմաները վերանայելու և իրենց առջև ծառացած կոնկրետ-էսթետիկական և կոնկրետ տեխնիկական խնդիրները լուծելու համար: Ահա այդ ուղիներից մեկը հին և արևելյան մշակույթների յուրացումն ու պրոպագանդան էր,— մշակույթներ, որոնք ոճաձևաբանական շատ կողմերով համահնչուն էին իրենց իդեալներին: Ճիշտ նկատվել է՝ «Մի կողմից արվեստի նախնադարյան ստադիաների, մյուս կողմից հեռավոր Արևելքի երկրների արվեստի գլուխգործոցների հանդեպ աճող հետաքրքրությու-

Նը վերջ տվեց դարերով արմատավորված շատ նախապաշարումների: Դրանց մեջ էր և կլասիցիզմի դոգման, որ հիմնված էր հունական իդեալի բացառիկության ու ունիվերսալության ընդունման վրա: Գեղարվեստական բազմազան ձևերի հետ ծանոթությունը հարված հասցըրեց նաև նմանակման նատուրալիստական տեսությանը»²⁰: Մատիսը ուղղակիորեն նշում է, որ իր՝ որպես արվեստում եվրոպական դասական կրթություն ստացած նկարչի վրա բարացած տրադիցիաներից ազատագրվելու և սեփական ոճը ստեղծելու պրոցեսում բարերար ազդեցություն է ունեցել Արևելքի արվեստը²¹: «ուշնը այս կամ այն կերպ ասել են բազմաթիվ ժամանակակից նկարիչներ»:

Ուրեմն, XIX դարի վերջում և XX դարի սկզբին հանգեց Արևելքն ու նրա մշակությը եղած հետաքրքրությունը դուրս էր եկել զուտ ճանաչողական սահմաններից՝ ու ձեռք բերել նաև եվրոպական արվեստի առջև ծառացած խնդիրներ լուծելու միջոցի արժեքը: Դա համընկավ նաև Մարյանի ստեղծագործական նախասիրություններին ու նրա որոնումներին: Տեղի ունեցավ արվեստագետի սուբյեկտիվ տվյալների, կարողությունների ու ձգտումների և ժամանակաշրջանի ակտուալ-առաջադիմական պահանջների երջանիկ ներդրաշնակություն, որ մեծ արվեստ ստեղծելու հիմնապայմաններից է: Մարյանին գրավել է արևելյան

²⁰ К. Гильберт, Г. Кун, История эстетики, М., 1960, стр. 551.

²¹Տե՛ս «Матисс» (Сборник статей о творчестве), М., 1958, стр. 47.

նկարչության շեղտված պայմանականությունը և այն,
որ Արևելքի արվեստագետը չի իմիտացնում իրակա-
նությունը, մեծ ազատությամբ է կիրառում իր երեա-
կայությունն ու աբստրահման կարողությունը։ Հիմ
Արևելքի ժողովուրդների և հատկապես եզրակացու-
արվեստում նրան դուր են եկել խոշոր ընդհանրացում-
ները, մոնուամենտալիզմը և սինթետիկ հայացքը իրա-
կանության նկատմամբ։ Մանրամասների շեղոքացում
և առարկայի ընդհանրությամբ խարակտերի բացահայտում,
կերպար-նիշեր ստեղծելու սովորույթ, ֆիգուրների
սիլուետային պարզ ըմբռնում, գծի և գույնի հավաքա-
կան միացությունների օգտագործում, կումպրոմիսա-
յին տոների բացասում կամ դրանց խիստ նվազագույն
կիրառում, ձևերի հստակ երկրաշափական տեղադրում,
որ կաղմակերպված է ըստ նկարային մակերեսի գե-
ղեցկության, քան ըստ իրականության նմանակման,
նկարի երկտարածական ֆունկցիայի պահպանում և
բացահայտում,—ահա այն սկզբունքները, որոնք մշա-
կելիս Սարյանը նկատի է ունեցել նաև Արևելքի ժողո-
վուրդների վաղեմի տրադիցիաներ ունեցող արվեստը։

Քաղաքակրթությունների միաձուլումը Սարյանը
համարում է XX դարի համաշխարհային արվեստի
էական տենդենցներից մեկը։ Եվ գտնում է, որ ամեն
կերպ պետք է նպաստել այդ տենդենցի հետագա զար-
գացմանը, դրանով էլ օգտակար լինել ժողովուրդների
մերձեցման և ապագայի քաղաքակրթության հիմնա-
ղըրման մեծ գործին։ Ահա թե ինչու նա հատկապես
բարձր է գնահատում այն արվեստագետներին, ովքեր

ընտրել են այդ ուղին: Արամ Խաչատրյանի մասին, օրինակ, ասում է՝ «Վիթխարի երեակայությամբ օժտված բնատուր հանձար է Խաչատրյանը, որը այնքան ահեղտությամբ» ու նորարարի այնքան մեծ խիզախությամբ ներդաշնակեց Արևելքի ու Եվրոպայի գեղարվեստական ավանդները և մտածելակերպը»: Ուրեմն, ոչ թե քաղաքակրթությունների պարզ ընդօրինակություն, այլ նոր պահանջների տեսակետից դրանց յուրացում ու ներդաշնակում: Սարյանի պատկերացմամբ այս պրոցեսը խսկական արվեստագետի մոտ ոչ միայն ինտուիտիվ երկույթ է, այլև էսթետիկական խորապես գիտակցված պրինցիպ՝ իբրև ձևաբանական նոր սիստեմների և աշխարհի գեղարվեստական մոդելավորման նոր միջոցների ստեղծման հիմք:

Չի կարելի շընդգծել, որ տարրեր քաղաքակրթությունները սինթեզելու պատմականորեն օբյեկտիվ այդ տենդենցը հետզետե ներառում է մարդկային գործունեության նորանոր ասպարեզներ: Եվ այսօր համաշխարհային առաջադիմ մտավորականությունը կանգնած է նաև ընդհանուր-բնափիլիսոփայական սկզբունքների միաձուլման հարցի առաջ: Գիտության մեծ ներկայացուցիչներից շատերն են խորապես գիտակցում այդ: Այսպես, Վերներ Հայզենբերգը նշում է, որ «անհրաժեշտաբար և օրինաշափորեն» արդի ֆիզիկան կտարածվի և կառնչվի պատմական տրադիցիաների ամենատարբեր ուղղությունների հետ: Համաշխարհային առումով տեղի կունենա բախում եվրոպական գիտության մի հատուկ ասպարեզի (ֆիզիկայի) և բավականին տարրեր

աղջային մշակույթների հին տրադիցիաների միջև: «Եվ այնքանով, որքանով ժամանակակից ֆիզիկայի արդյունքները, —նկատում է նա, —մեզ բերում են այնպիսի հիմունքային հարցերի քննության, ինչպիսիք են ուսալականության, ժամանակի և տարածության հարցերը, ապա այդ բախումները կարող են բացահայտուրնեն հանգեցնել մտածողության բացարձակորեն նոր փոփոխության, որի ուղիները դեռևս հնարավոր չեն կանխագուշակել»²²: Այս պատճառով էլ Հայզենբերգը նշում է նման բախումների կարեռությունը համամարդկային քաղաքակրթության ապագայի համար: Եվ տեսեք, թե որքա՞ն նման են մտածում ֆիզիկոսն ու նկարիչը: «Մենք ապրում ենք, —ասում է Սարյանը, — Արևելքի և Արևմուտքի, Եվրոպայի և Ասիայի քաղաքակրթությունների մերձեցման ու սինթեզի հետաքըրքիր դարաշրջանում: Ամեն կերպ պետք է նպաստել այդ պրոցեսի ընդլայնմանն ու արագ զարգացմանը, որովհետև իմ խորին համոզմամբ դրանով է պայմանավորված ինչպես մեր ժամանակի, այնպես էլ ապագայի համաշխարհային քաղաքակրթության առաջընթացը»:

Դա է, ահա, մեր էպոխայի մեծ անձնափորությունների հավատամքը Եվրոպայի և Արևելքի տրադիցիաների միաձուլման հիման վրա արդի և ապագայի կուլտուրայի զարգացման վերաբերյալ: Թե ինչպիսին կլինի տարբեր մտածելակերպերի սինթեզը, յուրաքանչյուր ժողովուրդ ինչպես կկատարի այն, և թե ստեղծագործական ինչպիսի անհատականություններ

²² В. Гейзенберг, Физика и философия, М., 1963, стр. 9—10.

կծնվեն այդ պրոցեսում,—դա էլ կլինի արվեստի ու գիտության պատմության գրվելիք էջերի հարստությունը և գեղեցկությունը:

¶

Մեր դարի առաջին տարիներին, երբ ձևավորվում էր Սարյանի աշխարհայացքը, Մոսկվայում ու Եվրոպայի մյուս կենտրոններում կային արվեստագետներ և տեսաբաններ, որոնք անտեսում կամ ակտիվորեն բացասում էին սյուժեի ֆոնկցիան կերպարվեստում՝ գեմ ելնելով դրա կողմնակիցների հոծ բանակին: Խընդիրը սյուժեի այնպիսի դրսեորմանը չէր վերաբերում, որպիսին ընդհանրապես առկա է «առարկայական» նկարչության գրեթե յուրաքանչյուր պատկերում,—ինչոր տեսարան-իրադրություն, որ պարփակվում է միայն ու միայն հայեցվող փաստի սահմաններում: Մերժվում էր ա՛յն սկզբունքը, երբ ներկայացված պահը հասկանալի դառնալու համար դիտողից պահանջվում է մի «նախապատմության» իմացություն՝ ստիպելով երեակայաբար դուրս գալ տեսողական տվյալների շրջանից դեպի ժամանակի տևողության մեջ ծավալվող պատում, կամ էլ ա՛յն, երբ պերսոնաժների շարժուձևերը պայմանավորված են իրարով այնպես, որ թելադրում ևն որոշակի «տեքստ»՝ մի կոնկրետ «գրական» գործողություն, ինչը թելադրում է կապակցված դիպվածների շարք:

Սյուժեի բացասման այս տենդենցը նորություն չէր: Դեռևս XIX դարի երկրորդ կեսին իմպրեսիոնիստ-

ները հայտարարեցին, թե նկարը շպետք է դատել ըստ
 սյուժեի՝ ձգտելով բացահայտել ներկայացվող մոտի-
 վի գունատեսողական-էմոցիոնալ արժեքը։ Այն, որ
 Ռենուարը գրականությունը համարում էր «գեղանկար-
 չության բնածին թշնամին»²³, բնորոշ էր բոլոր իմպ-
 րեսիոնիստների մտածելակերպին։ Նրանք ժխտեցին ոչ
 միայն ակադեմիզմն ու նեոկլասիցիզմը, որոնցում
 կյանքից կտրված շինծու սյուժեներ էին մշակվում,
 այլև շխնայեցին արվեստի այնպիսի ուղղություններ,
 որոնց որոշ էական հատկանիշներ հիմք էին դարձել
 իրենց դպրոցի ձևավորման համար։ Ռոմանտիզմը,
 մասնավորապես էժեն Դելակրուան, որից նրանք ժա-
 ռանգել էին մաքուր և հնչեղ գույների կիրառման եղա-
 նակի մի քանի կողմերը, բացասվում էր հենց պատ-
 ճություն ու գրական սյուժեներ կերպավորելու պատ-
 ճառով։ Ռեալիզմը, հատկապես Գուստավ Կուրբեն, ո-
 րից նրանք վերցրել էին շրջապատի ռեալ իրականու-
 թյունից պատկերման նյութ առնելու միտումը, քննա-
 դատվում էր նկարագրողական սյուժետային կտավներ
 ստեղծելու համար։

Իլյուստրատիվ-պատմողական նկարչության հան-
 դեպ այդ բացասական վերաբերմունքը, սակայն, գա-
 լիս էր արվեստի պատմության ավելի վաղ անցյալից։
 Վերածնության դարաշրջանում, օրինակ, Զիորջոնեն
 «շեշտում էր բնության և մարդկային կերպարների մի-
 ջև եղած ընդհանուր ներդաշնակությունը՝ առանց որևէ

²³ А. Воллар, Ренуар, Л., 1934 стр. 65.

պատմություն շարադրելու²⁴: Նույնը կարելի է ասել նաև Վերածնության դարաշրջանի մի քանի այլ արվեստագետների մասին: Այդ տեսդեհնցը շարունակաբար նկատելի է և ետքերածնության արվեստում՝ սյուժետային գրական-պատմողական նկարչության (որ անհամեմատ ավելի տարածված էր) հետ զուգահեռաբար:

Սակայն իմպրեսիոնիստներն էին, որ հակասյուժետականությունը կիրառեցին ոչ միայն պրակտիկայում, այլև աշխատեցին հիմնավորել տեսականորեն (հասկանալի է, որ նրանք ունեցան իրենց համակիրները թե՛ քննադատների, թե՛ արվեստասերների շրջաններում):

Նկարի միջոցով պատմելու նկատմամբ որոշ սերունեցող մի քանի վարպետներից (Էդգար Դեգա, Տուլուզ-Լոտրեկ, Վան-Գոգ) բացի, իմպրեսիոնիստների հաջորդները՝ ներիմպրեսիոնիստները և պոստիմպրեսիոնիստները, նոր դարի արվեստի նախադուռը բացեցին նույն նշանաբանով: Վերջիններս հակասյուժետականությունը ազդարարեցին իրեն կերպավորման պարտադիր սկզբունք: Հատկանշական է Պոլ Գոգենի հետեւյալ միտքը՝ «Ես միշտ ասել եմ,—գրում է նա,—որ գեղանկարչության արվեստային բնությունը սպեցիֆիկ է, և որ այն չի կարելի հավասարեցնել ո՛չ գրական կերպարների իլլուստրացիային, ո՛չ թարգմանել գրականության լիզվով»: Առջասարակ գեղանկարչության մեջ պետք է որոնել ներշնչումն, և ոչ թե նկարա-

²⁴ L. Venturi, Four steps toward modern art, New-York, 1956, p. 10.

գրություն. նույնը վերաբերում է նաև երաժշտությանը: Երբեմն ինձ մեղադրում են, թե իբր իմ նկարները անհասկանալի են: Բայց բանն այն է, որ նրանցում փնտրում են սյուժեի բացատրություն, ի՞նչն էլ հենց նրանցում բացակայում է...»²⁵: Մեկ այլ դեպքում նա ասում է՝ «Գեղանկարչության մեջ պետք է ձգտել երաժշտական ներշնչման և ոչ թե զրական նկարագրության»²⁶: Եվ իսկապես, նույնիսկ այն դեպքերում, երբ ինքը՝ Գոգենը, գրական-պատմողական վերնագրեր է գնում իր նկարներին, դարձյալ հարազատ է մնում այդ տեսակետին՝ ներկայացնելով պարզ-տեսողական իրադրություններ: Պոստիմպրեսիոնիզմի մեկ այլ կարկառում ներկայացուցիլ՝ Սեղանը, որ սկզբունքորեն չի ընդունում Գոգենի արվեստը, սյուժեի հարցում պաշտպանում է ճիշտ և ճիշտ նույն տեսակետը: «Կերպարվեստագետը,—ասում է նա,—պետք է զգուշանա գրականության ազգեցությունից, որը այնքան հաճախ դեղանկարչին շեղում է իր իսկական ուղղուց՝ բնության կոնկրետ ուսումնասիրությունից, և նրան ստիպում խճճվել անպտուղ սպեկուլյացիաների մեջ»²⁷: Էստակցի վարպետը այսպիսով տեսականորեն բացարձակապես ժխտում է զրական-նկարագրականը գեղանկարչության մեջ և ստեղծագործական պրակտիկայում հետևողականորեն կիրառում իր հավատամքը:

XX դարի մի շարք ականավոր նկարիչներ, ինչպես, օրինակ, Շագալը, Պիկասոն, շընդունեցին հուա-

²⁵ «Мастера искусства об искусстве», III, М., 1934, стр. 335.

²⁶ П. Гоген, Ноа-ноа, М., 1918, стр. 33.

²⁷ «Мастера искусства об искусстве», III, стр. 220.

կավոր նախորդների այդ տեսակետը։ Նրանք որդեգրեցին և յուրաքանչյուրը յուրովի զարգացրին գրականպատմողական սյուժետավորման սկզբունքը՝ կեռնարդոյի ու Ռաֆայելի ելակետը նկատի առնելու հետ միասին չմոռանալով նաև Երոնիմ Բոսխի ու Պիտեր Բրեյգելի ելակետը։ Պիկասոն բացեիբաց ասում է՝ «Ինձ երբեք չի վախեցրել սյուժեն»²⁸, — ստեղծելով խորապես սյուժետային պատկերներ և ուրիշ նկարիչների արվեստում էլ գնահատելով սյուժետականությունը։

Սակայն XX դարի նույնքան զորեղ ու հեղինակավոր այլ արվեստագետներ ճիշտ գտան Գոգենի ու Սեղանի Համոզմունքը՝ սյուժետայնությունը որակելով իբրև հետամնացության ու անախրոնիզմի արտահայտություն։ Մատիսը, օրինակ, պրակտիկայում ստեղծելով ազատ արաբեսկ-պատկերներ, գրում է՝ «Պատմության գեղպերի պատկերումը գեղանկարչության զործը չէ. այդ մասին կարելի է կարդալ գրքերում»³⁰: Մեր դարի խոշորագույն նկարիչներից նույն գիրքորոշումն ունեն նաև Փորժ Ռուտն, Փորժ Բրաքը, Մարտիրոս Սարյանը։ Եվ Հայ վարպետի հետեւյալ միտքը կարծես թե ասված է բոլորի անունից՝ «Այսպես կոչված գրական սյուժեն ես չեմ ընդունում գեղանկարչության մեջ։ Գեղանկարչությամբ սյուժետ պատմելը լiteraturyshina է։ Ինձ թվում է, թե այդպիսի սյուժեն խանգարում է նկարի ընկալմանը։ Երբ ես սյուժետային, ինչպես ասում

²⁸ «Мастера искусства об искусстве», т. 5, первая книга, М., 1969, стр. 314.

³⁰ «Матисс» (Сборник статей о творчестве), стр. 25.

Են, թեմատիկ-կոմպոզիցիոն կտավ եմ նայում, աշխատում եմ չնկատել նրանում եղած պատմվածքը, գրականությունը։ Ուրիշները սիրում են սյուժեներ հաղորդել նկարներով։ Ես միշտ էլ գիտակցաբար խուսափել եմ դրանից։ Ճիշտ եմ համարում տեսարանի անմիջական, պարզ ներկայացումը»³¹։ Իսկապես, նա պատկերի թեմատիկ միասնությունը ստեղծում է ոչ թե ֆիգուրների կոնկրետ սյուժետային փոխհարաբերումով կամ որոշակի նախապատմություն ընդգրկող գործողությամբ, այլ ներկայացվող պահի ուղղակի ցուցադրմամբ։ Դեռևս ստեղծագործական կյանքի վաղ տարիներին (1904—1908), երբ նկարում էր «Հեքիաթներ և երազներ» շարքը, առաջնորդվում էր այս սկզբունքով՝ նույնիսկ եթե պատմողական սյուժե ենթադրող վերնագիր էր կարգում իր պատկերին։ Ահա, օրինակ, այդ շարքի տիպական գործերից մեկը՝ «Հեքիաթը» (1908)։ Աղջկա և պատանու ֆիգուրներով, ծառերով, թառած ու ճախրող թոշուններով, անտառային հոծմասսայով ու հեռվում երևացող մարդկանց կերպարանքներով, Սիս-Մասիսը հիշեցնող սարերով ֆանտաստիկ ու խորհրդավոր տեսարան է։ Բոլոր ֆիգուրները տրված են ակնարկով, մշուշապատ ու անսովոր։ Նրանց միջև սյուժետային ոչ մի կապ չկա։ Ստեղծված է Հեքիաթային մի տրամադրություն, և նրանք առանձին-առանձին միասնաբար ծառայում են այդ տրամադրությանը։ Սարյանը հաղորդում է թեմայի ընդ-

³¹ Վ. Մաքելոսյան, Հակոբ Կոչոյան, Երևան, 1971, էջ 150։

Հանուր գաղափարը, ընդհանուր կերպարային մթնոլորտը: Ե՛վ մարդիկ, և թոշուններն ու պեյզաժը կապացված են հենց այդ տեսակետից: Այդպիսին են և 1910-ականների նրա բազմաֆիգուր պատկերները: Նշանավոր «Փյունիկյան արմավենին», օրինակ, ընդուրկում է փողոցի մի հատված, տափակ կտուրներով տներ, կախված պտուղներով մեծ արմավենի, տարբեր կեցվածքներով մարդկանց ու կենդանիների ֆիզուրներ: Դարձյալ՝ սյուժենետային ոչ մի կապ, ոչ մի պատմություն: Երկրի հատկանշական գծերը միավորելով ու խոշոր ընդհանրացմամբ՝ Սարյանը ստեղծել է հավաքական կերպար, եգիպտոսի համապարփակ «դիմանկարը»:

Այլ ելակետ ունի Սարյանը, երբ դիմում է գրական այս կամ այն ստեղծագործության իլլուստրացմանը: Այստեղ նա հետևում է տեքստի սյուժենետային ընթացքին, աշխատում է անել այնպես, որ նկարները հաջորդաբար ու ճշգրիտ արտացոլեն պատումը իր ամբողջությամբ, իր էվոլյուցիայի կոնկրետ ընթացքով: Օրինակ կարող է ծառայել Ֆիրդուսու «Ռոստոմ և Սոհրաբ» պոեմի նրա հայտնի ձևավորումը: Պարսկական մանրանկարչության յուրովի ոճավորման միջոցով ստեղծված դժանկարները, որ շափազանց զեղեցիկ են և արտացոլում են պատմական միջավայրի ու ժամանակաշրջանի հավաստի մթնոլորտը, ամենայն հետևողականությամբ ներկայացնում են գրական տեքստի կարեռը դիպվածները:

Ուստի սխալ կլիներ կարծել, թե Սարյանը առհասարակ ժխտում է գրական սյուժեն և իլլուստրատիվ-

նկարագրական մեթոդը կերպարվեստում։ Գրական սյուժեն չի ընդունում կերպարվեստի ինքնուրույն երկում։ Այստեղ է, որ Սարյանը բացասում է «գրական» հիմքը և պահանջում աշխարհի գեղանկարչական, այսինքն՝ ընդհանուր-կերպարային, արտացոլումը, — հանդես դալով հակասյուժետականների բանակում, նոր ժամանակների ըմբռնումով Զիորչիոններից սկիզբ առած և պոստիմպրեսիոնիստների կողմից վերջնականորեն բանաձևած տեսդենցի հետևորդ։

¶

Սարյանի ստեղծագործության մեջ բանակապես մյուս ժանրերի նկատմամբ չնշին գերակշռություն ունի դուստ պեյզաժը։ Սակայն որակական առումով որևէ տարբերություն տեսնել նրա պեյզաժների, կենցաղացին մոտիվներով բնապատկերների, նատյուրմորտների, դիմանկարների, մոնումենտալ պաննոների միջև՝ անհնարին է։ Նա չի ընդունում «կարևոր ու երկրորդական ժանրեր», հավասարապես սիրում է աշխատել բոլոր ժանրերի ասպարեզում։ Արժեքի որոշման հիմնական շափանիշ ունենալով զուտ արվեստայինը, նա գրում է՝ «Արվեստի լավ գործը մնում է լավ՝ անկախ իր տեսակից, ժամանակից, շափից ու տեխնիկայից»³²։ Այսուհետեւ նրա խորհրդածություններում պորտրետի մասին խոսվում է ավելի հաճախ, ավելի շեշտված նախանձախնդրությամբ

³² «Գրառումներ իմ կյանքից», էջ 165։

ու հանգամանալից, քան մյուս ժանրերի վերաբերյալ։ Անմիջապես աշքի է զարնում, որ «պորտրետի ճակատագրի» ծանոթ հարցին նա հատուկ նշանակություն է տալիս։ Եվ թե ինչով է բացատրվում Սարյանի արտակարգ հետաքրքրությունը այդ ժանրի նկատմամբ, թե ինչն է անհանգստացրել-գրգռել նկարչին, որ նա տեսականորեն մանրամասն ու բարձրածայն արտահայտվում է իր՝ որպես պորտրետիստի փորձի մասին, ունի իր պատճառը։

XIX դարի վերջերից սկսած, — լուսանկարչության գյուտից հետո և նկարչության մեջ պատկերվող օբյեկտի հանդեպ «կամայական» վերաբերմունքի ուժգնացմանը համեմատ, — բազմաթիվ նկարիչներ, արվեստի քննադատներ ու էսթետիկներ այլևս հնացած համարեցին պորտրետի ժանրը։ Այս տեսակետը գնալով ավելի ու ավելի ընդլայնեց իր սահմանները։ XX դարի առաջին երկու տասնամյակում, արդեն, Եվրոպայի գեղարվեստական գլխավոր կենտրոններում, որոշ ստեղծագործող պրակտիկների ու տեսաբանների կողմից պորտրետը ուղղակի համարվեց մեր օրերի էսթետիկական պրոբլեմները լուծելու համար մեռած ժանր՝ սրանից հրաժարումը համարելով ոչ միայն բնական, այլև պարտադիր բոլոր նրանց համար, ովքեր արվեստը զարգացնելու ցանկություն ունեն։

Ահա այս միտումն էր, որին լոելլայն (ստեղծագործական պրակտիկայով) կամ բարձրածայն (մամուկում հանդես գալով) դեմ դուրս եկան Սարյանին սերնդակից ու հաջորդ սերնդի խոշոր նկարիչներ։ Նրանք պահ-

պանեցին իրենց անմիջական նախորդների, օրինակ՝
վան Գոգի, սերը դիմանկարչության հանդեպ, ամեն
մեկը յուրովի ըմբռնելով ժանրի գերն ու նշանակու-
թյունը։ Այստեղ բավական է հիշել Պիկասոյին, մար-
դու, որը հենց բնորդի արտաքինի հանդեպ վերին աս-
տիճանի «կամալաբար» վերաբերվող նկարիչներից է։
Տարիների հետ նա հաճախակի փոփոխել ու փոփո-
խում է իր արվեստի ոճաձեւաբանական խնդիրները,
երբեմն կտրուկ անցնելով մի սկզբունքից մյուսին,
շատ գեաքերում նույն օրը նկարելով բազմաթիվ տե-
սակիտներով իրարից բոլորովին տարրեր երկեր։ Բայց
ոչ մի պահ չի մոռացել ու չի մոռանում դիմանկարը՝
միշտ էլ գտնելով ժանրի բացահայտման մի նոր, հե-
տաքիրքիր ելակետ, իր բազմաթիվ ու բազմաբնույթ
պորտրետներում առաջադրելով ու վճռելով դարաշըր-
ջանին հուզող ընդհանուր-փիլիսոփայական, կոնկրետ
էթիկական, էսթետիկական, սոցիալ-հոգեբանական
պրոբլեմներ։ Ինչպես այլ ժանրերի գործերում, այնպես
էլ դիմանկարներում Պիկասոն մեծ ազատությամբ ու
լիաբուն կերպով արտացոլում է իր փոթորկուն ներաշ-
խարհը, իր ցավն ու տառապանքը, իր կիրքն ու ընդ-
վրզումը, իր մերժող ու հաստատող ոգին։ Կամ Մատի-
սը, որ թիւ դիմանկարներ է արել և դիմանկարչի ա-
ռանձին կիրք չի ցուցաբերել, այնպիսի լուրջ վերա-
բերմունք է ցուցաբերել այս ժանրի նկատմամբ, ինչ-
պիսին ունեցել է կենցաղային այլաբնույթ պատկեր-
ների, պաննոների, նատյուրմորտների, նյուերի հան-
դեպ և այն քիչն էլ, որ արել է դիմանկարչության աս-

պարեղում, արել է փայլուն կարողությամբ և շարադրել է պորտրետի իր ըմբռնումը՝ նույն դեմքը գրոշմելիս արտաքին ճշգրտությունը զանց առնելու և ամեն անգամ տարբերություններով նկարելու, բայց օբյեկտի «ներքին ճշմարտությունը» բացահայտելու իր էսթետիկան³³: Պորտրետի վերաբերյալ նույն դրական վերաբերմունքն ունեն համաշխարհային գեղանկարչության խոշոր այլ նկարիչներ և նրանց մեջ այնպիսիք, որոնք կոչումով պորտրետիստ չեն և ոչ էլ ստեղծել են այդ ժանրի որևէ գործ:

Սարյանը, ահա, մեր դարում պորտրետի ժանրը պահպանելու և զարգացնելու այդ տենդենցի խոշորադույն ներկայացուցիչներից է: Նա բնականից օժտված է պորտրետիստի բացառիկ ունակությամբ և ունի, ինչպես տեսանք, մարդակենտրոն մի «տիեզերաբանություն», որը ի վերուստ տրված է, ասես, հենց պորտրետիստ լինելու համար: Սարյանը նկարել սկսել է ուշ, արդեն միջնակարգն ավարտելուց հետո, և ինքնաքերաբար (նույնիսկ շրջապատի բացասական վերաբերմունքի պայմաններում) կոնկրետ անձնավորությունների դեմքեր նկարելով³⁴: Այնուհետև, մասնագիտական կրթություն ստանալիս, պորտրետիստի բնական այդ ընդունակությունն ու հակումն էր, որ նրան մղեց Վալենտին Սերովի արվեստանոցը: Ուսումնառությունից հետո պորտրետի ժանրի հանդեպ սերը մնացել և նոր իմաստ

³³ Տե՛ս A. Матисс, Точность не есть правда, «Матисс», (Сборник статей о творчестве), стр. 69—74.

³⁴ «Գրառումներ իմ կյանքից», էջ 39—40:

է ստացել նկարչի հասունացման հետ մեկտեղ, երբ
նա բնության ինքնազրսեորման մեծագույն ակտը հա-
մարեց մարդուն՝ անընդհատ խորհելով նրա մասին թե՛
իր ընդհանուր-փիլիսոփայական գաղափարի մեջ, թե՛
իր կոնկրետ-անհատական դրսեորումներում։ Գտնելով,
որ մարդ-էակի ընդհանուր բնությունը, նրա արտաքին-
ֆիզիկական տեսքը և եղակի հոգեբանական էությունը
հնարավոր է ամենից ավելի խորը արտացոլել հենց
պորտրետում, Սարյանը ընդվզում է դիմանկարչության
հանդեպ եղած յուրաքանչյուր բացասական վերաբեր-
մունքի դեմ և առիթը բաց չի թողնում գրավոր ու բա-
նավոր խոսքով արտահայտվելու այդ ժանրի մասին։

Պորտրետի ստեղծման առաջին լուրջ դժվարու-
թյունը Սարյանը համարում է բնորդի «հաղթահարու-
մը», հաղթահարումը հետևյալ իմաստով։ «Ինձ,—
նշում է նկարիչը,—հաճախ խանգարում է ինքը՝ նկար-
վողը։ Մարդը վաղօրոք գիտե, որ իրեն նկարելու են և
քիչ է մնում հայելու առաջ զանազան պողաներ փոր-
ձի»³⁵։ Եվ նախապես «մշակված» որեէ կեղծ, սառած ու
բովանդակազուրկ դիմակով էլ ներկայանում է նկար-
չին։ «Նման դեպքում,—շարունակում է Սարյանը,—
ասում եմ, որ այսօր մենք չենք աշխատելու»³⁶։ Ի՞ար-
կե, մեկ ուրիշ նկարչի կարող էր հետաքրքրել այդպիսի
վիճակը, և նա կարող էր ցուց տալ, թե ինչպես է
մարդ կեղծում իրեն ու ստեղծել գրոտեսկային հատ-

³⁵ М. Сарьян, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.

³⁶ Նոյն տեղում։

կանիշներ ունեցող ուշագրավ կերպար (համաշխարհային դիմանկարչության պատմության մեջ կան այդպիսի գործեր), բայց Սարյանին չի հետաքրքրում ալդ: Նա միշտ որոնում է կայուն ճշմարտությունը՝ բնորդին արտացոլելով իր ֆիզիկական ու հոգեկան արատներով ու բարեմասնություններով, բնավորության ուժեղ ու թույլ կողմերով, և ըստ գերակշռության հատուկ շեշտելով այս կամ այն հատկանիշը: Հատկապես այն գեպքերում, երբ Սարյանը տվյալ բնորդին ճանաշում, սիրում, բարձր է գնահատում իբրև անձնավորություն, ամեն կերպ աշխատում է ցրել նկարվելու պահին նրա գեմքի շինծու, իր էության հետ աններդաշնակ արտահայտությունը, ինչը հակասում է նրա մասին նկարչի ունեցած պատկերացմանը և խանգարում աշխատել³⁷: Ասել իսկությունը մարդ արարածի մասին, իր ամբողջ բազմազանության ու միասնականության մեջ՝ ահա Սարյան-դիմանկարչի դեկոր: Որպես այդպիսին էլ նա անողոք է այնքան, որքան և՝ շիտակ:

Պորտրետ անելիս Սարյանը հասնում է հոգեբանական ազդեցության այն աստիճանին, երբ բնորդը լիովին ազատագրվում է նկարվելու վիճակում իրենից անկախ առաջացած կաշկանդվածությունից: Այդ պարագայում, արդեն, նա ընդունում է իր բնական, ողջ կյանքում օրգանապես մշակված-հիմնավորված պողան, ինքնաբերաբար կատարում է իր սովորական ու կայուն ժեսոր, միմիկան, որոնք հոգեկան յուրատիպ

³⁷ Մանրամասն տե՛ս Մ. Սարյան, Զարենցի հետ, «Առվետական արվեստ», 1967, № 9—10:

պրոցեսի արտահայտություն են և բացահայտում են նրա ներաշխարհը: «Ինձ,—ասում է Սարյանը,—հարկավոր է կենդանի,... Հենց տվյալ մարդը: Ես երբեք նրան չեմ պարտադրում որևէ պողա, որովհետեւ յուրաքանչյուր մարդ ունի իրեն հատուկ, բնորոշ պողան: Որպեսզի բնորդին լիապես ազատեմ ամեն մի արհեստականությունից, ես անընդհատ խոսում եմ հետը և դրուցք տանում այն ընթացքով, որը նրան ամենից ավելի է հետաքրքրում»³⁸: Բնորդի մեջ անհատականնու անկրկնելին որսալու մտածողություն է սա, որ հատուկ է համաշխարհային նկարչության շատ ներկայացուցիչների:

XX դարի բաղմաթիվ նկարիչներ ու տեսաբաններ նմանության հարցը պորտրետում համարում են հնացած ու ավելորդ: Տվյալ անձնավորության, այսպես կոչված, «հավերժացումը» (պատվիրատուի, նկարվողի պահանջ) վերապահելով լուսանկարչությանը և խնդիրը այդպիսով համարելով լուծված, նրանք իրենց ազատում են նման նկարելուց: Արդեն մեր հարյուրամյակի առաջին տարիներին ֆուտուրիստները ասում էին, թե «պորտրետը բոլորովին էլ շպենք է նման լինի բնորդին»³⁹, ի սկզբանէ այստեղ շտեսնելով որեէ պրոբլեմ: Ողջ կյանքում դեմ ելնելով առարկաների

³⁸ «Творчество», 1936, № 9.

³⁹ «Мастера искусства об искусстве», т. 5, первая книга, стр. 40.

⁴⁰ Я. Түгэнхольд, Проблемы и характеристики, Пг., 1915, стр. 55.

պատճենահանմանը, բացասելով հայեցվող ձեւերն ու
 գույները մանրակրկիտ ճշգրտությամբ նկարելու եղա-
 նակը, իրականությունը այսպես կոչված, «վերաբա-
 դրելու» մեխանիստական էսթետիկան, Սարյանը միա-
 ժամանակ արվեստում լուրջ տեղ է հատկացնում նմա-
 նությանը: Ասելով, թե «առանց նմանության առհա-
 սարակ արվեստ չկա»⁴¹, նա չի հասկանում «ֆոտոգրա-
 ֆիզմը» և դատապարտում է այն մարդկանց, ովքեր
 «մոռանում են, որ ապարատի օբյեկտիվը տալիս է ար-
 տաքինը»⁴²: Սարյանի պատկերացումով, պորտրետը
 բնորդի ճշմարտացի ներաշխարհն ու անհատականու-
 թյունը բացահայտում է նրա արտաքին տվյալների
 մեջ ու վերջիններիս հավաստի, նման ու համոզիչ
 նկարման միջոցով: Այս է, ահա, պորտրետային կեր-
 պար ստեղծելու սարյանական կարևոր սկզբունքներից
 մեկը: «Անկասկած,—նշում է նա, —նման նկարելը
 միայն ցանկության կամ տեսականորեն գիտակցելու
 արդյունք չէ: Դրա համար պետք է բնատուր ձիրք ու-
 նենալ անպայման: Բայց ամեն մի բնատուր ձիրք պա-
 հանջում է իր մշակումը, հղկումը, զարգացումը»⁴³:
 Հասկանալի է, որ այստեղ նա նկատի է ունեցել ոչ թե
 մեխանիկորեն նմանահանելը, որը կարող է սովորել
 յուրաքանչյուր մարդ, այլ իր հասկացած՝ բնորդի ներ-
 քին հատկանիշները նրա արտաքին հատկանիշների
 մեջ բացահայտելու և գնահատելու իմաստով:

⁴¹ «Գրառումներ իմ կյանքից», էջ 152:

⁴² Նույն տեղում, էջ 151:

⁴³ Նույն տեղում, էջ 152:

Աշա այդ երկու պայմանները բավարարելու՝ բնորդին նախնական կաշկանդվածությունից հանելու, նրա բնական պողան վերականգնելու և նման նկարելու կարողությունը ունենալու դեպքում է, Սարյանի ըմբռնումով, որ նկարիչը կարողանում է հերոսին (բնորդին) դիտել հոգեկան ակտիվ շարժման պրոցեսում: Իսկ այս հանգամանքը նա համարում է ամենանհրաժեշտը իսկական պորտրետ ստեղծելու համար: Նույնիսկ եթե տվյալ անձնավորությանը շատ լավ է ճանաչում նախապես (ինչը նա համարում է կարեոր պորտրետային խորը և ամբողջական կերպար ստեղծելու համար), դարձյալ խիստ անհրաժեշտ է համարում այդ երկու պարագան: Օրինակ, մոտ ընկերոջը՝ Եղիշե Զարենցին նկարելիս, որին ինքը հիանալի ճանաչում ու սիրում էր մի անսահման զերմությամբ, առաջին սեանսը սկսելու պահին նկատելով, որ բանաստեղծը կաշկանդված է և նրան այդ վիճակից դուրս բերելու համար ճիգեր թափելուց հետո արդյունքի շհասնելով, հայտարարում է, որ հանկարծ շուղեցավ այդ օրը աշխատել և կնկարի վաղը⁴³:

Եվ այդպես, նկարիչը համառորին որոնում է բնորդի ներքին հոգեկան շարժումը և նույնը պահանջում ուրիշ նկարիչներից, որովհետև՝ «Մարդուն,—նշում է նա,—որպես կանոն ամենից վառ բնորոշում է նրա մտքի ընթացքը, զգացմունքների դարգացումը: Եվ նկարչի խնդիրն է բռնել այդ ընթացքը, ընկալել

⁴³ ՏԵ՛՛ Մ. Սարյան, Զարենցի հետ, «Առվետական արվեստ», 1967, № 9—10:

պատկերվող կյանքի էությունը»⁴⁵: Ահա այդ ընթացքը բացահայտելու նպատակով է, որ Սարյանը սկսում է խոսել բնորդի հետ նրան ամենից ավելի հետաքրքրող թեմաներով: Եվ այս պարագայում է, որ «բնորդը աշխուժանում ու մտնում է ներքին ստեղծագործական լարվածության մեջ»⁴⁶, և երբ Սարյանը հանգում է այն պահին, երբ բնորդը «լուսավորված է ստեղծագործական մտքով»⁴⁷, նկարում է նրան: Այդ է պատճառը, որ բաղում տարիների ընթացքում նրա ստեղծած բազմաթիվ պորտրետներն այնքան բովանդակալից, համոզիչ ու տպավորիչ են:

Պետք է նկատի առնել, որ պորտրետի մասին ունենալով այդպիսի միանշանակ տեսական կոնցեպցիա և ողջ կյանքում հարազատորեն կիրառելով այն, Սարյանը բնորդի անհատականությունը բացահայտելու առումով հասել է բացառիկ բազմազանության: Նրա մեծ քանակությամբ գործերում երկու իրար կրկնող դիմանկար չեք գտնի այնպես, ինչպես կյանքում երկու իրար կրկնող անձնավորություններ չկան: Բայց տեսական ընդհանուր կոնցեպցիայով կատարված երկերի մեջ մեկ սկզբունքային տեսակետից ակնհայտորեն դրանք բաժանվում են երկու մասի: Տարբերություն, որ պայմանավորված է առհասարակ Սարյանի աշխարհայցքում նկարային իրականություն ստեղծելու դավա-

⁴⁵ М. Сарьян, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.

⁴⁶ «Творчество», 1936, № 9.

⁴⁷ М. Сарьян, Автобиографические ведения («Выставка произведений М. Сарьяна», М., 1936).

Նանքի որոշ կարևոր ասպեկտների փոփոխությամբ:
 Դիմանկարման վերը շարադրված ելակետերը և ընդ-
 հանուր-Հոգեբանական միտումը (բնորդի նմանության
 պահպանում ու ներաշխարհը բացահայտելու պահանջ,
 անհատական անկրկնելի հատկանիշների շեշտում և
 այլն) նկարչի էվոլյուցիայի ամբողջ ընթացքում նույնն
 է: Բայց, երբ դիտարկում ենք Սարյանի 1910-ական
 թվականների դիմանկարները, ապա ակնհայտ է դառ-
 նում, որ դրանք ունեն յուրովի «միջոկումիկական»
 բնույթ, ինչը լրիվ բացակայում է 1920 թվականից հե-
 տո նրա նկարած պորտրետներում: Կարելի է հիշել, օրի-
 նակ, Սարյանի «Ալեքսանդր Շատուրյան» (1915) դի-
 մանկարը, որը մի, եթե կարելի է ասել, եռաշերտ-ե-
 ռարժեք կտավ է: Մոտիկից ճանաշած լինելով բնոր-
 դին, նկարիչը փայլուն կերպով վերարտացոլել է Շա-
 տուրյան-անհատի արտաքին հատկանիշները, որոնց
 միջոցով տրված է «կատարյալ արտիստ մարդու ներ-
 քին էությունը»⁴⁸: Պորտրետում ակնհայտ է բովան-
 դակության երկրորդ շերտը, այն, որ կտավը մարմը-
 նավորում է հայ ազնիվ մտավորականի հավաքա-
 կան կերպարը իր տիպական գծերով: Դիմանկարի
 երրորդ շերտը ասոցիատիվ (և նույնքան ակնառու)
 բնույթ ունի: Կերպարը դիտողի երևակայությունը
 տանում է դեպի առաքյալների հոգեկոր-աշխարհը,
 ոչ քրիստոնեական կոնկրետ առաքյալներից որևէ
 մեկի, այլ համաժամանակյա գերմարդ-գերհանճարի

⁴⁸ Մանրամասն տե՛ս Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից,
 էջ 158:

ընդհանրացված-աբստրակտ այն տիպը, որը առերե-
վույթ՝ հանդես է գալիս պատմության կիզակետային
պահերին և լուսավորում մարդկության ճանապարհը՝
նորովի իմաստավորելով նրա տեղն ու գերը տիեզերքի
անսահմանության մեջ։ Այդպես էլ, օրինակ, «Գարե-
գին կառնյան» (1912) դիմանկարում, —բնորդի տիպա-
ժային-հոգեբանական, անհատական ու հասարակա-
կան երկակի սուր բնորոշման հետ մեկտեղ դիտողին է
նայում կարծես հաղարամյակների ընթացքում ժողո-
վըրդի երկակայության մեջ կերպավորված, առասպե-
լածին կամ էպոսային-տիտանական, մեծ կատակլիզմ-
ներից հետո մարդկությունը շարունակող ուժ, համա-
տիեզերական հարմոնիան իր մեջ կրող մի էակ։ Կամ՝
«Աղջկա գլխանկարը» (1912), որը անհատական-ան-
կրկնելի հատկանիշների և ընդհանրապես արդեն հա-
սուն աղջկա սիրո ներքին պոռթկումը արտահայտելու
հետ մեկտեղ դիտողի երկակայությունը տանում է դե-
պի միֆական, բոցի պես անձեւ ու հավերժաբար խու-
սափուկ լիլիթի կերպարը՝ կնոջ փախչող ու հավերժա-
բար վերահայտնվող խորհրդավոր և անբացատրելի
կերպարը։ 1910-ական թվականների այս և մյուս դի-
մանկարների համեմատությամբ 1920 թվականից հե-
տո նկարված պորտրետները մարդուն մեկնաբանում
են որպես հողեղեն, շոշափելիորեն աշխարհիկ էակ՝
առանց որևէ միֆական կամ առասպելային գծերի։
Այդպիսին է Անաղանքով լի, հմայիլ ու արտիստա-
կան «Արուս Ռոկանյանը» (1924), և առնական ու կըր-
քուտ, բեմի հսկա «Վահրամ Փափազյանը» (1924), և

խոհուն, մտածկուտ ու վշտուտ «Ավետիք Իսահակյանը» (1929), և՝ գեղանի ու պայծառ «Լուսիկ Սարյանը» (1922), և Հանդարտաբարու ու ներամփոփ, գիտության մարդու հոգնությամբ ու ներքին բովանդակությունից մեղմորեն լուսավորված «Ստեփան Մալխաչյանցը» (1943) և այլն, և այլն, որոնք մի-մի գլուխգործոցներ են և արտահայտում են Սարյանի պորտրետային էսթետիկան:

Այսպիսով, գեմ գնալով մեր դարի սկզբին արդեն լայնորեն իշխող այն տեսակետին, ըստ որի պորտրետը սահմանափակում է ստեղծագործական ազատությունը, տեղ չի թողնում նրա երևակայության անկաշկանդ թոփշքի համար և այլն, Սարյանը այն համոզմանն է, որ իբրև նկարչի էսթետիկական ինքնարտահայտման միջոց-օբյեկտ պորտրետը ընձեռում է նույն հնարավորությունները, ինչ մյուս ժանրերը: Դիմանկարը նա համարում է մարդու ներաշխարհի բացահայտման, արժեքավորման ու մեծարման ամենաուղղակի միջոցը՝ այս տեսակետից հանդիսանալով Վերածընության մեծ վարպետների մեծ հետնորդ:

Ե

Սարյանի խորհրդաժություններում, ինչպես նրա արվեստում, էական տեղ է գրավում գույնը: Վերջինիս նկատմամբ սերը, նկարչի հավաստիացմամբ, իր մոտ սկիզբ է առել ոչ թե գեղանկարչությանը ծանոթանալուց, ապա և որպես պրոֆեսիոնալ դրա կազմիշ տար-

ըերի էսթետիկական արժեքը գիտակցելուց հետո, այլ այն օրերից սկսած, երբվանից հիշում է իր գոյությունը: Գույնի այն պատկերացումը, որ մենք տեսնում ենք նրա ստեղծագործության մեջ և դատողություններում, հիմնավորապես սաղմնավորվել է նկարչի մանկության օրերին: «Մաքուր, հնչեղ, բազմազան գույների սերը,— ասում է Սարյանը,— ինձ մոտ ծնունդ է առել... մանկությանս տարիներին: Դեռ 3—4 տարեկան ես վազվըզում էի մեր տան շրջապատի դաշտերում, հրճվում էի բազմապիսի ծաղիկների, թիթեռների, բղեղների գույներով: Արևի ճառագայթների ներքո նրանք շողջողում էին մարդարիտների նման: Հեքիաթային այս գույները հոգիս լցնում էին մի անասելի խանդավառությամբ: Դրանցից ստացած տպավորությունը այնքան ուժեղ էր, որ ողջ աշխարհը, բոլոր առարկաները, բոլոր երևույթները, անգամ «ամենաանգույն իրերը» տեսնում էի բորբոքուն գունահարաբերություններով: Նկարչի իմ պալիտրան ծնվել է, փաստորեն, այդ տարիներին»⁴⁹:

Սարյանը գույնը համարում է տիեզերքի էության կարևոր դրսերումներից մեկի՝ լույսի հատկանիշ: Գույնը, ուրեմն, հանդես է գալիս ոչ այլ կերպ, քան իբրև գունալույս, որ իր անվերջ բազմազանության մեջ մեկմիասնական է որպես սարյանական աշխարհի պանթեիստական սուբստանցի ինքնաճառագայթում: Եվ այնքանով, որքանով մարդը հանդիսանում է տիեզերքի, նույնն է թե ունիվերսալ գեղեցկի կոնկրետ

⁴⁹ Նույն տեղում, էջ 10:

դրսեորումներից ամենակատարյալը, ուստի հենց նրան՝ էլ տրված է գումալուսը ոչ միայն բնության մեջ իր ֆիզիկական գոյությունը բնազդաբար իրականացնելու համար, այլև որպես իր ինտելեկտուալ-հոգեկան աշխարհը արտահայտելու միջոց։ Դույնը այսպիսով հանդես է բերվում որպես մարդու բնահոգեկան էությունը դրսեորող երևույթ ու նրան տրված մեծագույն պարզեներից մեկը՝ «Գույնը իսկական հրաշք է,—զրում է Սարյանը,—գույնի զգացումը մարդու բարձրագույն հրձվանքներից է։ Դա երջանկություն է»⁵⁰։ Սարյանը ունի գույնի՝ ոչ միայն իրրե օբյեկտիվ երևույթի, այլև մարդու մեջ ու մարդու միջոցով իր այլակեցությունը գտնելու մարդկային սուբյեկտի բացահայտումը իրականացնող ֆակտորի գաղափարը։

Նկարիչը գույնը դիտում է որպես կուլտուր-պատմական երևույթ սկսած այն ժամանակվանից, երբ մարդը իր զարգացման որոշակի էտապում թեակոփիել է քաղաքակրթության պրոցեսը, երբ կատարել է որոշ երանգներով արվեստ ստեղծագործելու իր նախնական քայլերը։ Այնուհետև գույնը շարժման պրոցես է ապրում։ Եվ հենց դրանով էլ պայմանավորված է գույնի կրած մեծ փոփոխությունների առկայությունը պատմության էվոլյուցիայի հետ միասին։ Իրեն հասարակական երևույթ, անկախ իր փոփոխականությունից, գույնը մշտակայուն իմաստով անփոխարինելի արժեք ունի մարդկային կյանքում։ Եվ այդ տեսակետից պառզա պատկերացնելն անհնար է։ Իզուր չէ, որ նկա-

⁵⁰ Նույն տեղում։

բիշը գրում է՝ «Գույնը՝ առհասարակ մարդկային գործունեության և մասնավորապես կուլտուրայի առարկան, նրա դրսեորման հիմնական մոմենտներից մեկն է»⁵¹:

Լայն առումով գույնը, Սարյանի կարծիքով, ցիվիլիզացիայի գլխավոր արտահայտություններից և ցիվիլիզացիայի զարգացման կովաններից է։ Այն, իհարկե, կիրառվում է մարդու առօրյա կյանքի ողջ ընթացքում, նրա հոգեկան ու հասարակական գործունեության ողջ բազմազանության մեջ։ Սակայն նկարիչը, ինչը և բնական է, ավելի հաճախ խորհրդածում է արվեստի մեջ գույնի ունեցած ֆունկցիայի, գույնի էսթետիկական դրսեորման մասին։ Դա էլ համարում է այն գընհավոր շափանիշը, որով որոշվում է տվյալ դարաշըրջանի ու տվյալ ժողովրդի կողմից գույնի ընդհանուր հնարավորությունների յուրացման և օգտագործման մակարդակը որոշելու համար։ Եվ այստեղ է, որ Սարյանը առանձնացնում է գեղանկարիչներին, որոնք ոչ միայն ժառանգում են իրենցից առաջ ստեղծված գույնի կուլտուրան, այլև հանդես են զալիս գույնի պատկերացման սահմանները ընդլայնողի դերով, նորովի կրթում են հասարակության գույնի զգացողությունը՝ բացելով նրա աշքերը այդ զարմանալի երեսութի նորանոր կողմերի հանդեպ, հարստացնելով գույնի տեսության զինանոցը։ Այդ է պատճառը, որ Սարյանը

51 Նույն տեղում, էջ 88:

բացարձակ հմտություն է պահանջում արվեստագետից՝ գույների աշխարհում կողմնորոշվելու և երանգները հմտությամբ կիրառելու համար։ «Նկարչության մեջ,—գրում է նա,—գույնը առաջնակարգ նշանակություն ունի։ Եթե արվեստագետը գույնը չի զգում..., նրա «գեղանկարչական» գործերից տիտրություն է բուրում։ Նկարիչը պետք է սիրի իր ներկերը և կարողանա օգտագործել նրանց արագ ու մեծ զգուշությամբ... Նկարիչը իր սլալիտրան պիտի դիտի որպես մի ծաղկանոց և կարողանա հմտությամբ, իսկական պարտիզանի նման վերաբերվել նրան։ Կարողանալ պալիտրայից քաղել գույներ, որոնք կտավի վրա դնելիս արտահայտեն ցանկացած ապրումը, բովանդակությունը՝ մեծ վարպետություն է։ Գույնը պետք է արտահայտի մեր մեջ ապրող կյանքի բովանդակությունը։ Մեր ստեղծագործական երևակայությունը մարմնավորվում է գույների ու ձևերի մեջ»⁵²։ Այստեղ ամենայն հստակությամբ նշված են գեղանկարչության մեջ գույնի խոշոր նշանակության հարցը, երանգների միջոցով արվեստագետի էմոցիոնալ աշխարհը արտացոլելու և նրա սուբյեկտիվ-արտիստական անհատականությունը մարմնավորելու, ինչպես նաև առհասարակ մարդու մեջ առկա կյանքի օբյեկտիվ ու համընդհանուր բովանդակությունը կերպավորելու համանջները, — պահանջներ, որոնք արդյունք են գույնի ավտոնոմ-գեղարվեստական ասպեկտը ընդգծելու և պանթեիստական աշ-

⁵² Նույն տեղում, էջ 159—160։

խարհայեցողության: Իսկապես այն, որ Սարյանը գտնումէ, թե գույնը պետք է արտացոլի մարդու մեջ առկա կյանքի բովանդակությունը, իսկ կյանքը, ինչպես տեսել ենք, նկարչի կարծիքով հոգեֆիզիկական էություն է՝ բնորոշ է կոսմոսի և մարդու անքակտելի կապի մասին նրա տիեզերաբանական-պանթեիստական խորհրդաժություններին:

Գույնի նմանահանման (изобразительности) արժեքը արվեստում Սարյանի տեսակետից ունի ունյատիվ նշանակություն նրա էքսպրեսիվ արժեքի նկատմամբ, որը տվյալ նկարի գեղարվեստական որակի հիմնական գրակորումներից մեկն է: Գույնի էքսպրեսիվ ֆունկցիայի մասին խոսելիս նկարիչը ձգտում է պարզ բացատրությամբ բացահայտել մի շատ բարդ պրոցես, երբ բնության մեջ գունալույսի բազմազան երևակումների զգայման, ընկալման, ճանաշման և այլ ընթացքում դրանց մարդկայնացման ու հոգեկան արժեքի վերափոխման հետ կտավի վրա կազմակերպվում է արվեստի երկը: Այս առումով ևս Սարյանը զարգացնում է իր անմիջական նախորդների՝ պոստիմպրեսիոնիստների, մասնավորապես գոգենյան տեսակետը: Ֆրանսիացի գունանկարիչը խորհուրդ էր տալիս՝ «Դուք այս ծառը տեսնում եք կանա՛չ: Դրե՛ք, ուրեմն, կտավին ձեր պալիտրայի վրա եղած ամենագեղեցիկ կանաչը... Այս ստվերը ձեզ թվում է կապտին տվող: Նկարեցեք ամենակապո՛ւյտ գույնով...»⁵³: Սա ցույց է տալիս, որ Գոգենը ելնում էր բնությունից,

⁵³ Պ. Գոգեն, Հօա-իօա, стр. 37.

բայց նկարային արդյունքում ներկայացնում էր գույների ինտենսիվացված ու երևակայական մի աշխարհ ավելի, քան իրականի վերարտադրությունը: Նա տեսնում էր, օրինակ, ծառի՝ որպես կանաչ գույն ունեցող մի բնական առարկայի ուժգնացված, ընդհանրացված, գեղարվեստորեն գեղեցկացված պատկերը: Մի այլ դեպքում Գոգենը գրում է՝ «Մաքո՞ւր գույն, և հանուն դրա պետք է զոհել ամեն ինչ: Մառի բնի լոկալ մոխրակապույտ գույնը դառնում է մաքուր կապույտ: Նույնը և մյուս երանգների հետ: Գույնի ինտենսիվությունը որոշում է ամեն մի առանձին գույնի բնույթը»⁵⁴: Գույնի այս էսթետիկան է, որ զարգացրին XX դարի միշտ շարք գեղարվեստական ուղղությունների ներկայացուցիչներ, այդ թվում և Սարյանը: Ահա թե ինչ է գրում նա՝ «Եթե նկարվող պեյզաժի որևէ առարկայի բնական գույնը, ենթադրենք, կապույտ է, իսկ նկարի գունային ողջ համակարգը թելադրում է, որ այդ նույն առարկան պետք է կտավի վրա կարմիր (կամ այլ գույնի) լինի, ուրեմն հարկավոր է կարմիրի վերածելը»⁵⁵: Իզուր չէ, որ արվեստագետը ասում է, թե «նկարի գույնով ստեղծում է մի ամբողջ աշխարհ»⁵⁶:

Գոգենի և Սարյանի խորհրդածություններում պարզորդ երևում է, թե ինչպիսի ընթացք է ունեցել գույնի էքսպրեսիվ ֆունկցիայի ըմբռնումը իրար շա-

⁵⁴ «Мастерская искусства об искусстве», т. 5, первая книга, стр. 169.

⁵⁵ «Գրառումներ իմ կյանքից», էջ 11:

⁵⁶ Նույն տեղում:

բունակող XIX դարի և XX դարի առաջադեմ նկարչական տեսնդենցներում,—բնության մեջ եղած առարկայի գույնի ինտենսիվացումից ու երեակայական գեղեցկացումից գեպի պայմանականության ուժգնացում, ընդհուպ մինչև բացահայտ երանգափոխումը, նկարի իրականությունից և գունային համակարգից ելնելու փորձի ավելի անկաշկանդ կիրառում։ Եվ .գույնի ըմբռոնման այս ընթացքը իր հերթին հաստատում է զգայելի ռեալության ու նկարային աշխարհի զուգահեռականության իդեան։

Սարյանը, բնականաբար, միանգամայն գեղանկարչի հայացք ունի գույնի նկատմամբ՝ «Գեղանկարելիս, —նշում է նա, —պետք է միաժամանակ և՛ գունանկարել, և՛ գծանկարել և ոչ թե գծանկարել՝ ապա գունավորել այն»⁵⁷։ Միաժամանակ գծանկարելու և գունանկարելու իր այս պահանջի հետ միասին Սարյանը արդի գեղանկարչությանը ներկայացնում է մի այլ, իր տեսակետով շափաղանց կարեռը պահանջ՝ «Բացի ընդհանուրի հետ ներդաշնակվելուց, —դրում է նա, —ամեն մի գույն պետք է ունենա որոշակիություն, պետք է ներգործի ուղղակիորեն՝ ընդգծուն իր սահմաններով ու հյութեղությամբ։ Գույները կոնտեքստի մեջ պետք է կազմեն համահնչեղություն, բայց և շկրցնեն իրենց ինքնին արժեքը։ Գույնը շպետք է խամրի իր միջավայրում, այլ պետք է ուժ ստանա նրանից»⁵⁸։ Ասված է շատ պարզ, —գույները պետք է կազմեն մի համընդ-

⁵⁷ Նկարչի անտիպ ձեռագրերից։

⁵⁸ «Գրառումներ իմ կյանքից», էջ 11։

Հանուր ներդաշնակություն և միաժամանակ չկորցնեն
իրենց առանձնակի արտահայտչականությունը:

Բնույթով գունագեղ նկարչությունը Սարյանը շա-
փազանց անհրաժեշտ է համարում մեր էպոխայում:
Ժամանակակից արվեստի ընդհանուր-հոգեբանական
փունկցիայի իր՝ ըմբռնումը պրակտիկապես իրագործե-
լու համար նա անփոխարինելի է համարում գունային
բազմազան ու հնչեղ ակորդները: Սրանք, արվեստագե-
տի համոզումով, կարող են բարձրացնել դիտողի տրա-
մադրությունը, վարակել նրան հրճվալից զգացումնե-
րով՝ անկախ տվյալ կտավի ընդգրկած թեմատիկ նյու-
թից և այնտեղ պատկերված առարկաներից: Ստեղծա-
գործության գունային համակարգը, ինքնին, իրենից
ներկայացնում է արտահայտչական հղոր ուժ, որը ըն-
կալման առաջին խոկ ակնթարթից սկսած որոշակի հու-
նի մեջ է դնում դիտողի էմոցիոնալ-ինտելեկտուալ աշ-
խարհը՝ ըստ այդմ էլ նրա հոգում հետզետե ավելի
ընդլայնելով ու խորացնելով գեղարվեստական կեր-
պարի ազդեցության սահմանները,—մինչ մարդկային
վեհ իդեալներով լիապես ներշնչելու և ստեղծագործա-
կան ակտիվության մղելու աստիճանը: Սարյանը շատ
բարձր է գնահատում համընդհանուր արվեստի պատ-
մության այն էպոխաները, երբ ստեղծվել է գունագեղ
գեղանկարչություն և առավելագույնս սիրում է այն
արվեստագետներին; որոնք օժտված են գունային
մտածողությամբ ու գունակերպար ստեղծելու կարո-
ղությամբ: Նա հակված է դեպի բազմագույն, պայծառ,
օպտիմիստական կոլորիտը և ներկայիս արվեստագետ-

ներին խորհուրդ է տալիս հատուկ լրջությամբ ուսումնասիրել անցյալի ու նոր ժամանակների նմանօրինակ գեղանկարչական ավանդները՝ հայացքը կոսմոս ուղղած, կոսմոսը յուրացնող այսօրվա ու ապագայի մարդու երևակայական աշխարհին բավարարություն տալու և նոր լիցք հաղորդելու համար:

Ինչպես իր նկարներում, այնպես էլ իր դատողություններում Սարյանը ինքնաբացահայտվում է ոչ միայն իբրև ի ծնե գույնի բացառիկ զգացողությամբ օժտված ու մանկության օրերից ի վեր մաքուր և հընչեղ երանգների հանդեպ անսահման սեր ունեցող անհատականություն, ոչ միայն որպես արևելյան ու եվրոպական գունըմբռնողության տրադիցիաներին բազատեղյակ և կոնկրետ պոստիմպրեսիոնիզմի գունային էսթետիկան զարգացնող նորարար, այլև իբրև հաղարձյակների ընթացքում իր ժողովրդի ստեղծած դիցաբանության, բանահյուսության, պոեզիայի ու մանրանկարչության բազում նմուշների հիմքում ընկած գունակերպավորման ազգային սկզբունքը բնագդաբար ու խորին գիտակցականությամբ շարունակող արվեստագետ: Հիշենք, թե որքան հրաբորոք է հեթանոս նախնիներից մեզ հասած «Վահագնի ծնունդը»՝

Երկնէր երկին, երկնէր երկիր,

Երկնէր և ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծովս ելանէր,

Ընդ եղեգան փող բոց ելանէր.

Եւ ի բոցոյն վաղէր խարտեաշ պատանեկիկ.

Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աշկունքն էին արեգակունք:

Աստծո ծննդյան երկակայական պատկերացումը
այստեղ գունատեսողական է: Միալ չի լինի ասել, թե
«Վահագնի ծնունդը» խոսքով արտահայտված «նկա-
րային» տեսիլք է: Տիեզերական տարերքը ծավալվում
է իբրև պարզորեն ըմբռնվող գույների վիթխարի շար-
ժում, որպես միասնական գամմա կազմող խրոմատի-
կական հրաշագործություն, որը ճառագայթում է լույ-
սով: Մտաբերենք ապա նարեկացուն՝

Աշքն ծով ի ծով ծիծաղտիտ
ծաւալանայր յառաւոտուն,
Երկու փայլակնաձև արեգական նման,

Չողն ի ժմին իջեալ յառաւոտէ լոյս:
Յայտէն նոնենի սարդիատունկ

գեղաշխտակ ծայրից ծաղկանց,
որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն
կարկաջայր սաթբերունի սէր:

Զեռացն եղիշոյ կամարակապ կապեր,
ատիճաղ պատիճաղ, ստղի խտղի երգով:

Հիւսէր զելմելսն ընդ միմեանս,
Հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր:

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տափոն:
Ի ծամին խեղեփին հաղրէ զի նոյն սէր
Հոգիազգեստեալ գեղն ի գինոյն գոյն:

Վարսիցն երամից զարդ, երամից զարդ,
ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ
այտիք:

Սոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
ծղիքն ծիրանի մանուշակի հոյլք:
Խնկեալ ի կնդրկէ բուրգառ հրով աստուածայնով
լցեալ.

Ճայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:
Գեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էր,
ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեղոյ, ի
յորդանէ, ոսկեղջողէր գոյնն:
Գօտին արծաթափայլ ոսկէտտուն,
կամարակապ յականց, յականց շափիւղայ,
մանրամասին յօրինուածով սլձնեալ:
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով.
ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:
Այն թագաւորին, այն նորածին փրկչին,
զբեղ պսակողին փառք յաւիտեանս. ամէն:

Դժվար չէ նկատել, թե որքան վիզուալ է նարե-
կացին և թե ինչքան մեծ ֆունկցիա ունի գույնը նրա
պատկերավորման սիստեմում: Հիրավի, եթե անգամ
մի կողմ դնենք մանրանկարչությունը և բավարար-
վենք միայն այս բանաստեղծությունը թոռցիկ դի-
տարկելով, կհավաստվի, թե իրավացի է Սարյանը,
դրելով՝ «Մեր հին հայրենիքը, մեր հանճարեղ արվես-
տը նկարչի առջև կարող են բացել գույնի ամենախո-
րունկ գաղտնիքները»⁵⁹: Բանաստեղծության ողջ հյուս-

⁵⁹ Նկարչի անտիպ ձեռագրերից:

վածքը անընդմեջ գունատեսողական է: Այստեղ իրում ատիկական մթնոլորտը այնքան շարժուն ու երանգները խոսքային կոմպոզիցիայի համատարած դինամիկ համակարգում այնպես փոխկապակցված ու բազմակի անդրադարձումներով հագեցած են, որ նույնիսկ այն առարկաներն ու երևույթները, որոնց նարեկացին ուղղակի գունային ածականներով չի բնորոշել, մինույն է, միջնորդավորված կերպով, ընդհանուր վառվըռուն ու փայլվիլուն միջավայրում, ստանում են որոշակի երանգ և ընթերցվում-ընկալվում են որպես բանաստեղծական հագեցած գունային բաղադրամասեր: Գույները տաղում մարգարտաշող ու համահնչուն են: Այստեղ հենց ինքը գույնն է, որ լուսարձակում է: Բոլոր ձևերը միահամուռ ճառագայթումով արտահղում են լուսի մի ամբողջ կոսմիկական հեղեղ: Կարծես Սարյանը մեկնաբանում է նարեկացու տաղերը, գրելով՝ «Հսկայական, առաջնակարգ նշանակություն ունեն երեկու ֆակտոր՝ լուսը և գույնը... դրանց խելացի կիրառումը ձեփի ոգին է»⁶⁰: Ի՞արկե, յուրովի դրսեորումներով ու հասկանալի տարբերություններով հանդերձ՝ և՛ նարեկացու տաղերի գերակշիռ մասին, և՛ հայկական մանրանկարչության բազմաթիվ հուշարձաններին, և՛ Սարյանի կտավներից շատերին հատուկ են գերլարված գունահարաբերությունները նույնիսկ զուսպ տոների մեջ, երանգների հասկացողություն-արժեքի ինքնական ըմբռնումը անկախ այն բանից, վերցված են բա-

60 Նույն տեղում:

ցարձակ մաքրությամբ, թե խառնուրդներով։ Այս ամենի
միասնությունը կազմում է ներքին այրումով ինքնաճա-
ռագայթող ակորդ, որի ընկալումը դիտողի հոգում
ստեղծում է հավերժական լույսի առեղծվածային ձրդ-
տում, ինչը անընդհատ խորանալով նրա երևակայու-
թյունը տանում է դեպի տիեզերական անսահմանու-
թյուն։

ՀԱՎԵԼՎԱԾՈ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

I

1. Այն, ինչ ես հասկանում եմ տիեզերք ասելով, ինձ համար միաժամանակ էսթետիկական կատարելություն է, որը ես բնորոշում եմ ունիվերսալ գեղեցիկ երկու բառով և որը հենց հավերժական պրոցես ապրող աբսոլյուտն է:

2. Ամբողջ աշխարհը հենված է մի մեծ ուժի վրա: Այդ ուժը մի ընդհանրություն է՝ տիեզերական, ամենուրեք և ամեն ինչում. աստղերը և մոլորակներն իրենց բարդ սիստեմներով լոկ կետեր են, որոնք ընթանում են տիեզերական տարածության մեջ ու խստորեն ենթարկվում նրա օրենքին: Այդ ուժը այն ամենի էությունն է, ինչը մենք գիտենք և ինչը մենք չգիտենք:

3. Բնության մեջ ամենուր թագավորում է կյանքի ուժը: Իմ կարծիքով ամեն մի արվեստագիտ պետք է ապրի այդ ուժի գոյությունը և արտահայտի իր նկարներում: Այն, իհարկե, առօրյա միջավայրում չի երե-

վում: Շրջապատում տեսնում ենք միայն սովորական քար, ծառ և այլն: Իսկ այդ ուժը բնության ներքին շարժման, ներքին շնչառության մեջ է, որին կարելի է հասնել կոնկրետ առարկաների արտաքին տարրերություններից մտովի վերանալով և նրանց հիմքում ընկած ընդհանրություններին շփվելով:

4. Ամեն ինչ վերջիվերջո կենդանի է, ամեն ինչ պրոցեսի մեջ է: Անգամ քարը, ոչ թե հենց այնպես ընկած է տարածության մեջ, այլ ծավալվում է, կյանքն է ներկայացնում: Ամեն բան ներքին խլրտումով է ապրում:

5. Արարիշը հենց ինքը բնությունն է՝ միշտ պարզ ու միշտ խորհրդավոր:

* * *

*

6. Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է: Մարդն ինքը բնությունն է: Միայն մարդու միջոցով է բնությունը ճանաչում իրեն: Դա մարդու մեծագույն երջանկությունն է: Հսկայական, անվերջ բնություն և փոքրիկ մի արարած, որ իր մեջ կրում է այդ անսահման մեծությունը: Բնությունը ծնել է մարդուն, առանց խնայելու տվել նրան ամեն, ամեն ինչ... Մայր է տվել: Տվել է բանականություն, որը երբեմն քեզ տանում է այն մտքին, թե հավանական էր նաև՝ չլինեիր... Գոյություն չունեիր և ահա, բնության հրաշ-

քով, «ոչնչից» վերածվում ես մարդու: Գիտակցում ես
քո եսը, բնությունը, հայրենիքը, տեսնում ես արել:
Զգում ես կյանքը, իսկ կյանքի զգացումը երջանկու-
թյան զգացումն է:

7. Մարդը գեղեցիկ է: Ես սիրում եմ մարդուն, որովհե-
տև նրան ստեղծել է մեծագույն նկարիչը՝ բնությունը:
Իսկ Երկիրը <...> մի կենդանի էակ է, ուր կենտրո-
նացել է ամեն ինչ: Դա կենդանի գունդ է, որին ստեղ-
ծել է Տիեզերքը...

Երկիրը դա մենք ենք, ես եմ:

8. Միտքը վայրկենապես ընդգրկում է ամբողջ տիե-
զերքը, այդ անսահմանության մեջ երկրագունդը երե-
վակայելով որպես մի փոշեհատիկ: Եվ ակնթարթորեն
պատկերանում է մարդը՝ իր ամբողջ հոյակապու-
թյամբ:

9. Մարդը հպարտ, բանականությամբ օժտված էակ է:
Նրան տրված է այն, ինչ շունեն կենդանիները:
Մարդն ամեն ինչ է՝ կյանքի հոգին, նրա իմաստը: Ավ-
սոս, որ նա իրեն քիչ գիտե: Ով իր նկատմամբ հետա-
քըրքասեր է, նա ստեղծում է:

10. Մարդն ամենակատարյալն ու ամենագեղեցիկն է
բնության ստեղծագործություններից, և դրա համար էլ
«եսը» ստանում է առաջնակարգ նշանակություն:
Կյանքը դա ես եմ: Ես մտածում եմ, ես զգում եմ: Ես
կառուցում եմ ինձ համար, ըստ իմ սահմանափակ
հնարավորությունների:

11. Տիեզերքի անսահման տարածության մեջ պտտվելու շպրտված փոքրիկ երկրագնդի մի կետի վրա ես եմ: Բայց իմ ես-ը ինձ թվում է ամբողջ տիեզերքը: Ես ամբողջ աշխարհն եմ, որովհետև ինձ նման փոշեհատիկները շատ են և կազմում են մի միասնական, հզոր ես-ամբողջություն...

12. Մարդու միսիան ավելի մեծ է, քան նա կարծում է: Եվ հաղթում է նա, ով քայլում է դեպի առաջ: Մարդը ինքը՝ բնությունն է, ամենամեծ բանը մարդու մեջ նրա բանականությունն է, որի միջոցով բնությունը ճանաշում է իրեն: Ահա թե ինչու աշխարհի հետագա կատարելագործումը պետք է կատարվի մարդու կողմից մարդ-բնության միասնության խոր գիտակցման միջոցով:

13. Կյանքի մեծ ու փոքր երկույթները ենթարկվում են միևնույն օրենքին՝ տիեզերքի օրենքին: Ամեն ինչ գըտնը վում է անընդհատ շարժման ու անընդհատ պայքարի մեջ: Ի՞նչ երջանիկ եմ, որ ծնվել եմ: Երախտապարտ եմ քեզ, իմ մա՛յր Բնություն, ի՞նչ բերկրալի է <...> տպրել երկրի երեսին: Կյանքի բնաղդը պսակված է բանականությամբ ու զգացմունքով: Երջանիկ լինի թող այն ամենը, ինչը Դո՛ւ ես ամփոփում:

14. Ո՞վ ասաց, որ մենք չենք եղել, ո՞վ ասաց, որ մենք չենք լինի... Բնությունը անվերջ է, բնությունը մարդու մեջ է, մարդն ինքը բնություն է, իսկ բնությունը՝ տիեզերքը, անսկիզբ է, անվերջ, ես ամեն օր ծնվում եմ...

* * *

*

15. Միայն մարդու միջոցով է բնությունը ճանաշում իրեն:

16. Մարդն անընդհատ գործ ունի բնության հրաշքների հետ: Աղամից սկսած մարդկությունը զբաղված է դրանց ճանաշման, բացատրման ու յուրացման գործով: Բնության իսկ տված բանականությունը համառորեն ձգտում է որքան կարելի է հեշտ ու օգտակար ձեվով հրաշքները վերացնել, այսինքն շոշափելի, սովորական իրականություն դարձնել: Ինչ-ինչ շափով հաջողվում է այդ և դրանով էլ ապրելը դառնում է ավելի հեշտ ու հարմար, իմացության սահմանները ընդլայնվում են: Բայց հրաշքը մնում է հրաշք: Պրոբլեմը պրոբլեմ է ծնում, յուրացված հրաշքը նորից առեղծված է դառնում և այդպես շարունակ: Իսկ մարդը՝ բնության ամենակատարյալ հրաշքը, անդադար զարմանում է, հայտնագործում, պարզում ու դարձյալ զարմանում: Դա ինտելեկտուալ կյանքի գոյության ձեն է, որը ընդհանուր է թե՛ գիտության, թե՛ արվեստի ասպարեզների համար:

17. Բնությունը, ինչքան էլ հասկանալի ու առօրեական, ամեն անգամ զարմացնում է իր դրսենորումներով, իր հարատեսակոցով, իր դիպվածներով և ձեվերով: Զարմանքը հասարակ բան չէ: Զարմանալու ընդունակությունը բնության կողմից մարդուն տրված մեծագույն պարգևներից է: Որքան այն պակասում է մարդու մոտ, այնքան աղքատ է նա իր հոգով և այն-

քան ավելի է նրա մեջ քար անտարբերությունը: Իսկ անտարբերությունը բթության կամ բթացման առաջին և ամենահիմնական պայմանն է: Զարմանքի պրոցեսում լարվում է մարդու ուշադրությունը, գրգովում հետաքրքրությունը, զարմանքը տանում է դեպի զգացմունքների, մտքի ակտիվացում: Այդ բոլորն ազդակներ են, որ մղում են մտածող, կենդանի մարդուն դեպի կյանքի խորքերը, զաղտնիքների ճանաչումը: <...> Էլ ո՞նց շասես, որ զարմանքը տանում է դեպի անզարմանալին, տանում է դեպի ճշմարտության հայտնագործումը:

18. Ասում են, թե գիտությունը և արվեստը արդյունք են՝ առաջինը մտքի, երկրորդը զգացմունքի: Ճիշտ չէ: Միտքը և սիրտը գործում են միասնաբար ու նույնքան անհրաժեշտորեն, ինչպես գիտության, այնպես էլ արվեստի մեջ: Եվ մեկի, և՛ մյուսի ակունքները, արմատները գտնվում են անընդհատ կենդանի, անընդհատ շարժվող և անընդհատ ստատիկ մարդ-բնության մեջ:

19. Միտքը և զգացումը, իրենց ներդաշնակության ամենաբարձր դրսենորման մեջ, անհրաժեշտ են ոչ միայն արվեստի գործ ստեղծելու, այլև այն ընկալելու համար:

20. Ասում են՝ մեր դարը գիտության դար է: Բայց միթե կարելի է մարդկության պատմության մեջ ցուց տալ մի որևէ դար, որ գիտության դար չիներ: Շոգեքարշը նույնպիսի հրաշք էր իր դարի համար, ինչպես ատոմային էներգիան մեր դարի համար: Ո՛չ, չկան և

երբեք շնն եղել գիտության դարեր և արվեստի դարեր առանձին։ Միայն դրանց միասնությունը, դրանց փոխարաբերակցությունն են միշտ գծագրել դարաշրջանի կերպարը։ Այժմ արվեստը մի վիթխարի ուժ է և օգնում է գիտությանը կատարելու մեծ հայտնագործություններ։ Ճշմարիտ գիտությունը ինչ-որ բանով նույնական է արվեստի հետ։ Այն պարունակում է պոհատական վեհություն և ծառայում է մարդկությանը։ Այն մարդկությանը օգնում է ստեղծելու արվեստի լավագույն երազանքներում ծնունդ առած աշխարհը, և այդ իմաստով այն նույնպես արվեստ է։

21. Առանց վերացարկման, առանց ակտիվ երևակայության մարդը շատ թույլ էակ կլիներ։ Նա չէր կարող ո՞չ գիտություն, ո՞չ էլ արվեստ ստեղծել։ Սա, կարծում եմ, վիճելի բան չէ։ Բայց մի օրինակ բերեմ։ Ուզում ես նատյուրմորտ նկարել և աղատության կամ որ նույնն է՝ բանության ժխտման, իդեալը արտահայտել։ Ի՞նչ անես։ Որքան էլ լավ, բնական նկարես, միևնույն է, տանձը, խնձորը, կճուճը, ծաղիկը կմնան տանձ, խնձոր, կճուճ, ծաղիկ—ո՞չ ավելին։ Ուրեմն այդ առարկաներից դու պետք է վերացարկես, կտավի վրա երեղակայաբար զնես գծեր, գույներ, ձևեր, ոիթմեր, հարաբերություններ, որոնք ներշնչեն դիտողին ուղածդիրեալը։ Այդ գծերը, գույները, ձևերը, ոիթմերը, հարաբերությունները արդեն, կլինեն քո հոգու, ինտելեկտի պտուղները, կլինեն ինքնարտահայտման սիմվոլներ, երևակայումներ և ոչ թե բնության սուրբողատ։

Դրանք կլինեն քո եսով իմաստավորված ձևերն ու գույները, կլինեն արվեստի իրականությունը և ոչ թե սոսկ բնական իրերի ներկայացումը:

* * *

*

22. Բնությունը այնքան հարուստ, խոր և բազմազան է, որ յուրաքանչյուր ստեղծագործող կարող է այնտեղ դառնել իրեն հետաքրքրող խնդրի լուծման բանալին:

23. Արվեստը բնության պատճենահանում շէ, բայց պետք է լինի բնության պես ներդաշնակ ու բնության պես համոզիլ:

24. Պետք է նկար ստեղծել և ոչ թե խաբուսիկ բնություն: Բայց առանց բնության զգացողության և ուսումնասիրության նկար շի ստեղծվում:

25. Պետք է նկարել ոչ թե այս կամ այն առարկան, այս կամ այն երկույթը, այլ այդ առարկայի ու երկույթի մեջ՝ տիեզերական կյանքի ուժն ու հմայքը:

26. Բնության մեջ միասնական են՝ արել և լույսը, երկրագունդը և մեր կյանքը, մարդը և բանականությունը և այն, և այն... Եվ այդ բոլորը տարբեր կողմերով ու տարբեր կապակցությունների մեջ, փոխադրեցության տարբեր ձևերով ու տարբեր միջնորդավորումներով,—իրենց հերթին կազմում են մի ավելի բարդ ու բազմակողմանի միասնություն: Այդպես է և

արվեստում՝ իր բոլոր բաղադրիչներով, թե՛ մի կոնկրետ գործում:

27. Ճշմարտությունը և գեղեցկությունը իսկական արվեստի մեջ արտահայտվում են ճշմարիտ բովանդակության և գեղեցիկ ձևի օրգանական համաձուլման միջոցով։ Զգտելով այդ նպատակին, նկարիչը, ինքն էլ այդ շնկատելով, կատարում է իսկական սխրագործություն՝ նվաճում է գեղեցիկ բովանդակությունը և ճշմարիտ ձևը...

28. Արվեստը բնության զուգահեռն է և ոչ թե նրա շրջումնակությունը։

* * *

*

29. Իսկական արվեստագետները հետաքրքիր են իրենց անկրկնելիությամբ։ Նրանք չեն կարող լինել միօրինակ ու միատիպ, որովհետև արվեստին հակացուցիլ է մասսայական թողարկումը։ Անկրկնելի է և յուրաքանչյուր ժողովուրդ ու նրա հոգեկան կառուցվածքը։ Իսկ դա ստեղծում է նաև ազգային անկրկնելի արվեստ՝ ոռուսական արվեստ, հայկական արվեստ, ֆրանսիական արվեստ, վրացական արվեստ, գերմանական արվեստ, անգլիական արվեստ, իտալական արվեստ, ճապոնական արվեստ և այլն։ Այդ արվեստները հարստացնում են աշխարհը։ Ազգային արվեստները մարդկության, մարդկային արվեստի աղամանդի հանքերն են։ Որքան բազմազան լինեն այդ հանքերը, այնքան արժեքավոր

կլինեն մարդկության արվեստի աղամանդները: Բազմազանությունը, բազմաձևությունը նրա հարստությունն են: Այդ հարստությունը ծնում է նաև մարդկանց, արվեստների, երկրների ու ժողովորդների մերձություն: Մերձությունը նմանեցում չէ, նմանեցումը մերձության կորուստն է, նրա ոչնչացումը: Առա ինչու մեզ պետք է ոչ թե նմանեցում, այլ միասնացում և փոխհարստացում: Թող լինեն լավ ու բազմապիսի արվեստներ: Արվեստի միօրինակությունը հոգնեցնում է, անտարբերություն ծնում, իսկ անտարբերությունը նպաստում է այն սև ուժերի ծննդին, որոնք կործանում են թե՛ մարդկությունը, թե՛ մարդուն:

30. Մարդիկ, որ ամբողջության մեջ մի միասնություն՝ հասարակություն են կազմում, առանձին-առանձին վերցրած տարրեր են իրենց ընդունակություններով և տարիքային, հասարակական վարքագծով: Բայց ունեն և ընդհանուր կողմեր: Դա կոլեկտիվ կյանքի հիմնական հատկանիշներից մեկն է: Շատ կարևոր հիմքեր են նաև էպոխան ու ազգային յուրահատկությունները: Բնապատմական պայմանները, որ ազգային սպեցիֆիկայի հիմքն են կազմում, բարեբախտաբար բազմաթիվ են: Ինչի՞ նման կլիներ, եթե երկրագնդի վրա ստեղծվեր միայն ու միայն մի տիպի քաղաքակրթություն, մի ձեփ նկարչություն: Արվեստը բազմազանություն է սիրում ինչպես պատմական, այնպես էլ աղդային տեսակեալից: Մարդկության պատմության դինամիկան իր բազմազանության մեջ՝ առա համաշխարհային արվեստի բովանդակությունն ու դեմքը: Անգնա-

Հատելի մի հարստություն: Ուրեմն, ամեն մի արվեստագետ, բացի տեխնիկայի գրագիտությամբ զինվելուց, պետք է ուսումնասիրի, սեփականը դարձնի իր ազգի կուլտուրան, շնչի այդ կուլտուրայի պատմական զարգացման օդը: Ի՞արկե կղզիացումը մա՞ս է, բայց յուրացումը, շփումը պետք է լինի ազգային հողի վրա: Զկա՞կոսմոպոլիտ արվեստ, կա՞ ազգային-համամարդկային արվեստ: Ի դեպ, ազգային ասելով չպետք է հասկանալ անցյալի տրագիֆիաների կույր պահպանումը կամ նոր բովանդակությունը հին ձեռքի կաղապարների մեջ լցնելը: Իմիջիայլոց, երբեմն ազգայինի տեղ են դնում հենց այդպիսի գործերը: Բայց դա խաբկանք է: Ազգայինը պետք է դառնա ստեղծագործողի ներքին սեփականությունը, նրա ներքին մտածելաձեզ իր զարգացման մեջ և ոչ թե մնա որպես նրանից դուրս գտնվող օրինակելի օբյեկտ:

31. Ամեն մի իսկական ազգային արվեստագետի ստեղծագործության մեջ պետք է սինթեզված լինեն իր ժողովրդի կուլտուրայի ողջ պատմությունը և իր ժամանակաշրջանի համաշխարհային կուլտուրայի առաջադիմ տեսնգենցները: Սա մեծ արվեստի հիմքն է:

32. Իսկական ինտերնացիոնալիզմը հողի հետ է կապված: Բնությունն է ժողովուրդներ, ազգեր ստեղծում և նա է կապում այդ բոլորին: Տարբեր ազգերից լինելով հանդերձ, մարդիկ նման են իրար, ունեն աշքեր, սիրութերեր... Ուրեմն, ինտերնացիոնալիզմը վերեից, ձյունի նման չի թափվում, այլ հողին է կապված <...>:

Միօրինակությունից զգվելի բան չկա... Գեղեցկությունը ազգերի տարբերության մեջ է: Դա էլ հենց երկրագնդի հարստությունն է: Ազգերը իրար լրացնում են, մեկի պակասը լրացնում է մյուսը և միասին ամբողջություն են կազմում: Դրա համար, որքան ցայտուն լինի ազգային հատկանիշը, այնքան հարուստ ու հետաքրիր կլինի ամբողջությունը: Ուրեմն, որքան ազգային, որքան մաքուր, այնքան համամարդկային:

33. Առանց ազգային ավանդների բարձր արվեստ երբեք չի ստեղծվել և չի էլ կարող ստեղծվել: Բնությունից, ազգային արվեստի հողից կտրված կարելի է հասնել ինտելիգենտիկական պրոֆեսիոնալիզմի, բայց ուա արվեստ չէ:

34. Ասում են, որ արվեստը պայմանականություն է, և դա բացարձակ ճշմարտություն է: Բայց ամեն մի ոճի պայմանականությունները ճիշտ են իր, սխալ՝ այլ ոճի համար: Զի կարելի, օրինակ, շինական արվեստին մոտենալ հունական արվեստի տեսակետից կամ իտալական Ռենեսանսը դիտել նույն իտալական միջնադարի նկարչության սկզբունքներից ելնելով: Այս բանը պետք է դաս լինի և՛ նկարչի, և՛ քննադատի, և՛ արվեստասերի համար:

35. Զկան ազնիվ ու ոչ աղնիվ ոճեր: Բոլոր ոճերով էլ ստեղծվել են թե՛ գլուխգործոցներ, թե՛ արհեստավորի արտադրանք: Ճիշտ այդպես էլ՝ չկան կարևոր ու երկրորդդական ժամաներ:

* * *

36. Արվեստը ծնվում է ժողովրդական ակունքներից; գուրգուրվում ժողովրդի զգացմունքներով՝ աճելով այն կոնկրետ հողի վրա, որը սնում է նրան:

37. Ամեն մի իսկական արվեստագետ մեծ է այնքանով, որքանով կապված է իր ժողովրդին, որքանով արտահայտում է նրա պատմությունն ու ոգին: Ավելին, բարձր արվեստը, վերջիվերջո, ժողովուրդն է ստեղծում՝ իր զավակներից ոմանց, կոնկրետ արվեստագետների ձեռքով:

38. Ո՞րն է այն ավանդը, որ նկարիչը ժառանգում է նախորդներից: Առաջին հերթին այն, որ նա ծառայում է արվեստի մեծ գործին: Ապա հապարտությունը և արժանապատվության զգացումը, որ թույլ չի տալիս գլուխ խոնարհել այն ամենի առաջ, ինչը դեպի կործանում է տանում: Ժողովուրդը սիրում է նկարիչներին և մեծ նկարչի կերպարը նրան ծառայում է որպես օրինակ:

39. Իսկական նկարիչ լինելու համար անհրաժեշտ է, ամենից առաջ, լինել իր հայրենիքի ազնիվ քաղաքացին, լինել իր ժամանակի առաջավոր գաղափարների կրողը: Պետք է արտահայտել հասարակական այն ուժերի իդեալները, որոնք առաջ են մղում մարդկությանը, բարձրացնում նրա լավագույն գծերը և ուժ հաղորդում մարդկանց՝ պայքարելու հետադիմականի դեմ:

40. Դժբախտաբար ո՛չ բոլոր քննադատները և արվեստագետներն են, որ առաջ են մղում մարդկությանը և ետ մղելով՝ ավելի վատ դեր են խաղում կյանքում, քան վատ քաղաքական գործիշները:

* * *

*

41. Ստեղծագործելու ընդունակությունը և ստեղծագործական պրոցեսը հենց երջանկությունն է: Ուրեմն, արվեստը պետք է երջանկացնի դիտողին: Տիրեցնող, սենտիմենտալ արվեստ չեմ սիրում:

42. Պաթոլոգիան արվեստո՞ւմ: Արվեստը պետք է հրճվանք պատճառի մարդուն, երջանկացնի նրան և ոչ թե հիվանդագին մտքեր, վանող զգացումներ՝ ներարկի:

43. Ոչ մի ասպարեզ այնպես անմիջական հնարավորություն չի տալիս բնազդի, զգացումի, բանականության միասնությամբ կերպավորելու անմահության իդեալը (ավելին՝ անմահության իսկ ապրումը), ինչպես արվեստը:

44. Արվեստը <...> պետք է ազդեցություն գործի մարդու վրա, բարձրացնի, ուժ տա և ոչ թե ընկճի նրան: Արվեստը պետք է մարդուն կյանքի, պայքարի կոչի համամարդկային, համաժամանակային հուսատու մոտիվների և ոչ թե ինքնին թևաթափ անող սյուժեների, ցավալի դեպքերի ներկայացման միջոցով:

45. Լինել ազատ, ինչպես բնությունը, մաքուր, ազնիվ, խոր, ինչպես բնությունը: <...> լինել տնաբույս ին-

տելիգենտականությունից հեռու, որը խորթ է բնության կողմից մարդուն տրված սրտին ու մտքին: <...> ստեղծել այնպիսի գործեր, որոնք դիտելիս մարդն իրեն ազատ զգա ու երջանիկ: <...> արվեստ, որ ծնում է կյանքի հրձվալից զգացումը: Մարդուն պետք է հրամցնել արվեստ, որ կենսահաստատ է, բարձրացնում է նրա կամքը, հզորություն է տալիս նրան՝ հաղթահարելու արդելքները:

46. Իմ կարծիքով դեկորատիվ արվեստի նպատակն է զարդարել մի պատ՝ դատարկ պատ, որը հաճախ ճշնշում է մարդուն, կարծես թե սահմանափակելով նրա ազատությունը:

47. Լավ ճարտարապետությունը ոգեսրում է մարդուն, բարձրացնում նրա տրամադրությունը, իսկ վատը ընկճում, դիմազուրկ է անում և ճնշում:

48. Մի ժամանակ մոդա էր արվեստը խաղ համարելու, խաղի հետ նույնացնելու էսթետիկան: Դա, իհարկե, հիմքում սխալ է: Մարդկությունը, ընդհանուր առմամբ, իր ապրած կյանքի ընթացքում, ոչինչ անպիտան, այսինքն մի այլ բանով փոխարինելի ավելորդություն չի ստեղծել: Բայց եթե խաղ—արվեստ հարաբերությունը նկատի ունենանք որպես համեմատություն, ինչոր շափով կմոտենանք ձշմարտությանը: Ես պաթոլոգիկ, գուեհկորեն իրական, զգայացունց արվեստ չեմ ընդունում: Չեմ կարող տանել այն ստեղծագործությունները, որոնց հեղինակները ձգտում են դիտողի, լսողի կամ ընթերցողի մեջ առաջացնել ցավի,

տառապանքի, ասենք, սպանության, մահվան, մարդու մեջ կատարվող բնազդական այլեայլ պրոցեսների ֆիզիկական, ֆիզիոլոգիական ուղղակի և իրական զգացողություն։ Դա անտիարվեստ է։ Եվ հենց այստեղ է, որ արվեստը պետք է նման լինի (և իսկական արվեստը նման է) խաղի, երեխաների խաղին, որը միշտ առողջ ու կենսահաստատ է։ Ա՛յ, օրինակ, Շեքսպիրի ստեղծագործությունները, «Համլետը»։ Որպես դեպքերի շարան, բեմի վրա, մի ամբողջ կոտորած է տեղի ունենում չէ։ Բայց պաթոլոգիայի ոչ մի հետք, մաքուր արվեստ է, արվեստային է։ Եվ այդ կոտորածը նման է այն կոտորածին, որը կատարում են երեխաները կրիվ-կրիվ խաղալիս։ Սա, արդեն, երեակայաբար է իրական ու բնական և ոչ թե ֆիզիկապես։ Բավական է, որ խաղի նույնիսկ ամենատաք պահին երեխաներից մեկն ու մեկը տեսնի, որ իր կամ կողքինի նետած քարը կպել է (կամ իրեն թվա, թե կպել է) մի ուրիշի ոտքին, որպեսզի փլչի խաղի տրամադրությունը, ավարտվի խաղը։ Այդպես էլ արվեստում։ Ես արվեստի շեքսպիրյան ուղղության կողմնակից եմ։

49. Երբեմն մի փոքրիկ դետալ, երկույթ, առարկա զարմանք է պատճառում և երեակայությանդ մեջ ծնունդ հրճվանքի հերթիաթ-իրականության մի ամբողջ աշխարհ։ Դա երջանիկ ապրում է։ Օրինակ, ես այդ առումով լիազես երջանիկ մարդ եմ համարում Վիլյամ Ռոբինսոն։ Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը։ Զարմանքն ամենից ավելի ուժեղ և հատկանշական է երեխաների մոտ՝ մաքուր,

աղնիվ, անսահմանորեն գեղեցիկ: Երջանիկ են այն մարդիկ, որ տարիքն առնելու հետ չեն կորցնում դարձանալու ընդունակությունը: Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա և այն էլ հանճարեղ: Զարմանքով գրում է բաների մասին, որոնք, թվում է, այնքան հասարակ են, պարզ, սովորական, որ հետաքրքրություն չեն ներկայացնում: Բայց դրանց խորքում այնքան պայծառ իմաստություն, փիլիսոփայական վեհություն, զգացմունքների, տպավորությունների այնքան բազմազանություն և մեծ արվեստ, հրճվանք կա: <...> Իմ կարծիքով արվեստի ամեն մի դորժ պետք է ունենա զարմանք-հրճվանքը...

* * *

*

50. Կյանքն անընդհատ պայքար է՝ հանուն լավագույնի: Կյանքը մի ուղի է, որի ընթացքում միշտ հարկ է լինում հաղթահարել արգելքներ: Այստեղ մեծ դեր է կատարում միջավայրը: Իհարկե, անհատի դերը մեծ է ու անվիճելի: Մեծ է նաև արվեստում և երբ մենք դիտում ենք անցյալի կուլտուրայի պատմությունը, ապա միայն այդ անհատների միջոցով ենք զգում տվյալ էպոփիայի մեծությունը կամ ոչնչությունը: Բայց այդ չի նշանակում, ինչպես և կյանքի մյուս ասպարեզներում, թե անհատը, թեկուզ և հանճարեղ, նպաստող շրջապատի կարիք չունի:

51. Ի՞նչն է ստեղծագործության իսկական աղբյուրը. նախ՝ ինքը մարդը, ստեղծագործող սուբյեկտի ներքին

պահանջը, ապա՝ կյանքի դասավորվող պայմանները, շրջապատը, արվեստի ազգային ու համաշխարհային ավանդները—կարծ ասած՝ ամբողջ բարդությունը:

52. Արվեստի միջոցով ստեղծվում է բազմահազար մարդկանց հոգեսր շփումը: Արվեստի միջոցով մարդիկ հասկանում են իրենք իրենց ու միմյանց: Մեծ արվեստագետն իր մեջ ներառում է մասսաների բազմազանությունը և հարստությունը: Ահա թե ինչու մարդիկ սիրում ու մեծարում են անհատների, որոնք կարողանում են բացահայտել այն անսահմանը, որը միլիոնավոր մարդկանց մեջ է ամփոփված: <...> եթե շատ բան պայմանավորված է հենց ստեղծագործող անհատով, ապա շատ բան էլ պայմանավորված է նրան շրջապատող պայմաններով: Ստեղծագործական ակտիվ մտածողությունը, առանց միջավայրի առողջ սնուցման, շուտափույթ կարող է խեղճանալ ու... մեռնել:

53. Արվեստը կարող է զարգանալ միայն աղատ պայմաններում: Եվ զարգանում է, եթե կա նրա պահանջը, նպաստող շրջապատը:

54. Ինչպես կարելի է ղեկավարել արվեստը: Կարելի է ղեկավարել մարդկանց, բայց արվեստ ղեկավարել չի կարելի: Արվեստը ինքն է առաջնորդում: Այդ մասին կն խոսում պատմության բոլոր փաստերը: Եթե արվեստի մարդը իրեն աղատ ու անձեռնմխելի չղզա, նրա արվեստը արատավոր կլինի և ոչ ոքի պետք չի գա: Բայց դա չի նշանակում, թե նա պետք է արհա-

մարհի ամեն ինչ: Արվեստի մարդք պետք է լինի իր ժամանակի առաջադեմ քաղաքացին:

55. Արվեստը պետք է լինի ազատ: Որքան շատ է սեղմվում այն խնամակալությամբ և խցկվում շրջանակների մեջ, այնքան անկենդան ու անգույն է դրսեվորվում նրանում կյանքը: Արվեստին ազատություն է հարկավոր, որպեսզի մարդու ստեղծագործական պոտենցիալ ուժերը, առանց արձեստական միջամտության, խփեն շատրվանի նման, ինչպես այդ կատարվեց Ռենեսանսի ժամանակ: Էլ ինչո՞վ է բացատրվում բնության գրկում թռչունների նման ազատ ապրող «վայրենիների» հրաշալի քանդակագործությունը...

56. Արվեստը ժամանակի ու պատմության խրոնիկա չէ և ոչ էլ գաղափարների իլյուստրացիա: Նա հոգեկան մի ակտիվություն է, որ հավերժական բնույթ ունի:

57. Խսկական արվեստը պատմության խրոնիկան, առօրյա կյանքի իլյուստրացիան չէ, այլ մարդկային հոգու ազատության տենչանքն ու իրագործումը՝ անկախ բոլոր հանգամանքներից:

* * *

*

58. Ես հաճախ եմ մտածում, որ արվեստում ուղղակի վերելք չկա: Թվում է, թե արվեստի զարգացումը ինչոր բանով նման է լեռնային ճանապարհի՝ մերթ հաղթահարում է դիք բարձունքները, մերթ թեքվում մի

կողմ, մերթ մի փոքր իշնում է, ապա նորից բարձրանում և հաճախ դուրս նետում իր վրայի անկայուն քարերն ու խիճը: Սակայն մշտապես ու անշեղ ընթանում է առաջ՝ մեկը մյուսի ետևից գագաթներ հաղթահարելով:

59. Տվյալ երկրի, տվյալ ժամանակի նկարիչների միջև միշտ էլ ճաշակների և սկզբունքների պայքար է եղել: Դա չի խանգարել, ընդհակառակը՝ խթանել է արվեստի զարգացումը:

60. Ոճը ինքը՝ մարդն է, ստեղծագործող անհատը: Սա ճիշտ է, վիճել չի կարելի: Բայց նույնքան ճիշտ ու անվիճելի է նաև, որ մարդը որոշակի դարաշրջանի ոճի մեջ է: Եվ եթե նա ետ է մնում իր ժամանակից, մի բան, որ շատ հաճախ է պատահում, նրա ոճի մասին խոսելը արդեն ավելորդ է:

61. Ամեն մի դարաշրջան մերժում է ինչ-որ հին դոգմաներ և ստեղծում ինչ-որ նոր կոնցեպցիաներ: Այսօր չի կարելի մարդկանց շողոքորթել երեկվա դոգմաներով:

62. Արվեստի մեջ երիտասարդություն՝ նշանակում է հայտնագործության անհագ պահանջ, նորը տեսնելու ու պատկերելու կարողություն: Ես ողջունում եմ այն երիտասարդ նկարիչներին ու քանդակագործներին, որոնք առանց ժխտելու նախորդների փորձը, նոր և շտրորված ուղիներ են փնտրում, նետվում են դեպի անհայտն ու անծանոթը:

63. Անկեղծության միջով է ընթանում նորարարության ուղին:

64. Մենք ապրում ենք Արևելքի և Արևմուտքի, Եվրոպայի և Ասիայի քաղաքակրթությունների մերձեցման ու սինթեզի հետաքրքիր դարաշրջանում: Ամեն կերպ պետք է նպաստել այդ պրոցեսի ընդլայնմանն ու արագ դարգացմանը, որովհետեւ իմ խորին համոզմամբ, դրանով է պայմանավորված ինչպես մեր ժամանակի, այնպես էլ ապագայի համաշխարհային արվեստի առաջընթացը:

* * *

*

65. Կուլտուրական միջավայրը, այսպես կոչված միջին մակարդակը շատ կարեոր են: Բայց վերջին հաշվով յուրաքանչյուր դարաշրջանի արվեստի մակարդակը շափվում է մեծ անհատների ստեղծագործության արժեքով: Մեծ անհատներն են, որ նշանաբանում են ինչպես իրենց ժամանակաշրջանի գեղարվեստական մտածողության բնույթն ու որակը, այնպես էլ զարգացման հեռանկարներ են բացում հաջորդ սերնդի համար: Պատահական չէ, որ ասում ենք՝ «Ծեմբրանդտի դարաշրջան», «Շեքսպիրի դարաշրջան» և այլն: Դա այդպես էլ պետք է լիներ, որովհետեւ արվեստի ամեն մի երկի արժեքավորման շափանիշը ստեղծագործողի անհատականությունն է: Նրանով բնորոշվում է ամեն ինչ՝ սյուժեն, թեման, ժանրը, բովանդակությունը, գույնը, գիծը, ձևը, ծավալը, լուսաստվերը...

66. Ստեղծագործական պրոցեսի խոհանոցը աներևութանում է արդյունքի մեջ: Իսկ արդյունքը ստեղծագործող ես-ի հոգեկան էության առարկայացումն է:

67. Օգուտ քաղել կյանքից, արվեստագետի համար նշանակում է ճանաչել ինքն իրեն, ճանաչել անընդհատ, նշանակում է իր ես-ը տեսնել իրականության և իրականությունը՝ իր ես-ի մեջ:

68. Կարելի է նույն մոտիվը նկարել և այսպես, և այնպես: Ուրեմն ներկայացված մոտիվը չէ, որ որոշում է արվեստը, այլ նկարչի անհատականությունը: Իսկ նկարչի անհատականությունը դրսեորվում է գույների, գծերի ու ձևերի միջոցով:

69. Թեմաներն ու մոտիվները մեծ արվեստում միշտ էլ առիթ են եղել ինքնարտահայտման համար և ոչ թե նպատակ:

70. Եղիր ինքդ քեզ հետ և կստեղծես հետաքրքիր արվեստ: Զէ՞ որ ամեն մարդ ունի անկրկնելի ներքին հետաքրքրություն:

71. Երկու իրար նման մարդ չի լինում, մանավանդ՝ իրար նման երկու արվեստագետ: Եվ որքան ցավալի է, երբ գեղանկարչության ստեղծագործությունների վրա շկան-նրանց ստեղծողների անհատականության կնիքը՝ միայն նրանց վրձնին հատուկ գծերը...

72. Կրկնությունը միշտ էլ մնում է կրկնություն, որքան էլ միշտ լինի: Կրկնությունը դիմադրկում է և կատարող անհատին, և դիտողին:

73. Ակաղեմիզմն ուրիշ բան չէ, եթե ոչ որևէ ոճի բացարձակացում, սխեմաների անընդհատ կրկնություն և ստեղծագործական անհատականության ոչնչացում:

74. Ցավ չէ, եթե նկարիչը անհաջող կտավ է ստեղծում, բայց դժբախտություն է, եթե նա այդ չի գիտակցում: Սկսվում է նրա անհատականության շեղոքացման կործանարար պրոցեսը:

75. Արվեստագետը միշտ որոնումների մեջ է, նա միշտ առաջին հայտնագործողն է: Առանց իր յուրաքանչյուր հայտնագործության նկատմամբ սեփական քննադատական վերաբերմունքի հնարավոր չէ առաջ շարժվել:

* * *

*

76. Նկարչին անհրաժեշտ է իր արվեստի տեխնիկային տիրապետելը, որպեսզի կարողանա ստեղծագործական սրբություն հաղթահարել խոշընդուները: Լավագույն աշխատանքը միշտ և ամենուրեք կատարվում է վարպետների՝ իսկական մասնագետների ձեռքով: Ոչ մի բան այնքան վնասակար չէ, որքան դիլետանտիզմը:

77. Իր կյանքն արվեստին նվիրած երիտասարդ նկարչի մեծագույն երանությունը, որի համար արժեաշխարհ դալ և տանել կյանքի բոլոր դժվարությունները, ստեղծագործական ներշնչանքի երջանիկ բոպեներն են: Բայց ինչքան էլ մեծ ու սուրբ լինի այդ ներշնչանքը, միևնույն է, դրան պետք է նախորդի անցյալի

մեծ վարպետներից ուսանելու դժվարին, հերոսական աշխատանքը...

78. Տիրապետել գծանկարի և գեղանկարչության տեխնիկային, սովորել վրձինով համարձակորեն գունանը-կարել և գծանկարել միաժամանակ: Ընդունակ մարդու համար վրձինին տիրապետելը ամենագլխավորն է: Կարողանալ տիրապետել տեխնիկային՝ տեսածիդ, զգացածիդ բարդ կոմպլեքսը հաղորդելու համար, հեշտ գործ չէ: Բայց այդ տեխնիկան պետք է ունենալ վարպետ դառնալու համար: Գուշնը, լույսը, ձեզ, իրար հետ առնչվող առարկաների և նրանց տարբեր մասերի փոխհարաբերությունները նկարիչը պիտի տա հեշտությամբ: Սովորել, նշանակում է հեշտությամբ կարենալ՝ այլ ճանապարհ չկա իսկական արվեստագետ դառնալու համար: Դա այն դժվարին հեշտությունն է, որը բոլոր ժամանակների խոշոր վարպետների ստեղծագործության հատկանշական գիծն է:

79. Լավ նկարել՝ շի նշանակում արվեստի երկ ստեղծել: Բայց առանց լավ նկարելու արվեստի գործ չի ստեղծվում:

80. Նկարչի համար խիստ կարենոր է շափի զգացումը, այսինքն՝ կանգ առնել այն պահին, երբ անհրաժեշտ է: Նկարելու պրոցեսն ունի իր սկիզբը, ստեղծագործական ուժերի լրիվ լարումն ու վերջը: Եթե այդ սահմաններում գործը շի հաջողվում, սկսվում է տաղտկալի, երկար աշխատանքը և նույն բանի կրկնողությունը կամ գտնվածի, բայց արդեն կորսվածի փնտրումը:

81. Շատ դժվար է հասնել ավարտվածության՝ միաժամանակ պահելով գծանկարի ուժը և գույնի թարմությունը։ Գունանկարչությունն այն դեպքում է լավ, եթե արվում է միանգամից և եթե նկարի շորացման ժամանակ կատարվող փոփոխությունները համանման են։ Այսպիսով աշխատանքի պրոցեսում ձեռք բերած ուրակը պահպանվում է։

82. Որքան էլ տարբեր, էսթետիկական բոլոր սկզբունքներն էլ իրենց հիմքում պետք է ունենան բարձր պրոֆեսիոնալիզմը, որը, իմ կարծիքով, այսպես կոչված գեղարվեստական համոզականության հիմքն է։ Բոլոր պարագաներում էլ լուսը, գույնը, տոնը, օդը, ձեռք, չեռանկարը, պլաստիկան նկարչության հիմքն են կազմում։ Պետք է քրտնազան ու համբերատար աշխատանքով տիրապետել արվեստի տեխնիկային։

83. Նկարչի և արհեստավորի տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինը տանում է իր ետևից, ստիպում մյուսներին ենթարկվել իր ճաշակին, իսկ երկրորդին սպառնում է պատվիրատուի ճաշակը (...): Նկարիչը բավարարում է մարդու բարձր պահանջները, իսկ արհեստավորը սպասարկում է կենցաղը։

84. Պատահական չէ, որ շատ հաճախ անթերի վարպետությամբ կատարված արհեստավորական գործերը շփոթում են արվեստի հետ։ Նույնիսկ դարեր շարունակ Պատահում է այսպես,—արվեստագետը սպառում է իրեն, բայց շարունակում է աշխատել։ Աշխատում է փորձի ու վարպետության իներցիայով, կատարում

տեխնիկական անթերի գործեր, որոնք սովորույթի ուժով, կուրորեն ընդունվում են իբրև արվեստի նմուշներ, կամ էլ, լավագույն գեղքում, նկատում են, թե «արվեստագետը կրկնում է իրեն»: Այնինչ՝ կրկնել, թե կուզ և իրեն, հնարավոր չէ: Դրանք պարզապես արվեստի գործեր չեն: Այս, այստեղ է, որ զգացվում է իսկական քննադատության ու էսթետիկայի պակասը: Քննադատներն ու էսթետիկները (և ոչ միայն նրանք) հաճախ հետաքրքիր թեմայի, մոտիվի, սյուժեի, կատարման վիրտուոզության, ոճական ուշագրավ ու նորարարական կոնցեպցիաների մեջ չեն տեսնում ոչ-արվեստը: Արվեստը ոչ-արվեստից տարբերելը, բացահայտելը, արվեստը քննելը, վերլուծելը, բնորոշելը, արժեքավորելը հեշտ բան չէ: Բազմաթիվ հանճարեղ արվեստագետների կողքին քանի՛ տաղանդավոր քննադատի ու էսթետիկի անուն կարելի է տալ...

* * *

*

85. Գույնը իսկական հրաշք է: Նկարիչը գույնով ստեղծում է մի ամբողջ աշխարհ: Գույնի զգացումը մարդու բարձրագույն հրճվանքներից է: Դա երջանկություն է: Ջարմանալի չէ, որ բնությունը այսքան գունեղ է, իսկ մոտ մի դար առաջ նկարիչները կտավին քսում էին մեծ մասամբ մութ խառնուրդներ: Բայց եկան իմպրեսիոնիստները և բաց արին մարդկության՝ վաղուց ի վեր մաքուր գույնի հանդեպ փակ աշքերը:

86. Հսկայական նշանակություն ունեն երկու ֆակտոր՝

լույսը և գույնը (...): Դրանց խելացի կիրառումը ձեի ողին է:

87. Բացի ընդհանուրի չետ ներդաշնակվելուց, ամեն մի գույն պետք է ունենա որոշակիություն, պետք է ներգործի ուղղակիորեն՝ ընդգծուն իր սահմաններով ու չյութեղությամբ: Գույները կոմպլեքսի մեջ պետք է կազմեն Համահնչեղություն, բայց և չկորցնեն իրենց ինքնին արժեքը: Գույնը չպետք է խամրի միջավայրում, այլ պետք է ուժ ստանա նրանից:

88. Եթե նկարվող պեյզաժի որևէ առարկայի բնական գույնը, ենթադրենք, կապույտ է, իսկ նկարի գունային ողջ համակարգը թելադրում է, որ այդ նույն առարկան պետք է կտավի վրա կարմիր (կամ այլ գույնի) լինի, ուրեմն հարկավոր է կարմիրի վերածել:

89. Նկարչության համար ամեն ինչ կարևոր է: Բայց ամենակարևորներից է գույնը և գույների գուգորդումը: Եթե նկարիչը չի օգտվում գույների ազատ անկաշկանդ օգտագործման հնարավորությունից, զրկում է իրեն ամենաէականից՝ հրճվանքից: Արվեստի հարուցած հըրճվանքը մշտական է, նա միշտ ընկերակցում է մարդուն, դարձնում նրան ավելի հզոր և ընդունակ: Լինելով մարդկային հոգու ամենաբարձր դրսելորումներից մեկը, արվեստը վերածվում է կայուն անհրաժեշտության, որը մենք անվանում ենք կուտուրա: Գույնը առհասարակ մարդկային գործունեության և մասնավորապես կուտուրայի առարկան, նրա դրսելորման հիմնական մու-

մենտներից մեկն է... Բայց մարդը կարող է պատկերել գույնը միայն պայմանական մտածողությամբ: Գծագրությունը և գույնը նկարչության մեջ պայմանականություններ են, որ դառնում են բնօրինակից ավելի ուժեղ միայն այն պատճառով, որ այդ պայմանականություններն անցնում են զգացումների, մտորումների, դատողության միջով ու դառնում կենդանի, հոգեոր առումով կենդանի ու անսահմանորեն խոր: Այդ պատճառով էլ արվեստը կյանքի շունչն է ու զարկերակը; իսկ կյանքը՝ մարդու սիրտը և ուղեղը, հողը և արևը՝ ողջ աշխարհը, ողջ բնությունն է:

90. Նկարչության մեջ գույնն առաջնակարգ նշանակություն ունի: Եթե արվեստագետը գույն չի զգում (...), նրա «գեղանկարչական» գործերից տիրություն է բուրում: Նկարիչը պետք է սիրի իր ներկերը և կարողանա օգտագործել նրանց արագ ու մեծ զգուշությամբ՝ ըստ հնարավորին խուսափելով շատ խառնումներից: Այն ամենը, ինչ մենք տեսնում ենք, արևից լուսավորվելով գույն է ստանում՝ միշտ որոշակի, բայց և միշտ դըժվարահաճ: Նկարիչն իր պալիտրան պետք է դիտի որպես մի ծաղկանոց և կարողանա հմտությամբ, իսկական պարտիզապանի նման վերաբերվել նրանց: Կարողանալ պալիտրայից քաղել այն գույները, որոնք կտավի վրա գնելիս արտահայտեն ցանկացած ապրումը, բովանդակությունը՝ մեծ վարպետություն է: Գույնը պետք է արտահայտի մեր մեջ ապրող կյանքի բովանդակությունը: Մեր ստեղծագործական երևակայությունը մարմնավորվում է գույների և ձևերի մեջ:

91. Գեղանկարելիս պետք է միաժամանակ և՛ գունանկարել, և՛ գծանկարել ու ոչ թե գծագրել, ապա գունավորել այն:

II

92. Հայկական ճարտարապետական հուշարձանները դիտողից պահանջում են խորաթափանց հայացք և ճաշակի բարձր տակտ՝ միայնակ, լեռներում ծնված ու ծվարած, անսահմանորեն համեստ, բայց հանճարեղ այդ կոթողների իմաստը հասկանալու համար:

93. Ցավոք, հայկական շինարարական արվեստի հնագույն նմուշները մեզ չեն հասել. օրինակ՝ հեթանոսական շրջանի կառուցողական արվեստը հիմնովին ոչընշացվել է քրիստոնեական ֆանատիզմի պատճառով: Բայց անկասկած է, որ քրիստոնեության ժամանակաշրջանի կառուցողական արվեստը շատ բան փոխառել է հեթանոսական ճարտարապետությունից, քանի որ քրիստոնեական ճարտարապետական կառուցների այդքան կատարյալ ձևերը երկնքից պատրաստի ընկնել չեն կարող:

94. Խորհրդային Հայաստանի տարածքի վրա և նրասահմաններից դուրս մենք հանդիպում ենք բազմաթիվ կանգուն և ավերված ճարտարապետական հուշարձանների: Նրանք աշքի են լրնկնում հատուկ բնույթով և իրենց առանձին պարզ կոնստրուկցիայով: Այդ հուշարձանները զարմանալիորեն կապվում են երդաշնակվում են բնության <...> հետ, որը հայկական

մոնումենտալ ճարտարապետության առանձնահատ-
կություններից մեկն է:

95. Հայաստանի հինավուրց կառուցները զարմանա-
լիորեն, օրգանապես կապվում են պեյզաժի հետ: Ճար-
տարապետները <...> կառուցում էին միայն տեղական
քարից՝ տարբեր գույնի ու որակի: Լեռների գեղեցիկ
կոնֆիգուրացիան մեծ աղդեցություն է թողել կառուց-
ների ձևի վրա: Բազմաթիվ հուշարձանների ավերակնե-
րը վկայում են, թե ինչ ճաշակով է ընտրվել տեղը,
նյութը, ձև՝ դարերի ընթացքում բյուրեղացնելով հայ-
կական կլասիկ ոճը:

96. Չպետք է մոռանալ, որ ճարտարապետական ար-
վեստը ստեղծել են կերտող-ճարտարապետներն ու
վարպետ-բանվորները, իսկ պատվիրատունները միայն
ու միայն նպաստել են արվեստի այդ ճյուղի զարգաց-
մանը: Հաճախ անիրավացիորեն պատվիրատու-տերե-
րին վերագրվում է այն, ինչը նրանց շի պատկանում:
Գեղարվեստական այն նվաճումները, որոնք բնորո-
շում են այս կամ այն էպոխան կամ <...> առանձին
կառուցներ, վարպետների ստեղծագործական հանճա-
րի նվաճումներն են:

97. Բյուզանդական ճարտարապետությունը որոշակի ի-
մաստով դեկորատիվ է: Որպես գեղարվեստական կեր-
պարի նրա թողած տպավորությունը, որ իրոք շատ ու-
ժեղ է, զգալիորեն պայմանավորված է կառուցվածքի
դեկորատիվ կողմերով: Որոշ հուշարձաններ դիտելիս
(նույնիսկ Կոստանդնուպոլսի սր. Սոֆիան իր սքան-

շելի ինտերյերով) թվում է, թե ճարտարապետականը նրանցում հանդիս է գալիս միայն կրող ֆունկցիայով, կատարում է կմախքի դեր՝ դեկորատիվ, պատկերային կողմերը երևան հանելու համար: Իսկ հայկական ճարտարապետությունը հակառեկորատիվ է, եթե կարելի է ասել՝ կոնստրուկտիվիստական: Եվ նրա թողած տպավորությունն էլ միայն ճարտարապետական է, պայմանավորված է ձեփ, ծավալի, լուսաստվերի, գծի, հարթության զուտ երկրաշափական-կոնստրուկտիվ միասնության ու ներդաշնակության թողած աղդեցությամբ: Իսկ դեկորատիվ, պատկերային տարրերը կատարում են միայն օժանդակ դեր, ակցենտավորում են կառուցվածքի այս կամ այն կարևոր մասը և աշխուժացնում այն:

98. Անկախ ամեն ինչից, և առաջին հերթին, միջնադարի հայկական արվեստը լույսի մի համառ ձգտում է՝ լինի դա ճարտարապետություն, նկարչություն, թե պոեզիա՝ միևնույն է:

99. Զուտ էսթետիկական առումով, և անկախ կրոնական ֆունկցիայից, միջնադարի հայկական ճարտարապետությունը դիտողի մեջ աննկատելիորեն առաջացնում է հոգեկան ինքնազատագրման ներշնչանք՝ բոլոր տեսակի նստվածքներից, և իր մարդկային նախասկզբնական մաքրությունը վերագտնելու ներքին հոգեկան ձգտում:

100. Ի՞նչ հանճարեղ է կմբաթի որմնանկարը՝ մոնումենտալ, թափով քաված, արտաքուստ բավական խա-

զաղ, բայց ներքուստ անհանգիստ, խոռվաճույզ և անկրկնելիորեն հայկական։ Այրվող կիրք, ըմբոստովթյուն և հավատ են արտացոլում դուսպ տոներով վերցված կանաչները, օխրաները և շեղոք երանգները, որոնք նախանձելի վարպետությամբ են համադրված։ Երեսում է, որ ուժեղ, իր ազգային դեմքն ու ինքնուրույնությունը պահպանելու մեծ պոտենցիալով օժտված ժողովրդի զավակ է եղել նկարիչը։ Մի տեսակ հպարտությամբ ես լցվում այդ դործը դիտելիս։ Եվ ամեն մի նոր այցելության ժամանակ ավելի ու ավելի ցնցող է լինում տպավորությունը։ Քրիստոնեական ընդհանուր արվեստի հետ ունեցած իմ ծանոթության սահմաններում, որմնանկարի մեջ հասած այդ մնացորդը ոչ միայն հայկական, այլև միջնադարյան համաշխարհային կերպարվեստի լավագույն նմուշներից է։ Եվ մենք պարտավոր ենք աշխի լուսի պիսի պահպանել այն ու ծանոթացնել աշխարհին։

Բայց մի ինչ-որ աններդաշնակություն կա ճարտարապետական կառուցի և որմնանկարի միջև, չնայած առանձին-առանձին երկուսն էլ հիանալի են։ Գուցե սխալվում եմ։ Հնարավոր է։ Բայց այստեղ մի հարց կա։ Արդյո՞ք պատահական է, որ քրիստոնյա մյուս ժողովուրդների արվեստի համեմատությամբ միջնադարի հայկական արվեստում որմնանկարների քանակն այնուամենայնիվ շափականց քիչ է, իսկ խճանը-կարչություն գրեթե չի եղել։ Ինչպես բացատրել դա։ Չէ որ Հայաստանում դույնզգույն քարերի և դեկորատիվ այլ կարգի հարմար նյութերի պակաս չկար և,

փառք աստծո, կիրառական արվեստի սքանչելի նմուշ-ներն էլ ցուց են տալիս, որ հայր դրանց միջոցով իր շնորհքը ցուցաբերելու մեծ փորձ ուներ:

Այդ բանը հայագիտության մեջ կապել են, այս-պես կոչված, «պատկերամարտության» հետ: Եվ եր-կար ժամանակ ես էլ հավատում էի որան: Բայց հիմա ինձ թվում է, թե դա սիսակ բացատրություն է: Երբ ըս-կըսում ես լուրջ մտածել ու վերլուծել, տեսնում ես, որ ֆրոք, հայկական ճարտարապետական շինարարու-թյունն իր կոնստրուկցիայով, արտաքին ու ներքին ձևերի զուտ կոմպոզիցիայով, տարածական ու ծավա-լային էլեմենտների փոխկապակցությամբ ինքնաբավ-է: Հիմքում, էությամբ լինելով զուտ երկրաշափական, այն ոչ միայն դեկորատիվ չէ, այլև, եթե կարելի է ա-սել՝ հակադեկորատիվ է: Եվ, իսկապես, հենց որպես այդպիսին էլ այն ներկայացնում է իբրև կատարյալ ու ավարտուն գեղարվեստական կերպար և որմնանկարի կամ խճանկարի հարդարանք շի պահանջում: Սա ճար-տարապետական ոճի հարց է և մեր տեսաբանները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն այդ հանգա-մանքի վրա: Այս, ես հիմա մտովի հիշում եմ Անիի և Սովորական Հայաստանի տարածքի որմնանկարներ (նույնպես հիանալի) ունեցող որոշ հուշարձաններ և կարող եմ ասել, որ նրանցում էլ ճարտարապետության ու որմնանկարչության հարաբերությունը կմբաթի նման է: Եվ հետո, այստեղ արդյո՞ք ինչ-որ բան չի ա-սում նաև այն, որ հայկական մանրանկարչության մեջ այնքան մեծ թիվ քն կազմում մոնումենտալ, գրքի սահմաններից դուրս եկող, եթե կարելի է ասել՝ «հաս-

տոցային» բնույթի գործերը, որոնց «գրքային որմնանկարչություն» անունը կարելի է տալ: Սրանք հարցեր են, որոնց մասին արժեք մտածել՝ մեր արվեստի աղդային յուրահատկությունները որոշելու համար: Ի՞նչ ասել Աղթամարի տաճարի և նրան մոտեցող հուշարձանների մասին: Սա էլ բարդ խնդիր է: Ափսոս, որ Աղթամարը Հասցրի տեսնել: Բայց որքան հնարավոր է դատել լուսանկարներից, այստեղ և նման հուշարձաններում հենց սկզբից ճարտարապետը մտածել է տարբեր արվեստների սինթեզի մասին և հասել ներդաշնակության: Գործը սկսվել է, ուրեմն, մտահղացումից: Եվ այստեղ էլ մեծ անելիքներ ունեն արվեստի տեսաբանները: Պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկել Աղթամարը և նրան հարող հուշարձանները, որպեսզի սինթեզի հարցերը պարզ դառնան ոչ միայն հայկական միջնադարյան ճարտարապետության բազմակողմանի, ամբողջական պատմությունը գրելու, այլև այդ հիմքի վրա՝ այսօրվա աղդային ճարտարապետությունը զարգացնելու համար:

101. Մեր հանճարեղ արվեստը (Հայկական) նկարչի առջև - կարող է բացել գույնի ամենախորունկ դադանիքները:

102. Հայկական մանրանկարչությանը ես հիմնովին ծանոթացել եմ շատ վաղուց, 1900-ական թվականների սկզբներին: Այդ հոյակապ արվեստը, որը ընդհանուր գծեր ունի քրիստոնյա մյուս ժողովուրդների արվեստի հետ, ունի նաև իր առանձնահատկությունները, իր աղդային բնույթը: Ինքն իր մեջ նույնպես

տարբերություններ ունի, նայած թե Հայաստանի ո՞ր շրջանում է ստեղծվել ու զարգացել: Մի կողմից դա մաքուր գրքային, մանրանկարին ավելի համապատասխանող, իր նրբությամբ ու դետալների մշակվածությամբ աշքի ընկնող արվեստ է: Եվ սա ավելի պարզ էրևում է կիլիկյան մանրանկարչության մեջ: Մյուս ուղղությանը պատկանող պատկերները կարծես թե պատահականորեն են մտցված գրքի մեջ: Ես դա համարում եմ գրքային որմնանկարչություն, որը ավելի հատուկ է Կենտրոնական Հայաստանի գեղանկարչությանը: Այդ աշխատանքները պատ են պահանջում <...>, դուրս են զարդանկարի շրջանակից և բնույթով մոնումենտալ են: Այդ աշխատանքներին բնորոշ են պատկերման աղատությունը, գծերի ու վրձնահարվածների մեծ թափը և արտացոլվող թեմայով խոր մեկնաբանությունը:

103. Մինչև կիլիկյան հայկական թագավորության վերջնական անկումը մեր ժողովուրդն անընդհատ գիտակցել, գնահատել և հոգեբանորեն վերապրել է իր անցյալի մշակութը: Զնայած ահավոր արգելքներին, հայկյան զավակները, կենաց ու մահվան կոիվ մղելով, պահպանել ու մշակել են լեզուն, գիտությունն ու արվեստները: Քաղաքականության զարգացումը ընդմիջումներ, մոռացումներ չի ունեցել: Անցյալը միշտ էլ եղել է ներկա: Հայ ժողովուրդը իմացել է, թե որտեղից է գալիս, ի՞նչ է ինքը և ո՞ւր է գնում: Այլապես անհասկանալի կդառնային, ավելի ճիշտ չէին լինի զրերի գյուտը, Ավարայրի ճակատամարտը, Եղնիկի, Դավիթ Անհաղթի իմաստասիրությունը, Քերթողահայր Մովսես

Խորենացու «Պատմությունը», Շիրակացու տիեզերագիտությունը, Նարեկացու «Ողբը», Զվարթնոցն ու Անին, Գոշի իրավագիտությունն ու Թորոս Մոսլինը...

Ի՞շարկե, սխալ կլինի ասել, թե XIV դարից հետո համատարած ամլությունն ու մոռացումն է տիրել, թե Ճիգեր չեն եղել ու բան չի ստեղծվել: Ունեցել ենք այրեր, որ մաքառել, տառապել ու կերտել են, կերտել արժեքներ, որոնցով այսօր մենք հպարտանում ենք և իրավունք ունենք հպարտանալու: Մյուս կողմից, երբեք չեն անհետացել ժողովրդական ստեղծագործության դարավոր ավանդները: XIV—XVIII դարերում և հետագայում ստեղծված բանահյուսությունը, քանդակագարդ գերեզմանաքարերը, ժողովրդական արվեստի այլ նմուշներ՝ գորդ ու կարպետներ, ոսկերչությունն ու տնային իրերը, տարազները իսկապես բարձրարվեստ են: Դրանք դեռ պետք է ուսումնասիրվեն ինչպես հարկն է և արժեքավորվեն:

Բայց ես խոսում եմ անընդմեջ դարդացման, ծաղկման, պրոֆեսիոնալ բարձրագույն արվեստի մակարդակի և ժողովրդական զանդվածների ճաշակի ներդաշնակ միասնության մասին: Ծիծաղելի կլիներ կարծել, թե առանց ավանդների անխաթար առաջընթացի, արժեքների աստիճանական կուտակման կամ էլ առանց պրոֆեսիոնալ արվեստներ-հանճարի ու ժողովրդի պատկերացումների փոխադարձ հոգեհարազատության և փոխադարձ ըմբռնման կարող էր ստեղծվել Անիի Մայր տաճարը: Ծիծաղելի կլիներ կարծել, թե Նարեկացու տաղերը, կամ էլ Մոսլինի ծաղկած մաղաղաթներն անհասկանալի էին որևէ հայի: Ինչո՞ւ եմ ասում

սա: Մեզանում եղան արվեստաբաններ, որ սկսվ սպիտակի վրա գրեցին, թե, օրինակ, Հայ մանրանկարչությունը ունեցել է երկու ուղղություն, որոնցից մեկը դարձացել է ըստ ժողովրդի ճաշակի, մյուսը՝ ըստ պալատական-ազնվապետական, բարձրաստիճան հոգմորականության ճաշակի:

Ապացուցելու հարկ չկա, որ նախքան Կիլիկիայի անկումը, մեղանում ոչ միայն կար այդ անընդհատությունը և ներդաշնակությունը, այլև Հայ ազգային մշակութը միշտ էլ կանգնած էր Համաշխարհային քաղաքակրթության զարդացման առաջին գծի վրա, եթե Հաշվենք այն պահերը, երբ մեկ, երկու դարով առաջ էր անցնում այդ գծից: Իսկ դրանից հետո պետական քաղաքական ինքնուրույնության իսպառ կորուստը, օտարների լուծը, դառն զրկանքները կատարեցին իրենց ճակատագրական գերը: Դարերի ընթացքում կամաց-կամաց մարեց Հայ Հանճարի ճրգեզը: Մնացին միացող փոքր օջախներ, որոնք առկայօնում էին մերթընդ մերթ, թույլ: Տառապյալ ժողովուրդը աստիճանաբար կարծես մոռացավ իր կենսագրությունը՝ դա ամենասոսկալին էր: Հայաստանը դուրս մնաց մարդկության զարդացման ընդհանուր ուղուց: Ամեն ինչ մշուշապատվեց ու կորավ անցյալի թանձր խավարում: Նոր ժամանակների քաղաքակիրթ աշխարհը, որի գոյությունը պայմանավորված էր նաև ժամանակին Հայերի ստեղծած քաղաքակրթությամբ, մոռացավ Արմենիա մշակութային երկիրը: Եվ երբ անցյալ դարի կեսերից սկսած մեր ժողովուրդը բռնեց ինքնազիտակցության

փրկարար ուղին և ստեղծեց նոր արժեքներ, սրանով իսկ ազդարարեց իր գոյության մասին:

Եվ ահա, XIX դարի վերջին ու XX դարի սկզբին, համաշխարհային գիտության ուշադրությունը բնեղովեց նաև մեր անցյալի պատմության ու մշակութիվրա: Դժվար է գերազնահատել այն գիտնականների (թե՛ հայ, թե՛ օտար) ծառայությունը, որոնք ձևավորեցին ու ամուր հիմքերի վրա դրին նոր հայագիտությունը: Բայց ուսումնասիրության ընթացքում կատարվեց մի այսպիսի, գուցե և բնական, բան: Հայտնագործված նյութերն ու հուշարձաններն այնքան հին ու որակով, այնքան բարձր էին, հազարամյակներից եկող հայ հանճարի լուսն այնքան շլացուցիլ էր, որ շատ հետազոտողներ (նույնիսկ հայ) հանկարծակիի եկան: Ծլացումից ծնվող կասկածներն արմատ ձգեցին ու տարան դեպի սիսալներ: Մի տեսակ գիտական հոգեբանություն դարձավ մարդկանց (ասենք՝ Մովսես Խորենացուն) ու հուշարձանները դարից դար, ժամանակաշրջանից ժամանակաշրջան տեղափոխելը (ի՞հարկե՛ այս կողմ բերելու նպատակով): Ավելին՝ անպատճ ժրացանությամբ սկիզբ առան ազդեցությունների որոնումները: Բանն այնտեղ հասավ, որ հայ մշակութը համարվեց սիրիական, բյուզանդական մշակութի մի մասնաճյուղը: Դե ինչպե՞ս կարող էր պատահել (երեխ մտածեցին), որ մի փոքր ժողովուրդ այդքան հին, ինքնուրույն և բարձր կարգի արվեստ, գիտություն ստեղծեր: Առանց շփումների ոչ մի ժողովուրդ, ոչ մի արվեստագետ մշակույթ չի կարող ստեղծել: Կղզիացումը աղքատացում է բերում և հետո՝ մահ: Բայց պետք է

տվյալ ժողովրդի մշակույթը դիտել ինքն իր մեջ, գտնել
նրա յուրահատկությունը և նոր միայն փնտրել, նշել
ազգեցությունն ու փոխազդեցությունը:

Ինչ խոսք, որ այսօրվա հայագիտության նվա-
ճումները մենք չէինք ունենա, եթե այդ ու նմանատիպ
սխալները չհաղթահարվեին փաստերին բաց աշքերով՝
նայող գիտնականների կողմից: Հիմա էլ դեռ վերա-
նայվում են շատ ծուռ տեսակետներ, հարցերը ստա-
նում են ճիշտ լուծում: Բայց ակնհայտ է նույնպես, որ
լավ նպատակներ հետապնդող ուսումնասիրողը հա-
ճախ տեսադաշտից դուրս է թողնում խիստ էական,
համազգային-պատմական նշանակություն ունեցող
ելակետեր: Այսպես, օրինակ, մեր մանրանկարչության,
բանդակագործության, ճարտարապետության ինքնու-
րույնությունը ցույց տալու համար դիմում են իկոնո-
գրաֆիական, ոճական մոտիվների, սյուժեների, տեխ-
նիկայի և այս կարգի միջոցների օգնությանը՝ ասենք,
բյուզանդական արվեստի հետ համեմատություններ
անելիս: Դա, անկասկած, պետք է, կարևոր է, բայց
բավական չէ:

Հայտնի է, որ քրիստոնեական գաղափարախոսու-
թյունը, արվեստը բարձրացան մի կողմից հեթանո-
սական գաղափարախոսության, արվեստի սկզբունք-
ների ժխտմամբ, իսկ մյուս կողմից՝ հեթանոսական
ինչ-ինչ ըմբռնումները յուրացնելու, այլ իմաստավոր-
մամբ պահպանելու միջոցով: Աշխարհայացքի, գեղա-
դիտական պատկերացումների փոփոխությունը կա-
տարվեց նոր՝ քրիստոնեական դավանանքն ընդունած
բոլոր ժողովրդների մոտ: Եվ մի շարք դեպքերում

դժվար է ասել, թե այս կամ այն սկզբունքի վերջնական
ձևավորման, զարգացման գործում ո՞ր երկրին է
պատկանում առաջնությունը: Փաստն այն է, որ բոլորն
էլ կատարել են իրենց դերը և ստեղծել մի ընդհանուր,
միասնական-քրիստոնեական քաղաքակրթություն: Միշ-
նադարյան քրիստոնեական արվեստը իդեալականի
հաստատումն է: Աշխարհը նա մեկնաբանում է հոգու,
հավատի տեսակետից: Նկարիչը, քանդակագործը, որմ-
նանկարիչը այդ վեհ բովանդակությունը արտահայտել
են պարտադրվող կանոնների, իկոնոգրաֆիական սխե-
մաների մեջ: Ընդունած կոնկրետ թեմաներն ունեին
ներկայացման կոնկրետ ձև, անգամ՝ մանրամասների
համար: Ավելին, գույնի ընտրությունը ևս—ամեն մի
առանձին դեպքում, ամեն մի առանձին առարկա պատ-
կերելիս—որոշակի նշանակությամբ, հաստատուն
նպատակով էր արվում: Ամեն ինչ սիմվոլիկ էր քրիս-
տոնեական արվեստում: Պատկերվող տվյալ առարկան
չուներ իր առարկայական իմաստը. նրա արժեքը մի
այլ բան խորհրդանշելու մեջ էր: Այդ պատճառով, նաև,
միշնադարյան արվեստի մեջ այդքան մեծ դեր էր կա-
տարում արստրակցիան, և միշնադարի նկարիչը եր-
բեք էլ չէր տալիս առարկայի նյութական պատկերա-
ցումը: Բնական ձևերը այստեղ վերածվել են հոգեկան
արժեքի, գեղարվեստական սիմվոլիկ ձևերի: Բայց
իկոնոգրաֆիան մնում էր իկոնոգրաֆիա: Դա մի տեսակ
«կանոնագիրք» էր՝ փոփոխության ո՞չ ենթակա, բոլո-
րի համար պարտադիր: Ճիշտ է, արվեստագետները
շատ անգամ են շեղվել նրա սխեմաներից: Սակայն,

Այդքան զբաղված լինելով, ժամանակ էր գտնում
այլ գործեր կատարելու համար էլ: Իր շուրջը հավա-
քելով աղնիվ ու գործիմաց մարդկանց, ինչպիսիք էին
Թորոս Թորամանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը,
Աշխարբեկ Քալանթարը և ուրիշներ, կազմեց հնու-
թյունների պահպանման կոմիտե: Հաղթահարելով բո-
լոր դժվարությունները, ղեկավարում էր հուշարձան-
ների վերանորոգման աշխատանքը՝ միշտ ասելով, թե
«գոնե եղածը պիտի պահպանել կործանումից»: Բոլորս
մեծ ոգևորությամբ ու ժողովրդի հանդեպ պարտքի
գիտակցությամբ օգնում էինք նրան: Պետությունը մի-
ջոցներ քիչ ուներ և չէր կարողանում բավարար քանա-
կությամբ դրամ տրամադրել: Ծանր տարիներ էին: Եր-
բեմն մեր մասնավոր ինայուղություններն էինք օգտա-
գործում: Օրինակ, Երերուցքի տաճարը վերջնական
քայլայումից փրկելու համար Թամանյանը ներդրել էր
իր սեփական գումարները...

Թամանյանը տիտանական ջանքեր թափեց օպե-
րայի շենքի կառուցման վրա: Ամեն ինչ արվում էր
ձեռքի աշխատանքով: Շինությունը դեռ մեքենայաց-
ված չէր: Քարշող ուժը եղները, ծիերը, գոմեշները և
էշերն էին: - Իսկ տեխնիկան՝ բա՞յց, քլունգը: Մտավոր
ծանր աշխատանքից պոկվելուց հետո Ալեքսանդրն
անմիջապես վազում էր օբյեկտ, ղեկավարում շենքի
վրա տարվող աշխատանքը, ցուցումներ տալիս, ոգեռ-
ուում: Դյուրագրդիո էր, արագաշարժ, կտրուկ, խստա-
պահանջ, բայց և բարի, մարդուն գնահատող: Բանվոր-
ները սիրում էին նրան, անձնվիրաբեր կատարում

նրա բոլոր պահանջները: Իսկ ինքը հուզվում էր դրանից ու խանդավառվում:

Իր ամբողջ կյանքում արձակուրդ չվերցրեց, չնայած դրա կարիքը շատ էր զգում: Հիվանդ էր, հոգնած: Բայց վառվում էր աշխատանքի մեջ՝ ունենալով այն մեծագույն հատկանիշը, որը կոչվում է պարտքի դիտակցություն հայրենիքի հանդեպ:

109. Ավետիք իսահակյանը շատ բնորոշ վերնագրով է հրատարակել իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երգեր ու վերքեր»: Այդ «վերքերն» էլ երգեր են: Բանաստեղծությունն այդ գեպքում, արդեն, դուրս է գալիս ընթերցվելու համար ստեղծված գրքի ու պոեզիայի սահմաններից: Նրա ստեղծագործությունը բարձրագույն պոեզիայի լեզվով արտահայտված երգ է՝ պարզ, խորունկ և բնաշխարհիկ հայկական: Իսկ երգը, լավ երգը, երբեք չի հնանում...

110. Վահրամ Փափազյանը իսկական մոնումենտալիստ է, վիթխարի մասշտաբների մի գերասան-ստեղծագործող: Նա տվեց Շեքսպիրի միանգամայն նոր, միանգամայն հայկական և միանգամայն փափազյանական մեկնաբանությունը: Նրա մարմնավորած կերպարները ընդհանրացված են իրենց ամենափոքր շտրիխների մեջ անգամ: Դրանք օժտված են փիլիսոփայական խորությամբ, զգացմունքի և կրքի անշափելի ընդգրկումով: Միաժամանակ վեհ են ու հերոսական: Հերոսական են ողբերգականության մեջ: Տիտանական մի զորություն կա նրա մեջ, որ ինձ հիշեցնում է մեր էպոսի և հերիաթների հերոսներին՝ որքան դիցաբա-

նական, ֆանտաստիկ, ամեջի ու վերացական, նույնաբան էլ ռեալ, մարդկային ու նուրբ:

111. Ռումանոս Մելիքյանը մեր երաժշտության Տերյանն է: Երկուսն էլ վերին աստիճանի զգայուն, նրբակիրթ ու խոր արվեստագետներ են: Եվ պահանջում են նույնքա՞ն զգայուն, նրբակիրթ ու խորը լնկալող: Թե՛ մեկի, թե՛ մյուսի ոճը հստակ է, մշակված մինչև վերջ, մինչև բյուրեղյա մաքրություն: Նրանք նախընտրում են «փոքր» ձեզ, որի միջոցով էլ տալիս են մարդկային հոգու ամենաթաքուն ու ամենախնտիմ, անշոշափելի թրթիւնները: Երկուսի ստեղծագործությունն էլ ներծըծված է անսահմանորեն թափանցիկ ու քնքուշ լիրիզմով և օժտված է առնական, հատու շեշտերով: Երկուսն էլ բացարձակ հայ են իրենց տիխությամբ ու ժպիտով, իրենց մտորումներով ու իդեալներով, իրենց ստեղծած արվեստային աշխարհի ողջ մթնոլորտով ու ներքին էությամբ:

112. Զարենցը լեգենդ էր: Ի՞նչ զրես լեգենդի մասին: Գուցե կանխորոշված էր նրան ողջակիզվել իրեկ տառապանքի, մաքառման ու հավատի խորհրդանշումն...

Ո՞վ զիտե... Ա՛յ, ես մտածում եմ Զարենցի մասին ու զարմանում, որ այդ հրաշքը մեղ հետ միասին ապրում էր նույն քաղաքում, որ նստել, վեր եմ կացել նրա հետ ու նկարել եմ նրան:

Բազմիցս Զարենցին նկարել եմ հենց այնպես, մեծ մասամբ ուրիշների ներկայությամբ, իրեկ ձեռանկարներ: Սրանցից մի երկուսը, իմ կարծիքով, հաջողված են:

Բայց դիմակով Զարենցը նկարել եմ «պաշտոնական» պայմաններում, իր տանը: Նկարել եմ արագ, երկու սեանսով՝ մի-մի ժամ: Երբ վերջացրի և սկսեցի երանգապնակս մաքրել՝ վեր թռավ տեղից ու մոտեցավ դիմանկարին.

—Այս մարդ, էս ո՞նց ես աշխատում: Այսքան էլ արագ աշխատե՞լ կլինի:

—Այդքան էլ արագ չէր:

—Չէ՛, չէ՛, ի՞նչ ես ասում: Այսինքն՝ ես էլ ոչինչ: —Ու քմծիծաղելով, ապա կոմիկ լրջությամբ ցուցամատը քունքին դնելով, ավելացրեց, — ասենք մեղքը ժամանակինն է, տեխնիկայի դար է:

Բարեբախտաբար հիշում եմ, թե ինչպես եղավ, որ զործը սկսեցի: Մի օր իջնում էի Աստաֆյանով: Տեսնեմ դիմացից Զարենցն է գալիս՝ մի քանի դիրք թեփ տակ: Մոտեցավ ու թե՝ «լա՛վն է չէ՛ մեր փողոցը. ճիշտ է, շատ է գավառական, բայց համ ու հոտ ունի, կոլորիտ ունի. Հը, ի՞նչ կասես»: «Այդպես է, ասում եմ, — իսկ ե՞րբ ենք սկսում աշխատել»:

—Վա՛ղը, հենց վա՛ղը: Կիրակի օր էլ է: Վաղը 12-ին արի:

Հաջորդ օրը գնում եմ: Տանը, բացի իրենից, ոչ ոք չկա: Ամեն ինչից զգում եմ, որ նախապատրաստվել, տրամադրվել է նկարվելու: Նստում է: Պատկերակալը տեղադրելու, երանգապնակն ու վրձինները դիտմամբ դանդաղ կարգի բերելու ընթացքում խոսում եմ դեսից դենից: Աշխատում եմ տրամադրությունը ցրել՝ չի ստացվում: Նայում եմ դեմքին՝ ի՞նքը չէ: Ծովորեն մի քանի պատահական գծեր եմ դնում կտավին և, ի միջի

այլոց, հայտարարում, թե այսօր մի տեսակ վրձին բռնելու ցանկություն շունեմ:

—Ինչո՞ւ, —հարցնում է զարմացած:

—Չգիտեմ, վաղը գամ:

Մի քիչ խոռված տոնով պատասխանում է, որ աշխատանքի է:

—Ոչինչ, —ասում եմ, —գործդ վերցրու հետդ ու արի տուն: Դու կաշխատես, ես կամաց-կամաց կրստմբսեմ՝ գուցե մի բան դուրս գա:

Լոռում է, մտքի մեջ հաշիվներ անում ու համաձայնում: Մի երկու ժամ էլ լավից վատից խոսում ենք ու բաժանվում: Փայտե պատկերակալը մնում է Զարենցի աշխատասենյակում, նրա գրասեղանից երկու-երեք քայլ հեռու՝ համր ու անտարբեր...

Լուսիկն արագ-արագ ճաշի պատրաստություն է տեսնում, հետն էլ կշտամբում է ինձ. «Ի՞նչ ես արել մարդու հետ, քո երեխա՞ն է, ինչ է. կնեղանա» և այլն, և այլն: «Հա՛, հա՛, երեխա է, բա ի՞նչ է, եթե ճիշտն ուզում ես իմանալ, երեխա՞ է»: Եվ իսկապես երեխա էր, մեծ երեխա, աղնիվ, բյուրեղյա հոգու տեր:

Հաջորդ օրը տնից դուրս եմ գալիս, մտածելով տեսնես փորձս արդյունք տվել է:

...Դուքը բացում է ինքը: Ա՛յ, սա հասկանալի է՝ տնեցիք էլ տանն են: Զարենցն էլ Զարենցն է: Սովորական նախադասությունները փոխանակում ենք և անցնում գործի: Կարծես չի էլ նկատում ո՛չ պատկերակալը, ո՛չ ինձ: Երեկվա արհեստականությունից ոչինչ չի մնացել դեմքին: Բնական է գլխի շարժումը, դի-

մախաղը՝ ազատ, տիպիկ շարենցյան։ Տարածված հայկական տիպաժ է։ Մազերը՝ սև, փոքր-ինչ ալիքամոր, խիտ ու ճակատին թափված։ Քիթը մեծ է, ներբեկ շրթունքը՝ հաստ։ Փոքրամարմին է, բայց ներքին կրակով այրվող մարդու ազգեցիկ արտահայտությունը և, հատկապես, խոշոր աշբերի սուր, արծվալին հայացքը ժայռեղեն հսկայի տպավորություն են ստեղծում։ Գեղեցիկ դեմք չէ, կարելի է նույնիսկ ասել, որ տգեղ է, բայց հմայիչ է ու համակրելի։ Այդ դեմքն է, որ արտացոլում է նրա անհաշտ ու խիստ, ակտիվ ու բռնկվող բնավորությունը։ այդ դեմքն է, որ կրում է վեհ ու Վդրամատիկական հանճարի և մեծ հայի արտահայտությունը։

Զարենց անձնավորության հիմնական հատկանիշներն են դրանք, որ պետք է ընդգծել ու խտացված ներկայացնել կտավի վրա... Դիմանկարչի իմ սովորությանը համաձայն խոսեցնում եմ, որ շճանձրանա, շըկորցնի ակտիվությունը։ Խոսեցնում եմ իրեն հուզող թեմաների շուրջ։

— Ինտուիցիան՝ մեծ բան է։ Բնա՛զդն էլ, արյո՛ւնն էլ։ Առանց դրանց՝ ի՞նչ արվեստ, ի՞նչ գիտություն, ի՞նչ մարդկություն։ Եվ ինչքան էլ առեղծվածային են։ Տեսնես՝ ե՞րբ պիտի կարողանանք մեր համալսարանում բաղա ստեղծել ու խելոք ջահելներին մղել այդպիսի հարցերի ռևսումնասիրության։ Ա՛յ, գերմանացիները՝ էքսպերիմենտալ էսթետիկայի ու հոգեբանության մի քանի լավ օջախներ ունեն։ Եվ բավականին լուրջ աշխատանք են տանում, շատ մեծ արդյունքների են հա-

սել: Ոչի՞նչ, մենք էլ կանենք: Պետք է լավ մտածել ու
ելքեր որոնել:

Ու երազում էր Զարենցը, մտահոգվում, ափսոսում,
պայծառանում: Հույսը շողում էր դեմքին:

Դիմանկարը դուր եկավ թե՛ իրեն, թե՛ ինձ:

—Մեկ էլ մի քսան տարի հետո այսպես հիմնավոր
կնկարես,—ասաց,—հետաքրքիր է, ինչպիսի՞ն կլինեմ:
—Եվ գերմաներեն մի բանաստեղծություն արտասանեց
ծերության և իմաստության մասին: —Ենորհքով մար-
դիկ են գերմանացիները՝ Գյոթե ունեն, Դյուրեր:
Ո՞ր մեկին ասես: Մեր մեծերն էլ շատ են ու շատ էլ
մեծ են: Էլի՛ կունենանք:

Հաճախ, և Զարենցի դիմանկարի կապակցությամբ
մասնավորապես, մարդիկ հետաքրքրվում են, թե ինչ
կնշանակեն դիմակները իմ գործերում: Ճիշտն ասած,
նման Հարցերի շեմ սիրում պատասխանել: Բայց գուցե
պիտք է այս առիթով մի երկու խոսք ասել: Միայն
մի պայմանով՝ կնշեմ առջասարակ դիմակի իմ «կոն-
ցեպցիայի» մասին, Զարենցի հետ նկարված դիմակի
կոահումը թողնելով դիտողին: Դիմակների նկատ-
մամբ իմ հետաքրքրությունը ծնվեց եղիպտական ար-
վեստին ծանոթանալիս: Մի տեսակ խորհրդավոր զո-
րություն ունի դիմակը: Ամենաանարտահայտելի բանը
կարելի է նրա միջոցով արտահայտել: Տարբեր ազգեր,
տարբեր ժողովուրդներ, տարբեր արվեստագետներ
տարբեր իմաստ են դնում դիմակի մեջ: Ես այն դի-
տում եմ, մոտավորապես, իբրև հմայիլ, ճակատագրի,
հավերժանալու մարդկացին ձգտման խորհրդանիշ:

Կարծում եմ այս կոպիտ ձևակերպումը ինչոր բան
կարող է հոգել Զարենցի դիմանկարը «կարդալու»
համար: <...>

Իրականությանը վերկից, հանճարի բարձունքից
նայող մարդ չէր: Զէր սիրում «ազատ արտիստ» կա-
տեգորիան: Կյանքի հորձանուտին այդքան մերված և
ավելի ակտիվ անձնավորություն չեմ տեսել, չեմ էլ
պատկերացնում: Ինքը հայրենիքի զինվորի հոգեբա-
նություն ուներ և նույնը պահանջում էր շրջապատից:
Ամեն ինչ և ամենքին, հենց իրեն, գնահատում էր այդ
հոգեբանությամբ:

Գիտեր վարակել, ոգեշնչել ու գործի մղել: Հիշու՞՞
եմ, օրինակ, թե ինչպես էր վարում Պետքատի զբա-
կան բաժինը: (Եվ ինչքա՞ն բան արեց կարձ ժամանա-
կում): Մի օր կանչեց իր մոտ: Մտա առանձնասենյակ:
Թղթերի, ձեռագրերի ու թղթապահակների արանքից
գորս եկավ, մոտեցավ ու թե՝ «զո՞րծ կա, նստի՞ր»:
Նստեցինք: Մի պահ լոեց: Հետո գորգորալի ժպիտով
նայեց աշքերիս ու էլի լոեց: Եվ ի՞նչ էր խնդրածը:

—Գիտե՞ս ինչ,—ասաց,—Ֆիրդուսին ենք հրատա-
րակում: Հայերե՞ն: Զհրատարակելու իրավունք չու-
նենք: Մեր ժողովուրդը պետք է կարդա նրան: Էլ ի՞նչ
քաղաքակիրթ ազգ, որ ուրիշների ստեղծած լավը շի-
մանա: Պետք է, շա՞տ պետք է: Գիտեմ, որ ժամանակ
չունես, նկարազարդումներ անել առանձնապես շես
սիրում, բայց «Ծոստամ և Սոհրաբը» պետք է ձևավո-
րես:

—Հա՛, եղբայր, հա՛, ի՞նչ ես համոզում: Ինչի՞ց
ենթագրեցիր, որ կարող է մերժեմ:

Նույն ժպիտով նայեց և ուսերը թոթվեց: Ի՞արկե հարցն այն չէր, որ մերժումի էր սպասում: Ուղղակի ուզում էր ուրախությունն արտահայտել, ոգևորությունն ընկերոջ հետ կիսել:

Զարենցը մոլի գրասեր էր ու գիրք լավ էր հասկանում: Զարմանալի նուրբ դիտողություններ կանել ձեւավորողին, տեխնիկական խմբագրին, կազմարարին, կարծ ասած՝ բոլորին, ովքեր կապ ունեն գրքի ստեղծման հետ: «Ռոստամ և Սոհրաբ» տպելիս մոտիկից տեսա, որ նա իբրև հրատարակիչ պրոֆեսիոնալ էր: Այն, ինչ կոչվում է «գրքի էսթետիկա»՝ Զարենցի համար ասես մասնագիտություն լիներ: Եվ երեսում էր, որ միտքը այդ ուղղությամբ անընդհատ աշխատում էր: Երեսում էր, որ համապատասխան գրականություն է կարդում, որոնում, ուսումնասիրում: Եվ, իսկապես, հենց նույն Ֆիրդուսին հրատարակելու օրերին մտնում եմ Պետհրատ, տեսնեմ՝ միջանցքում մի խումբ մարդիկ (եթե չեմ սխալվում, հանգուցյալ Տարագրոսն ու Տաճատ Խաչվանքյանն էլ կային) գլխին հալաքած ոգևորված խոսում է:

— Լավ, ճաշակով գիրք տալը քիչ է: Պետք է ստեղծենք ժամանակակից գիրք: Տեսնո՞ւմ եք, գերմանացիները, Մոսկվայի մեր «Ակադեմիա» հրատարակությունը ինչ գրքեր են ստեղծում: Մենք պետք է հասնենք նրանց, բայց մերը, հայկականը ստեղծելով: Պետք է գիրքը վերցնես ձեռքդ և անմիջապես զգաս, որ հայկական է: Մեր նախնիները ոսկի ձեռագրեր են թողել մեզ: Չի՞ կարելի նրանցից սովորել: Ի՞արկե կա-

րելի է: Գրվածքի ծավալին ու բովանդակությանը համապատասխան նկատի են առել գրքի շափը, հաստությունը. էջի մակերեսի ու «շարվածքի» կապ են որոնել. տեսքն ու նկարազարդումները ներդաշնակելու մասին են մտածել: Այս, պետք է գտնենք, թե ինչը ոնց են արել: Եթե լուրջ մոտենանք, լավ նայենք, վերցնելու շատ բան կգտնենք նրանց մոտ:

Գաղտնիք չէ, որ Զարենցի պաշտոնավարության ժամանակ Պետհրատի թողարկած գրքերն այսօր էլ նախանձ են շարժում: Եվ գաղտնիք չէ, որ դրանք այդպիսին են՝ շնորհիվ Զարենցի միջամտության, շնորհիվ այն բանի, որ կրում են Զարենցի ճաշակի կնիքը:

Կհասներ ամեն տեղ: Եվ քանի որ բազմակողմանիորեն զարգացած էր ու ճկուն մտքերի տեր, միշտ էլ օգտակար կլիներ: Թվում էր, թե «էրուղին» խոսքը հենց Զարենցի համար էր ստեղծված: Եվ ապշում էինք, թե ո՞նց է հասցրել այդ տարիքում, այն էլ՝ անհանգիստ, փոթորկալից կյանքով ապրելով, այդքան բան իմանալ ...

Գեղարվեստական ցուցահանդեսների ամենաակտիվ այցելուներից էր: Կգար, խորասուզված կնայեր: Դեմքի վրա վերաբերմունքը կերևար: Մի քանի անգամ կվերադառնար հավանած կամ բոլորովին դուրը շեկած կտավին: Հաջորդ օրը էլի՛ կգար, էլի՛ կնայեր: Եթե հանդիպեր հավանած գործի հեղինակին, երեխայի հրճանքով կշնորհավորեր:

Ցուցարահում Զարենցը արվեստասեր էր, իսկ քննարկումների ժամանակ՝ կրքոտ մասնակից, եվ ե-

բանի թե այսօր, թող չնեղանան մեր տեսաբանները, կերպարվեստի ասպարեզում այդքան հմուտ քննադատ ունենալինք: Կբարձրանար, ցուցափայտը սվինի պես շարժելով ուշադրություն կհրավիրեր այս կամ այն կտավին, այս կամ այն դետալի վրա ու կխռուեր: Տարօրինակ ու, կարելի է ասել, տհաճ ծայն ուներ: Բայց խոսում էր կրքով, վստահություն ներշնչող ոճով, բանիմաց ու անկաշառ գնահատողի համոզիչ վերլուծումներով: Կմտներ ամենանուրբ, ամենախրթին հարցերի մեջ, կխռուեր գույնի, ձևի, կոմպոզիցիայի մասին ու չեր սալթարի:

Եվ կբացահայտվեր նրա կուտակած վիթխարի պաշարը: Միջնադարից, Վերածննդից, նոր ժամանակների արվեստից տիպիկ օրինակներ կբերեր ու կլուաբաններ իր միտքը: Գիտեր XX դարի գեղանկարչության բոլոր ուղղություններն ու հոսանքները, բոլոր անվանի ստեղծագործողներին: Առաջադեմ, «մոդեռն» հայացքներ ուներ և օրիգինալությունը խրախուսում էր: Բայց կեղծիքը անմիջապես տեսնում էր ու խարազանում:

Հիշում եմ, իր խոսքը մի անգամ մոտավորապես այսպես ամփոփեց: Եթե նկարիչը, բորբոքված շեշտով ասաց, պետք է կոշիկ նկարի՝ կոշիկ ցույց տալու համար, ավելի լավ է՝ չնկարի: Այդպիսի գործեր ժողովրդին պետք չեն: Եթե նկարչի մոտ երեսում է այս կամ այն վարպետի կրկնողությունը, ավելի լավ է՝ մի ուրիշ գործով զբաղվի: Եթե նկարիչը չի բավարարում հաշակի այսօրվա պահանջները՝ արհեստավոր է: Եթե նա մեր հողից, մեր ժողովրդի կյանքից, մեզ հուզող

բելի է: Գրվածքի ծավալին ու բովանդակությանը համապատասխան նկատի են առել գրքի շափը, հաստությունը. էջի մակերեսի ու «շարվածքի» կազ են որոնել. տեսքն ու նկարազարդումները ներդաշնակելու մասին են մտածել: Այս, պետք է գտնենք, թե ինչը ոնց են արել: Եթե լուրջ մոտենանք, լավ նայենք, վերցնելու շատ բան կդտնենք նրանց մոտ:

Գաղտնիք չէ, որ Զարենցի պաշտոնավարության ժամանակ Պետհրատի թողարկած գրքերն այսօր էլ նախանձ են շարժում: Եվ գաղտնիք չէ, որ դրանք այդպիսին են՝ շնորհիվ Զարենցի միջամտության, շնորհիվ այն բանի, որ կրում են Զարենցի ճաշակի կնիքը:

Կհասներ ամեն տեղ: Եվ քանի որ բազմակողմանիորեն զարգացած էր ու ճկուն մտքերի տեր, միշտ էլ օգտակար կլիներ: Թվում էր, թե «էրուղին» խոսքը հենց Զարենցի համար էր ստեղծված: Եվ ապշում էինք, թե ո՞նց է հասցրել այդ տարիքում, այն էլ՝ անհանգիստ, փոթորկալից կյանքով ապրելով, այդքան բան իմանալ ...

Դեղարվեստական ցուցահանդեսների ամենաակտիվ այցելուներից էր: Կգար, խորասուզված կնայեր: Դեմքի վրա վերաբերմունքը կերեար: Մի քանի անգամ կվերադառնար հավանած կամ բոլորովին դուրը շեկած կտավին: Հաջորդ օրը էլի՛ կգար, էլի՛ կնայեր: Եթե հանդիպեր հավանած գործի հեղինակին, երեխայի հրճվանքով կշնորհավորեր:

Ցուցասրահում Զարենցը արվեստասեր էր, իսկ քննարկումների ժամանակ՝ կրքոտ մասնակից: Եվ ե-

բանի թե այսօր, թող շնեղանան մեր տեսաբանները, կերպարվեստի ասպարեզում այդքան հմուտ քննադատ ունենալինք: Կրարձրանար, ցուցափայտը սվինի պես շարժելով ուշադրություն կհրավիրեր այս կամ այն կտավին, այս կամ այն դետալի վրա ու կխռուի: Տարօրինակ ու, կարելի է ասել, տհաճ ձայն ուներ: Բայց խոսում էր կրքով, վստահություն ներշնչող ոճով, բանիմաց ու անկաշառ գնահատողի համոզիչ վերլուծումներով: Կմտներ ամենանուրբ, ամենախրթին հարցերի մեջ, կխռուի գույնի, ձևի, կոմպոզիցիայի մասին ու շեր սայթարի:

Եվ կրացահայտվեր նրա կուտակած վիթխարի պաշարը: Միջնադարից, Վերածննդից, նոր ժամանակների արվեստից տիպիկ օրինակներ կբերեր ու կլուսաբաներ իր միտքը: Գիտեր XX դարի գեղանկարչության բոլոր ուղղություններն ու հոսանքները, բոլոր անվանի ստեղծագործողներին: Առաջադեմ, «մոդեռն» հայացքներ ուներ և օրիգինալությունը խրախուսում էր: Բայց կեղծիքը անմիջապես տեսնում էր ու խարազանում:

Հիշում եմ, իր խոսքը մի անգամ մոտավորապես այսպես ամփոփեց: Եթե նկարիչը, բորբոքված շեշտով ասաց, պետք է կոշիկ նկարի՝ կոշիկ ցուց տալու համար, ավելի լավ է՝ շնկարի: Այդպիսի գործեր ժողովրդին պետք չեն: Եթե նկարչի մոտ երեսում է այս կամ այն վարպետի կրկնողությունը, ավելի լավ է՝ մի որիշ գործով զբաղվի: Եթե նկարիչը չի բավարարում ձաշակի այսօրվա պահանջները՝ արհեստավոր է: Եթե նա մեր հողից, մեր ժողովրդի կյանքից, մեզ հուզող

Հարցերից գուրս մողեռնիզմ է խաղում՝ նույնակես արհեստավոր է: Իսկ արվեստի ասպարեզում արհեստավորությունը պարագիտիզմ է:

Զգալուն ու դյուրագրդիռ այդ մարդը կյանքի բոլոր ասպարեզներում էլ արդարության սուրբ վեր բոնած էր պահում: Եվ վճիռ կայացնելու շափանիշը ժողովրդի ու հայրենիքի շահն էր: <...>

Բացի սուրբ Մեսրոպի ու Սահակի աղոթքներից, որ մանկության հեռավոր տարիներին ժառանգել եմ ծնողներից, դպրոցում չեմ սիրել բանաստեղծություններ անգիր անել: Արգեն հասուն՝ շարունակել եմ նույն անտարբերությունը, բացի՝ մի դեպքից: 1911 թվականին Եգիպտոսում, ուժեղ տապավորությունների տակ, ջանացել եմ բերանացի անել մի ոտանավոր (Հեղինակը չեմ հիշում), ուր շատ պատկերավոր ձևով մարդու ճակատագիրը՝ համեմատվում է անապատի ավագափոշու հետ: Բոռվ վերցնում ես ավազը, ուղում ես պահել, բայց ափդ դատարկվում է: Եվ որքան պինդ ես սեղմում, այնքան ավելի շուտ ես կորցնում: Այսպես էլ երջանկությունն ու ճակատագիրը: Կարդացի, հա՛ կարդացի՝ բան դուրս չեկալ: Հիշողությանս մեջ մնաց բովանդակությունը միայն: Բայց չեմ էլ հիշում, թե երբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել «Ես իմ անուշ Հայաստանին»: Երբեք բերանացի չեմ սովորել՝ պարզապես գիտցել եմ: Ինձ թվում է, թե Սահակի ու Մեսրոպի աղոթքների հետ էլ բերել եմ: Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն:

իսկ ինչի՞ հետ համեմատել ... Քիշ կլինի ասել,
թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես,
որովհետև իրենց ծավալով մոնումենտալությամբ հան-
գերձ դրանք կյանքը ներկայացնում են այս կամ այն
մասշտաբով:

«Ես իմ անուշ՝ Հայաստանին», ավելի շուտ, բոլոր
մասշտաբներից գուրս պանոն է: Պաննո՛ հասցված ժո-
ղովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամա-
նակներից եկող Հայաստանարտու-Արմենիա երկրի
համապարփակ պաննո-դիմանկարն է: Դա մեր ազգի
կենսագրության ու վարքի կենդանի արտացոլքն է, մեր
կրած տառապանքների ու փայփայած իդեալների, մեր
անկումների ու վերելքների, արհավիրքներին ենթակա
մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գե-
ղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է <...>

Ասուափի նման ծնվեց ու մի ակնթարթում կիզվեց
Զարենց-մահկանացուն: Բայց լույսը հավերժաբար
մնաց ու գնալով պայծառանում է... Զարենց անունը
դարձել է մեր խղճի ու արժանապատվության խորհրդ-
դանիշը: Ու քանի գեռ շարունակվում է նաիրյան պատ-
մությունը, այդ անունը ժողովուրդը միշտ էլ կպարզի
իբրև գրո՛շ...

113. Գրիգից ու Սիրելիուսից հետո ես շգիտեմ մի
այլ կոմպոզիտոր, որի ստեղծագործությունը այդքան
ազգային և, դրա հետ մեկտեղ, այդքան համամարդ-
կային լինի, որքան Արամ Խաչատրյանի ստեղծագոր-
ծությունն է: Մի բան, որը, իմ կարծիքով, մեծ արվես-
տի հատկանիշը և նրա հավերժաթյան գրավականն է:

Վիթխարի երեակայությամբ օժտված բնատուր հանձար
է Խաչատրյանը, որ այնքան «Հեշտությամբ» ու նորա-
րարի այնքան մեծ խիզախությամբ նիրդաշնակեց
Արևելքի և Եվրոպայի գեղարվեստական ավանդներն ու
մտածելակերպերը: Եվ ինչի՞ նման կլիներ մեր աղքային
մշակույթի XX դարն առանց Արամ Խաչատրյանի ար-
վեստի...

Ներքին կրակով այրվող, գունագեղ ու վառվուն,
լիրիկական ու էպիկական, էմոցիոնալ ու ինտելեկտու-
ալ է նրա երաժշտությունը: Խորապես արդիական,
բառի լայն իմաստով գեղեցիկ, հումանիստական վեհ
իդեալներով ներծծված, այդ երաժշտությունը հայ ժո-
ղովրդի ոգու լուսավոր արտահայտություններից է ու
պատկանում է հանուր մարդկությանը, ապրելու է դա-
լիք բոլոր ժամանակներում:

114. Անկասկած, հայ կատարողական արվեստի բարձ-
րակետը Հայկանուշ՝ Դանիելյանի արվեստն էր: Նա իմ
իմացած համաշխարհային մասշտաբի երգիշ-երգչուհի-
ների մեջ ամենաէմոցիոնալ, ամենահնտելեկտուալ ու
ամենախորը ստեղծագործողներից էր: Նրա երգը բուն
Հայկական էր և մի անբացատրելի, միստիկական ու
սարսոռղ զորություն ուներ: Ինձ թվում է, գուցե սիալ
է թվում, թե նա վախճանվեց մինչև վերջ Հայկաց-
ված...

* * *

*

115. Երբ անցած ճանապարհիդ նայում ես քննադա-
տաբար, կյանքի շարժման տեսակետից, թվում է, թե
ամեն ինչ այլ կերպ կարելի էր անել՝ ավելի լավ: Այս
228

մտքերը վերջ շունեն, որովհետև մարդս կարծում է, թե այսօր ինքն ավելի խելոք ու ընդունակ է, բան երեկ: Գուցե զա այդպես էլ չէ, բայց ստեղծագործող մարդը միշտ ձգտում է ավելի կատարյալին: Սա հենց նրա ներքին կյանքի շարժման օրենքն է: Կամ, երեկի այդ բոլորը նրա համար է, որ ձանձրալի շինի^o ապրելը...

116. Հատկապես մեր ժամանակներում խիստ կարևոր է այն, թե մարդ որքանով է իր մեջ կրում իր մանկությունը: Մանկությունը մարդու ամենաբնական ու պարզ վիճակն է: Նստվածքներ չկան նրա հոգում, աշխարհին նայում է անարատ՝ հայացքով: Ու եթե այդ հայացքը մարդու մոտ մնացել է, չի կարող պատահել, որ արվեստի նրա տեսակետները ներդաշնակ ու անկեղծ դրսեւում շունենան: Իսկ բնությանը մանկական հայացքով նայելը այսօր ինքնին սկզբունք է: Ինձ համար, գոնե, դա այնքան ճիշտ սկզբունք է, որ իմ արվեստագետ դառնալու պատճառը փնտրում եմ վաղ մանկությանս աշխարհում: Երկու-երեք տարեկան՝ դուրս եկա մեր տնից ու ընկա տափաստան: Տեսա բնությունը՝ անսովոր, զարմանալի: Ոնց որ երազում: Խոտեր, գույնզգույն ծաղիկներ, թիթեռներ, բզեզներ: Սկսեցի վաղել նրանց ետևից՝ առանց հասկանալու, որ մութն ընկնում է: Հենց դաշտում էլ, հոգնած ու երջանիկ, քնեցի: Տնեցիներն ինձ դտան հաջորդ օրն առավոտյան: Գուցե հենց այդ ժամանակ էլ իմ մեջ ծնվել է նկարիչը: Եվ ինչքա՞ն հերիաթային է երեխայի համար աշխարհը...

117. Մաքուր, հնչեղ, բազմազան դույների սերը ինձ մոտ ծնունդ է առել դարձյալ մանկությանս տարինե-

րին: Դեռ երեք-չորս տարեկան, երբ վազվղում էի մեր տան շրջապատի գաշտերում, հրճվում էի բազմապիսի ծաղիկների, թիթեռների, բղեղների գույներով: Արևի ճառադայթների ներքո նրանք շողշողում էին մարգարիտների նման: Հեքիաթային այդ գույները հոգիս լցնում էին մի անասելի խանդավառությամբ: Դրանցից ստացած տպավորությունը այնքան ուժեղ էր, որ ողջ աշխարհը, բոլոր առարկաները, բոլոր երևույթները, անդամ «ամենաանգույն» իրերը տեսնում էի բորբոքուն գունահարաբերություններով: Նկարչի իմ պալիտրան ծնվել է, փաստորեն, այդ տարիներին:

118. Դպրոցում ես չեմ հրապուրվել ուսուցիչներիս աշխատանքներով, բայց մենք՝ ուսանողներս, շատ բանով ենք պարտական մեր փայլուն ուսուցիչ Վալենտին Ալեքսանդրովիչ Սերովին, որը մեր նկատմամբ ունեցած իր մշտական ուշադրությամբ և դիպուկ դիտողություններով անընդհատ ներշնչում էր լարված հետաքրքրություն աշխատանքի հանդեպ:

119. Սերովը բարեխսդորեն միշտ դալիս էր արվեստանոց և լուս հետևում աշակերտների աշխատանքին: Խառնվում էր միայն բացառիկ դեպքերում, երբ խիստ անհրաժեշտ էր համարում: Սուր և տեղին դիտողություններով աշակերտին օգնում էր զգալու սխալները: Նրա մշտական ներկայությունը մեղ վարժեցնում էր կարգապահության և հետաքրքրություն սերմանում աշխատանքի նկատմամբ: Երբեմն պատահում էր, որ աշխատում էինք նշված ժամերից ավելի, մինչ ուշ դի-

շեր՝ նկարելով պաստելով։ Մեր այդ ոգևորությունը ուսուցիչն ընդունում էր գոհունակությամբ <...>

Կոստանդին Ալեքսեկիշը շատ էր սիրում ուսանողներին պրակտիկ խորհուրդներ տալ։ Խոսում էր անշափ հետաքրքիր և մեծ ոգևորությամբ։ Խոսում էր հատկապես գեղանկարչության մասին, որը հրաշալի զգում էր և գիտեր։ Մեկ էլ հրապուրվելով սպիտակամաշկ գեղեցիկ բնորդուհու մարմնով և տեսնելով, թե ուսանողն ինչքան վատ է նկարում այն, Կորովինը վերցնում էր պալիտրան և վրձինները՝ ոգևորությամբ գոշելով. «կա՛թ, կա՛թ...»։ Վրձինը թափով խըփում էր կտավին։ Մեկը մյուսի մոտ շարպում էին կարճ վրձնահարվածները։ Գույները կենդանանում էին։ Էտյուդն այլ բնույթ էր ստանում։ Կոստանդին Ալեքսեկիշը նկարում էր յուրովի, Կորովինին հատուկ շքեղությամբ։ Ուսանողի համար նրա աշխատանքը շարունակելը դառնում էր անհնարին։ Հենց առաջին քսվածքով կարելի էր ամեն ինչ փշացնել։ Մուս հրաշալի իմպրեսիոնիստին աշխատելիս տեսնելը ուսանողներիս համար ոչ միայն շափաղանց հետաքրքիր էր, այլև խիստ օգտակար։ Կորովինի աշակերտների համար շատ կարեվոր էր այն, թե ինչ որակով է նկարված գործը։ Մեզ անհրաժեշտ էր հենց գեղանկարչականին հասնելը, զծանկարը գույնին ենթարկելը, գույնի տեսակետով նկարելը։

Սերովը և Կորովինը տարբեր բնավորության տեր մարդիկ էին։ Առաջինը խիստ լուակյաց, ինչպես ասում են, ուրբաթախոս էր։ Իսկ Կորովինը շատ էր սիրում խոսել։ Բայց երկուսի միջև դիսոնանս չկար։ Նրանք

կարծես լրացնում էին միմյանց: Սիրում էին իրար և
մեզ՝ ուսանողներիս <...>

Այն, ինչ հատկանշական է տվյալ մարդուն, ինչը
սովորական է դարձել նրա մոտ, այսինքն՝ այն բանով,
ինչով նա բոլորի առաջ բնականորեն ներկայացնում
է իրեն, իր յուրահատուկ կեցվածքը, շարժումը, դեմքի
արտահայտությունը, զլխի թեքվածքը, ժեստը, ձեռքերի,
մարմնի ձևերը և այլն,—այդ ամենը Սերովն
դգում ու կարդում էր զարմանալի բնազդով ու մտքի
ուժով: Զէ՞ որ այդ բոլորը հենց բնորդի բովանդակու-
թյան և նրա ապրած կյանքի արտաքին դրսեորումներն
են: Բայց Վալենտին Ալեքսանդրովիշն այդ դրսեորում-
ների սոսկ վերարտադրողը չէր: Նրա դիմանկարները
պերճախոս կերպով ցոլացնում են մոդելների նկատ-
մամբ նկարչի ունեցած վերաբերմունքը: Վրձնով, գըր-
չով, մատիտով վարպետորեն կատարված նրա բազմա-
թիվ գործերը բոլոր տեսակետներից բազմազան ու
բազմաբնույթ են: Վալենտին Ալեքսանդրովիշ՝ խոսքի
մեջ Ժլատ այդ մարդու մեջ, նստած էր կրքոտ ու ոգևո-
րող, իսկապես տաղանդավոր դիմանկարիշ վարպետը:
Դժբախտաբար այդ հրաշալի մարդն ստիպված էր գործ
ունենալ նաև ո՛չ հաջելի պատվիրատուների հետ, որոնց
ճաշակին, ճիշտ է, նա երբեք տեղի չէր տալիս, բայց
ամեն անդամ զայրանում էր, ջղեր քայլայում: Դիտե-
ցեք նրա դիմանկարները: Դրանք սոցիալ-հոգեբանա-
կան կերպարներ են:

120. Նախ ամեն ինչ սովորել, իսկ հետո արտադրել՝
արվեստում անկարելի է: Մարդը պետք է ինքը որոնի

իրեն, իսկ շրջապատողները միայն օգնում են նրան այդ բանում: Կամ՝ երբեմն խանդարում են <...>

Ես բարեխղճորեն, աղնվաբար վերաբերվում էի այն ամենին, ինչ ինձ սովորեցնում էին ուսուցիչներս: Յուրացրել էի Հիմնական հնարքները և բարեխղճորեն հետևում էի դրան: Բայց նկատեցի, որ արդյունքները ինձ շեն բավարարում: Իմ մեջ խոսում էր ինչ-որ ուրիշ բան: Ես պետք է հայտնագործեի աշխարհը: Ի՞մ աշխարհը:

121. Ինչ վերաբերում է իմ գործերին, ես շեմ կարող առանձնապես մատնանշել մի որևէ դպրոցի ազդեցություն: Ես եղել եմ պատ աշակերտ, ձգտել եմ գտնել սեփական ուղիներ և մանավանդ ցանկացել եմ տեսնել սեփական աշքերով:

122. Ես պետք է տիրապետեի այն միակ լեզվին, որն օգներ ինձ արտահայտելու իմ ապրումները, իմ ձըգտումները, իմ մտքերը: Այն լեզվին, որը շունչ տար իմ մանկական տպավորություններին, իմ՝ որպես տիեզերքի, երկրագնդի, մարդկության, հարազատ երկրի կենդանի մասնիկի պատկերացումներին:

Ուսումնարանն ավարտելուց հետո ես նկարներ էի արել, որոնց մեջ բնությունը, կենդանիները, մարդիկ հանդես էին գալիս հեքիաթային կերպարանափոխությամբ: Տարիների հետ իմ ուշադրությունը սկսել էր սեռովել գեղի հարավ, իմ մանկության անմոռանալի վայրերը, այնուհետեւ դեպի Կովկաս, Անդրկովկաս և, վերջապես, Հայաստանի բնությունը և կյանքը: Մի եր-

կիր, որի ժողովուրդը խոսում էր իմ հոր ու մոր լեզվով:

Շատ դժվար էր գտնել այն լեզուն, որն իմ հին ժողովրդի հոգուն նույնքան հարազատ լիներ, ինչքան իր իսկ լեզուն, արվեստի այն լեզուն, որը մյուս քաղաքակիրթ ժողովուրդների սրտին նույնքան մոտ լիներ, ինչքան իմ ժողովրդի հոգուն...

123. Նորից ու նորից ինձ պաշարում էր այն միտքը, որ իմ ունեցած նկարչական հնարքները հնարավորություն չեն տալիս արտահայտելու այն, ինչ անընդհատ ապրում էր երևակայությանս մեջ: Պետք էր շատ բան ձեռք բերել, շատից էլ ձեռք քաշել, աղատագրվել: Այդ նպատակն իրագործելու համար սկսեցի մտովի, երևակայորեն ջրաներկով նկարել ֆանտաստիկ նկարներ: Այդ շրջանի աշխատանքները ես անվանել եմ «Երազներ և հերիաթներ»:

124. 1904 թվականից սկսած իմ գործերը <...> ունեն ֆանտաստիկ բնույթ: Ինչ որ նկարում էի, ոեալության և երևակայության միահյուսումն էր, ոեալ, որքանով այն կատարում էի տեսածի տպավորությամբ, ֆանտաստիկ, որքանով այն սինթեզում էի երևակայական տեսիլքի մեջ: Տեսածս փոխում էի: Պետք էր լինում հասնել ուժեղ արտահայտչականության՝ գույների ու նրանց հարաբերության ինտենսիվացմամբ, որպեսզի մարմնավորեմ իմ ապրումները, զգացմունքները, խոհերը:

125. Անհրաժեշտ էր գոնե որևէ շափով [բնության հանդեպ] իմ հիացումը դրսեորելու միջոցներ ու ձևեր

գտնել: Անհրաժեշտ էր մեջս Հաղթահարել գորշ ու
պարտադրվող դպրոցը և, օտարից չօգտվելով, գտնել
սեփական տեխնիկան: Սկսեցի որոնել ավելի ամուր,
պարզ ձևեր ու գույներ՝ իրականության գեղանկարչա-
կան էռթյունը հաղորդելու համար: Ընդհանուր առ-
մամբ, իմ նպատակն է պարզ միջոցներով, խուսափե-
լով ամեն մի ծանրաբեռնվածությունից, հասնել առա-
վելագույն արտահայտչականության, մասնավորապես
աղատվել կոմպրոմիսային կիսատոներից: Եվ ինձ
թվում է, որ այս ուղղությամբ հասել եմ որոշ ար-
դյունքի:

126. Իմ կյանքի բոլոր ժամերին ունեցել եմ այն զգա-
ցումը, ինչը կարելի է անվանել տիեզերքի զգացում,
ապրել եմ տիեզերքի մասին մտորումներով: «Հեքիաթ-
ներում և երազներում» ես դա արտահայտել եմ տե-
սիլքների, բնության տարրերի ֆանտաստիկ կոմքինա-
ցիաների մեջ: Հիշիր մեր բանահյուսությունը՝ ինչքան
տիեզերական, անհուն և միաժամանակ պարզ է, ման-
կան երևակայությամբ ներծծված:

127. Ես երկար երազում էի Կովկասը և Անդրկովկասը
ու թեև ինձ վիճակվեց մի քանի անգամ լինել Հյուսի-
սային Կովկասում, այն առանձնապես ինձ չհուզեց:
Փոխարենը միջին Կովկասը և հատկապես հարավայինը
կախարդեցին ինձ՝ այստեղ առաջին անգամ տեսա-
արել և զգացի տապը, լեռներից իջնող զանգուլակնե-
րով ուղտերի քարավանները, արեահար գեմքերով
քոշվորները՝ ոչխարների, կովերի, գոմեշների, ձիերի,
ավանակների, այծերի հոտերով, շուկաները, խայտա-

բղետ ամբոխը փողոցներում, ոև ու վարդագույն շաղ-
րաներով, մանիշակագույն խոնջաներով, փայտե մա-
շիկներով մուսուլման կանայք, որ անցնում էին համր
ընթացքով, ծիկրակում դեղին, քառակուսի տների հարթ
կտուրներից, հայուճիների խոշոր, նշաճե, մուգ աշ-
քերը,—այս ամենը այն իրականն էր, որ երազել էի
դեռ մանկուց: Եվ զգացի, որ բնությունը իմ տունն է,
իմ միակ միահիմարանքը, որ նրա առջև ապրած իմ հիաց-
մունքը տարբեր է արվեստի ստեղծագործության առջև
զգացածից. սա միշտ էլ մի քանի բռպէ էր տեսմ
միայն: Բազմադեմ, բազմերանդ, ամուր ու անիմանալի
ձեռքով կոփված բնությունը իմ միակ ուսուցիչն է:

128. Մերձազովյան տափաստանները, տեղի բնակիչ-
ները՝ ոռւսներ, հայեր, ուկրաինացիներ, հարավային
քաղաքները, հույզերով լի Մոսկվան, գեղարվեստի ու-
սումնարանը, կովկասյան ճամփորդությունը՝ մի ամ-
բողջ կյանք, տպավորությունների, ապրումների, դեմ-
քերի ու դեպքերի մի աջոելի բազմազանություն, որի
կենտրոնն էր արդեն, հնամենի Հայաստանը... Զյու-
նագագաթ, փայլատակող լեռներ, պողպատյա ժայ-
ռեր, արագահոս գետերով ձորեր և խորխորատներ,
կանաչազարդ բլուրներ, որոնք մեկը մյուսի ետեից
շարժվում են դեպի կապտին տվող լեռնապարերը և
հալվում երկնքի կաթնավունի մեջ, ցածրահարթ հո-
վիտներում արածող անասուններ, ուղտերի քարավան-
ներ, որ շարժվում են դեղնավարդագույն փոշոս հար-
թություններում, ինձ վրա թողնում էին հսկայական
տպավորություն, և որոնց նկարչական կերպավորման
համար ուսման տարիներին ստացած զիտելիքները

ոչինչ անել չէին կարող: Դրանք պահանջում էին նոր լեզու, նոր հնարքներ: Իսկապես մոխրավում գումային միջոցները շատ աղքատ էին այդ հարստությունները կտավին հանձնելու համար: Դպրոցն ինձ տվել էր գրագիտություն, բայց պետք էր ունենալ սեփական լեզուն: Նոր զենքեր հայթայթելը այնքան էլ հեշտ չէր: Բայց ներքին մղումը հանգիստ չէր տալիս, ստիպում էր փնտրել քիչ է ասել փնտրել, այլ գտնել, անպայման դտնել: Այդ մեծ ճանապարհին ամենից կարևոր ուղենիշն ու կովանը, իհարկե, իմ Հայաստանն էր: Ես ընտրեցի այդ ճանապարհը: Այլ ճանապարհ ինձ չէր գրավում...

129. 1901 թվականին ես առաջին անգամ մեկնեցի հեռավոր հարավ, ընկերոջս՝ Միանսարյանի մոտ, Երևան: <...> Այդ ժամանակ ուսումնասիրելով Արևելքի բնությունը և կյանքը, սկսեցի մտածել իմ տպավորությունները հաղորդելու միջոցների վրա: Իսկ այդ տպավորությունները նոր ընկալման սրությամբ մոտ էին մանկությանս վաղ աշխարհին: Ես, որպես երեխա, սկսեցի սինթեզել իմ տպավորությունները, չկտրվելով բնությունից, բայց ֆանտաստիկայի ու հեքիաթի մեծ հակումով: 1903—1904 թթ. ես կտրականապես սկսեցի պայքարել այն ամեն գորշության դեմ, որ ինձ պարտադրել էր դպրոցը, և ինձ համար նշել նոր ուղիներ: «Մир искусства»-ի հանդես գալը գեղանկարչություն բերեց ինչ-որ նորություն, բայց այդ նորը ըստ էության քիչ էր տարբերվում անցյալից, որը ինձ չէր բավարարում: Արևելքի բնությանը սիրահարված, ես ձրգ-

տում էի գումագեղ, բազմերանդ գեղանկարչության, գույնի, լույսի և ձեի խորը դրսեորման:

130. Ֆրանսիական նոր արվեստին սկսել եմ ծանոթանալ 1906—1907 թթ., Ա. Ի. Շուշկինի հավաքածուի և «Յոլոտօ րոհո»-ի ցուցահանդեսների միջոցով։ Ֆրանսիացիների հետ ծանոթությունը էլ ավելի է թևավորել ինձ ու համոզել իմ ճանապարհի և գեղանկարչության վերաբերյալ իմ հայացքների ճշմարտացիության մեջ։

131. 1909 թվականի «Յոլոտօ րոհո»-ի ցուցահանդեսում ես ներկայացված էի մեծադիր «Երկրագործը» աշխատանքով, մի շարք այլ գործերով, ինչպես նաև իմ «Ինքնանկարի» առաջին տարբերակով։ <...> Մարդը բնության, լեռների և հովիտների միջև քայլելիս, արկի տակ, արկի ոսկե շողերով լուսավորված։ Դեմքի լուսավոր կողմը տրված է դեղնառոսկեգույն, ոսկեգույն կարմիր, իսկ ստվերոտ կողմը՝ կապույտ գույներով։ Մաղերը և բեղերը վերցված են մաքուր սևով ստվերում և բաց կապույտ՝ լուսավոր տեղերում։ Ֆոնի վրա երկու կողմից բարձրադիր լեռներ են, իսկ կենտրոնում կանաչակապտագույն սարեր և երկինք։ Ինձ թվում էր, որ այդ պարզ միջոցներով ինչ-որ շափով հասել էի այն բանին, ինչին ձգտում էի։ <...>

Ցուցահանդեսի բացումից մի քանի օր անց մի խմբի հետ այցելեց ֆրանսիական նկարչության սիրահար Շլուկինը։ <...> Մոտենալով իմ <...> «Ինքնադիմանկարին», Սերգեյ Խվանովիշը ուղղվեց, ընդունեց արտիստական պողա և կակազելով սկսեց գովարանել այն՝ ասելով, թե գործը «հրաշալի է, դուք հիանալի

դիմանկարիչ եք» և այլն: Հենց այդտեղ էլ նա խնդրեց ինձ նկարել իր որդու և դստեր դիմանկարները: Ես շըշմել էի դրանից ... Շշուկինը, այն Շշուկինը, որ Եվրոպայում նկարչության մեծ գիտակի համբավ ուներ, ինձ պատվեր էր տալիս: Պատմում էին, որ երբ նա գնում էր Փարիզ նկարներ առնելու, բոլոր նկարիչները ծակ ու ծուկ էին կոխում իրենց լավ գործերը, որովհետև Շշուկինը, ունենալով հրաշալի աշք, մատնացույց էր անում լավագույններից լավագույնը: Դրա շնորհիվ է մեծապես, որ Սովետական Միության թանգարաններում իմպրեսիոնիզմը և պոստիմպրեսիոնիզմը ներկայացված են ամենափայլուն ձևով: Բոլոր գործերն էլ առաջին կարգի են և հնարավոր չեն, ինչպես հարկն է ներկայացնել Ռենուարին, Մոնեին, Սեզանին, Վան-Գոգին Գոգենին և այլոց՝ առանց նրանց երկերի մուկովյան ու լենինգրադյան հավաքածուներն ուսումնասիրելու:

Անասելի դժվարության առաջ էի կանգնած: Ինչպես նկարել այդ դիմանկարները, որ չկրկնեն առաջինը և բարձր որակի լինեն: Գործ ունես Շշուկինի հետ: Մանավանդ նրա գովասանքներն ինձ պարտավորեցնում էին: Ինձ մխիթարում և հույս էր տալիս ընկերու՝ Պավել Կուզնեցովը, ասելով. «Դա հրաշալի է, բախտդը բերեց...»:

Վերջապես որոշեցի: Ի. Ս. Շշուկինին պետք է նկարել ո՞չ այնպես, ինչպես «Ինքնադիմանկարը», այլ մաքուր գեկորատիվ մեթոդով: Նկարում էի տեմպերայով, ոգեսրությամբ: Այն ցուցադրեցի 1911 թվականին, «Մир искусства»-ի ցուցահանդեսում, գրական խըմբակի դահլիճում: Այստեղ հանդիպեցի Սերովին, որ

կանգնած էր իմ գործերի դիմաց: Մոտեցա, բարեկեցի: Նա շպատասխանեց: Շուռ եկավ դեպի Շշուկինի դիմանկարը և մատով ցույց տալով գոչեց՝ «Թնդանո՞թ, երկու թնդանոթներ...»: Դիմանկարի լայն բացված և սեռուն աշքերի մասին էր: Այդպիսին էր Վալենտին Սլեքսանդրովիլիշը՝ միշտ ժլատ, առանց ավելորդության, բայց դիպուկ: Հիացմունքից շողում էր նրա հայացքը, իմ ուրախությանը չափ չկար:

132. Մուկվայում ցուցադրեցի եգիպտական թեմաներով նկարներս, որոնք բուռն հետաքրքրություն առաջացրին: <...> առաջին իսկ ցուցահանդեսներից սկսած, իմ գործերը միանգամայն հակադարձ կարծիքների տեղիք էին տվել: Կամ բացարձակ ժխտում, կամ լիակատար ընդունում: Միջինը չկար: Բայց հետզհետե առաջինը սկսեց կոմպրոմիսների գալ: Եթե 1900—ականներին, բոլորովին անտեղյակության դիրքերից, իմ ստեղծագործությանը վերագրվում էին, սատանան գիտե, թե ինչ սկզբունքներ, ապա 1910-ականներին փորձեր էին արվում շոշափելու այն խնդիրները, որոնք կազմում էին հենց իմ արվեստի ելակետը: Սակայն պետք է նշել, որ նկարների շուրջը եղած քննադատական պայքարը դեռևս ամուր հիմքերից զուրկ էր: Զուտ ճաշակի վրա հենված վիճաբանություններ էին՝ մակերեսային, հեղհեղուկ: Իսկ Վ. Սերովի և Կ. Կորովինի նման մարդիկ հեռու էին որպես քննադատ հանդես գալուց և իմ արվեստի հանդեպ իրենց դրական վերաբերմունքն արտահայտում էին, եթե կարելի է ասել, պրակտիկ առումով՝ միջամտել, օրինակ, որ իմ

գործերից գնեին թանգարանները և այլն: Ինչեւ, այդ պայքարը ինձ համար կարևոր էր: Ուրեմն, մտածում էի, նկարածս արժեք ունի: Անգամ հայտոյանքները ըստեղծագործելու աղջակ էին ծառայում...

Քննադատության դրական թեր հետզետե սկսեց ուժ ստանալ և աղջեցություն գործել հասարակության վրա: Գրվեցին բազմաթիվ նյութեր, որոնցից ամենաշատը կարևորը, իր թերություններով հանդերձ, Մաքսիմիլիան Վոլոշինի հոդվածն է («Առողջություն», 1913, № 9): Պետք է ասեմ, որ այդ հոդվածը հետաքրքիր է ոչ միայն իր ժամանակի մեջ վերցրած: Եթե իմ արվեստի մասին լույս են տեսնում մեկ-երկու հաջող աշխատանք առ հասարակ, ապա դրանցից մեկը, անպայման, Վոլոշինի գրածն է: Վոլոշինը արտիստիկ, բազմակողմանի դարձացած մարդ էր, առաջադեմ մտքերի տեր մի մարդ, որին կենդանի ու համոզիլ շտրիխներով պատկերել է իմ լավ բարեկամ իւլա Գրիգորիկի էրենբուրգն իր փայլուն հուշերով:

Նախքան «Առողջություն»-ի պատվերը կատարելը, Վոլոշինը եկավ ինձ մոտ, մանրամասն ուսումնասիրեց արվեստանոցի գործերը, խորհրդակցեց հետս մի շարք էական հարցերի շուրջ: Ես նրան տվի տետրերս, որոնցում, տարբեր առիթներով, շարադրել էի արվեստի ընդհանուր պրոբլեմների վերաբերյալ իմ հայացքները, զույնի, զծանկարի տրադիցիայի ու նորարարության մասին մտորումները և այլն: Նա մեծ ուրախությամբ վերցրեց տետրերը և ոգևորված աշխատանքի անցավ: Հրապարակ գալուց հետո նրա հոդվածն ուշադրություն զրավեց ու լայն տարածում դտավ: Փաստ է, որ մինչ

այժմ էլ այդ հոգվածի կողքով քննադատները շեն
կարողանում անցնել, երբ գրում են իմ մասին:

Իմ բարձրացրած խնդիրները Վոլոշինը ձգտել է
լայն կանվայի վրա դիտել և էքսկուրսների մեջ ներկա-
յացնել: Այդ առումով նրա մոտ կան և հետաքրքիր
պարբերություններ, հարցադրումներ, և վիճելի կամ
սխալ եզրակացություններ, համեմատություններ և
այլն: Հոգվածն սկսված է, այսպես կոչված, «օրիեն-
տալիզմի» մասին ընդհանուր դատողություններով: Դա
այն ժամանակ խիստ բնական էր: Ով ծանոթ է 1900—
1910-ական թվականների կուլտուրային, կարող է
վկայել, որ Ծուսաստանում մեծ էր հետաքրքրությունը
հանդեպ Արևելքի հին արվեստը: Արևելքի տարբեր ժո-
ղովուրդների ստեղծած ոճական հատկանիշներն այս
կամ այն կերպ սկզբունքների ուժ էին ստացել հատ-
կապես երիտասարդ արվեստագետների, քննադատների,
բանաստեղծների, երաժիշտների համար: Էլ շեմ ասում
արևելյան թեմաների, սյուժեների, բանահյուսության
առատ օգտագործման մասին: Այդ օրիենտալիստական,
եթե կարելի է ասել, շարժմանը հող էր հանդիսանում
ոչ միայն Արևելքի, այլև ժամանակի եվրոպայի կուլտու-
րայի հետ եղած շփումը: Իսկ Եվրոպան Արևելքի ար-
վեստին սկսել էր ծանոթանալ դեռ XIX դարի կեսերից:

Եվրոպական և արևելյան մտածելակերպի, աշ-
խարհայացքների, հավատքների, եվրոպացու և արևել-
ցու մարդկային-հոգեբանական հատկանիշների և տար-
բերությունների մասին խիստ բանաստեղծական, սեն-
տիմենտալ, մեծ մասամբ ոչ գիտական դատողություն-
ներ անելով հանդերձ, Վոլոշինը մի բանում բացարձա-

կապես ճիշտ է: Դա այն է, որ, իրոք «օրիենտալիստ-ների» ճնշող մեծամասնությունը Արևելքին նայում էր օտարի աշքերով: Իսկապես, նրանք ինտելիգենտիկական դիրքերից էին մոտենում Արևելքին: Արևելյան ժողովուրդների կյանքին, կենցաղին, արվեստին նրանք չփվում էին գրքերի միջոցով, զուտ-էկզոտիկայի, զուտ-անսովորության, զուտ-խայտաբղետության տեսակետից: Արևելքի կյանքի, նրա արվեստի բուն էռոթյան խոր, պարզ, օրգանական զգացումը, ապրումը, դիտակցումը բացակայում էր:

Ենելով այդ իրադրությունից, Վոլոշինը ինձ օրիենտալիստ չի համարում: Եվ դա ճիշտ է: Հողվածում ասված այն միտքը, թե չնայած Մարյանը պատկերում է Արևելքը, բայց օրիենտալիստ չէ, թե նա Արևելքը դիտում է որդիական զգացումով, թե նրա արվեստում չկա օրիենտալիստներին հատուկ ճանապարհորդի հետաքրքրասիրությունը և կոլեկցիոների մոտեցումը, թե նա չի արսանկարում Արևելքի օրնամենտը և ազգագրական մանրամասնությունները՝ միանգամայն համապատասխանում է իրականությանը: Մանկության օրերից, ինչպես ասում են, մոր կաթի հետ ևս ներծծել եմ Արևելքը, հարավը, հայկականը և միշտ էլ ձգտել ամեն կերպ արտահայտել այն կտավի, թղթի վրա:

Հողվածում ճիշտ մտքեր կան նաև իմ տեխնիկայի մասին: Իբրև կարեոր հատկանիշ, նրա մոտ նշված է իմ գործերի լակոնիզմը, առարկաների պարզ, մանրություններից զերծ ներկայացումը, ձևերի հստակ, ժլատ միջոցներով մեկնաբանումը: Իսկապես, քիչ միջոցներով շատ բան ասելու տեհունցն արվեստի էական

կողմերից մեկն էր ինձ համար: Վոլոշինը հիմքեր ուներ ասելու, որ «որքան քիչ են բառերը, այնքանով ուժեղ է արտահայտությունը, որքան քիչ են գծերը, այնքան արտահայտիչ է գծանկարը. որքանով պարզ են գույների համադրումները, այնքանով նրանք ավելին կարող են ասել» կամ՝ «Չքեղությունն ու պարզությունը համարյա հոմանիշներ են...»:

Իրավացի է Վոլոշինը, երբ գտնում է, թե Սարյանի տեխնիկայում ուղղություն տվող թել է ինչպես գույնի, այնպես էլ գծի պարզեցումը: Եվրոպացին, գրում է նա, նույն բանն անելիս կընկներ պլակատայնության մեջ, իսկ Սարյանի արևելյան բնադրը թելադրել է, թե ինչպես կարելի է ոչնչացնել բոլոր գետալները և գույնով սիլուետի գիծը լրացնել:

Այդ ճիշտ դիտողությունների հետ մեկտեղ, Վոլոշինը այն միտքն է հայտնում, թե հիշյալ սկզբունքները հնարավոր է կիրառել միայն տեմպերայի միջոցով, իսկ յուղաներկերը, իբրև, զրա հնարավորությունը չեն տալիս: Խնդիրն այստեղ, հակառակ Վոլոշինի պատկերացման, նյութի մեջ չէ, այլ գրան տիրապետելու և սեփական կամքիդ ենթարկելու մեջ: Նույն սկզբունքները, ոչ պակաս հաջողությամբ, ես իրացրել եմ յուղաներկով, հետագայի բազմաթիվ գործերում: Ուղղակի բանն այն է, որ 1910-ական թվականներին ես սիրում էի ավելի շատ նկարել տեմպերայով:

Վոլոշինի հոգվածում ճիշտ է նկատված, որ իմ գունանկարչության մեջ վրձնի հարվածը միաժամանակ տալիս է և՛ գիծը, և՛ գույնը: Դա մի գեղարվեստական

Հատկանիշ է, որին ես հասել եմ երկար պրատումների ու մեծ ջանքերի գնով:

Դրա կողքին, Վոլոշինը ճիշտ չէ, երբ զրում է, թե ամենաավարտունը Սարյանի մոտ նատյուրմորտն է: Իրողությունն այն է, որ ես նույնարժեք գործեր եմ ստեղծել բոլոր ժանրերի ասպարեզներում:

Սակայն այդ և նման թերի կողմերը չեն նսեմացնում Վոլոշինի՝ կրքով, չերմությամբ, համոզմունքով ու հավատով գրված հոդվածի ընդհանուր արժեքը: Նորից եմ կրկնում, այդ հոդվածն իմ մասին մինչև այժմ տպված հետաքրքիր նյութերից է, եթե ոչ ամենահետաքրքիրը:

Այժմ, զարմանալիորեն, Վոլոշինի հոդվածի հրապարակումից այդքան տարիներ հետո, շատերը իմ գործերի և առհասարակ արվեստի մասին գրելիս ելնում են դեռ Վոլոշինի ժամանակ հնացած, պատմության գիրկն անցած էսթետիկական դիրքերից: Իսկ եթե, դրան գումարած, նկատի առնենք, որ Վոլոշինը մասնագիտությամբ կերպարվեստագետ չէր, ապա ամեն ինչ հասկանալի կդառնա: Եվ ապա, որ գլխավորն է, շեմ կարող մեծ հարգանքով շվերաբերվել այնպիսի մի մարդու գործի նկատմամբ, որը գիտեր այնքա՞ն նվիրվածությամբ սիրել արվեստը, այնքա՞ն անկեղծությամբ խոսել արվեստի մասին և այնքա՞ն դերձ լինել կանխակալ, ինչ-որ մի տեղից եկող հետադեմ պատկերացումներից:

133. 1914 թվականի ամռանը <...> անցկացրի Գողթանում <...>: Նկարում էի մեծ ոգևորությամբ՝ բնու-

թյունից սովորելով, թե ինչպես պետք է կառուցել պեյզաժը և գունավորել այն: Իսկ արևն իր ճառագայթներով այնպես էր լուսավորում, որ նույնիսկ ստվերի մեջ ընկըղմված առարկաները շողում էին: Դեմառդեմ կանգնած էի բնության հանդեպ, որն ինձ համար սիրելի է ինչպես հարազատ մայրս, ինչպես լավագույն ուսուցիչը:

Ժայռաքերծերի արանքներում ընկած փոքրիկ, կանաչապատ հարթություններում ծաղկում էին հերիաթային ծաղիկներ, որոնցից փնջեր էի կաղմում ու նկարում «Քալաքի ծաղիկները» շարքը:

134. Մոսկովյան հորիզոնում երևացին Բաքվի հարուստները, որոնց թվում և Մանթաշով եղբայրները: <...> Ե. Պ. Նոսովայի տանը, ուր հաճախ լինում էի մանրանկարների նրա հրաշալի հավաքածուն դիտելու համար, մի անգամ հանդիպեցի նաև Հ. Մանթաշովին: Նա ինձ առաջարկեց նկարել իր դիմանկարը: Բնորդը հետաքրքիր էր: Ես համաձայնեցի: Պայմանավորված օրը գնացի նրա մոտ աշխատանքն սկսելու (մի քանի սեանս էր պետք դիմանկարն ավարտելու համար): Բայց իմ բնորդը ճշտապահ չէր: Երբ ծառան ինձ տարավ ներս, նա գեռ քնած էր: Ծույլ ու անզործ՝ վերադարձել էր գիշերային այցելությունից, վերադարձել էր վաղ առավոտյան ու քուն մտել: Արթնացավ մեծ դժվարությամբ, ընկուտ դեմքով, հորանջեց ու ոտքի կանգնեց: Հազար իր խայտաբղետ խալաթը՝ ստանալով հնդկական մագարաշի տեսք: Օրեր շարունակ ինձ մտատանջող հարցը մի ակնթարթում պարզվեց՝ վճռեցի, որ հենց

այդ տեսքով էլ պետք է նկարել։ Համոզվեցի, որ խալաթն ավելի է սազում նրան, քան եվրոպական կոստյումը։ Այնքան ուժեղ էր տպավորությունը, կերպարն այնքան սուր մեխվեց գլխումս, որ ես կարող էի նկարել առանց նրա ներկայության։ Դա շատ լավ էր, մանավանդ հույս չունեի, թե նա համբերություն կտնենա մնալու բնորդի դերի մեջ։ Երբ վերջացրի աշխատանքը, Մանթաշովը հարցրեց։

— Լավ է՝ ստացվել դիմանկարը (ՀՀասկանալով արվեստից, ամենայն անկեղծությամբ վստահում էր ինձ)։

— Ոչի՞նչ, վաստ չէ։

Նա անմիջապես համաձայնեց։ Եվ որոշեց ինձ ավելին վճարել, քան մենք նախօրոք պայմանավորվել էինք։ Ես հրաժարվեցի կտրականապես։

135. 1916 թվականի ձմռանը <...> վերջին անգամ մասնակցեցի «Մир искусства»-ի ցուցահանդեսին։ Իմ ցուցադրած գործերից առանձնապես հետաքրքիր էր «Ալ. Շատուրյանի դիմանկարը»։ Այդ դիմանկարում ինձ հաջողվել էր տալ ոչ միայն բնորդի արտաքին սուր նմանությունը, այլև նրա մարդկային գեղեցիկ հոգին։ Շատուրյանի տիպիկ հայկական դիմագիծը, մաշկի դալուկ, թխավուն գույնը, լայն, սև հոնքերի տակ ընդգծվող խոր, մտածկոտ սև աշքերը, բարակ բեղերը ու կարճ կտրած մորուքը, լայն, մեծ ճակատը, որից սկիզբ էին առնում և ետ շարժվում սև գանգուրների ալիքները, պողան, նուրբ, պլաստիկ ձեռքը՝ բոլորն այնքան

պարզ էին արտացոլում կատարյալ արտիստ այդ մարդու ներքին էռթյունը:

Նա բանկում հաշվետար էր: Դա նրա եկամտի միակ աղբյուրն էր: Բանաստեղծը հաշվետար՝ հայ մտավորականի դառն ճակատագիրը ... Մոսկվայում հաճախ էի հանդիպում նրան և միշտ էլ Կուզնեցկի կամրջի հին սրճարանում («Տրամբլե»), իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայ գաղթականներին օգնող կոմիտեի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելիս: Այդ շփումներն ինձ հնարավորություն էին տվել մանրամասն հետազոտել նրա բնավորությունը, մարդկային հատկանիշները, պրտաքին դիմագծերը, և դիմանկարը հաջող ստացվեց:

136. Շատերը սիրում են ծովի հզոր տարերքը, նրա անսահման հայելին կամ փոթորկալից հուզումը: Բայց լեռնային ալիքների թոփչքը, երկնքի ֆոնին հպարտորեն բարձրացած լերկ ժայռերը աննկարագրելի թափ ու հզորություն ունեն իրենց մեջ և ավելի մոտեն ինձ: <...> Լեռնային բնության բազմազան զույներն ու ձեռքը, որոնց հերիաթային տեսք է տալիս ամենակարող լուսատուն՝ արևը, լցնում է սիրոս հավատով հանդեպ մայր բնությունը՝ նկարչի ամենամեծ ու անդավաճան բարեկամը...

137. Սիրում եմ՝ դեղին, մերկ հարթությունը, այստեղից ցարուցրիվ բուսած անապատային բույսերի գետնատարած օազիսները: Ավելի ևս հմայիլ է լինում տեսարանը, երբ տեղ-տեղ երեսում են թափառող ուղտեր կամ բարավաններ: Հենց նման պեյզաժի տպավորու-

թյան տակ նկարել եմ «Քարավան» պատկերը։ Շատ հաճախ, հիշողությամբ կատարած նկարը ավելի ճիշտ է, արտահայտում տիպականը, քան հենց բնօրինակից բարեխիղճ մշակածը։

138. Ես շատ եմ շրջագայել մեր երկրում, երկար ժամանակ աշխատել եմ լեռներում։ Լեռներում զգում ես, որ երկիրը հողի ունի, աշխարհը ընկալում ես որպես կենդանի էակ։ Հողը հազարամյակներ ի վեր կերակրել է իմ նախնիներին՝ հասարակ երկրագործներին։ Նրանք հողը լեռներն են տարել կաշվե պարկերով, զգալով դրա ծանրությունը։ Առանց դրա շատ լեռների լանջեր բերրի շեխն դառնա։

Հողի հետ այս ազգակցության զգացումը, նրա նկատմամբ աշխատանքային մերձության զգացումը պետք է տողորի նկարչի արվեստը։

Ինձ համար Հայաստանը բոլոր թեմաների թեման է։ Իրենց գեղեցկությամբ ցնցող, զարմանահրաշ բնապատկերներ կան ամենուրեք։ Բայց հայրենի հողը հատկապես ոգեշնչում է։ Եվ ինձ համար մեծ բերկրանք է կտավի վրա փոխադրել պատմական ազգային-յուրահատուկ մեծ մշակութի երկիր Հայաստանի հողը։

139. Ես սիրում եմ նկարել բնապատկերներ նատյուր-մորտեր, սիրում եմ նկարել Հայաստանը։ Նկարել բնականից։ Անմիջականորեն բնականից նկարելը ինձ մեծ գոհունակություն է պատճառում։ Նկարչին շրջապատող բնությունը, աշխարհը, միշտ ասես թե ավելացնում են նրա ստեղծագործական ուժը։ Նկարում ես և զգում, որ պետք է շտապել։ Ժամանակն արագ է թուշում, առար-

կաների ձիք մնում է նույնը, բայց գուներանգները փոխում են դրանց բնույթը, բարդացնելով և անասելի դժվարացնելով աշխատանքը։ Հաճախ ստիպված ես աշխատել խանձող արեի կամ տեղատարափ անձրեի տակ։ Քամին փոշու ամպեր է բարձրացնում և բնապատկերներդ ուղղակի «խլում ես» բնությունից։ Աշխատանքը առաջ է գնում ֆիզիկական ու ստեղծագործական մեծ լարվածությամբ։ Եվ դրա մեջ մի առանձին բերկրանք կա։

140. Բնությունը պատկերելիս ես հեռու եմ պատճենահանումից։ Ես ձգտում եմ բնանկարի կազմակերպման, մաքսիմում թարմության, գեղանկարչական տեխնիկայի պարզության։

141. Յուրաքանչյուր պորտրետ նկարելիս ես ցանկանում եմ հաղորդել տվյալ մարդու ոչ թե արտաքին նմանությունը, այլ, ամենից առաջ, ներքին կերպարը, ձգտում եմ ստիպել նրան մոռանալու, որ ինքը բնորդ է, զրուցում եմ հետը, մզում եմ իրեն մոտ ու հուզող թեմաների և միայն այն պահին, երբեմն շատ կարճատե, երբ նկատում եմ, որ մարդը լուսավորված է ստեղծագործական մտքով՝ շտապում հմ նկարել նրան։ Մնացած ամբողջ աշխատանքը ինձ համար ունի, արդեն, տեխնիկական բնույթ, և ես հոգ եմ տանում միայն, որպեսզի դիմանկարը ավարտելիս, մանրամասները մշակելիս շնորանա իմ որսած տպավորությունը։

142. Երբ մարդը նստում է նկարվելու <...>, դադարում է լինելուց այն, ինչ է։ Երկու պատճառով. նախ լարվում

է, որից էլ շուտ հոգնում է, ընդարմանում <...> և դեմքին իջնում է բթություն։ Արի...ու զտիր կենդանի մարդուն այնպես, ինչպես որ նա կա։ Կա մի ուրիշ պատճառ էլ. նկարվողը միշտ էլ ձգտում է լավ երկալ, դրա համար էլ հենց որ նստում է՝ հաճելի մարդու դիմակ է առնում վրան. դա բնազդաբար է լինում, անկախ նրա կամքից։ Ու եթե ես ուզում եմ այդ մարդուն նկարել, և ոչ թե այն դիմակը, որ նա այդ պահին քաշել է դեմքին, ապա պետք է ամեն բան անեմ, որ վերադարձնեմ մարդուն իր ճշմարիտ էությունը։ Եվ դրանից հետո միայն կարող եմ, և այն էլ ոչ միշտ, գոտնել, թե ինչն է նրա մեջ ինձ համար հետաքրքիր։ Դրա համար է, որ ես նկարվողին խոսեցնում եմ, ստիպում, որ բան պատմի, ծիծաղի, բարկանա, տիրի, ասի, խոսի, չեմ արգելում նույնիսկ շարժվել։ Որովհետեւ այդ ազատության մեջ է, որ նա կորցնում է իր, այսպես ասած, ինքնազգացողությունը, իրեն՝ միայն լավ կողմից ներկայացնելու պահանջը, և ես էլ ... անմիշապես բոնում եմ այն, ինչ հաճախ նկարվողը փորձում է կամքով թաքցնել ինձանից։ Մի խոսքով նկարչի աշքը պետք է ռենտգենյան ուժ ունենա, իր դիմացիններին տեսնի ներսից և կարողանա հետո գոտնել այն արտաքին դրսեռումները, որ ունենում է այդ ներսը մարդու գեմքին։

143. Ինձ հարկավոր է կենդանի, <...> հենց տվյալ մարդը։ Ես երբեք նրան չեմ պարտադրում որեէ պողա, որովհետեւ յուրաքանչյուր մարդ ունի իրեն հատուկ, բնորոշ պողան։ Որպեսզի բնորդին լիապես ազատեմ ամեն մի արհեստականությունից, ես անընդհատ խո-

սում եմ հետը և զրուցը տանում այն ընթացքով, որը
նրան ամենից ավելի է հետաքրքրում: Բնորդը՝ աշխառ-
ժանում է ներքին ստեղծագործական լարվածության
մեջ: Բնորդը ստանում է բովանդակություն և միայն ի-
րեն հատուկ խարակտերը: Այսպես, իմ աշխատելու
ժամանակ պրոֆ. Կ. Խումանովը և պրոֆ. Մ. Աբեղյանը
անընդհատ խոսում են հետաքրքիր նյութերից: Նշա-
նակում է ես նկարում եմ կենդանի, շարժվող, իր հե-
տաքրքրություններով տարված մարդուն: Եթե նա խո-
սում է, դեմքը շատ է ներշնչվում՝ բացահայտվում հն
նրան հատուկ հատկանիշները: Մարդուն շարժման մեջ
նկարելը շատ հետաքրքիր է: Այդպիսին է դիմանկար
ստեղծելու իմ փորձը: Ինձ թվում է, որ այդպես աշխա-
տելով մեզ մոտ շեն ստեղծվի գեղեցիկ ու տգեղ, հետա-
քրքիր ու անհետաքրքիր մարդիկ: Մարդը, որ ունի
բովանդակություն՝ հետաքրքիր է:

144. Մարդուն, որպես կանոն, ամենից վառ բնորո-
շում են նրա մաքի ընթացքը, զգացմունքների զար-
գացումը: Եվ նկարչի խնդիրն է՝ բռնել այդ ընթացքը,
ընկալել պատկերվող կյանքի էությունը: Այլապես, չէ՞
որ կորչում է <...> բուն կյանքը <...>: Ես միշտ աշ-
խատում եմ նկարում արտացոլել հերոսիս ներքին
կյանքը, նկարել այնպես, որ դիմանկարը միշտ լիցուն
լինի շարժումով:

145. Ես կարծում եմ, որ նկարիչը չպիտի բավականա-
նա իրերի արտաքին տեսքով, այլ պիտի զանա թա-
փանցել նրանց էությունը: Ես ձգտում եմ բնութագծել
իրերը, գտնել նրանց միջև եղած կապը, տալ նրանց

կյանք և ապա՝ պատկերել այդ համապատասխան ձևերի և գուների միջոցով:

146. Կյանքում շտեսա այդ «մուսային»: Ստեղծագործական ոգևորությունը աշխատանքի պրոցեսում է առաջանում ճիշտ այնպես, ինչպես և հուսահատությունը: Չգիտեմ, գուցե իսկապե՞ս «մուսա» ունեցող մարդիկ կան...

147. Աշխատանքն ինքն է հափշտակում, բացում է դուները, և դուք մտնում եք այդ դռներից... Իսկ հետո, երբ դադարում է այդ, դուք դառնում եք սովորական մարդ:

148. Այսպես կոչված գրական սյուժեն ես չեմ ընդունում գեղանկարչության մեջ: Գեղանկարչությամբ սյուժե պատմելլ «լիտերատուրինա» է: Ինձ թվում է, թե այդպիսի սյուժեն խանգարում է նկարի ընկալմանը: Երբ ես սյուժետային, ինչպես ասում են, թեմատիկակոմպոզիցիոն կտավ եմ նայում, աշխատում եմ չնկատել նրանում եղած պատմվածքը, գրականությունը: Ուրիշները սիրում են սյուժեներ հաղորդել նկարներով: Ես միշտ էլ գիտակցաբար խուսափել եմ դրանից: Ճիշտ եմ համարում տեսարանի պարզ, անմիջական ներկայացումը:

149. Հաճախ ինձ հարցնում են՝ ինչի՞ց է սկսվում նկարի վրա աշխատելու բուն պրոցեսը: Ինձ համար միշտ դժվար է թեմայի ընտրությունը: Հաճախ պատահում է, որ ինքս էլ չեմ կարողանում բացատրել, թե ինչու նկարում եմ հենց այս, և ոչ թե մի ուրիշ բան: Բայց միշտ կարեոր է, որպեսզի թեման մոտ լինի քո ստեղ-

ծագործական անհատականությանը, որպեսզի այն
Հենց հիմա քեզ հուզի: Ես չեմ սիրում, այսպես ասած,
գրական թեմաներ: Իջարկե, ես չեմ ժխտում դրանք
<...>: Բայց իմ սրտին մոտ է ոչ թե նկարչության մեջ
գրական հիմքը, այլ աշխարհի գեղանկարչական ար-
տացոլումը:

150. Ավելի շատ մտածում եմ ապագայի, քան անցյալի
մասին: Ուզում եմ ապրել մինչև հարյուր տարեկանը և
ինչպես հարկն է աշխատել: Ինձ համար, իջարկե, հա-
ճելի է լավ խոսքեր լսել իմ աշխատանքի, անցյալի
մասին, եթե դրանք ինձ շոյելու նպատակով չեն աս-
վում: Բայց ինձ ավելի հուզում է շարվածը՝ ապագան:
Ստեղծագործությունը ոչ թե փառքի ետևից ընկնելն է,
այլ իրերի ու երեսյթների էությունը, մարդու էու-
թյունը հասկանալու անհաղթահարելի ձգտումը: Նկար-
չի մեջ պետք է լինի ինչ-որ անհողողողություն, որն
ազդեցության շի ենթարկվում, անկախ նրանից, գո-
վում, թե հայնոյում են: Ես կասեի՝ ստեղծագործու-
թյունն աշխարհի նկատմամբ հայացքի սենունու-
թյունն է:

* *

*

151. Ապշեցուցիչ նմանություն կա ոռւսական հերիաթ-
ների և փայտյա ճարտարապետության հուշարձանների
միջև: Երկուսն էլ արտաքին տպավորությամբ նույն-
քան գողտրիկ ու ոճավոր են, որքան և ներքուստ առ-
նական: Փայտյա փոքրաշափ կառուցվածքի ձեւերի մեջ
նույնքան առկա է ոռւս մարդու հոգու լայնությունը,
որքան՝ հերիաթների ֆանտաստիկ աշխարհում:

152. Կարծում եմ սխալված շեմ լինի ասելով, որ մեր դարի ոռւսական մշակութի ներկայացուցիչներից թեղեւ ոչ մեկի ստեղծագործության մեջ ազգային բիլինաների ոգին այնքան բնականությամբ ու ամբողջականորեն, այնպես պարզ ու խոր չի դրսեորվել, որքան և ինչպես Շալյապինի արվեստում։ Դյուցազնական ուժ ու հմայք ուներ այդ իսկական, ցեղային ակունքով և էությամբ, ստեղծագործական խառնվածքով և մտածելակերպով ոռւս մարդը։ Շալյապինը անզուզական երգիշ ու դերասան էր՝ սա ճիշտ է։ Բայց նրան կատարող համարել, թեկուզ և եղակի, չի կարելի։ Շալյապինի կատարումով ներկայացվող նյութը, ինչպիսին էլ որ լիներ, ինչ բնույթ ու որակ էլ որ ունենար, անբացատրելի կախարդանքով վերափոխվում ու բարձրանում էր անհասանելի մակարդակի և ստանում էր մի բացարձակ արժեք, որը զուտ շալյապինյան էր։ Ամենմի սյուժե, մոտիվ և մեղեղի նրա համար առաջին հերթին իր մեծ անհատականությունը բացահայտելու առիթ էր։ Ֆյոդոր Իվանովիշը հանճարեղ ստեղծագործող ու մեկնաբան էր։

153. Մինչև հիմա էլ ականջներիս մեջ է Ռախմանինովի նվազը։ Երկորդ այնպիսի գաշնակահարի շեմ լսել։ Նրա մատների տակ վերստեղծվում էր ժամանակի զգացողությունը, բայց ոչ սովորական, այլ կախարդական լապտերով լուսավորված և կարծես շոշափելի։

154. Անդրեյ Բելին՝ այդ զտարյուն ոռւս մարդը, ըսկըբունքային մտավորականն ու ազնվագույն ընկերը, օժտված էր արտասովոր անհատներին հատուկ մի շարք գծերով, որոնք նրա մոտ դրսեորվում էին ազգա-

յին յուրահատկությամբ, հմայքով ու գեղեցկությամբ: Դրանցից հատկապես ցայտուն էր իր ներաշխարհի թարուն խորքերից եկող ու խորհրդավոր բնազդներին տրվելը և արտաքին աշխարհի հետ ներքնատեսորեն շփվելու բացառիկ ինտուիցիան: Եվ քանի որ բնականից օժտված էր նաև դատելու մեծ տաղանդով և յուրացրել էր մարդկային մտքի՝ բարձրագույն նվաճումները, ուստի և կարողանում էր շոշափելի տեսքի բերել ու սիստեմի վերածել հոգու խորհրդավոր պրոցեսը:

Ահա այդ ունակությունների շնորհիվ էր, որ Անդրեյ Բելին հեշտությամբ, առանց տենդագին ճիգեր անելու կարողանում էր թափանցել գեղարվեստական ստեղծագործության խորքերը և վեր հանել ու քննել նրա գաղտնի ծալքերում շարժվող հոգերը կյանքը: Արվեստի հենց արվեստային արժեքը, արվեստը որպես այդպիսին, իր սպեցիֆիկ կառուցվածքով ու մթնոլորտով, իր մաքուր բնությամբ ու բովանդակությամբ՝ այս բարդ ու հրաշքով պարուրված շերտերն են ահա, որ քննվում են առանձին ստեղծագործողների նվիրված նրա սքանչելի էսսեներում, նրա սիմվոլների չուրատիպ տեսությունը ընդգրկող աշխատություններում, որոնցում եվրոպականի հետ միասին երեսում է Արևելքի հնամենի մշակույթի փայլուն իմացությունը: Հուսով եմ, որ էսթետիկայով, գրականագիտությամբ ու արվեստագիտությամբ զբաղվող մեր երիտասարդությունը կուտաժնասիրի և կշարունակի նրա գործը:

Ափսոս, որ ժամանակին չեմ նկարել այդ զմայլելի մարդուն: Ախր անընդհատ զլիսումս էր նրան նկարելու

միտքը: Բայց մահը վրա հասավ անժամանակ, անսպասելի...

155. Թատրոն-ֆանտազիա, ձեռի անընդհատ փոխակերպում և ռեալ իրերի ու վիճակների մեջ ենթիմաստ դանելու գոտում՝ ահա մի հատկանիշ, որով աշքի էր ընկնում Մեյերխոլդ ռեժիսորը, մեծ արվեստագետը:

156. Զիգա Վերտովը իսկական նորարար էր: Նրա ըստեղծած ժապավենները (ո՛չ վերջին շրջանի) դիտելուց հետո ուրիշ ֆիլմ նայելիս իրոք կասեիր, թե կինոն շարժվող լուսանկարչություն է՝ իլլուստրատիվ և էությամբ ոչ ինքնուրույն: Բայց Վերտովը էկրանի վրա անում էր այն, ինչ կարող է անել միայն կինոն: Նա բացարձակապես տեսողական էր և տեսողական էր կինոլեզվով: Զարմանալի էր սովորական երևույթների տարրալուծումը, քայլայումը և այդ պրոցեսի միջից նոր, կերպարանափոխված, արդեն սիմվոլների վերածված երևույթների ծննդյան ու շարժման Վերտովի ըմբռանումը:

157. Արկադի Ռայկինը շատ լավ է հասկացել դիմակի լեզուն: Բայց ոչ թե քարացած, այլ շարժուն դիմակի: Նրա ամեն մի դիմակ հարատև փոփոխվում է՝ բացահայտելով նորանոր երանգներ: Ուղղակի ցնցող են նրա ստեղծած կերպարների խոտացված ընդհանրացումը, աննշան թեմայով՝ արտահայտվող մտքերի մասշտաբները և խորությունը: Նրա մեջ խոսում է մի հին, հազարամյակներից եկող ռաբբի:

158. Առաջին հայացքից եզիպտական քանդակի անատոմիական համաշխատագությունների, շարժման, նստելու կամ կանգնելու ձեր, դեմքի արտահայտության, մոմենտի ներկայացման եղանակը կարող է թվալ շատ պարզունակ, բռնազրութիկ կամ պրիմիտիվ: Բայց դա միայն այն դեպքում, եթե դիտողը <...> մակերևսալին, զուտ հայեցական մոտեցում է ցուցաբերում: Բավական է, որ խորանաս նրա մեջ և քո առջև բացվում է փիլիսոփայական, հոգեբանական, ոճական ու կատարողական մի ճշմարիտ աշխարհ: Եթե, իհարկե, ճշտությունը արվեստային ճշմարտությունն է և ոչ թե կեղծիքը, խորությունն է և ոչ թե արտաքինի սոսկ նկարագրությունը, ոճի առկայությունն է և ոչ թե սցուժեանների սպեկուլացիան <...>

Դա ճշմարտություն է պայմանականության մեջ և պայմանականություն՝ ճշմարտության մեջ:

159. Դուքս գալով Բուլակի թանգարանից, փողոցում կարելի էր աեսնել այն մարդկանց, որոնք կարծես եղել են թանգարանի էքսպոզիցիայի քանդակները: Նրանք խիստ տարբերվում էին արաբներից: Ունեին ճիշտ նույն տիպը, արտահայտությունը, ժեստը, քայլվածքի ուղիղ ձեր, բարձր ուսերը՝ ինչ քանդակները: Դա մի տեսակ և՛ դարմանալի էր, և՛ սարսող: Հաղարամյակներից գալիս էին նրանք՝ պատմության հրապարակից ջնջված, նախկինում հզոր պետականություն ունեցող ժողովրդի հատուկենություն մնացած զավակները, իրենց նախնիների ստեղծած հուշարձանների հետ միասին:

160. Եգիպտացու համար այս աշխարհի կյանքը <...> եղել է անդրշիրիմյան կյանքի նախերգանքը, որի շարունակությունն իբր լինելու է անսահման հարատեղող, գեղեցիկ ապագան։ Այդ աշխարհայացքը եգիպտական արվեստում մտցրել է կյանքի հարատեղության, կյանքի անսահման սիրով և մահվան դեմ մարդու ըմբռստության արտահայտությունը։ Զարմանալի է, որ ամբողջ կյանքում այս աշխարհից հեռանալու՝ փաստորեն մեռնելու, մասին մտածող մարդը՝ յուրովի հաղթանակ է տանում մահվան դեմ՝ իր երևակայության սլացքի և գեղեցիկ իդեալի մեջ։ Մահվան պարագայում կյանքը հարատեղարձնելու այդ հայացքը բխում է, անկասկած, այս կյանքի քաղցրությունից և վերածվում կրոնի։ <...> Արգեստի մեջ միշտ էլ արտացոլվում են առհասարակ ժողովրդական գեղեցիկ, հուսատու, հավերժական իդեալներ ու պատկերացումներ։

161. Ժպիտը, որ խաղում է եգիպտական քանդակներից շատերի դեմքին, հուսատու մի խարիսխ է բոլոր այն օտարականների համար, ովքեր ծանր պայմաններում ճամփորդում են այդ երկրում։ Դա հրճվալի ու կյանքում անվերջ ապրելու մոտիվն է՝ մաքուր և անսահմանորեն չերմ։ Մոնումենտալության, տոնական հզորության հետ միաժամանակ եգիպտական արվեստն ունի, ահա, և այսպիսի նրբագեղ մի ժպիտ, մի քնքուշ լիրիկա։

162. Սֆինքսը մարդկության կողմից երբեք ստեղծված ամենահանճարեղ կոթողներից է։ Անսովոր-միստիկական բովանդակությունը, խիստ ճշմարիտ երկրաշափական ձևերը և հսկայական չափը նրան տալիս են յուրա-

Հատուկ վեհություն։ Դժվար է պատկերացնել, թե ինչպես և ինչու է ծնվել այդ խորհրդավոր արարածը։ <...> Հո շե՞ս կարող լիովին քեզ դնել այն եգիպտացու տեղը, որն ապրել է սֆինքսի կերտման ժամանակ կամ հենց ինքն է եղել հանճարեղ կերտողը։ Մի բան հաստատ է։ Այդ ահռելի էակը կա երկրագնդի վրա և անթարթ հայացքով նայում է դեպի արևելք, դեպի ծագող արել...

* * *

*

163. Եթե արվեստը իրականության արտացոլումն է և, միաժամանակ, պայմանական երևույթ ու ստեղծագործողի սուբյեկտի արտահայտություն՝ ճապոնացիների հետ քշերը կարող են համեմատվել։ Ուտամաբոն, Տոյոկունին, Հիրոսիգեն, Հոկուսային նույնքան հանձարեղ են, որքան Ֆիդիասը, Իոսլինը, Մակաչիոն, Ռեմբրանդտը։

* * *

*

164. [Իտալիայում] անթիվ նկարներ և քանդակներ դիտելուց հետո դուք հարցնում եք ձեզ՝ սրանց ի՞նչն է այդպես կախարդիլ։ Իհարկե ո՞չ թեման, ո՞չ սյուժեն <...> և նույնիսկ ո՞չ գեղեցիկ կատարումը, ո՞չ ապշեցուցիլ կոմպոզիցիան, ո՞չ սքանչելի նկարվածքը՝ մի խոսքով ոչ այն ամենը, որ անհրաժեշտ է արվեստի ստեղծման համար, այլ մի ինչ-որ խիստ էական ու հիմնական բան։ Ինձ թվում է, որ դա այդ գործերի մեջ թաքնված խորունկ մարդկայնությունն է։

165. Ինձ թվում է, թի իր հերոսի կերպարը Սերվանտեսը ստեղծել է Քրիստոսի կերպարի ներշնչումով:

166. Ինչպիսին էլ որ լինեն Պիկասոյի անվան և ստեղծագործության շուրջ ժավալված կեսդարյա վեճերը, միևնույն է, նա մեր սերնդի խոշորագույն անհատներից, մեր դարաշրջանի ամենախտացած մարդկային երևությներից է:

Անմիջապես միսրճվելով հակասություններով զի մեր էպոխայի հասարակական, պատմական, փիլիսոփայական զանազան տենդենցիների, էսթետիկական ուղղությունների և նկարչական հոսանքների լարված պայքարի ոլորտը, Պիկասոն շատ շուտով հանդես եկավ իբրև արտասովոր տեսողությամբ օժտված ստեղծագործող: Նա երբեք կանգ շառավ մի կետում՝ անընդհատ վերագտնում, վերահայտնագործում է իրեն ու աշխարհը, անընդհատ ձգտում է ...

Եվ մարդկությունը խորին հետաքրքրությամբ հետևում է Պիկասոյի որոնումների ու հաղթանակների զարգացման ընթացքին, որը լի է անհանգստությամբ, տագնապով և հավատով: Նրա կյանքի, նրա ջանքերի, նրա մտքերի ու ապրումների պտուղը ալեկոծ բախումներով, մեծ հումանիզմով և քաղաքացիական վեհ իդեալներով ներծծված բաղմաթիվ երկերն են: Դրանք ժլատ միջոցներով շատ բան արտահայտող, վիրտուոզության իսկական փայլով շողացող երկեր են ...

167. Ոմանք հիանում են Պիկասոյի արվեստով՝ առանց

Հասկանալու նրան, կարծելով, թե այս մեծ արվեստագետի ուղին սկսվում է Պիկասոյով և վերջանում է Պիկասոյով կամ, ժայրահեղ դեպքում, նրան նմանվող նկարիչների նեղ արահետով: Եթե այդ այդպես լիներ, ապա Պիկասոն երբեք չէր դառնա ոչ մեծ, ո՛չ էլ ճանաշված նկարիչ: Բայց նա ճանաշված նկարիչ է և ճանաշված է հենց այն պատճառով, որ նրա ուղին սկիզբ է առնում դարերի խորքից և դարերի միջով հասնում է մեզ: Այդ ճանապարհը ձգվում է դեպի արդիականություն, ուստի պատկանում է ոչ միայն տպրած ու վերապրած, այլև գալիք պատմությանը:

* * *

*

168. Համաշխարհային մշակույթի պատմության մեջ գերմանական ժողովրդի կատարած դերի մասին խոսելիս շգփտես ինչու ավելի շուտ և ավելի շատ հիշում են նրա ստեղծած փիլիսոփայությունը, երաժշտությունը և պոեզիան, մոռանալով կամ էլ թռուցիկ նշելով կերպարվեստն ու ճարտարապետությունը: Այնինչ, Հոլբայնը, Դյուրերը և այլ նկարիչներ, դոթական շրջանի գերմանական ճարտարապետության մի շարք հուշարձանների անանուն հեղինակներ ոչնչով չեն զիշում ո՛չ Մոցարտին ու Բեթովենին, ո՛չ Կանտին ու Հեգելին, ո՛չ էլ Գյոթեին ու Հայնեին: Նրանք նույնքան ուացինալ ու խոհական, նույնքան մաքուր ու կատարյալ, նույնքան քնքուշ ու էմոցիոնալ են, որքան մյուս ասպարեզների մեծ ու հանճարեղ ներկայացուցիչները:

169. Գիտության և կուլտուրայի բոլոր ասպարեզներում, ինչպես նաև նկարչության մեջ, ֆրանսիական ժողովուրդը տվել է հանճարների՝ պատմության հավերժական ուղեկիցների, մի մեծ բանակ, որն արտահայտել է ժողովորդի պայքարը հանուն ազատության և ստեղծագործության։ Միանգամայն ձիշտ է վարվել Ֆրանսիան, որ կուլրի կախարդական դաշլիճներում, համաշխարհային արվեստի փառահեղ գործերի հետ միասին, ներկայացրել է իր խորապես ազգային ու բուրումնալից նկարչության լավագույն նմուշները։ <...> արժե շփվել ֆրանսիական արվեստին, սովորել նրա հրաշալի գեղանկարչությունից և ցուցադրվել Փարիզում։ Դա քննություն հանձնելու նման մի բան է։

170. Իմպրեսիոնիստներն իրենց ժամանակին հայցովել և մինչեւ այժմ հայցոյվում են տգետ մարդկանցից։ Բայց իմպրեսիոնիստներն իրենց առջև ժամանակին դրել են արվեստի զարգացմամբ թելադրված խնդիրներ՝ աշխատելով ստեղծել նոր մի հետաքրքրություն, որ բավարարի ժամանակի պահանջներին։ Իմպրեսիոնիստներն իսկական արվեստագետներ էին, ինչպես նախորդ դարաշրջանների բոլոր մեծ արվեստագետները, որոնք աշխատել են որպես նորարարներ և մինչև այժմ էլ հիացնում ու պետք է հիացնեն մարդկանց։ Իմպրեսիոնիստները ելնում էին մի շատ հասարակ բանից, արեւային լուսի և առարկաների վրա ունեցած նրանց ազդեցությունից։ Նրանցից առաջ արվեստա-

գետները նկարում էին արվեստանոցի պայմանական
լուսավորության միջավայրում, շադանակագույն և
ստվերային գույներով։ Այդ եղանակով նրանք ստեղծել
են զլուխգործոցներ։ Իմպրեսիոնիստները ևս ստեղծեցին
իրենց զլուխգործոցները, բայց մի այլ ճանապարհով։
Արևային լուսը նրանք դիտեցին իբրև հրձվանքի ու
մարդու գեղեցիկ զգացումների արտահայտման մի
չնարավոր միջոց։ Այդ հայտնագործությամբ համաշ-
խարհային արվեստը մի մեծ քայլ կատարեց դեպի
առաջ։ Երևան եկավ նկարի մեջ բացօթյա պայման-
ների լույսը և բազմազան, պայծառ, լուսառատ գույնը։
Իմպրեսիոնիստներն իսկական գեղանկարիչներ էին և
հիանալի օգտագործում էին գույնը՝ շխախտելով հենց
իր՝ գեղանկարչականի սպեցիֆիկան։ Նրանք մեծ ճա-
շակով, որը առհասարակ հատուկ է ֆրանսիական
նկարիչներին, ստեղծեցին հիանալի գործեր։ Իմպրե-
սիոնիզմը տիպիկ ֆրանսիական արվեստ է, որ աճել է
ազգային հողի վրա։ Այդ պատճառով էլ, երբ իմպրե-
սիոնիզմը բազմաթիվ նկարիչների կողմից մեխանիկո-
րեն փոխադրվեց այլ երկրներ, վերածվեց մեռյալ փաս-
տի։ Բայց իմպրեսիոնիզմը նպաստեց համաշխարհա-
յին արվեստի զարգացմանը, խելամիտ նկարիչներին
օգնեց տեսնելու իրենց բնովթյունը, իրենց երկրի կուլ-
տուրայի և ազգային տրադիցիաների արդիական գր-
ծերը, օգնեց ստեղծելու իրենց իմպրեսիոնիզմը։

171. Ոենուար, այս նկարիչ։ Իսկական վարպետ է
<...>։ Տիպիկ ֆրանսիական նկարիչ է։ Ֆրանսիացի
նկարիչներից ամենաֆրանսիացին է նա։ Իսկ ազգայի-
նը արվեստի հիմքն է։ Զկա ազգայինից դուրս արվեստ,
264

և եթե կա էլ՝ գատապարտված է անճաշակներին հիացնելու և խիստ կարճատե կյանքի:

172. Ծենուարը իրոք մհծագույն գեղանկարիչ է: Ասել, թե Տիցիանը, որ իսկապես հանճարեղ է, Ծենուարից ավելի լավ է մշակել պատկերի գունային մակերեսը և ավելի հարուստ որակներ է ստացել՝ ճիշտ չի լինի: Ասածս կարող է տարօրինակ թվալ: Բայց կզա ապագայի այն օրը, թող լինի շատ հեռավոր, երբ մարդկանց համար Տիցիանը և Ծենուարը կլինեն ժամանակակիցներ ու, հավատացած եմ, կդիտվեն որպես հավասար գեղանկարիչներ: Նույնը, ի միջի այլոց, կարելի է ասել նաև Մոնեի, Դեգայի, Գոդենի ու Վան-Գոգի մասին՝ անցյալի ուղածդ նկարչի հետ համեմատելիս: Պետք է սիրել, եթե կուզեք՝ պաշտել անցյալի մհծ նկարիչներին: Նրանք արժանի են դրան: Բայց այդ պաշտամունքը չպետք է կուրացնի այնպիս, որ մենք չկարողանանք տեսնել արդի կամ մեզ ավելի մոտ ժամանակների հանճարեղ արվեստագետների ստեղծագործությունների իսկական որակը: Տրադիցիան մեծ ուժ է, ճիշտ է, բայց պետք է հաղթահարել այն և երեսութները գնահատել իրենց բուն արժեքով՝ անկախ ժամանակից, ոճի, ժանրի ու տեխնիկայի տարբերություններից:

173. Պոլ Գոդենը նկարել է բավական շատ, սակայն թողել է ընդամենը մի քանի գլուխգործոց (և, վերջիվերջո, ո՞վ մի քանիսը չի թողել): Բայց դրանք գործեր են, որոնք համարժեք են եզիպտական որմնանկարիշների, պարսկական մանրանկարիշների, Զիոնտուոյի և

նոր ժամանակների մյուս մեծ նկարիչների թողած լավագույն գործերին: Դրանք այն գործերն են, որոնք ստեղծելիս Գոգենը շի մտածել, որ ինքը նորարար է, «մոռացել» է իր էսթետիկական ծրագրերը և «տարերայնորեն» տրվել է նկարելու իր ներքին պահանջին: Եվ հենց դրանք են այն գործերը, որոնք ավելի ամբողջական են արտահայտում Գոգեն-նորարարի ոճը, կառուցվածքով ավելի մտածված ու տրամաբանված են, գույնով ավելի մշակված ու կատարյալ: Իսկ այն, որ ամբողջ էությամբ արվեստին նվիրված այդ մարդը անտեսել է բոլոր հայտնի ուղիները, տուրք շի տվել իր ներքին մղումներին խորթ ճաշակների պահանջներից և ոչ մեկին, ընթացել է բոլորովին ինքնուրույն ճանապարհով և նոր հորիզոններ բացել գեղանկարչության համար՝ ցույց են տալիս ոչ միայն իր գործերը, երբ համեմատում ենք նրա շրջապատում ստեղծված նկարչության հետ, այլև մեր դարի համաշխարհային կերպարվեստի մի քանի ուղղությունները, որոնց ձեւավորման վրա ակնառու է Գոգենի բարերար ազդեցությունը:

174. Մարդուն ծնում է իր ժամանակը: Դա ճիշտ է, ուրիշ կերպ շի լինում: Բայց ծնվում են մարդիկ, իհարկե շատ հաղվագեպ, որոնք շատ ավելի մեծ են, քան իրենց ժամանակը և առհասարակ ժամանակները: Այդպիսին է Ռեմբրանդտը:

175. Վան-Գոգը իսկական հոլանդական նկարիչ է, որ յուրացրել է նաև իր ժամանակի ֆրանսիական առաջադիմական նկարչության մի շարք լավագույն կողմերը: Հոլանդական երեք մեծագույն արվեստագետներից մեկն է՝ Ռեմբրանդտ, Վերմեեր, Վան-Գոգ: Եվ

լավ է, որ գոնե մահից հետո ամբողջ աշխարհը սիրում
ու գնահատում է նրան: Ես համոզված եմ, որ անկախ
այն բանից, թե ինչպիսի ընթացք կունենա արվեստի
դարգացումը՝ գալիք գարերը նույնպես իրենց հարա-
դատ նոր արժեքներ կհայտնաբերեն այդ իրոք զարմա-
նալի մարդու գործերում: Վան-Գոգի կտավները դիտելիս
թվում է, թե նա ապրել ու ստեղծագործել է արվեստի
պատմության բոլոր դարաշրջաններում՝ բուշմեններից
սկսած մինչև այսօր: Իհարկե, ինքը մտածված կերպով
շի դիմել իրենից առաջ հազարամյակների ընթացքում
ստեղծված մշակույթի բոլոր ավանդներին (մենք գի-
տենք, թե կոնկրետ ինչ ավանդներից է սնվել): Պար-
զապես բնությունն է նրան ստեղծել այդպիսին: Վան-
Գոգը էությամբ արվեստն է՝ իր ամբողջության մեջ:

Անսահման սերը հանդեպ բնությունը, կյանքը,
մարդը, ազատությունը, ճշմարտության և արդարության
համառ որոնումը, մարդու ֆիզիկական ու հոգեկան
անսպառ էներգիան, կիրքը, ցավը, տառապանքը, հըրձ-
վանքը և ուրախությունը բացարձակապես ինքնատիպ
արտահայտչամիջոցներով մարմնավորելու եզակի կա-
րողությունը Վան-Գոգին տեղ են տալիս բոլոր ժողո-
վուրդների արվեստի տիտանների կողքին:

176. Մարդ պետք է իր գործը սիրի, իր ամբողջ կյանքը
նվիրի այդ գործին, <...> թե չէ ոչ մի բան շի ստաց-
վի: Այ, Վան-Գոգը. ի՞նչ մեծ նկարիչ է, իր ամբողջ
կյանքը նվիրել է նկարչությանը, ինչպես կարող եմ
ես նրան շտիրել: Չի՞ հնարել, չի՞ կեղծել, չի՞ ուզել
դուր գալ: Ամբողջովին նվիրվել է արվեստին:

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
2. Մ. Սարյանի արխիվ (նկարչի որդու՝ Պ. Սարյանի սեփականություն): Այսուհետև՝ նկարչի անտիպ ձեռագրերից:
3. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, Երևան, 1966, էջ 8:
4. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
5. Մ. Նարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 8:
6. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 13:
7. Նկարչի անտիպ ձեռագրերից:
8. Նկարչի անտիպ ձեռագրերից:
9. Ա. Պլուտնիկի գրառումներից (Ա. Պլուտնիկ, Մարտiros Սարյան. Մое счастье-жизнь, „Неделя“, 1967, № 48).
10. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 150:
11. Մ. Սարյան, Գեպքեր, գեմքեր, մտորումներ, «Հայրենիքի ձայն», 1966, 24 հունիսի:
12. Նկարչի անտիպ ձեռագրերից:
13. Նկարչի անտիպ ձեռագրերից:
14. Ալ. Գրիգորյանի գրառումներից (Ալ. Գրիգորյան, Վարպետը՝ «Գրական լեռթ», 1973, 6 մայիսի):
15. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 7:
16. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
17. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 75:
18. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 150:
19. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 150:
20. Մ. Սարյան, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.

21. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 11—12:
22. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 10:
23. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
24. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
25. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
26. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
27. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 95:
28. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 11:
29. M. Сарьян, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.
30. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 83:
31. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
32. Շ. Խաչատրյանի գրառումներից (Շ. Խաչատրյան, Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ, Երևան, 1970, էջ 37—38):
33. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 10:
34. Մ. Սարյան, Գրառումներ, իմ կյանքից, էջ 9—10:
35. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
36. Նկարչի անտիպ ձեռագրերից:
37. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 6:
38. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 151—152:
39. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 83:
40. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 151:
41. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
42. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 9:
43. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 6—7:
44. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 7:
45. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 149:
46. Նկարչի անտիպ ձեռագրերից:
47. Մ. Սարյան, Երևանում կառուցվելիք ժողովրդական տան խընդուները, «Խորհրդային Հայաստան», 1926, 6 մայիսի:
48. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
49. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 75:
50. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 150:
51. Նկարչի անտիպ ձեռագրերից:

52. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 149:
53. Եկարչի անտիպ ձեռագրերից:
54. Եկարչի անտիպ ձեռագրերից:
55. Մ. Սարյան, Задачи современного строительства, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 2:
56. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
57. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 7:
58. Մ. Սարյան, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.
59. Եկարչի անտիպ ձեռագրերից:
60. Վ. Մաթեվոսյանի անտիպ ձեռագրերից:
61. Մ. Սարյան, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.
62. Թաուլ-Փան Մուկենի գրառումներից (Թաուլ-Փան Մուկեն, Սարյանի արխիվը, «Գրական թերթ», 1973, 6 մայիսի):
63. Մ. Սարյան, Искусство не стареет, «Литературная газета», 1962, 16 июня.
64. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
65. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
66. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
67. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
68. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
69. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
70. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
71. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.
72. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
73. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 9:
74. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
75. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108..
76. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 94—95:
77. Եկարչի անտիպ ձեռագրերից:
78. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 49:

79. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 80. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 68:
 81. Նկարչի անտիպ ձեռագրերից:
 82. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 82—83:
 83. Նկարչի անտիպ ձեռագրերից:
 84. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 85. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 10:
 86. Նկարչի անտիպ ձեռագրերից:
 87. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 11:
 88. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 11:
 89. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 88:
 90. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 159—160:
 91. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 92. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 59:
 93. Մ. Սարյան, Задачи современного строительства, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 2:
 94. Մ. Սարյան, Երևանում կառուցվելիք ժողովրդական տան խընդիրները, «Խորհրդային Հայաստան», 1926, 6 մարտի:
 95. Նկարչի անտիպ ձեռագրերից:
 96. Մ. Սարյան, Задачи современного строительства, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 2:
 97. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 98. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 99. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 100. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 101. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 10:
 102. Նկարչի անտիպ ձեռագրերից:
 103. Մ. Սարյան, Դեպքեր, դեմքեր, մտորումներ, «Սովետական արվեստ», 1967, № 3:
 104. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 143:
 105. «Վ. Համբարձումյանի ծննդյան 60-ամյակի առթիվ նկարչի խոսքը», «Սովետական Հայաստան», 1968, 18 սեպտեմբերի:
 106. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 107. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 52—56:

108. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 189—192:
109. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
110. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
111. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
112. Մ. Սարյան, Զարենցի Հետ, «Սովետական արվեստ», 1967,
№ 9—10:
113. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
114. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
115. Նկարչի անտիպ ձեռագրերից:
116. Մ. Սարյան, Դեպքեր, դեմքեր, մտորումներ, «Հայրենիքի
ձայն», 1966, 3 հուլիսի:
117. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 10:
118. M. Сарьян, Автобиографические сведения (Выставка про-
изведенений народного художника Армении—орденоносца
М. С. Сарьяна, М., 1936).
119. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 72—73, 68—69:
120. O. Կուշկինայի գրառումներից (O. Кучкина, Искусство пони-
мать искусство, „Комсомольская правда“, 1968, 10 февраля),
121. Ջ. Սպրովիյերիի գրառումներից (Մ. Սարյան, Գրառումներ
իմ կյանքից, էջ 180):
122. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 94—95:
123. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 73:
124. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 76:
125. Մ. Վոլոշин, Մ. Сарьян,
„Аполлон“, 1913, № 9).
126. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 5:
127. Մ. Վոլոշин, Մ. Сарьян,
„Аполлон“, 1913, № 9).
128. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 70:
129. M. Сарьян, Автобиографические сведения (Выставка про-
изведенений народного художника Армении—орденоносца
М. С. Сарьяна, М., 1936).
130. M. Сарьян, Автобиографические сведения (Выставка про-
изведений народного художника Армении—орденоносца
М. С. Сарьяна, М., 1936).

131. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 77—82:
132. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 120—124:
133. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 141—142:
134. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 145—146:
135. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 158:
136. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 133:
137. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 171:
138. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.
139. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.
140. Մ. Սարյան, Автобиографические сведения (Выставка произведений народного художника Армении—орденоносца М. С. Сарьяна, М., 1936).
141. Մ. Սարյան, Автобиографические сведения (Выставка произведений народного художника Армении—орденоносца М. С. Сарьяна, М., 1936).
142. Բ. Զարյանի անտիպ գրառումներից:
143. «Творчество»-ի ստեղծագործական երեկոյում նկարչի ոնեցած ելույթի պազրությունից («Творчество», 1936, № 9):
144. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.
145. Ջ. Սպրովիլիերիի գրառումներից (Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 180):
146. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:
147. Օ. Կուչկինայի գրառումներից (Օ. Кучкина, Искусство понимать искусство, „Комсомольская правда“, 1968, 10 февраля).
148. Վ. Մաթևոսյանի գրառումներից (Վ. Մաթևոսյան, Հակոբ Կողովոյան, Երևան, 1971, էջ 150):
149. Մ. Սարյան, Радость познания, «Литературная газета», 1965, № 108.
150. Ա. Պլուտոնիկի գրառումներից (Ա. Плутник, Мартирос Сарьян: Мое счастье-жизнь, „Неделя“, 1967, № 48).
151. Վ. Մաթևոսյանի անտիպ գրառումներից:

152. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 153. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 154. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 155. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 156. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 157. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 158. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 112:
 159. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 103—104:
 160. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 115—116:
 161. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 119:
 162. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 105:
 163. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 164. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 185—186:
 165. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 166. Պիկասոյի ցուցահանդեսի կատալոգի Համար Սարյանի գրած
 առաջաբանից (Պարլո Պիկասո, Գրաֆիկական աշխատանքների
 ցուցահանդես, Հայաստանի պետական պատկերասրահ, Երևան,
 1967):
 167. Մ. Սարյան, Искусство не стареет, «Литературиальная газета»,
 1962, 16 июня.
 168. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 169. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 199—200:
 170. Մ. Սարյան, Գրառումներ իմ կյանքից, էջ 89:
 171. Ի. Զարյանի անտիպ գրառումներից:
 172. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 173. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 174. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 175. Վ. Մաթեվոսյանի անտիպ գրառումներից:
 176. Ա. Գրիգորյանի գրառումներից (Ա. Գրիգորյան, Մարտիրոս
 Սարյան, «Պիոներ», 1972, № 7),



Յ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Խ Ն

Ե Ր Կ Ո ւ խ ո ս ք
Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

5

- Ա—Սարյանի սպանթեկպմը
Բ—Գեղեցիկի համընդհանուր-տիեզերաբանական ինտերպրե-
տացիան
Գ—Մարդու արժեքավորումը կոսմոսի՝ որպես ունիվերսալ գե-
ղեցկության, սիստեմում
Դ—Զգայիլի բնության՝ իրրե անտեսանելի տիեզերքի ճանաշ-
ման-արտացոլման հիմքի, տեսակետը

11

- Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Բ Ո Ւ Դ
Ա—Իմացության-ստեղծագործման տարրեր ուղիների հոգևոր
ելակետի նույնության սարյանական ըմբռանումը
Բ—Սրվեստի զարդացման տեսակետը
Գ—Հասարակության և ստեղծագործող անհատի հարաբերու-
թյան պատկերացումը
Դ—Սրվեստի ազգային և համամարդկային բնույթի մեկնու-
թյունը
Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Բ Ո Ւ Դ

51

- Ա—«Մանկական հայացքի»՝ որպես այժմհական սկզբունքի,
սարյանական տեսակետը
Բ—Սրեւելի և Արևմուտքի ավանդների միաձուլման անհրա-
ժեշտության պահանջը
Գ—Սյուժեի բացասումը արդի կերպարվեստում
Դ—Պորտրետի ժանրի պահպանման գիրքորոշումը
Ե—Գույնի արտահայտչական ֆունկցիայի կարևորումը ժա-
մանակակից արվեստում

100

- Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ
Մարտիրոս Սարյանն արվեստի մասին 161
Մանուքյան պատմություններ 163
Տառերագրույթուններ 268

ՎՐԼԵՑԼՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆԻ
ԷՄԹԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Տպագրվում է՝ Հայկական ՍՍՀ ԳԱ
արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ԾԱՇՎԱՄՅԱՆ

Նկարիչ

Կ. Կ. ՂԱԽԱՎՈՅՉԱՆ

Գեղարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐԾՎԱԿԱՅՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Ռ. Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Սորապիչ

Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ

Վ. 04653 Պատվեր 544 ԻԲ—236 Հրատ. 5160 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 21.06.1979 թ., ստորագրված է՝ տպագրության 14.02.1980 թ. Տպագրական 17.25 մամուլ, պայմանական 11.12 մամուլ, հրատ. 8.93 մամուլ, տառատեսակ «Գրքի սովորական», տպագրություն՝ բարձր, թուլյ
№ 1, $70 \times 100! / 3^{\circ}$: Գինը 1 լ. 50 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.

Издательство АН Арм. ССР. Ереван, Барекамутян, 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ իրատարակչության Էջմիածնի տպարան
Эчмиадзинская типография Издательства АН Арм. ССР.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0057043

